

# CAUCA DOCS

## ՈՒՍՈՒՑՈՒՄ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ո Ւ Ս Ո Ւ Ց Չ Ի    Ձ Ե Ռ Ն Ա Ր Կ



ԵՐԵՎԱՆ 2014

**«Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով» ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՆ կողմից՝  
նրպես ուսումնասովանողական գրականություն (Հրաման No 805-ՍՔ):**

Մարդը Կարիքի Մեջ ՀԿ Հայաստանյան ներկայացուցչություն  
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 2/50  
Վեբ կայք՝ www.peopleinneed.cz, www.caucadoc.com

### **Հեղինակներ՝**

**«Ուսումնական նյութերի նկարագրություն», «Ինտերակտիվ ուսուցման ուղեցույց», «Ինքնուրույն կազմակերպիչ ֆիլմերի ցուցադրություն» - Կատերինա Մադյակովա՝ «Մեկ աշխարհը դպրոցում», «Մարդը կարիքի մեջ» ՀԿ, Չեխիայի Հանրապետություն**

**Գործնական վարժություններ – Հեղինակային խումբ՝ «Մեկ աշխարհը դպրոցում», «Մարդը կարիքի մեջ» ՀԿ, Չեխիայի Հանրապետություն**

### **Ֆիլմերի վերաբերյալ նյութերի հեղինակներ՝**

«Դրամ հավաքողը Բեդֆորդ փողոցից»՝ *Դանաս Կոսիչկովա*, «Աջակցություն անկախությանը» ՀԿ  
«Սանտայի արհեստանոցը»՝ *Պիրր Խմելյարժ*, «Մասարիկ» համալսարան  
«Հեծանիվների բրիստոլյան ծրագիր»՝ *Ադելա Պոսպիչայովա*, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ  
«Ծառեր տնկող մարդը»՝ *Ջուզանա Վլասարա «Դոսիա» երկրագնդի ընկերներ* ՀԿ

Մարդու (երեխաների) իրավունքները

- «Հարիբոլա»՝ *Ադելա Պոսպիչայովա*, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ
- «Աննա»՝ *Բարբրա Բուզի և Ռոբերտ Սրոյանով*, «Գլոբալ փոփոխությունների ուսումնասիրությունների կենտրոն» ՀԿ
- «Ալեքսանդրա»՝ *Մարջոլեն Բոննարա*
- «Մեքսա»՝ *Լիբոր Դվորժակ, չեխական ուղի*
- «Փամելա»՝ *Լենկա Վիտկովա, Արվեստի պատմության ինստիտուտ*
- «Ռոմի»՝ *Միչալ Կոլարժ*, «Ընդդեմ հալածանքների» ՀԿ

«SOS Սևան»՝ *Գայանե Հովսեփյան, Երևանի Գ. Սրեփանյանի անվան թիվ 135 հիմնական դպրոց*  
«Հարևաններ»՝ *Լալա Սարգսյան, Կրթության ազգային ինստիտուտ*  
«Էլենի ականջներով»՝ *Արմինե Իվանյան, Կրթության ազգային ինստիտուտ*

### **Խմբագիր՝**

**Վարդուհի Դադունց**, CAUCADOC ծրագրի ղեկավար,  
«Մարդը կարիքի մեջ» ՀԿ հայաստանյան ներկայացուցչություն

### **Գրախոսներ՝**

ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտի մասնագետներ.  
**Լուսինե Ալեքսանյան (մ.գ.թ.) և Կարինե Հարությունյան**

DVD Տեսագրության և դիզայնի հեղինակ՝ մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ

Տպագրվել է 2014թ.  
**«Մարդը կարիքի մեջ» ՀԿ**  
Բոլոր իրավունքները պաշտպանված են

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

«Մեկ աշխարհը դպրոցում» ծրագրի նկարագրությունը	5
Ուսումնական նյութերի նկարագրությունը	6
Ինտերակտիվ ուսուցման ուղեցույց	11
Ինքնուրույն կազմակերպիչ ֆիլմերի ցուցադրություն	18
<b>ԳՐԱՄ ՀԱՎԱՔՈՂԸ ԲԵԴԻՖՈՐԴ ՓՈՂՈՑԻՑ</b>	22
Լրացուցիչ տեղեկություններ	22
Գործնական վարժություն 1. ԽՈՐԱՆԱՐԴԻԿ /ԿՈՒԲԻԿ	26
Գործնական վարժություն 2. ՀԻՆԳ ՓՈՐՁ՝ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ	27
Գործնական վարժություն 3. ...ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ	29
Գործնական վարժություն 4. ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԽՃԱՆԿԱՐ	30
Գործնական վարժություն 5. ԻՆՉ ԳԻՏԵՔ ԵՎ ԻՆՉ ԵՔ ԼՍԵԼ	32
Գործնական վարժություն 6. ՈՒՐԻՇԻ ՄԱՐՄՆՈՒՄ	33
Գործնական վարժություն 7. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ	35
<b>ՄԱՆՏԱՅԻ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԸ</b>	36
Լրացուցիչ տեղեկություններ	36
Գործնական վարժություն 1. ԽՈՐՀՐԴԱՆԻՇ	39
Գործնական վարժություն 2. ԻՆՉ Է ԹԱՔՆՎՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԻ ՀԵՏԵՎՈՒՄ	40
Գործնական վարժություն 3. ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ	42
Գործնական վարժություն 4. ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԷ	46
Գործնական վարժություն 5. ԲԻՆԳՈ	47
<b>ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ ԲՐԻՍՏՈԼՅԱՆ ԾՐԱԳԻՐ</b>	50
Լրացուցիչ տեղեկություններ	50
Գործնական վարժություն 1. ԱՆԱՆՈՒՆ ՄՏՔԵՐ	54
Գործնական վարժություն 2. ՏՈՒՆ	55
Գործնական վարժություն 3. ԽԱՉԲԱՌ	56
Գործնական վարժություն 4. ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ԼՐԱՑՈՒՄ	58
<b>ԾԱՌԵՐ ՏՆԿՈՂ ՄԱՐԴԸ</b>	60
Լրացուցիչ տեղեկություններ	60
Գործնական վարժություն 1. ՄԵԿ ԲԱՌ	64
Գործնական վարժություն 2. ՈՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ	65
Գործնական վարժություն 3. ԲԻՆԳՈ	67
Գործնական վարժություն 4. ԱՆՅՅԱԼՈՒՄ	68
<b>ՄԱՐԴՈՒ (ԵՐԵԽԱՆԵՐԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ</b>	71
<b>ա) ՀԱԲԻԲՈԼԱ</b>	71
Լրացուցիչ տեղեկություններ	71
Գործնական վարժություն 1. ԻՆՉԸ ԵՄ ՉԵՄ ՄՈՌԱՆԱ	74
Գործնական վարժություն 2. ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ	75
<b>բ) ԱՆՆԱ</b>	77
Լրացուցիչ տեղեկություններ	77
Գործնական վարժություն 1. ՈՍԿԵ ԶԿՆԻԿ	81
Գործնական վարժություն 2. ԱՐԳԵԼՎԱԾ , ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ	82
<b>գ) ԱԼԵՔՍԱՆԴՐԱ</b>	84
Լրացուցիչ տեղեկություններ	84
Գործնական վարժություն 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՐՈՒՍՏ	87

Գործնական վարժություն 2. ՈՒՂԵՐՁ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅԻՆ	89
<b>դ) ՄԵՍԲԱ</b>	90
Լրացուցիչ տեղեկություններ	90
Գործնական վարժություն 1. ՁԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆԸ	93
Գործնական վարժություն 2. ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԱՊՐԵԼ ՓՈՂՈՑՈՒՄ	94
<b>ե) ՓԱՄԵԼԱ</b>	97
Լրացուցիչ տեղեկություններ	97
Գործնական վարժություն 1. ՆԱՄԱԿԸ	100
Գործնական վարժություն 2. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿ	101
<b>զ) ՌՈՄԻ</b>	102
Լրացուցիչ տեղեկություններ	102
Գործնական վարժություն 1. ՊԱՅՄԱՆՆԵՐ, ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ	107
Գործնական վարժություն 2. ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՏԸ	109
<b>«SOS» ՍԵՎԱՆ</b>	110
Լրացուցիչ տեղեկություններ	110
Գործնական վարժություն 1. ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՆՈՒՄ	112
Գործնական վարժություն 2. ԶՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	113
Գործնական վարժություն 3. ԶՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	115
Գործնական վարժություն 4. ԱՂԲԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	117
<b>ՀԱՐԵՎԱՆՆԵՐ</b>	120
Գործնական վարժություն 1. ԱՆԱՆՈՒՆ ՄՏՔԵՐ	124
Գործնական վարժություն 2. ԿՌՎԱԽՆՁՈՐ	126
Գործնական վարժություն 3. ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐ ՏԵԽՆԻԿՆԵՐԸ	128
<b>ԷԼԵՆԻ ԱԿԱՆՋՆԵՐՈՎ</b>	129
Գործնական վարժություն 1. ԷԼԵՆԸ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐԸ	133
Գործնական վարժություն 2. ՄԵՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	134
Գործնական վարժություն 3. ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	135
<b>ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿՆԵՐ</b>	136
<b>ՓՈՔՐԻԿ ԾԽՈՂՆԵՐԸ</b>	136
Գործնական վարժություն. ԻՆՉՊԵՍ ԱՍԵԼ՝ «ՈՉ»	136
<b>ԱՂԲԸ ԹՎՓԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է</b>	137
Գործնական վարժություն. ԷԿՈ ՊԱՍՏԱՌՆԵՐ	137
<b>ԶՈՐՈ</b>	138
Գործնական վարժություն. ԱՆԳՐԱԳԵՏԸ	138
<b>ՕԳՆՈՒԹՅՈՒՆ</b>	140
Գործնական վարժություն. ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	140
<b>ԳՈՒՆԱՎՈՐ ՄԱՐԴԸ</b>	142
Գործնական վարժություն. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ	142
<b>ԱՄԵՆ ՉՈՐՐՈՐԴԸ</b>	143
Գործնական վարժություն. ԱԳՐԵՍԻԱ	143

## «ՄԵԿ ԱՇԽԱՐՀԸ ԴՊՐՈՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Մեկ աշխարհը դպրոցում» ծրագրի նպատակն է՝ բարձրացնել երիտասարդների իրազեկությունը աշխարհի արդի հիմնախնդիրների և սոցիալական հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կազմակերպել քննարկումներ, ձևավորել քննադատական մտածողություն և կիրթ մտեցումներ մարդու իրավունքների և հարակից խնդիրների շուրջ:

Ծրագիրը նպատակ ունի նաև խթանելու աճող սերնդի՝ ժամանակակից կյանքի այն գլոբալ գործընթացների ընկալումը, որոնք ազդում են մարդկանց կենցաղի և ապրելակերպի վրա: Դրա միջոցով անձի մոտ կձևավորվի պատասխանատվության զգացում, ինչը կնպաստի ինչպես ազգային, այնպես էլ՝ համամարդկային առկա խնդիրների լուծմանը:

Մեր փորձը ցույց է տվել, որ վավերագրական ֆիլմի ցուցադրությունը համեմատաբար պարզ, սակայն արդյունավետ միջոցներից է՝ հանրությանը մի շարք թեմաների ծանոթացնելու առումով: Ֆիլմը՝ որպես ժամանակակից տեսաձայնային միջոց, կարող է ոչ միայն թեմայի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդել, այլև ներկայացնել իրական յուրահատուկ պատմություն, որն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն կունենա հանդիսատեսի վրա: Վավերագրական ֆիլմերը կարող են առանձնահատուկ խնդիրների լուծման շարժառիթ դառնալ:

Ցուցադրությունը կարելի է սահմանափակել ինչպես մեկ ֆիլմով, այնպես էլ ներկայացնել ամբողջական ֆիլմաշար: Երկրորդ դեպքում, սակայն, անհրաժեշտ է նախապես մշակել դրա գաղափարաբանությունը:

### Ծրագրի պատմությունը

«Մեկ աշխարհը դպրոցում» կրթական երկարաժամկետ ծրագիրը նախաձեռնել է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն: 2003թ. սկսած այն իրականացվում է Չեխիայի հանրապետությունում: Ծրագրի շրջանակներում դպրոցներին տրամադրվել են վավերագրական ֆիլմեր և մեթոդական ձեռնարկներ՝ արդի աշխարհի և ժամանակակից պատմության թեմաների ուսուցման նպատակով: **2012 թվականից ծրագիրն իրականացվում է նաև Հայաստանում:** 2013 - 2014 թթ ընթացքում 80-ից ավելի հանրակրթական դպրոցների հասարակագիտական առարկաների ուսուցիչներ ՀՀ Արարատի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Արմավիրի մարզերից վերապատրաստվել են և ձեռք բերել «Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով» ուսուցչի ձեռնարկը և տեսաերիզը (DVD): **2014 թ-ից Կրթության ազգային ինստիտուտի հետ կնքած համագործակցության հուշագրի շրջանակներում «Ուսուցում վավերագրական ֆիլմերի միջոցով» մեթոդաբանությունը հասանելի կդառնա ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:**

### Դպրոցական մակարդակում ցուցադրվող ֆիլմերի բնութագիրը

«Մեկ աշխարհը դպրոցում» ծրագրի շրջանակներում հիմնականում գործածվելու են այն ֆիլմերը, որոնք ներկայացվում են մարդու իրավունքներին նվիրված «Մեկ աշխարհ» ամենամյա փառատոնին. այն մեկնարկել է 1999-ից՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի կողմից: «Մեկ աշխարհը դպրոցում» ծրագրի շրջանակներում ընտրվում են այն ֆիլմերը, որոնք շոշափում են կրթական ծրագրերում ընդգրկված թեմաներ:

Ֆիլմերը պետք է հետաքրքրություն առաջացնեն աշակերտների մոտ: Թեմաներն ընտրվում են աշակերտների հետաքրքրություններին և մտածողության առանձնահատկություններին համապատասխան: Ֆիլմերը նպաստում են բարձրացնել երիտասարդների իրազեկությունը՝ հարցադրումների և պատասխանների որոնման միջոցով: Դրանք հնարավորություն են ընձեռում զուգահեռներ անցկացնել առօրյա կյանքի հետ, նպաստում ազատ կարծիքի ձևավորմանն ու զարգացմանը: «Մեկ աշխարհը դպրոցում» ծրագրի շրջանակներում կիրառվում են այն ֆիլմերը, որոնք արտացոլում են արդի աշխարհը:

Ֆիլմերը հնարավորություն են տալիս միջին դպրոցի աշակերտներին արտահայտելու իրենց զգացմունքները և շփվելու ուրիշների հետ՝ կարծիքների ձևավորման և մտքի զարգացման ակնկալիքով:

Գործընթացի գնահատման արդյունքում և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները հավաստեցին, որ վավերագրական ֆիլմերը, ներկայացնելով ուսումնական ծրագրի թեմաներն առավել գլոբալ տեսանկյունից, միջին դպրոցի աշակերտներին հնարավորություն են ընձեռում՝ դրսևորելու քաղաքացիական վարք՝ խթանելով երկխոսությունը:

«Մեկ աշխարհը դպրոցում» ծրագիրը խրախուսում է վավերագրական ֆիլմերի կիրառումը՝ որպես ուսուցման միջոց: Այն բոլոր երկրներում աշխատում է գործընկեր կազմակերպությունների հետ և աջակցում նրանց՝ տեղայնացնելու ծրագրի գաղափարը, այն զուգակցելու երկրի առանձնահատուկ մշակութային արժեքների հետ ու մշակելու համապատասխան ուսումնական նյութեր:

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### ա) Ինչպես օգտագործել ձեռնարկը

Կրթական գործիքակազմը բաղկացած է տեսասկավառակից (այն ներառում է ութ ֆիլմ և սոցիալական հոլովակներ) և ուսումնական ձեռնարկից: Ֆիլմերն ու համապատասխան վարժությունները վերաբերում են մարդու իրավունքներին և ներառում հետևյալ ենթաթեմաները. «Միգրացիա», «Աշխատանքի իրավունք», «Կոնֆլիկտ և հաղթահարում», «Հանդուրժողականություն և տարբերությունների ընդունում», «Շրջակա միջավայրի հիմնախնդիրներ»:

Ձեռնարկը հասցեագրված է ուսուցիչներին՝ ուղղորդելու յուրաքանչյուր ֆիլմի հետ կապված ուսումնական վարժությունների արդյունավետ կիրառումը:

Բոլոր ֆիլմերը և դիդակտիկ նյութերը (մասնավորապես՝ վարժությունները) նախապես կիրառվել են փորձարարական դպրոցներում՝ հասկանալու համար, թե արդյո՞ք ընտրված վարժություններն արդյունավետ են, և թե ինչքանով են դրանք նպաստում իրականացնելու ծրագրի նպատակը:

Ծրագիրը փորձարկվել է մի քանի դպրոցներում, այնուհետև նյութերը վերամշակվել և տրամադրվել են հետաքրքրություն ցուցաբերած դպրոցներին:

Մեթոդական ձեռնարկը նախատեսված է ուսուցիչների համար՝ որպես դասի պլաններ մշակելու համակարգված ուղեցույց: Ձեռնարկը ներառում է հետևյալ բաժինները.

**Ինչպես կիրառել ֆիլմերը դասապրոցեսում.** այս բաժնում ընդգրկված են հիմնական հրահանգներ, թե ինչպես պետք է կիրառել ֆիլմերը ուսումնական գործընթացում: Ներկայացված են նաև մանրամասներ, թե ինչպես կարելի է նախապատրաստվել ֆիլմի ցուցադրությանը, մտորել ֆիլմի վերաբերյալ և ֆիլմի ցուցադրությունից հետո քննարկում կազմակերպել: Այս բաժինը ներառում է նաև հաճախ ծագող խնդիրների և առաջարկվող լուծումների տարբերակներ:

**Ինչպես կիրառել սոցիալական հոլովակները դասապրոցեսում.** Սոց. հոլովակները յուրահատուկ տեսաձայնային նյութեր են: Սոց. հոլովակները հակիրճ են, պարունակում են բավականին տեղեկատվություն և այս իմաստով հարմար են ուսուցիչներին: Այս բաժնում զետեղված են սոց. հոլովակներով աշխատելու տասը հիմնական կանոնները:

**Ինտերակտիվ ուսուցման ուղեցույց.** այս բաժնում տեղ են գտնել փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցման հիմնական կանոնները և ամենատարածված ինտերակտիվ մեթոդների նկարագրությունը: Այդ մեթոդները կարելի է կիրառել ցանկացած թեմայով աշխատանքի ընթացքում, ուստի ձեռնարկում դրանք ներկայացված են առանձին, իսկ ինտերակտիվ մեթոդների վերաբերյալ գործնական վարժությունները՝ ֆիլմերի և սոց. հոլովակների բաժնում:

**Ինչպես ինքնուրույն կազմակերպել ֆիլմերի ցուցադրություն.** այս բաժինը հիմնականում նախատեսված է աշակերտների համար: Դրանք այն ցուցադրություններն են, որոնք կազմակերպվում են աշակերտների կողմից՝ իրենց հասակակիցների կամ համայնքի անդամների համար: Աշակերտների

համար ձեռնարկում առկա է պարզ ուղեցույց, որը նկարագրում է, թե ինչպես պետք է կազմակերպել ֆիլմերի հանրային ցուցադրություններ և դրանց հաջորդող քննարկումներ:

**Ֆիլմեր և սոց. հոլովակներ.** այս բաժինը դասակարգված է ըստ ֆիլմերի: Բոլոր մասերն ունեն միևնույն կառուցվածքը: Գործնական վարժություններն ընտրված են այնպես, որ ուսուցիչները կարողանան համադրել վարժություններն ուսուցանվող դասի հետ: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր ֆիլմի թեմայի կամ ենթաթեմաների ուսուցանման նպատակով ընտրվել են հատուկ վարժություններ: Այդ մասին ասվում է նաև վարժության սկզբում:

### **Յուրաքանչյուր ֆիլմին վերաբերող բաժին ներառում է.**

**Հակիրճ նկարագրություն.** սա ֆիլմի վերաբերյալ նախնական տեղեկություն է: Այն ներառում է ֆիլմի վերաբերյալ հիմնական տեղեկությունները (ռեժիսորը, երկիրը՝ որտեղ նկարահանվել է ֆիլմը, նկարահանման տարին և տևողությունը) և սյուժեի հակիրճ նկարագրությունը: Այս տեղեկատվությունը թույլ է տալիս հասկանալու, թե արդյո՞ք ֆիլմը համապատասխանում է ուսուցանվող դասի թեմային:

**Ընդհանուր տեղեկություններ.** այս բաժինն ուսուցչին ապահովում է ֆիլմի մասին հիմնական տեղեկություններով: Ընդհանուր տեղեկությունները ներկայացված են հարցերի ու պատասխանների միջոցով: Հարցերը կազմվել են ծրագրային թիմի կողմից՝ փորձարարական դպրոցներում աշակերտների հետ հետադարձ կապի իրականացման արդյունքում: Պատասխանները մշակվել են ոլորտային փորձագետների կողմից: Այս բաժնում կարելի է գտնել նաև այլ աղբյուրների հղումներ, որոնք կօգնեն աշակերտներին կամ ուսուցիչներին թեմայի հետագա առավել խորը ուսումնասիրության համար:

**Կշռադատման (ռեֆլեքսիա) վարժություններ.** հատուկ մոտեցմամբ կառուցված վարժություններ են, որոնք աշակերտներին օգնում են մտորելու ֆիլմի ցուցադրությունից հետո: Յուրաքանչյուր ֆիլմի ցուցադրությանը պետք է հաջորդի կշռադատման վարժություն, քանի որ հնարավոր է՝ աշակերտները դժվարանան ընկալել ֆիլմի թեման: Այդ վարժությունները կարևոր են այն առումով, որ օգնում են աշակերտներին՝ ամրապնդելու ֆիլմի միջոցով ձեռք բերած նոր գիտելիքները:

**Գործնական վարժություններ.** յուրաքանչյուր վարժության սկզբում ներկայացվում է, թե ինչքան ժամանակ է պահանջվում այն իրականացնելու համար, թիրախ խմբի տարիքը, անհրաժեշտ գործիքները, վարժության նպատակը, թեման, որին այն առնչվում է, կիրառման արդյունավետությունը: Այս բաժնում քայլ առ քայլ նկարագրվում է, թե աշակերտների հետ ինչպես իրագործել տվյալ վարժությունը: Ըստ անհրաժեշտության՝ վարժությանը կցված է աշխատանքային թերթիկ: Նշված է նաև, թե երբ պետք է կատարել վարժությունը՝ ֆիլմի ցուցադրությունից առանձ, թե՛ հետո, այն առանձին վարժություն՝ն է, թե՛ մեկ այլ վարժության մաս է կազմում:

### **բ) Ինչպես կիրառել ֆիլմերը դասապրոցեսում**

#### **Մինչ ֆիլմի ցուցադրությունը ուսուցիչը պետք է նախապես դիտի այն:**

Ֆիլմի նախնական դիտումն անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչը նախապատրաստվի նաև գործնական վարժություններին, ժամանակ ունենա թեմայի վերաբերյալ լրացուցիչ նյութեր գտնելու և որոշելու՝ ֆիլմի որ հատված(ներ)ն է ցուցադրելու տվյալ դասին (այն դեպքում, եթե դասաժամը չբավարարի): Որոշ վավերագրական ֆիլմեր կարող են թեմայից մի փոքր տարբեր՝ առավել ընդգրկուն և խորիմաստ լինել, և հնարավոր է, որ աշակերտները ուշադրություն չդարձնեն ֆիլմում արտացոլված տարբեր խնդիրների վրա: Ֆիլմերը պետք է համապատասխանեն աշակերտների ունակությունների և զարգացման մակարդակին: Ֆիլմերը կարող են երկար լինել աշակերտների տվյալ տարիքային խմբի համար կամ ունենան ներկայացման բարդ ձև:

**Ուսուցիչը պետք է նախապատրաստվի ֆիլմին հաջորդող քննարկումներին.** փորձը ցույց է տվել, որ առավել արդյունավետ է քննարկումն սկսել (հատկապես վիճելի թեմաներով) թեմայի վերաբերյալ բազմակողմանի տեղեկատվության առկայությամբ: Այդ դեպքում միայն ուսուցիչը կարող է վստահ պատասխանել աշակերտների հարցադրումներին:

**Ուսուցիչը պետք է նախապատրաստվի ցուցադրությանը.** խոսքը վերաբերում է հատկապես տեխնիկական նախապատրաստությանը. տեխնիկական սարքավորման ընտրություն, դասարանի



աշակերտների թվի հատակեցում, ցուցադրության ժամանակ համապատասխան լուսավորության ապահովում (վարագույրների առկայությունը դասարանում):

Բովանդակային ուսուցման առումով ֆիլմի ցուցադրության նախապատրաստական աշխատանքները ներառում են հետևյալ գործընթացները. ներկայացնել և քննարկել թեմայի վերաբերյալ աշակերտների գիտելիքներն ու պատկերացումները, ինտերակտիվ մեթոդներ կիրառելով՝ շեշտադրել ֆիլմի հիմնական գաղափարը:

**Ֆիլմի ցուցադրության նպատակը.** նոր գիտելիքներ և փաստեր հաղորդելուց բացի՝ ֆիլմի ցուցադրության նպատակը պետք է լինի թեմայի առավել խորն ընկալումը և աշակերտների վարքագծի դրական փոփոխությունը: Վավերագրական ֆիլմերը թեման բացահայտում են տարբեր տեսանկյուններից և հնարավորություն տալիս հասկանալու հարցի բարդությունը, այլ ոչ թե գտնելու դրա լուծումը:

Աշակերտների համար կարևոր է ուսուցչի ուղղորդմամբ մասնակցել քննարկումներին և գիտակցել, թե ինչի են ձգտում: Ուսուցչի համար կարևոր է հասկանալ աշակերտներին և հստակ պատկերացնել, թե ինչ է ակնկալում աշակերտներից: Շատ կարևոր են նույնիսկ փոքր նպատակները: Պետք է ընդգծել ապրումակցային մոտեցման կարևորությունը, օգնել աշակերտներին՝ պատկերացնելու իրենց տվյալ կերպարի դերում. դա կօգնի ավելի լավ ընկալելու երևույթները, զարգացնելու կարողություններ՝ բացահայտելու և հասկանալու տարբեր իրավիճակներում գտնվող անձանց զգացողություններն ու գործողությունների դրդապատճառները:

**Ֆիլմի հատվածների օգտագործում.** Ժամանակի սղության և այլ պատճառներով դասապրոցեսում կարելի է ցուցադրել միայն ֆիլմի հատվածներ այնպես, որ հնարավոր լինի ֆիլմի թեման քննարկել: Բարդ թեմայի դեպքում հարկավոր է շատ ժամանակ հատկացնել քննարկումներին և գործնական վարժություններին: Պետք է վստահ լինել, որ նախքան դասի ավարտը աշակերտները բավարար ժամանակ ունեն հարց ու պատասխանի, ինչպես նաև վարժությունների կատարման համար: Երբ ցուցադրվում են միայն ֆիլմի հատվածներ, հետագայում՝ դասերից հետո, ֆիլմն ամբողջությամբ կարելի է ցուցադրել դահլիճում:

**Կշռադատել ուսուցանվող նյութի վերաբերյալ.** ֆիլմի ցուցադրության կարևոր մաս է կշռադատումը: Հաճախ վավերագրական ֆիլմերն արտացոլում են փաստեր, զգացմունքներ և բացարձակ ճշմարտություն: Աշակերտներն ամեն ինչ շատ խորությամբ են ընկալում: Ֆիլմի ցուցադրությունից անմիջապես հետո կշռադատումը (ֆիլմի վերաբերյալ առաջին տպավորությունների վերլուծությունը) հնարավորություն է տալիս աշակերտներին՝ անմիջականորեն արտահայտելու իրենց մտահոգությունները, զգացողությունները, կառավարելու իրենց հույզերը և հաղթահարելու դասարանում առկա լարվածությունը: Կան կշռադատման փուլի կազմակերպման տարբեր մոտեցումներ, ուստի պետք է հաշվի առնել, թե ինչ տիպի աշակերտներ են մասնակցում տվյալ դասին: Վարժության կամ դասի վերջում պետք է անցկացնել այլ տիպի կշռադատում (քաղած դասեր): Որոշ ինտերակտիվ մեթոդներ՝ ինչպես օրինակ մտքերի քարտեզը կամ այլ վարժություններ, կարող են ծառայել որպես կշռադատման վարժություն: Ուսուցիչները կարող են ստեղծագործական մոտեցում ցուցաբերել՝ ընտրելու առավել նպատակային վարժությունը:

**Աշակերտների արձագանքը.** աշակերտների արձագանքը հաճախ տարբերվում է ուսուցչի ակնկալիքներից: Աշակերտները թեման այլ կերպ են հասկանում և ընկալում: Հետևաբար հարկավոր է նկատի ունենալ, որ աշակերտները կարող են յուրահատուկ կերպով արձագանքել, ինչն էլ հետագայում անհրաժեշտ նյութ կարող է դառնալ գործնական վարժությունների համար: Այդ համատեքստում ուսուցչից կպահանջվեն լրացուցիչ ջանքեր՝ լսարանը տարբեր մոտեցումներով կառավարելու համար:

**Փորձագետի մասնակցությունը դասապրոցեսին.** առավել դժվար թեմաների ժամանակ ցանկալի է հրավիրել փորձագետի, ով քաջատեղյակ է թեմային (սոց. աշխատող, վավերագրական ֆիլմերի ռեժիսոր, ՀԿ ներկայացուցիչներ, աշակերտներ, որոնք նման ֆիլմերի ցուցադրության հետ կապված լավ պատմություններ ունեն): Եթե փորձագետի մասնակցության համար պահանջվում է լրացուցիչ վճարում է, ապա պետք է դիմել դպրոցի, հովանավորի, ծնողների աջակցությանը, կամ էլ կազմակերպել դրամաշնորհի շրջանակներում: Անհրաժեշտ է նախապես փորձագետի հետ հանդիպել և քննարկել դասի պլանը:



**Քարտեզի օգտագործումը դասապրոցեսում.** յուրաքանչյուր ֆիլմի պատմությունը տեղի է ունենում աշխարհի որևէ պետությունում: Այդ պատճառով երեխաների համար օգտակար կլինի նախքան ֆիլմի ցուցադրությունը քարտեզի վրա տեսնել այդ պետությունը:

**Արտադպրոցական ակումբեր.** ֆիլմերի ցուցադրությունը կարելի է կազմակերպել ոչ միայն դասապրոցեսում. դպրոցում հնարավոր է ձևավորել արտադպրոցական ակումբներ և ցուցադրություն կազմակերպել ակումբի անդամների և համայնքի այլ դպրոցների աշակերտների համար: Կարելի է հանգստյան օրերին որևէ թեմայի վերաբերյալ ֆիլմերի ցուցադրություն կազմակերպել: Ֆիլմի ցուցադրությունից հետո աշակերտները կարող են քննարկումներ կազմակերպել ակումբներում:

## **Եկեք բոլորս միասին փորձենք այն, ինչը հնարավոր է, այլ ոչ թե այն, ինչը հնարավոր չէ**

### **Կշռադատում Ֆիլմի բովանդակության շուրջ (ոեֆլեքսիա)**

Կշռադատումը կարևոր դեր ունի վավերագրական ֆիլմերով ուսուցման կազմակերպման գործընթացում:

Փաստեր պարունակող վավերագրական ֆիլմերը հաճախ զգացմունքների արտահայտման պատճառ են դառնում և ներկայացնում դառն իրականությունը: Կշռադատումը աշակերտներին հնարավորություն է տալիս ֆիլմի ցուցադրությունից անմիջապես հետո արտահայտել տեսակետները, զգացմունքները և հույզերը:

Այդ գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար կիրառվում են տարբեր միջոցներ և մեթոդներ (մտքերի ազատ շարադրանք, հանգավոր քառատողի ստեղծագործում, զգացմունքների արտահայտում՝ ձայնի կամ շարժման միջոցով և այլն):

Մեթոդի ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել դրա համապատասխանությունը տվյալ աշակերտների խմբին:

### **Սույն ձեռնարկում կարելի է գտնել կշռադատման վարժությունների բազմաթիվ օրինակներ:**

Կշռադատման ժամանակ աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ և հմտություններ. նրանք ընկալում են նյութը և փոխում իրենց վարքագիծը: Չնայած կշռադատման գործընթացի կարևորությանը, ժամանակի սղության պատճառով այն շատ անգամ չի իրականացվում:

Երբ ժամանակը չի բավարարում, կարելի է աշակերտներին հնարավորություն տալ մեկ բառով արտահայտելու իրենց զգացմունքները: Նման վարժությունը կարող է տևել մոտ 5 րոպե:

Կշռադատումը քննարկում չէ: Այն ֆիլմի դիտմանը հաջորդող՝ ազատ մտորումների և զգացմունքների արտահայտման մեթոդ է, որի կիրառման ընթացքում չկան ճիշտ և սխալ կարծիքներ: Քննարկումներն օգնում են աշակերտներին՝ կարծիք ձևավորելու, բանավիճելու, քննադատաբար մտածելու և համաձայնության գալու:

### **Ֆիլմի ցուցադրությանը հաջորդող քննարկում**

Ֆիլմի ցուցադրությանը կարող է հաջորդել խմբային քննարկում, որի նպատակն է թեման վերձանել տարբեր տեսանկյուններից և ձևավորել հիմնավոր տեսակետ: Կարելի է նաև քննարկմանը հրավիրել թեմային իրազեկ հյուրերի, ովքեր կկարողանան պատասխանել աշակերտների ամենատարբեր հարցերին:

Թեմայի քննարկումը կարևոր միջոց է՝ աշակերտների մոտ քննադատական մտածողություն զարգացնելու, ինչպես նաև ինտերակտիվ միջավայր ստեղծելու համար. դա աշակերտներին հնարավորություն կտա արտահայտելու իրենց տեսակետները, զգացմունքները, ինչպես նաև հարստացնելու գիտելիքները: Քննարկման ընթացքում, ի տարբերություն բանավեճի, պետք չէ փնտրել հարցի կոնկրետ լուծում: Այն ավելի շատ նպաստում է տարբեր գաղափարների և տեսակետների արտահայտմանը:

**Սույն ձեռնարկի «Ինտերակտիվ ուսուցում» բաժնում կարելի է գտնել ուղղորդված քննարկում կազմակերպելու հնարի մանրամասն նկարագրություն: Աշակերտների և բանավիճողների համար օգտակար խորհուրդներ կարելի է գտնել սույն ձեռնարկի «Ինքնուրույն կազմակերպիչ ֆիլմերի ցուցադրություն» բաժնում:**

## Հաճախ հանդիպող խնդիրներ և դրանց լուծման եղանակներ

### Ես ունեմ տեխնիկական խնդիրներ...

Փորձարարական դպրոցների ուսուցիչները հաճախ հանդիպում են տեխնիկական այսպիսի խնդիրների՝ համակարգիչը հասանելի չէ, համակարգչային սենյակը զբաղված է, ֆիլմի ցուցադրման ժամանակ ձայնը և կադրը չեն համապատասխանում իրար, ուսուցիչը չունի նորագույն սարքավորումներով աշխատելու հմտություններ և այլն:

**Առաջարկություններ:** Նախքան ֆիլմի ցուցադրությունը միշտ պետք է ստուգել տեխնիկական սարքավորումները: Կարելի է դիմել իրազեկ աշակերտներին՝ աջակցելու տեխնիկական և ծրագրային հարցերում: Շատ դեպքերում հզոր համակարգչային սարքավորումների անհրաժեշտություն չկա: Փորձարարական դպրոցներում բավականին հաջողված դասեր են անց կացվել դյուրակիր համակարգչի (նոթբուքի) միջոցով (նույնիսկ առանց տեսաձրիչի և բարձրախոսի):

### Ես պետք է հետևեմ ուսումնական ծրագրին, և ֆիլմերի դիտման համար ժամանակ չկա...

Բնականաբար, ֆիլմերը հարմար չեն բոլոր առարկաների բոլոր թեմաների համար: Նրանք հիմնականում օգտակար են հասարակագիտական առարկաների համար: Փորձարարական դպրոցների ուսուցիչները ձեռնարկի նյութերը հաջողությամբ կիրառել են նաև պատմության դասերին և դասն առավել արդյունավետ մատուցել: Նյութերն օգտակար են նաև այն դեպքում, երբ տվյալ թեման ընդգրկված է ուսումնական ծրագրում, սակայն նոր դասագիրքը դեռևս չի տպագրվել:

### Ես ժամանակ և տրամադրություն չունեմ՝ ֆիլմի ցուցադրությամբ դաս անցկացնելու համար...

Ճիշտ է, նոր մեթոդների կիրառումը մեծ ջանքեր է պահանջում, սակայն փորձարարական դպրոցների ուսուցիչները հավաստում են, որ մեթոդն այնքան էլ դժվար և ժամանակատար չէ: Սկզբնական փուլում անհրաժեշտ է նոր մեթոդի կիրառման շարժառիթ ստեղծել, իսկ փորձառություն ձեռք բերելով՝ հետագա դասերն ինտերակտիվ մեթոդով անցկացնելու համար ավելի երկար ժամանակ չի պահանջվի, քան ավանդական դասի պատրաստման համար:

Արդյունքում և՛ աշակերտները, և՛ ուսուցիչները դասից առավելագույն հաճույք են ստանում:

## Ինչպես կիրառել սոց. հոլովակները

### Տասը հիմնական հրահանգներ՝ սոց հոլովակներով աշխատելու համար

1. Պետք է գիտակցել, որ սոց. հոլովակների կիրառումը **յուրահատուկ (նաև ինտերակտիվ) ուսուցման մեթոդ է**, և դրա էությունը միայն հոլովակի ցուցադրության մեջ չէ:
2. Անհրաժեշտ է **սոց. հոլովակը նախապես դիտել** և պատրաստ լինել զգացմունքային և հակասական դիրքորոշումների ի հայտ գալուն: Նախապես լավ պատկերացնելով սոց. հոլովակի թեման՝ հնարավոր կլինի պատասխանել բոլոր հարցերին:
3. Նախքան սոց. հոլովակի ցուցադրումը անհրաժեշտ է **աշակերտներին բացատրել մեթոդի նպատակը և հասկանալ, թե աշակերտներն ինչ գիտեն** սոց. հոլովակների մասին: Կարելի է օգտագործել դրդապատճառային փոքրիկ վարժություն, մտքերի տարափ՝ տեսակետներ լսելու համար և այլն:
4. Հոլովակի ցուցադրությունից անմիջապես հետո օգտակար կլինի, որ աշակերտները **կշռադասման կարգով ներկայացնեն իրենց տեսակետներն ու կարծիքները** (ինչը նրանք կփոխեն, կամ այլ կերպ կանեին):
5. Յուրաքանչյուր հոլովակի (կամ նույն թեմայով մի քանի հոլովակների) հետ կարելի է կատարել համապատասխան **վարժություններ, որոնց ընթացքում աշակերտները կարող են ներդնել սեփական փորձը** (դպրոցից կամ ընտանիքից) և տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները:
6. Փորձը ցույց է տվել, որ սոց. հոլովակներով աշխատանքը քննարկումների տեղիք է տալիս (տվյալ թեմայի շուրջ). պետք է այնպես անել, որ այդ ընթացքում դասարանում **հաճելի մթնոլորտ տիրի**:

Անհրաժեշտ է աշակերտների նկատմամբ դրսևորել **բաց և գործընկերային** մոտեցում՝ նրանց նույնպես ուղղորդելով դեպի այդ նպատակը:

7. Բոլոր վարժությունների ընթացքում աշակերտները պետք է **հնարավորություն ունենան միմյանց փոխադարձաբար օգնելու, խորհուրդներ տալու, քննարկելու և համագործակցելու**: Յուրաքանչյուր վարժություն պետք է ուղղված լինի հատուկ արդյունքի հասնելուն (արդյունքը պետք է հասանելի լինի աշակերտներին):
8. Սոց. հոլովակներով աշխատելու արդյունքում հիմնականում դրսևորվում են տարբեր տեսակետներ, արժեքներ և դիրքորոշումներ: Ուստի **պետք չէ ստիպել աշակերտներին, որ անպայման պատասխանեն, և նրանց պատասխանները գնահատելու անհրաժեշտություն չկա**: Անհրաժեշտ է երեխաների համար ազատ արտահայտվելու պայմաններ ստեղծել, ինչպես նաև օգնել նրանց, որպեսզի հարցերին մոտենան տարբեր տեսանկյուններից:
9. Աշակերտները պետք է **բավարար ժամանակ ունենան սոց.հոլովակի թեման հասկանալու**, ինչպես նաև **վարժություններ կատարելու** և ներկայացնելու համար:
10. Սոց. հոլովակով աշխատանքն ավարտելուց հետո լավ կլինի **ուղղորդել աշակերտներին ինքնուրույն կշռադատելու**, ինչը հնարավորություն կտա նրանց գնահատելու (կամ փորձելու գնահատել) իրենց տեսակետի կամ դիրքորոշման հնարավոր փոփոխությունը:

## **ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

### **Ընդհանուր առաջարկություններ և նկատառումներ ուսուցիչների համար**

- Երեխաներին չպետք է պարտադրվի հարցի լուծման մեկ և միակ տարբերակ:
- Անհրաժեշտ է հնարավորություն տալ երեխաներին՝ ձևավորելու իրենց մտքերն ու տեսակետները:
- Պետք է դրական արձագանքել հիմնական նպատակին ուղղված մտքին /տեսակետին:
- Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ է ձևավորել ընդհանուր պատասխանատվության զգացում:
- Պետք է վստահ լինել, որ բոլորը մասնակցում և կարողանում են արտահայտել իրենց տեսակետները:
- Արդյունքների վերաբերյալ ցանկացած դիտարկում անելու դեպքում չի կարելի օգտագործել մեղադրական մոտեցում (օրինակ՝ «Դու չես կարողացել հասկանալ պահանջը» արտահայտության փոխարեն ասել. «Այս վարժության ընթացքում դու շեղվել ես հիմնական առաջադրանքից»):
- Պետք է քննարկումը սկսել այն թեմաներից, որոնք լավ են ընկալվում և ընդհանուր են բոլորի համար, որպեսզի յուրաքանչյուրն ինչ-որ չափով կարողանա արտահայտվել:
- Ներկայացնել արդի և հետաքրքիր թեմաներ, օգտագործել աշակերտներին հայտնի օրինակներ տարբեր առարկաներից /թեմաներից:
- Աշխատել կարճ, հստակ և պարզ առաջադրանքներով:
- Վստահ լինել, որ աշակերտները լավ հասկացել են յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը:
- Չխուսափել կոնֆլիկտներից, հստակեցնել վիճելի թեմաները:
- Բավարար ժամանակ հատկացնել կատարված առաջադրանքների վերաբերյալ կշռադատման աշխատանքներին:
- Նպաստավոր պայմաններ ստեղծել նոր մտքերի և տեսակետների ձևավորման համար:
- Կանոններ սահմանել քննարկումների համար. առավել արդյունավետ կլինի դրանք ընդունել աշակերտների հետ և տեսանելի դարձնել բոլորին, օրինակ՝
  - ա) Յուրաքանչյուր աշակերտ արտահայտվելու իրավունք ունի, եթե մեկը խոսում է, պետք չէ ընդհատել նրան:

- բ) Լսիր ուրիշների կարծիքը, համաձայն չլինելու դեպքում անգամ մի՛ վիճիր:
- գ) Խոսիր թեմայի շրջանակներում, մի շեղվիր թեմայից: Խոսիր հստակ և խուսափիր երկար պատմություններից ու օրինակներից:
- դ) Եղիր պատրաստ՝ փոխելու սեփական կարծիքը և բացատրելու փոփոխության պատճառը:
- ե) Մի փորձիր պարտադրել, այլ փորձիր բացատրել սեփական կարծիքը:
- Ուշադրություն դարձնել այն ամենին, ինչ կատարվում է դասարանում և շրջակայքում:
  - Պետք չէ մեղադրել (դուք քննադատ չեք), պետք է միայն նպաստել տարբեր տեսակետների ձևավորմանը, թեմայի դժվարությունների ընկալմանը և հաղթահարմանը, խնդրի լուծման եղանակներ գտնելուն:
  - Պետք է ի վիճակի լինել ասելու, որ ինչ-որ բան չգիտեք, պետք է լինել գործընկեր, այլ ոչ թե փորձագետ:
  - Արժևորել աշակերտներին, ամբողջ ընթացքում կարևորել նրանց ձեռքբերումները:
  - Հիշեք եռափուլ (ԽԻԿ) համակարգի տեսությունը. վավերագրական ֆիլմերը դասապրոցեսում կիրառելը հնարավորություն է տալիս հետևելու դասապրոցեսի կազմակերպման երեք հիմնական փուլերին.
- ա) **Փուլ 1՝ Խթանում.** հիմնվել աշակերտների նախկին փորձառության և գիտելիքների վրա և հետաքրքրություն առաջացնել թեմայի վերաբերյալ. որոշ դեպքերում արդյունավետ է այն անցկացնել խաղերի միջոցով:
- բ) **Փուլ 2՝ Իմաստի ընկալում.** նյութի փոխանցում՝ նոր փաստերի և տեղեկությունների միջոցով՝ ներկայացնելով ֆիլմը և նրա թեման: Անհրաժեշտության դեպքում նախքան ֆիլմի ցուցադրությունը կարելի է տրամադրել ընդհանուր տեղեկություններ:
- գ) **Փուլ 3՝ Կշռադատում.** աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ ու հմտություններ, և փոխվում է նրանց վարքագիծը: Այն հիմնական փուլ է համարվում, թեև հաճախ չի իրականացվում ժամանակի սղության պատճառով: Այս փուլը նույնպես կարելի է իրականացնել խաղային վարժությունների միջոցով:

## ՄՏՔԵՐԻ ՏԱՐԱՓ

Այս մեթոդը զարգացնում է ստեղծագործական մոտեցումն ու երևակայությունը: Այն հնարավորինս շատ գաղափարների վերհանման հնարավորություն է տալիս և օգնում գտնել տարբեր խնդիրների լուծումներ: Դրա միջոցով կարելի է բացատրել տարբեր երևույթների հիմնական հայեցակետերը: Այս մեթոդի առավելությունն այն է, որ ոչ այնքան ակտիվ աշակերտները կարող են միանալ և մասնակցել գործընթացին: Այն օգնում է երկչոտ աշակերտներին բարձրացնել ինքնավստահությունը, և աշակերտները արժևորում են իրենց գիտելիքն առանց ուսուցչի սովորական ցուցումների: Ընդհանուր ուժերով ձեռք բերված գիտելիքները հիշողության մեջ դրոշմվելու ավելի մեծ հավանականություն ունեն:

## Հնարքներ և կանոններ

- ա) Հստակ նշել այն հիմնախնդիրը, որի վրա պետք է աշխատել, կամ ընտրել քննարկվելիք հասկացությունը:
- բ) Աշակերտներն արտահայտում են թեմայի վերաբերյալ իրենց պատկերացումները և անմիջապես նշում բոլոր մտքերը գրատախտակի վրա:
- գ) Պետք չէ դատապարտել կամ քննադատել որևէ միտք: Պետք է խրախուսել անկախ և ինքնաբերական մտքերը՝ առանց դրանք կարգավորելու կամ որևէ կերպ դասավորելու:
- դ) Աշակերտները պետք է զերծ մնան այլոց մտքերի վերաբերյալ մեկնաբանություններից, ծաղրական դիտողություններից կամ նսեմացնող արտահայտություններից:
- ե) Եթե մտքերի հոսքը շարունակվում է, ապա այն պետք է գրի առնել:

- գ) Եթե դասարանը մեծ է, ապա աշխատանքը կարելի է սկսել խմբերով: Մտքերը ներկայացնում է խմբի անունից խոսող աշակերտը, իսկ մյուսները կարող են ավելացնել իրենց մեկնաբանությունները:
- ե) Աշակերտներից ստացված նյութը և մտքերն այնուհետև դասակարգվում են: Կարելի է փնտրել լավագույն լուծումը, գնահատել և ամփոփել նյութը:

Մտքերի տարափի մեթոդով կառուցված է «**Երեխաների իրավունքները. Մեսրա**» ֆիլմի «**Ինչպես կարելի է ապրել փողոցում**» վարժությունը:

**ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Խմբային աշխատանքն ունի շատ առավելություններ. աշակերտները սկսում են համագործակցել: Նրանք սովորում են գտնել խմբի առաջնորդին և ստանձնում խմբում իրենց սեփական դերը՝ ձևավորելով հաղորդակցման հմտություններ: Նրանք աշխատում են միասին, երբ առկա են տարբեր կարծիքներ: Հասկանում են, թե երբ է նախընտրելի փոխզիջման գնալ, և երբ է կարևոր պաշտպանել սեփական կարծիքն ու դիրքորոշումը: Նրանք տիրապետում են կոնֆլիկտի սկզբունքներին և սովորում, թե ինչպես կարելի է խուսափել դրանից և լուծումներ փնտրել: Այս մեթոդը թույլ է տալիս ներգրավել նաև պակաս ակտիվ աշակերտներին:

**Հնարքներ և կանոններ**

- ա) Աշակերտներին բաժանել խմբերի՝ պատահական կարգով (օրինակ՝ ասելով նրանց անունները) կամ որևէ այլ սկզբունքով (օրինակ՝ տղաներ-աղջիկներ և այլն):
- բ) Անդամների թիվը խմբում կարող է տարբեր լինել. հնգական աշակերտներով խմբերի կազմավորումը լավագույն տարբերակ է (կենտ թիվը կարող է ապահովել մեծամասնության մասնակցությունը քվեարկությանը): Եթե խմբում աշակերտների թիվը հինգից ավելի է և բոլորը չեն կարող արտահայտվել, ապա աշխատանքը դանդաղում և դառնում է պակաս արդյունավետ:
- գ) Եթե աշխատանքի սկզբում խնդիրներ են առաջանում, ապա պետք է օգնել պարզելու իրավիճակը, բացատրել, այնուհետև աշակերտներին թույլ տալ անկախ աշխատել:
- դ) Պետք է առաջադրանքը հստակ սահմանել և համոզվել, որ բոլորը հասկանում են այն, և ամեն ոք ունի աշխատանքի համար անհրաժեշտ տեղեկատվություն:
- ե) Պետք է հենց սկզբից սահմանել առաջադրանքի տևողությունը: Այն պետք է բավական երկար լինի, որպեսզի հնարավոր լինի իրականացնել որակյալ աշխատանք:
- զ) Խմբի անդամները նստում են միասին, որպեսզի կարողանան իրար լավ լսել: Միայն այդ կերպ կարելի է բոլորին ներգրավել ընդհանուր աշխատանքի մեջ:
- է) Յուրաքանչյուր աշակերտ պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա: Խմբի մնացած անդամները սովորում են, թե ինչպես փոխզիջումների գնալ և համագործակցել:
- ը) Կարևոր է աշակերտներին վարժեցնել՝ լսելու պատրաստակամություն դրսևորել, այլոց աջակցել և կոնֆլիկտների դեպքում՝ հարթել դրանք:
- թ) Որոշ գործնական վարժությունների ժամանակ կարելի է հետզհետե մեծացնել խմբերի չափը՝ երկուսից մինչև չորսը և ավելին:

Խմբային աշխատանք մեթոդի կիրառման դեպքում՝

- պետք է գնահատել խումբն ամբողջությամբ,
- ձգտել, որ աշխատանքի ընթացքում բարձրանա ամբողջ դասարանի ակտիվությունը,
- շրջել դասարանով և հարկ եղած դեպքում օգնել աշակերտներին:

Խմբային աշխատանքի մեթոդը կիրառված է «**Երեխաների իրավունքները. Աննա**» ֆիլմի «**Արգելված - թույլատրված**» վարժության մեջ:

## ՄՏՔԵՐԻ ՔԱՐՏԵԶ

Այս մեթոդը թույլ է տալիս աշակերտներին՝ ձևավորել և համակարգել սեփական մտքերը, ինչպես նաև վերլուծել որոշակի հասկացություններ կամ հարցեր: Այն նաև հնարավորություն է ընձեռում աշակերտներին՝ արագ սեփական կարծիքներն ու վերաբերմունքը ձևավորել: Փոխկապակցված առանձին հասկացությունների համոզիչ և պարզ ներկայացումն ի հայտ է բերում խնդրի ողջ բարդությունը: Դրանից բացի՝ մտքերի քարտեզը հետագա գործողությունների և տվյալ թեմայով նոր տեղեկություններ ստանալու շարժառիթ է դառնում: Կարող են լինել այնպիսի հարցեր, որոնց պատասխանները դասարանը չի ունենա: Դա կարող է որոշակի թեմայի շուրջ քննարկման հիմք դառնալ: Այս մեթոդը կարելի է համադրել խմբային աշխատանքի հետ:

## Հնարքներ և կանոններ

- ա) Որպես օրինակ կարելի է գրատախտակի վրա նշել քարտեզի հիմնական գաղափարը, ասել է թե՛ այն հասկացությունը, որը քննարկվելու է (օրինակ՝ *կոնֆլիկտներ*):
- բ) Հիմնական գաղափարին պետք է ավելացնել նոր հասկացություններ, գաղափարներ կամ հարցեր՝ ըստ աշակերտների ձևակերպումների (օրինակ՝ *Ինչ տեսակի կոնֆլիկտներ են մեզ հայտնի: Որո՞նք են դրանց հարթման եղանակները: Որո՞նք են կոնֆլիկտների առաջացման պատճառները:*)
- գ) Այնուհետև պետք է կցված հարցերը զարգացնել աշակերտների մտքերով և հետզհետե դրանք գումարել ձևավորվող քարտեզին (օրինակ՝ այն հարցին, թե *«Ինչ կոնֆլիկտներ են ձեզ հայտնի»*, կարելի է կցել հետևյալը՝ *կրոնական, էթնիկական, միջխմբային, միջանձնային և այլն*):
- դ) Նման քարտեզ ստեղծելու մեթոդը կրկնվում է որոշ հասկացությունների զարգացման ժամանակ:
- ե) Որոշակի պահի կարելի է ընդհատել մտքերի քարտեզի ստեղծումը և խնդրել աշակերտներին՝ զարգացնելու քարտեզի միայն մեկ մասը, այսինքն՝ այն, որի վրա պետք է կենտրոնանալ տվյալ դասի ընթացքում: Քարտեզի այդ մասը կարելի է ընդգծել գույներով:
- զ) Պետք է հաշվի առնել յուրաքանչյուր հասկացություն. նշել աշակերտների իմացած և նրանց մտքին եկած ամեն բան:
- է) Անհրաժեշտ է մի կողմ դնել գնահատման «ճիշտ» և «սխալ» որակումները:
- ը) Սահմանված ժամանակից հետո աշակերտներին պետք է ուղղորդել դեպի եզրահանգում և դրա շուրջ համաձայնության գալ (եթե դասարանն աշխատում է խմբերով, ապա դա արվում է յուրաքանչյուր խմբի աշխատանքի արդյունքը ներկայացնելուց հետո): Այսպես կարելի է պատկերացում կազմել տվյալ թեմայի վերաբերյալ դասարանի գիտելիքների և կարծիքների մասին և ավարտել աշխատանքը մտքերի քարտեզի վրա:
- թ) Կարելի է նաև խնդրել աշակերտներին ստեղծել իրենց սեփական կանոնները տվյալ գործնական վարժության համար, որպեսզի դրանք ուսուցչի կողմից չներկայացվեն:

## Հնարավոր շարունակություն

Մտացված տեղեկությունների **մանրամասնում** կամ **դասակարգում**: Ուսուցիչը կարող է գունավոր մարկերներով տարբերակել տեղեկությունների որոշ տեսակները (օրինակ՝ փաստերը և սուբյեկտիվ տեղեկությունները):

**Դասախոսություն.** կարելի է ներկայացնել հիմնական փաստեր:

**Քննարկում.** կարելի է ընտրել վիճահարույց թեմաներից որևէ մեկը:

**Ծրագիր.** աշակերտների հետ պետք է ընտրել մտքերի քարտեզի այն մասը, որը պարունակում է ամենաշատ անպատասխան հարցերը և նվազագույն փաստեր, որպեսզի աշակերտները կարողանան առկա աղբյուրներից գտնել բացակայող տեղեկատվությունը և ներկայացնել:

Մտքերի քարտեզի մեթոդը ներառված է **«Հեծանիվների բրիստոլյան ծրագիրը»** ֆիլմի **«Տուն»** վարժության մեջ:

## ՀԱՏՈՒԿ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ

Այս մեթոդը թույլ է տալիս ավելի լավ ընկալել առօրյա կյանքի հատուկ իրավիճակները: Աշակերտները որոշակի կանոնների կարող են հետևել մոդելավորվող այն իրավիճակներում, որոնց մասին նրանք տեղեկանում են լրատվամիջոցներից, գրքերից, կամ որոնք նրանք վերապրել են անձամբ՝ նախկինում չկարողանալով գնահատել այն: Որոշակի իրավիճակի մոդելավորմամբ նրանք կարող են ուշադրություն դարձնել սեփական մտքերին և գործողություններին, նոր եզրակացություններ անել, կարծիք և վերաբերմունք ձևավորել, ինչն իրական կյանքում նրանց չի հաջողվել, կամ սխալ որոշում են կայացրել: Այս մեթոդը օգնում է լուծման հնարավոր լավագույն տարբերակը գտնել, ինչպես նաև խթանում է առավել խոր մտածողությունն ու անկախ որոշումների կայացումը:

### Հնարքներ և կանոններ

- ա) Աշխատանքային թերթիկի կամ ուսուցչի հայտարարության միջոցով նախապես պատրաստած մոդելավորման ենթակա պատմությունը ներկայացվում է աշակերտներին:
- բ) Աշակերտներին ուղղված լրացուցիչ հարցերի միջոցով պետք է պարզել, թե ինչպես են նրանք հասկացել ներկայացված տեքստը (օրինակ՝ *Պատմության մեջ ո՞ր փվյալներն են կարևոր: Ինչու՞ են իրավիճակում պատկերված մարդիկ այդ կերպ վարվում, և որոնք են նրանց վարքի շարժառիթները: Ուրե՞ր են իրավիճակի հիմնական հերոսները: Ինչ է տեղի ունեցել իրականում): Այս ստուգումն անհրաժեշտ է նախքան իրավիճակի մոդելավորման սկիզբը: Այն պարզաբանում է իրավիճակի հետ կապված հնարավոր թյուրըմբռնումները:*
- գ) Պետք է պաշտպանել կամ վիճարկել մոդելավորվող պատմության հետ կապված տարբեր տեսակետները: Քննարկման այս մասում անհրաժեշտ է խնդիրը պարզ և ընկալելի սահմանել: Գործընթացը տեղի է ունենում ուղղորդված ձևով. աշակերտները պատասխանում են հարցերին: (օրինակ՝ *«Որո՞նք են որոշակի լուծման օգտին կամ դրա դեմ փաստարկները», «Ո՞ր փաստարկներն էին առավել համոզիչ», «Ինչպիսի՞ հետևանք կունենա ձեր առաջարկած լուծումը դրան առնչվող բոլոր մարդկանց համար», «Արդյոք այլընտրանք գոյություն ունի»:)*
- դ) Պետք է համոզվել, որ հարգանքի և ապահովության մթնոլորտ է տիրում: Ոչ մի կարծիք չպետք է ծաղրի առարկա դառնա: Բոլոր մտքերը ողջունելի են: Յուրաքանչյուրը պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա, նույնիսկ եթե նրա առաջարկած լուծումը վիճահարույց է և անընդունելի:
- ե) Պետք է միասին կշռադատել բոլոր կարծիքները և համաձայնության գալ որևէ լուծման վերաբերյալ:
- զ) Այնուհետև բոլոր աշակերտները պետք է միասին աշխատեն, որպեսզի ընդհանուր լուծում գտնեն: Խնդիր չէ, եթե մի քանի լուծումներ առաջարկվեն:
- է) Աշակերտներին պետք է ներկայացնել այն հանգամանքները, որոնք հարկավոր է հաշվի առնել իրական իրավիճակում: Դրանք կարող են կրկին քննարկվել, և ցանկացած ոչ հստակ կետ կարող է պարզաբանվել ու համեմատվել այլ առաջարկությունների հետ:
- ը) Նույնիսկ այստեղ հարկ է գիտակցել, որ տվյալ գործնական վարժության բացասական հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է որոշակի փորձ:

Հատուկ իրավիճակների մոդելավորման մեթոդը ներառված է **«Սանտայի արհեստանոցը»** ֆիլմի **«Արհմիության հանդիպում»** վարժության մեջ:

### ԱՋԱՏ ԳՐԱՎՈՐ ՇԱՐԱԴՐԱՆՔ

Այս մեթոդը կարելի է կիրառել նոր թեմա ներկայացնելիս: Այն նպատակամիտված է ազատ արտահայտելու այն մտքերը, որոնք կառուցվածքային գրավոր վարժություններում դժվարությամբ են ձևակերպվում: Հետաքրքիր է, թե ինչպես է աշակերտն ըմբռնում որոշակի հասկացությունը կամ թեման և ինչպես է նա նոր հնարավորություններ ստեղծում դրա իմաստավորման համար: Այս գործնական վարժությունը զարգացնում է արտահայտչական կարողությունները և թույլ տալիս ըմբռնել նկարագրված հասկացության գուգորդական կապերը կամ դրա բարդությունը:



### Հնարքներ և կանոններ

- ա) Մտքերի տարափի օգնությամբ ուսուցիչը գրատախտակի վրա նշում է 10 հասկացություն, որոնք տվյալ թեմայի առնչությամբ առաջարկվում են աշակերտների կողմից (օրինակ՝ *ուսուցչի թեմայով նրանք կարող են թվարկել՝ նախապաշարմունք, կոնֆլիկտ, մեքենայություններ, հաղորդակցում, խորականություն, եսասիրություն, վախ, ցեղասպանություն և այլ հասկացություններ*):
- բ) Յուրաքանչյուր աշակերտ նշում է այն հասկացությունը, որով առավելապես հետաքրքրված է: Հետո բոլորը կենտրոնանում են առավելագույն միավորներ ստացած հասկացության վրա:
- գ) Նախքան գրավոր շարադրությանն անցնելը աշակերտներին պետք է հիշեցնել, որ այս վարժությունը կատարելիս քերականական վրիպումները չպետք է մտահոգեն նրանց: Բանն այն է, որ այդ մտահոգությունը կարող է խափանել մտքերի ազատ հոսքը:
- դ) Յուրաքանչյուր հարցին անհրաժեշտ է պատասխանել որոշակի ժամանակում: Այս պայմանը պարտադիր է, և այս մասին աշակերտներին պետք է տեղեկացնել: Սահմանված ժամանակի սկզբից մինչև վերջ աշակերտները չպետք է դադարեն գրի առնել իրենց մտքերը:
- ե) Աշակերտները պետք է հետևեն թեմային, սակայն ոչ մի դեպքում չպետք է ընդհատեն իրենց գրավոր շարադրանքը (նրանք կարող են նույնիսկ գրել այսպես. *«Ես չգիտեմ, ես գաղափար չունեմ, ձեռքս ցավում է կամ մտքիցս ամեն ինչ թռել է»*): Փորձը ցույց է տալիս, որ որոշ ժամանակ անց նոր գաղափարներ ու մտքեր են ի հայտ գալիս:
- զ) Ժամանակը պետք է սահմանել՝ ելնելով աշակերտների կարողություններից: Սովորաբար մեկ հարցի համար այն կազմում է 2-ից 6 րոպե:
- է) Կանոնների բացատրությունից հետո առաջադրվում են հարցերը: Աշակերտները կարող են այդ հարցերին պատասխանել առանձին-առանձին, ընդ որում, դրանց միջև նախատեսվում է շատ կարճ ընդմիջում (30 վայրկյան): Կատարյալ կլիներ, եթե տրվեր 6 հարց, սակայն գործնականում բավական է օգտագործել հետևյալ երեք հարցերը. *«Ինչ է սա», «Ինչն է մերովի նույնականանում այս հասկացության /թեմայի հետ», «Գրի առեք այս հասկացության դրական և բացասական կողմերը, կամ՝ ինչ լավ կամ վատ զգացումներ է առաջացնում այս հասկացությունը /թեման»*:
- ը) Աշակերտները կարող են հերթով ներկայացնել իրենց մտքերը /աշխատանքները: Պետք է հարգել այս վարժության կատարման կամավորության սկզբունքը և չպետք է հարկադրել որևէ մեկին մասնակցել դրան: Աշակերտների թույլտվությամբ կարելի է ցուցադրել նրանց աշխատանքը դասարանին, որպեսզի ազատ ժամանակ բոլորը կարողանան կարդալ մյուսների աշխատանքները:
- թ) Անդրադարձ մտորումները պետք է նվիրված լինեն զգացումներին և դիտարկումներին. *«Ո՞ր հարցն է եղել ամենաբարդը: Այդ հարցի մասին գրելիս ի՞նչ զգացումներ եք ունեցել: Արդյոք դուք բացահայտեցի՞ք մի տեսակետ, որը ձեզ համար անակնկալ դարձավ»*:

Ազատ գրավոր շարադրանքի մեթոդը ներառված է **«Երեխաների իրավունքները. Փամելա»** ֆիլմի **«Նամակ»** վարժության մեջ:

### ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿ

Այս գործնական վարժությունն օգտագործվում է վիճահարույց թեմա քննարկելիս: Աշակերտների առջև նպատակ է դրված արտահայտել իրենց վերաբերմունքը՝ զբաղեցնելով այն տեղը սանդղակի վրա, որը լավագույնս համապատասխանում է այդ հարցի շուրջ իրենց ունեցած իրական կարծիքին: Պետք է օգտվել այս մեթոդից՝ համոզված լինելով, որ հնարավոր է հստակ ձևակերպել խնդրի երկու հակառակ բևեռները: Երկու բևեռներն էլ պետք է լինեն հիմնավորված, իրատեսական և տրամաբանական: Այս կերպ ուրվագծված թեմաները չունեն ակնհայտ կամ միակողմանի լուծումներ: Նրանք ընկալվում են որպես սիրողական և մասնագետ հանդիսատեսների երկու խումբ, որոնք հիմնավոր փաստարկներով կարող են պաշտպանել իրենց կարծիքը: Այս գործընթացը տվյալ թեմայի վերաբերյալ բոլոր մոտեցումները հաշվի առնելու և այլընտրանքային տարբերակներ մտաբերելու կարողությունն է զարգացնում:

**Հնարքներ և կանոններ**

- ա) Պետք է աշակերտներին ծանոթացնել թեմային՝ գրատախտակի թերթերի վրա գրելով երկու հա- կասական տեսակետ (բևեռ), որոնք հեշտությամբ ըմբռնելի են բոլորի համար: Գրատախտակի յուրաքանչյուր թերթում ներկայացված է այդ տեսակետներից որևէ մեկը: Պետք է տեղադրեք այդ թերթերով գրատախտակները դասարանի հակառակ կողմերում կամ հակառակ անկյուններում:
- բ) Պետք է խնդրել, որ ուրաքանչյուր աշակերտ կարողանա հիմնավորել սեփական կարծիքը և դիր- քորոշումը:
- գ) Կարելի է դասասենյակի մեջտեղով կավիճով գիծ քաշել՝ մի թերթից դեպի մյուսը (դա նաև կարող է լինել երևակայական գիծ), որն իրենից կներկայացնի կարծիքների սանդղակը հակառակ բևեռ- ների միջև:
- դ) Պետք է խնդրել աշակերտին զբաղեցնել այն տեղը սանդղակի վրա, որը համապատասխանում է իր կարծիքին:
- ե) Պատահական ընտրությամբ մի քանի աշակերտի առաջարկել բացատրել այդ տեղում կանգնելու իրենց դրդապատճառները և պաշտպանել այդ դիրքորոշումը:
- զ) Աշակերտները կարող են փոխել իրենց տեղը սանդղակի վրա՝ ըստ այն հանգամանքի, թե ինչպի- սի ազդեցություն են գործում նրանց վրա ուրիշների փաստարկները:
- է) Անհրաժեշտ է խրախուսել աշակերտներին՝ կրկին մտածելու սանդղակի վրա իրենց դիրքորոշ- ման մասին: Կարելի է կրկնել աշակերտների կողմից ներկայացված որոշ փաստարկներ:
- ը) Վերջում, երբ աշակերտները զբաղեցնում են իրենց սովորական տեղերը, պետք է քննարկել նրանց կողմից ներկայացված առավել հետաքրքիր կարծիքները, բանավիճել այլընտրանքային կարծիքների շուրջ և փորձել փոխզիջում գտնել:

«Կարծիքների սանդղակ» մեթոդի մի բաղադրիչ ներառված է **«Երեխաների իրավունքները. Փա- մելա»** ֆիլմի **«Արժեքների սանդղակ»** վարժության մեջ:

**ՈՒՂՈՐԴՎԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄ**

Վերոհիշյալ մեթոդներն առաջացնում են վիճահարույց հարցեր, որոնք քննարկվում են աշակերտ- ների հետ: Աշակերտները սովորում են, թե ինչպես որոշումներ կայացնել, կարծիք կազմել, պաշտ- պանել սեփական դիրքորոշումը և դրա համար պատասխանատվություն կրել: Նրանք նաև ծանո- թանում են այնպիսի սոցիալական հմտությունների, ինչպիսիք են՝ ապրումակցումը, կոնֆլիկտների կառավարումը և փոխզիջումների ընդունումը: Ուղղորդված քննարկումը ուսուցչից կարող է պահան- ջել աշակերտների զգացմունքները դեպի կառուցողական եզրահանգումներ ճիշտ ուղղությամբ տա- նելու կարողություն: Այս գործնական վարժությունը աշակերտներին պարտադրում է նաև սովորել քննարկումներ վարելու հիմնական կանոնները:

**Հնարքներ և կանոններ**

- ա) Սկզբում սահմանել քննարկումների տարրական կանոնները:
- բ) Խրախուսել աշակերտներին, որպեսզի նրանք չվախենան արտահայտել վիճահարույց մտտե- ցումներ:
- գ) Ստեղծել վստահության մթնոլորտ: Աշակերտները պետք է համոզված լինեն, որ հավասարա- պես, լրջորեն և հանգամանորեն հաշվի է առնվում յուրաքանչյուր մտտեցում և կարծիք:
- դ) Չպետք է մոռանալ առաջադրել այն փաստարկները, որոնցից խուսափել են աշակերտները, պետք է ուշադրությունը հրավիրել այն տեղերի վրա, որտեղ կարելի է համաձայնություն կամ ան- համաձայնություն արտահայտել, կամ որտեղ հնարավոր կամ անհնար է փոխզիջման գալ:
- ե) Չպետք է թույլ տալ, որ քննարկումը վերածվի ուրիշների քննադատության, այլ պետք է մնա որ- պես կարծիքների, մտտեցումների և մտքերի ձևակերպում:
- զ) Պետք է ընդգծել, որ քննարկման նպատակը ոչ թե որոշակի արդյունքներ և տվյալ խնդրի լուծում-

ներ ստանալն է, այլ սեփական կարծիքը հանգամանորեն ներկայացնելն ու հակառակ մտուցումները լսել կարողանալն է:

- է) Պետք է ավարտել այս գործնական վարժությունը՝ ամփոփելով բոլոր արդյունքները և փորձելով պատկերացնել առաջարկված այլընտրանքային տարբերակների հետևանքները:

Ուղղորդված քննարկման մեթոդը ներառված է «Սանտայի արհեստանոցը» ֆիլմի «Ինչ է թաքնվում ապրանքանիշի հետևում» վարժության մեջ:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Այս մեթոդն օգտագործելիս աշակերտը կամ աշակերտների խումբն աշխատում է գտնել կոնկրետ խնդրի լուծումը: Այն թույլ է տալիս աշակերտներին սովորել և վարժվել որոշակի ընթացակարգերին և մեթոդներին, որոնք միշտ չէ, որ համընկնում են այլ գործնական վարժությունների հետ: Այս մեթոդը բարդ է, այն կիրառվում է կոնկրետ թեմային առնչվող աշխատանքը լավ կազմակերպելու, պարզ առաջնահերթություններ սահմանելու և որոշակի ժամկետային սահմաններում առաջադրանքներ հանձնարարելու նպատակով: Այս մեթոդը նախկին մեթոդների հետ կապված է այնքանով, որ վերջիններիս եզրահանգումները նույնպես հանգեցնում են որևէ նախագծի ստեղծման:

### Հնարքներ և կանոններ

- ա) Պետք է աշակերտներին տալ հստակ հանձնարարություն (օրինակ՝ *գտնել հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին բոլոր առկա տեղեկությունները*): Լավ է, երբ թեման առաջարկվում է հենց աշակերտների կողմից: Հակառակ դեպքում՝ ձեռնարկված միջոցառումը կարող է ձախողվել:
- բ) Անհրաժեշտ է առաջարկել առավել կոնկրետ ծրագիր և նախագծի կառուցվածք:
- գ) Ուսուցչի միջամտության աստիճանը պայմանավորված է աշակերտների խմբի մակարդակով և գիտելիքներով:
- դ) Պետք է վերահսկել ծրագրերի սահուն ընթացքը և անհրաժեշտության դեպքում նախագծի առանձին մասերի վերաբերյալ խորհրդատվություն տալ:
- ե) Ապահովել, որ նախագծի համար սահմանված ժամկետները պահպանվեն, և աշակերտներին հիշեցնել վերջնաժամկետի մասին:
- զ) Աշակերտները ներկայացնում են իրենց նախագծի արդյունքները:
- է) Այս գործնական վարժության ավարտին անցկացվում է քննարկում՝ նվիրված նախագծի արդյունքներին, ինչը կարող է հետագա հետազոտությունների շարժառիթ դառնալ:

Նախագծային ուսուցման մեթոդը ներառված է «SOS Սևան» ֆիլմի «Ջրային ռեսուրսների կառավարում» վարժության մեջ:

## ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՐ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Ի տարբերություն ձեռնարկի մյուս բաժինների՝ այս բաժինը նախագծված է զուտ աշակերտների համար:**

Խոսքը աշակերտների կողմից իրենց հասակակիցների կամ ամբողջ համայնքի համար կազմակերպվող ցուցադրությունների մասին է: Աշակերտների համար ձեռնարկն ունի պարզ ուղեցույց, թե ինչպես կարելի է կազմակերպել ֆիլմերի հանրային ցուցադրություն և դրան հաջորդող քննարկում:

Բացի ձեռնարկին կից ութ ֆիլմերից՝ աշակերտները կարող են «Մարդը կարիքի մեջ» ՀԿ հայաստանյան գրասենյակից ձեռք բերել նաև այլ ֆիլմեր:

Հանրային ցուցադրություն ասելով հասկանում ենք դասերից դուրս կազմակերպված բոլոր ցուցադրությունները՝ դպրոցում, հասարակական վայրերում և այլն:

Ֆիլմերի հանրային ցուցադրության և հաջորդող քննարկումների կազմակերպման համար անհրաժեշտ է նախապատրաստվել:

**Ինչպես**

Ֆիլմերի ցուցադրություն կազմակերպելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է առաջնորդվի հետևյալ քայլերով:

- Հավաքել կազմակերպչական թիմը, ապա հստակորեն հաստատել անդամների լիազորություններն ու պարտականությունները, որը թույլ կտա ժամանակ խնայել և խուսափել թերություններից:
- Ուղղակի շփում հաստատել ուսուցիչների և դպրոցի ղեկավարության հետ: Հանդիպել նրանց և ներկայացնել պլանը:
- Պլանավորել՝ որտեղ և երբ կարող է տեղի ունենալ ցուցադրումը, և ինչ տեխնիկական պահանջներ կան (պրոյեկտոր, DVD նվազարկիչ, սենյակի մթնեցում և այլն): Եթե չկան հարմար պայմաններ, ապա փորձել ժամանակավորապես վերցնել անհրաժեշտ սարքավորումներ:
- Մտածել ցուցադրման թեմայի մասին և ընտրել ցուցադրվելիք ֆիլմը:
- Որոշել, թե ո՞վ է մասնակցելու բանավեճին (հյուրը) և կապ հաստատել նրա հետ: Չիմանալու դեպքում՝ ում հրավիրել, պետք է կապվել այն կազմակերպության կամ հաստատության հետ, որը զբաղվում է նման հարցերով:
- Վերցնել ֆիլմը (այն կարելի է գտնել «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության հայաստանյան գրասենյակում կամ դպրոցի տեսադարանում):
- Մտածել, թե ինչպես կարելի է արդյունավետ կերպով ներկայացնել ծրագիրը, քանի որ, եթե հանդիսատեսը տեղյակ չլինի ցուցադրման մասին, ապա ոչ ոք չի գա: Պետք չէ հիասթափվել, եթե սկզբում ներկաների թիվը քիչ լինի: Դա սովորական երևույթ է. վավերագրական ֆիլմերը հովիվուդյան արկածային կինոնկարներ չեն, և հանդիսատեսը սկզբում պետք է ընտելանա դրանց:
- Պատրաստվել քննարկման, մտածել քննարկվող թեմայի մասին: Փնտրել իրական տեղեկություններ այդ թեմայի վերաբերյալ և պատրաստել բավականաչափ հարցեր հյուրերի համար: Անցկացնել փորձական ցուցադրում, ստուգել ամեն ինչ և փորձարկել տեխնիկան:
- Անցկացնել ֆիլմի ցուցադրումն ու քննարկումը:
- Թիմակիցների հետ գնահատել տեղի ունեցածը: Ինչը կարելի է բարելավել և ինչի պետք է ձգտել հաջորդ անգամ: Կարելի է նաև ստանալ հանդիսատեսի արձագանքը հարցաթերթիկների օգնությամբ:

**Կազմակերպել որակյալ քննարկում վավերագրական ֆիլմի ցուցադրումից հետո**

Ցուցադրումը կարող է լրացվել դրան հաջորդող խմբային քննարկմամբ: Դրա նպատակն է՝ քննարկվող թեմայի շուրջ տարբեր տեսանկյուններից խորհել, և այդ թեմայի վերաբերյալ հիմնավորված կարծիք ձևավորել:

Հնարավոր է նաև հյուր հրավիրել, ով քննարկման թեմայի վերաբերյալ ավելի շատ բան կիմանա և ի վիճակի կլինի պատասխանել հանդիսատեսի հարցերին:

Թեմայի քննարկումը կարևոր միջոց է մարդկանց քննադատաբար մտածելու հմտություն հաղորդելու համար: Այն ստեղծում է նաև մի ինտերակտիվ միջավայր, որը հանդիսատեսին թույլ է տալիս կիսել զգացումները նոր ձեռք բերած փորձի վերաբերյալ, կարծիքներ փոխանակել և հարստացնել սեփական գիտելիքները:

Քննարկման ժամանակ, բանավիճելուց բացի, պետք չէ փնտրել որևէ խնդրի կոնկրետ լուծումներ: Քննարկումը զրույց է և տարբեր մարդկանց միջև կարծիքների փոխանակում:

## Ինչպե՞ս

Ֆիլմերի ցուցադրությանը հաջորդող քննարկում կազմակերպելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է առաջնորդվի հետևյալ քայլերով.

- Նախ՝ թիմի այլ անդամների հետ դիտել վավերագրական ֆիլմը՝ դրա հիմնական գաղափարին, մեկնաբանություններին և ներկայացված կարծիքներին ծանոթանալու նպատակով:
- Անհրաժեշտ է որոշել, թե ֆիլմի ո՞ր տարրն է հարմար քննարկման համար (արծարծված հիմնախնդիրները, մտորելու թեմաները և այլն): Պետք է ընտրել մեկ թեմա և կենտրոնանալ դրա վրա՝ գտնելով այդ թեմայի վերաբերյալ վերջին տեղեկություններն ու պատրաստելով քննարկման կառույցը:
- Եթե հյուրի ներկայությունն ավելի հետաքրքիր կդարձնի քննարկումը, ապա պետք է ընտրել հիմնախնդրի հետ առնչություն ունեցող մի քանի մարդկանց և քննարկմանը մասնակցելու հրավեր ուղարկել նրանց: Ավելի լավ է՝ միշտ նկատի ունենալ մի քանի հոգի, որպեսզի չհայտնվել մի իրավիճակում, երբ ընտրված անձը չի գալիս միջոցառման, և հարկավոր է կրկին հյուր փնտրել:
- Հյուրին պետք է ներկայացնել հիմնական թեման, բանավեճի ուղղության ընթացքը, ինչպես նաև քննարկման կանոնները:

## Ինչպե՞ս լավ վարել միջոցառումը

Միջոցառումը լավ վարելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է ի նկատի ունենա, որ.

- Անձը, ով պետք է վարի քննարկումը՝ պետք է կարողանա արտահայտվել արագ և վստահ, ինչպես նաև հեշտ ընկալել իրավիճակը:
- Քննարկման սցենարը անհրաժեշտ է միասին մշակել: Սցենարն օգնում է վարողին հավուր պատշաճի անցկացնել քննարկումը, հարցեր տալ և պարզ ձևակերպել բանավեճի ուղղությունը: Քննարկման նպատակն է՝ կազմակերպել կարծիքների փոխանակում հանդիսատեսի և հյուրի միջև, այլ ոչ թե լսել հյուրի մենախոսությունը:
- Միջոցառումը վարողն ապահովում է քննարկման ինտերակտիվ բնույթը: Քննարկումն իրականում հարցազրույց է, քանի որ յուրաքանչյուր հարցի պետք է անմիջապես հաջորդի պատասխան:
- Անհրաժեշտ է որոշել՝ որն է քննարկվող հիմնական թեման: Այն դեպքում, եթե բանավեճի ընթացքը հսկողությունից դուրս գա, ապա միշտ կարելի է անդրադառնալ տվյալ հիմնական թեմային: Անհրաժեշտ է հավաքել հնարավորինս շատ տեղեկատվություն քննարկվող թեմայի և հրավիրված հյուրի վերաբերյալ:
- Միջոցառմանը նախապատրաստվելու լավագույն միջոց կարող է դառնալ հոդվածը (այն կարելի է հրապարակել դպրոցական թերթում), որում քննարկման հիմնական հարցերը պարզաբանված կլինեն:
- Հարկավոր է մտապահել հանդիսատեսի կազմը, այն է՝ աշակերտների տարիքը, մասնակիցների հնարավոր, նրանց հետաքրքրվածությունը տվյալ թեմայով և այլն:
- Պետք է ստեղծել քննարկման կարճ կանոններ և դրանք գրի առնել (օրինակ՝ բանավեճի տևողությունը, բանավեճի թեման, ելույթների տևողությունը, բանավիճողի անունը և այլն):
- Նախքան քննարկումը պետք է հանդիսատեսին ծանոթացնել այդ կանոններին:
- Առանց վարողի կարելի է անցկացնել միայն ազատ քննարկում, որը սակայն հարմար է ընկերների ավելի նեղ շրջանակի (կամ կինոակումբի հանդիսատեսի) համար:

## Խորհուրդներ՝ միջոցառման վարողի համար

Քննարկումն արդյունավետ վարելու համար աշակերտը (աշակերտների խումբը) պետք է առաջնորդվի հետևյալ խորհուրդներով.

- Վարողն անցկացնում է քննարկումը, հետևում դրա ընթացքին, ըստ սցենարի՝ ներկայացնում լրացուցիչ թեմաներ և հյուրերին հերթով խոսելու հնարավորություն տալիս:

- Վարողը հետևում է նաև ժամանակին, քանի որ քննարկման տևողությունը սահմանափակ է: Հետևաբար, քննարկումը հարկավոր է պլանավորել, և հետևել ժամանակային պլանին:
- Խոսափողը չպետք է ձեռքից ձեռք փոխանցել: Վարողն այն կարող է պահել բանավիճողների առջև՝ մինչ նրանք խոսում են: Այսպիսով, նա չի կորցնի քննարկումը վերահսկելու հնարավորությունը:
- Եթե հանդիսատեսը փոքրաթիվ է, ապա յուրաքանչյուր ոք պետք է խոսելու հնարավորություն ունենա:
- Ծափողջյունները համարվում են կարևոր արձագանք: Նույնիսկ բանավեճի ընթացքում դրանք չպետք է անտեսել: Ծափողջյունները կարող է սկսել վարողը, դիմելով հյուրերին և հանդիսատեսին. «Շնորհակալություն՝ն հրավերն ընդունելու համար»:
- Վարողը հետևում է բանավեճի ուղղությանը, և սխալ ուղղությամբ ընթանալու դեպքում՝ օգտվում նախապես պատրաստված հարցերից՝ քննարկումը շարունակելու համար:
- Վարողը փորձում է գրավել հանդիսատեսի ուշադրությունը՝ նրան ուղղելով հատուկ հարցեր:
- Վարողը պետք է լինի քաղաքավարի և ինքնավստահ:
- Վարողը պետք է անընդհատ հսկի իրավիճակը: Երբ հանդիսատեսներից ոմանք զրուցում են քննարկման ժամանակ, կարելի է հարցնել, թե ինչի մասին են նրանք խոսում. դա կարող է հետաքրքրել մյուսներին: Բանավեճը սրահի հետնամասից սկսելը լավ հնար է. հանդիսատեսն այնտեղ սովորաբար պակաս ուշադիր է (օրինակ՝ կոնկրետ հարց տալ վերջին շարքերում գտնվող որևէ մեկին):
- Վարողն արագացնում է քննարկման ընթացքը: Եթե որևէ մեկը երկար է խոսում, ապա հարկավոր է նրան նրբանկատորեն ընդհատել (նախընտրելի է մեջքերել քննարկման սկզբում հայտարարված կանոնները):
- Շատ կարևոր են ամփոփումը և գնահատումը: Մանրամասները կարևոր չեն: Քննարկումը պետք է ավարտել ընդհանուր եզրահանգմամբ:
- Եթե կա երկու արմատապես տարբեր տեսանկյուն, ապա վարողը կարող է բաժանել հանդիսատեսին երկու մասի և թույլ տալ կողմերից յուրաքանչյուրին բացատրել իր տեսակետը:

**Ինչպե՞ն կազմակերպել լավ քննարկում /բանավեճ**

Լավ քննարկում կազմակերպելու համար վարողը պետք է առաջնորդվի հետևյալ խորհուրդներով.

- Վարողը հսկում է քննարկման ընթացքը: Պետք է հետևել նրան և նրա հրահանգներին: Նախապես մտածել հարցի կամ պատասխանի մասին: Ըստ անհրաժեշտության՝ գրի առնել ասելիքը՝ հետագայում հստակ արտահայտվելու և չմոռանալու համար:
- Ուշադրություն գրավելու համար կարելի է բարձրանալ տեղից: Այդպես հնարավոր է նաև ավելի լավ տեսնել հանդիսատեսին, ժեստեր անել և այլն:
- Պետք է կանգնել ուղիղ, պարզ և վստահ ձայնով խոսել՝ նայելով հյուրին կամ հանդիսատեսին (երբեք չպետք է նայել գետնին):
- Ելույթ ունենալիս ձեռքերը կարող են օգնել: Ժեստերը կարող են օգնել արտահայտել մտքերը և համապատասխան պատկեր ստեղծել: Սակայն պետք չէ չափն անցել:
- Պետք է լինել համառոտ, բայց միևնույն ժամանակ ունենալ տեղեկատվությամբ հարուստ ասելիք: Ավելի լավ է մի քանի հարց տալ տարբեր պահերի, քան միանգամից շատ հարց տալ կամ վերածել ելույթը մենախոսության: Ելույթը չպետք է գերազանցի 1 րոպեն:
- Չպետք է շեղվել թեմայից:
- Ձևակերպել հարցերը կամ պատասխաններն այնպես, որ յուրաքանչյուրին դրանք հասկանալի լինեն: Պետք չէ պատասխանելիս ասել միայն «այո կամ «ոչ»:
- Քննարկման ընթացքում ելույթների բազմազանությունը դրական երևույթ է: Եթե քննարկումն անընդհատ վերադառնում է նույն կետին և ձանձրալի է, ապա պետք է փոխել քննարկման թեման և շարժվել մեկ այլ ուղղությամբ:



# ԴՐԱՄ ՀԱՎԱՔՈՂԸ ԲԵԴՖՈՐԴ ՓՈՂՈՑԻՑ

Ալիս Էյլիոթ / ԱՄՆ / 2001 / 35 րոպե



Այս վավերագրական կինոնկարը ջերմորեն և լավատեսությամբ անդրադառնում է հատուկ կարիքներով մարդկանց և սիրո թեմային: Լարի Սելմանը 59 տարեկան է և ունի մտավոր հետամնացություն: Նա լավ չի ընկալում **ժամանակ** հասկացությունը, սակայն գիտի, որ գթություն նշանակում է բարի լինել մարդկանց նկատմամբ: Նա ապրում է իր երկու կատուների և շան հետ Նյու Յորքի Գրինվիչ Վիլիջ թաղամասում: Լարիի միակ ազգականը նրա 89-ամյա հորեղբայրն է, ով իր հնարավորությունների սահմաններում հոգ է տանում նրա մասին: Թեև ապրուստի համար Լարին ամսական ունի տասը դոլար և օգտվում է իր հորեղբոր պատրաստած կերակուրից, սակայն նրան հաջողվում է սեփական նախաձեռնությամբ բարեգործական նպատակներով յուրաքանչյուր տարի հազարավոր դոլարներ հավաքել:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեման`** «Հանդուրժողականություն և տարբերությունների ընդունում»  
**Հարակից թեմաներ`** «Օգնելու կամք. մարդը կարիքի մեջ»

### 1. Տասը տարի է անցել ֆիլմի նկարահանումից, ինչպես է հիմա ապրում Լարին

Լարիի կյանքում շատ փոփոխություններ չկան: Նա շարունակում է իր ժամանակը տարբեր բարեգործական կազմակերպությունների համար դրամահավաքներին նվիրել՝ ապրելով իր կենդանիների հետ Գրինվիչ գյուղի իր բնակարանում: Նրա հորեղբայր Մյուրեյի առողջությունը մե՛րթ լավանում է, մերթ վատանում և երբեմն տրտնջում է, սակայն նա ունի ուժեղ ոգի: Լարին և իր ընկերուհի Էլին շարունակում են մնալ լավ ընկերներ: Նրանք որոշեցին, որ պետք չէ շտապել, և մնացին ընկերներ: Ո՞վ գիտի, թե ինչ է սպասվում ապագայում:

### 2. Ինչ ենք պատկերացնում «մտավոր հետամնացություն» արտահայտությունը լսելիս

Վերջին տասնամյակում «հաշմանդամ» բառի փոխարեն գործածվում է «հաշմանդամություն ունեցող անձ» արտահայտությունը, քանի որ նախորդը բացասական պիտակավորում էր ստեղծում:

Հայտնի է մտավոր զարգացման չորս աստիճան՝ թեթև, չափավոր, ծանր և խորը: Այդ մակարդակները մտավոր զարգացման թեստերի արդյունքներով են որոշվում. 52- 69 միավոր՝ թեթև, 36- 51 միավոր՝ չափավոր, 20-35 միավոր՝ ծանր, 19 միավորից ցածր՝ խորը: Խորը մտավոր թերզարգացում ունեցող անձն ի վիճակի չէ հաղորդակցվելու լեզվի, ձայների կամ նշանների միջոցով: Ուստի հարկավոր է ինչ-որ մեկը, ով կկարողանա «թարգմանել» նրա ցանկությունները: Չափավոր կամ ծանր մտավոր թերզարգացում ունեցող անձը կարող է ընկալել պարզ տեղեկատվություն, սակայն նրա համար դժվար է հասկանալ այնպիսի իրողություններ, որոնք նա անձամբ չի վերապրել: Թեթև մտավոր



թերգարգացում ունեցող անձը դժվարությամբ է հասկանում բարդ տեքստերը, նրա համար բարդ են վերացական արտահայտությունները, խորհրդանշական իրողությունները կամ մտքերը:

**3. Ինչպիսի հնարավորություններ ունեն հաշմանդամություն ունեցող անձինք մեր երկրում**

Հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են աշխարհի բնակչության 10 տոկոսը: Ի տարբերություն հասարակության այլ խմբերի, ինչպիսիք են՝ կրոնական, ազգային և այլ տեսակի փոքրամասնությունները, մարդիկ ցանկացած տարիքում ակամա կարող են դառնալ այս խմբի անդամ: Հաշմանդամություն ունեցող անձինք, թեպետև տարբեր չափով, սակայն բոլոր երկրներում ենթարկվում են խտրականության և հասարակական մեկուսացման:

Հասարակական և պետական կազմակերպությունները հետազոտություններ են անցկացնում և վիճակագրական նյութեր պատրաստում՝ նվիրված այս խնդրին: Վիճակագրական դինամիկայի հիման վրա ուրվագծվում են խնդիրները, և մշակվում առաջարկություններ՝ ուղղված տվյալ հարցի լուծմանը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալներով, **2012** թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ հաշմանդամություն ունեցող **176 506** անձ, այդ թվում՝ մինչև 18 տարեկան (**7973** հոգի, երեխաների ընդհանուր թվի շուրջ 1 տոկոսը) ստանում է թոշակ: Այս թիվը մոտավոր է. հաշվի առնելով հաշմանդամության միջազգային ցուցանիշը, հավանական է, որ իրականում հաշմանդամություն ունեցող քաղաքացիների թիվն ավելի մեծ է: Օրինակ՝ մանկական հաշմանդամության եվրոպական ակադեմիայի տվյալներով՝ Հայաստանում հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը հասնում է մոտ 12 հազարի: Տեղեկատվության հասանելիության պակասի, ցածր նպաստների և պիտակավորման պատճառով շատերը խուսափում են գրանցվելուց: Բացի այդ, դեռևս կատարյալ չեն հաշմանդամության սահմանման բժշկական ախտորոշման վրա հիմնված ներկայիս չափորոշիչները: Մասնավորապես՝ գործող մոդելի շրջանակներում հաշմանդամությունը դիտարկվում է որպես հիվանդության հետևանք՝ փոխկապակցված կենսագործունեության որևէ տեսակի սահմանափակմամբ: Արդյունքում՝ հաշմանդամության խումբը որոշելիս հաշվի չեն առնվում անհատական գործոնները, ինչպիսիք են՝ անձի մասնագիտական կարողությունները, տարիքը, աշխատանքային փորձն ու նոր մասնագիտություն ձեռք բերելու հնարավորությունը և այլն: Գործող համակարգի շրջանակներում հաշվի չեն առնվում նաև շրջակա միջավայրի գործոնները: Վերը նշված հանգամանքները հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ բացահայտելու հաշմանդամություն ունեցող անձի անհատական կարիքները:

**4. Ինչ փուլում է գտնվում մեր երկիրը հասարակությունում հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրելու առումով**

Հաշմանդամների հիմնախնդիրները կանոնակարգվում են *«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (1993թ.) և այլ իրավական ակտերով:*

Ներկայումս ՀՀ Կառավարության քննարկմանն է ներկայացված «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող ծրագրերի նպատակն է հնարավորություն ընձեռնել նրանց անկախ ապրելու և լիակատար մասնակցություն ունենալու կյանքի բոլոր բնագավառներում: Ծրագրերը նպատակաուղղված են տարբեր հիմնախնդիրների լուծմանը, սակայն ընդհանուր գաղափարը հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումն է հասարակության մեջ: Այդ ծրագրերից են՝ «Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով և տեխնիկական միջոցներով ապահովելու և դրանց վերանորոգելու», «Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովելու», «Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ մատուցելու» ծրագրերը (վեր-

ջինս իրականացվում է «Արթմեդ» բժշկական վերականգնողական կենտրոնում), «Հոգեկան առողջության վերականգնման ծառայությունների», «Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցման» ծրագրերը, որոնցում հիմնականում ընդգրկված են երիտասարդները:

Մոցիալ-վերականգնողական ծրագրեր իրականացվում են մտավոր խնդիրներ ունեցող դեռահասների և երիտասարդների («Փրկություն» հասարակական կազմակերպության մասնակցությամբ), տեսողություն կորցրած հաշմանդամների համար: Վերջիններս ապահովվում են համակարգչային տեխնիկայով, հատուկ տառատեսակներով տպագրված գրքերով և այլն: «Գյումրու հաշմանդամների մասնագիտական վերականգնման կենտրոն» ՊՈԱԿ-ը իրականացնում է «Աշխատանք փնտրող հաշմանդամների մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվական ծառայություններ» ծրագիրը, որտեղ նույնպես հիմնականում ընդգրկված են երիտասարդները:

### **Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության ապահովումը**

Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ներառական կրթության մոդելը: 2011 թվականին ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների ցանկը համալրվել է 16-ով: Հանրապետության 81 ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորում է շուրջ 1700 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա: 2011 թվականի ընթացքում Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից (ներառյալ մասնագիտորեն իրականացվել է շուրջ 2200 երեխայի կրթական կարքիների գնահատում՝ նրանց կրթությունը կազմակերպելու նպատակով:

### **Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովումը**

«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացվում են մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է՝ ապահովել երիտասարդ և աշխատունակ հաշմանդամների զբաղվածությունը: Դրանք են՝

- Աշխատանք փնտրող, հաշմանդամություն ունեցող անձանց մասնագիտական ուսուցում, աշխատանքային ունակությունների վերականգնում:
- Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում՝ գործատուին:
- Մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքի փորձ չունեցող գործազուրկ և աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային պրակտիկայի կազմակերպում՝ գործատուի մոտ:
- Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ֆինանսական աջակցություն:
- Աշխատանք փնտրող, չզբաղված, հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի հարմարեցում՝ գործատուի մոտ:

Ծրագրերում ընդգրկված հաշմանդամություն ունեցողների թիվը տարեցտարի մեծանում է:

Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրումը հասարակություն իրականացվում է նաև սպորտային ծրագրերի միջոցով: Այսպես, «Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից մարզական կազմակերպություններին հատկացվել է 9.000.000 դրամ՝ հաշմանդամային մարզական միջոցառումներ անցկացնելու համար:

«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրով իրականացված միջոցառումներին մասնակցել են 409 հաշմանդամություն ունեցող մարզիկներ:

Բազմաթիվ ծրագրեր իրականացվում են միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Հաշվի առնելով այն, որ 2012 թվականն ընտրության տարի էր, «Փարոս» հասարակական կազմակերպությունը 2011 թվականին ԱՄՆ դեսպանատան կողմից տրամադրված դրամաշնորհով իրականացրել է «Մատչելի ընտրություններ հաշմանդամ անձանց համար» ծրագիրը, որի շրջանակներում հանրապետության տարածքում կազմակերպվել են հանդիպումներ հաշմանդամների հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովների, տարածքային ընտրական հանձնաժողովների, հաշմանդամների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ՏԻՄ ներկայացուցիչների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Այս ծրագրի նպատակն էր մարզի տարածքում ընտրատեղամասերի մատչելիությունն ապահովել հիմնական կամ շարժական թեքահարթակներով, ինչի համար պատասխանատվությունը ստանձնել են մարզպետները:

2011թ. «Սկարպ» ՀԿ-ն Վրաստանի «Անկախ կյանքի դաշինք»-ի հետ համատեղ իրականացրել է «Մատչելի համայնք» ծրագիրը: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ապահովել ամբողջովին մատչելի և սայլակից օգտվող անձանց տեղաշարժման համար համապատասխան միջավայր թրիվիսիի և Երևանի թաղամասերից մեկում, որը կնպաստի հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավմանը Հայաստանի և Վրաստանի սոցիալական, քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքին: Երևանում որպես թիրախային տարածք ընտրվել է Ավան համայնքը:

«Աստղիկ» ՀԿ-ի կողմից 2011 թ. իրականացվել է «Անարգել տեղաշարժ՝ իրավունք բոլորի համար» ծրագիրը», որի նպատակն է իրազեկել քաղաքաշինության և հարակից ոլորտներում որոշում կայացնող կազմակերպություններին և անհատներին մատչելի միջավայրի ապահովման անհրաժեշտության մասին՝ սակավաշարժուն մարդկանց անարգել տեղաշարժի իրավունքն իրագործելու և հասարակության մեջ նրանց ինտեգրումն ապահովելու համար:

2011թ. «Ունիսոն» ՀԿ-ն անցկացրեց Երևանում գործող 500 հանրային օբյեկտների ֆիզիկական մատչելիության մշտադիտարկում (մոնիթորինգ), որի արդյունքում ստեղծվել է map.disability.am ինտերնետ-կայքը: Կայքում տեղ է գտել մատչելիության ապահովման արդյունավետ միջոցների վերաբերյալ գործնական տեղեկատվություն:

Այս բոլոր ծրագրերը հավասարաչափ ուղղված են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց և բացառում են խտրականությունն այս կամ այն սեռի նկատմամբ: Այնուամենայնիվ, շատ խնդիրներ դեռևս լուծման կարիք ունեն, իսկ հաշմանդամների զբաղվածության ապահովումը շարունակում է մնալ սոցիալական ոլորտի դժվար լուծելի հիմնախնդիրներից մեկը:

**ՀՀ-ում հաշմանդամների հարցերով զբաղվող կազմակերպություններ**

- «ԵՐԵՎԱՆ ՀՈՄ ԲԵՅՐ» տնային առողջապահական խնամքի ծառայություն  
(www.yerevanhomecare.com)
- «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» բարեսիրական ՀԿ (www.caritasarm.am)
- «ԳՐԱՑԻԱ» հայկական կարմիր խաչի ընկերության միջազգային վերականգնողական կենտրոն ՍՊԸ (+374-10-353503)
- «ՀՈՄ ԸՆԴ ԳԱՐԴԵՆ» ՍՊԸ
- «ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ» ԲՀԿ (www.mission.am)
- «ՏՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻԱՅՆԱԿ ՏԱՐԵՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ (+374-10-740402)
- «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՅՐԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» հաշմանդամների ՀԿ (+374-10-560521)
- «ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ» սպինալ հաշմանդամների հայկական բարեգործական հիմնադրամ  
(+374-10-371370)
- «ՓՅՈՒՆԻԿ» Հայաստանի հաշմանդամների միություն ԲՀԿ (+374-10-560707)
- «ԷՐԵՐՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ (+374-10-575331)
- «ՔԱՆԱՔԵՌ-ՋԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ» ՀԿ (+374-94-437398)
- «ՈՒՆԻՍՈՆ» ՀԿ (+374-10-522170)
- «ՓԱՐՈՍ» ՀԿ (+374-10-664101)
- «ՀՈՒՅՄԻ ԿԱՄՈՒԲՁ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն  
(374 10) 58 91 86, (374 10) 56 01 43, www.bridgEOFhope.am

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.

### ԽՈՐԱՆԱՐԴԻԿ / ԿՈՒՔԻԿ

*Ֆիլմ՝ Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից*

*Կշռադատման վարժություն*

*Տարիքային խումբը՝ 13 +*

**Համապատասխան թեմաներ՝** «Ապրումակցում», «Հանդուրժողականություն», «Տարբերությունների ընդունում»:

**Նպատակը՝** ֆիլմի վերաբերյալ տարբեր տեսանկյունների և մտորումների արտահայտում, ապրումակցում, քննադատական մտածողության և հաղորդակցման հմտությունների զարգացում:

**Ժամանակը՝** 30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ յուրաքանչյուր աշակերտի համար, խաղալիք խորանարդիկ / կուբիկ:

### Ընթացք

Աշակերտներին ցույց տալ խաղալիք խորանարդիկը և հարցնել, թե ինչ են տեսնում: Պատասխանը, բնականաբար, կլինի՝ «խաղալիք կուբիկ»: Այնուհետև կուբիկն այնպես պահել, որ աշակերտները տեսնեն միայն մեկ կողմը, և նորից հարցնել, թե հիմա կոնկրետ ի՞նչ են տեսնում: Մեկը կասի՝ «տեսնում եմ մեկ քառակուսի», մյուսը՝ «տեսնում եմ վեց քառակուսի» և այլն: Բացատրել, որ նույնը տեղի կունենա, երբ դիտեն «Դրամ հավաքողը Բեդֆորդ փողոցից» ֆիլմը: Եվ այն կքննարկվի տարբեր տեսանկյուններից:

Աշակերտներին բաժանել խմբերի:

Ամեն խումբ ներկայացնում է մեկ տեսանկյուն՝ ըստ տվյալ կերպարի. Լարին, նրա ծնողները, նրա հորեղբայրը, ընկերները, հարևանները, սոց աշխատողը:

Սկզբում աշակերտները նկարագրում են իրենց կերպարները՝ հետևյալ վեց հարցերի հիման վրա.

1. Ինչ էր սիրում նա անցյալում:
2. Ինչ էր նա զգում ֆիլմում:
3. Ինչ խնդիրներ ունի նա:
4. Ինչի կարիք նա ունի:
5. Փորձել կանխատեսել նրա ճակատագրի հետագա զարգացումը:
6. Ինչպե՞ս է նա տեսնում ֆիլմում ներկայացված խնդիրը:

*Ուշադրություն.* հիշել, որ կա վեց առաջադրանք, ինչպես խորանարդիկը/կուբիկն ունի վեց մաս:

Վարժության վերջում խմբի ներկայացուցիչն ամփոփ ներկայացնում է խմբի աշխատանքները:

### Կշռադատում

Տեղի է ունենում քննարկման միջոցով: Ուսուցիչն անդրադառնում է այն ամենին, ինչը երեխաները ներկայացրել են, ինչպես նաև վարժության բովանդակությանը: Վարժության հիմնական նպատակն է՝ երեխաներին ցույց տալ, որ յուրաքանչյուր թեմա (հարց) կարելի է նայել տարբեր տեսանկյուններից:

**▼ ԳՈՐԾԵՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.  
ՀԻՆԳ ՓՈՐՁ՝ ԶԳԱՅԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ**

*Տիլմ` Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից  
Տարիքային խումբը՝ 10 +*

**Համապատասխան թեմաներ՝** «Ապրումակցում», «Հանդուրժողականություն», «Տարբերությունների ընդունում»:

**Նպատակը՝** աշակերտները սովորում են ապրումակցել, հասկանում են, թե ինչ են զգում հատուկ կարիքներ ունեցող մարդիկ:

**Ժամանակը՝** 30 րոպե:

**Ընթացք**

Աշակերտները վարժությունների միջոցով գնահատում են 5 զգայարանների (տեսողության, լսողության, համր, հոտի և շոշափելիքի) դերը մարդու կյանքում.

**ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Փորձ՝ ԳՈՒՇԱԿԵԼ ԱՌԱՐԿԱՆ**

Աշակերտներին գույգերի բաժանել:

Զույգերի բաժանված աշակերտներին տվեք այքակապ: Զույգից մեկը կապում է մյուսի այքերը և որևէ առարկա է տալիս փակ այքերով ընկերոջը: Փակ այքերով աշակերտը պետք է շոշափելով գուշակի իրեն տրված առարկան: Հետո դերերը փոխվում են: Վարժությունն ավարտվում է, երբ բոլոր մասնակիցները մեկ անգամ կատարում են չտեսնողի դերը:

**ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆ**

**Փորձ՝ ԼՍԻՐ ԶԱՅՆԸ**

Փոքր շշերի (սրվակների) մեջ լցրեք տարբեր առարկաներ՝ ամրակներ, կոճակներ, մետաղադրամներ, ձավարեղեն, ավազ: Շշերի պարունակությունը աշակերտները չպետք է տեսնեն: Երբ բոլորը շրջվում են մեջքով դեպի ուսուցիչը, հերթով թափահարեք շշերը և խնդրեք ձայնից կոահել շշերի պարունակությունը:

**ՇՈՇԱՓՈՒՄ**

**Փորձ՝ ԸՆԹԵՐՑԻՐ ՓԱԿ ԱԶՔԵՐՈՎ**

10 սմ երկարությամբ և 10սմ լայնությամբ ստվարաթղթի վրա մեխով ծակեր անելով տատեր և թվեր գրեք, ինչպես Բրայլի այբուբենը: Խնդրեք աշակերտներին հերթով մոտենալ և փակ այքերով մատների ծայրերով շոշափելով կարդալ գրվածը:

**ՀԱՄԻ ԶԳԱՑՈՒՄ ԵՎ ՀՈՏԱՌՈՒԹՅՈՒՆ**

**Փորձ՝ ՀՅՈՒԹԱԼԻ ՄԻՐԳ**

Թարմ նարինջը բաժանեք կտորների: Խնդրեք աշակերտներին հերթով մոտենալ և համտեսել այն. սկզբում համտեսում են քթանցքերը երկու մատով փակելով, հետո առանց քիթը փակելու:

Կարճ վարժություններից հետո անցկացրեք կշռադատում:

**Կշռադատում**

- Հեշտ էր գուշակել առարկան, ձայնը, կամ կարդալ փակ այքերով: Ինչո՞ւ:
- Այնուամենայնիվ, ձեզ հաջողվե՞ց լուծել խնդիրը:

- Եթե այո՝ ո՞ր զգայարանները ձեզ օգնեցին:
- Ի՞նչ էիք զգում, երբ ձեր աչքերը փակ էին:
- Ի՞նչ կլինի, եթե չլսեք արտաքին աշխարհի ձայները:
- Երբ էր նարինջն ավելի համեղ, բաց քթով ճաշակելիս, թե՛ փակ:
- Ի՞նչ դժվարություններ են ստիպված լինում հաղթահարել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մարդիկ:
- Ի՞նչ է անում հասարակությունը նրանց աջակցելու համար:

### ▼ ԳՈՐԾԵՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.

#### ...ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՄԱՄԲ

*Ցիլմ` Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից  
Տարիքային խումբը` 14+*

**Համապատասխան թեմաներ`** «Քաղաքացիական դիրքորոշում», «Կարծրատիպեր», «Նախապաշարմունք», «Հանդուրժողականություն»:

**Նպատակը`** հասկանալ` ինչ է կարծրատիպը և ինչպես է այն ձևավորվում` պարզելով դրա հնարավոր ազդեցությունը մեր առօրյա վարքագծի և միջանձնային հարաբերությունների վրա:

**Ժամանակը`** 25 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ`** թուղթ, գրելու պարագաներ:

#### Ընթացք

Աշակերտներին խնդրել արագ գրի առնել «նախապաշարմունք» և «կարծրատիպ» բառերի նշանակությունը, նրանց բացատրել, որ տվյալ դեպքում կարծրատիպ է համարվում այն համոզմունքը, թե որոշակի խմբի պատկանող բոլոր անդամներն ունեն նույն հատկանիշները և բոլորը նույն են:

Աշակերտները թղթի վրա գրի են առնում հետևյալ մարդկանց հատկանիշները.

- անօթևան մարդիկ
- ներգաղթյալներ
- տարեց մարդիկ
- ոռք աստղեր

Աշակերտներն առանձին-առանձին են աշխատում: Գրառման համար նրանց հատկացվում է մոտ հինգ րոպե, ինչին հաջորդում է քննարկումը:

#### Կշռադատում

Պատասխանները հերթականությամբ ընթերցել և բարձրաձայն մեկնաբանել: Պատասխաններն այնուհետև մանրամասն վերլուծել` պարզելու համար, թե արդյո՞ք դասարանում բոլորն ունեն նույն կարծրատիպային պատկերացումը: Եթե ոչ, ապա` ինչու: Եթե այո, ապա` ինչու: Ինչպիսի՞ն ազդեցություն կարող է գործել տվյալ կարծրատիպը մարդու կամ մի խումբ մարդկանց, ինչպես նաև կարծրատիպերին հավատացող մեկ այլ անձի վրա: Ինչն է ազդել որոշակի խմբի վերաբերյալ պատկերացման ձևավորման վրա:



## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.

### ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ԽՃԱՆԿԱՐ

*Ֆիլմ՝ Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից*

*Տարիքային խումբը՝ 14+*

**Համապատասխան թեմաներ՝** «Կարծրատիպեր», «Հանդուրժողականություն», «Հուզական փորձ»:

**Նպատակը՝** կարողանալ սահմանել կարծրատիպ հասկացությունը և որոշել դրա տեսակները:

**Ժամանակը՝** 35 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ բոլորի համար, մատիտներ:

#### Ընթացք

Աշակերտներին բաժանել աշխատանքային թերթիկները:

Աշակերտներին խնդրել լրացնելու առաջին տողը. «Ինչ է կարծրատիպը»: Աշակերտները ներկայացնում են իրենց բացատրություններն ու օրինակները:

Դրան հետևում է աշակերտների գրառումների կարճ քննարկումը:

Բացատրել, որ կարծրատիպը կանխակալ համոզմունք է, կարծիք կամ դատողություն մարդկանց խմբի կամ առանձին մարդու նկատմամբ՝ ռասայի, խավի, սեռի, ազգության, տարիքի, հաշմանդամության, քաղաքական հայացքների, կրոնի, սեռական կողմնորոշման, աշխատանքի բնույթի կամ այլ անձնական հատկանիշների հիման վրա:

Ստուգել, թե արդյո՞ք աշակերտը հասկանում է աշխատանքային թերթիկում առկա եզրույթները:

Աշակերտներն ինքնուրույն լրացնում են աշխատանքային թերթիկի մնացած մասը: Դժվարանալու դեպքում նրանք կարող են աշխատել զույգերով:

Թերթիկները լրացնելուց հետո բոլոր աշակերտները շրջան են կազմում և համեմատում իրենց աշխատանքները:

#### Կշռադատում

Այս փուլը նախատեսված է «Դրամ հավաքողը Բեդֆորդ փողոցից» ֆիլմի ցուցադրումից հետո և լրացված աշխատանքային թերթիկների հիման վրա: Հարցեր տալ ֆիլմի գլխավոր հերոսի և հասարակությունում առկա կարծրատիպերի ազդեցության մասին, ինչպես նաև քննարկել՝ արդյո՞ք այդ կարծրատիպերն ազդել են հերոսի ընտանիքի, ընկերների և այլ մարդկանց վերաբերմունքի վրա:

**Գործնական վարժություն՝ Կարծրատիպերի խճանկար**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**Ի՞նչ է կարծրատիպը:**

Փորձեք նկարագրել մի իրավիճակ, ուր կարող են դրսևորվել հետևյալ կարծրատիպերը.

**Ռասայական կարծրատիպեր** (*կանխակալ կարծիք որևէ մեկի նկատմամբ՝ նրա մաշկի գույնի կամ ռասայական այլ հատկանիշների հիման վրա*)

**Կրոնական կարծրատիպեր** (*կանխակալ կարծիք որևէ մեկի նկատմամբ՝ նրա դավանած կրոնի հիման վրա*)

**Տարիքի հետ կապված կարծրատիպեր**

**Արտաքինի հետ կապված կարծրատիպեր**

**Կարծրատիպեր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ**

**Կարծրատիպեր՝ կապված սեռերի սոցիալական դերերի հետ**

**Կարծրատիպեր՝ կապված սոցիալական վիճակի կամ խավային պատկանելության հետ** (*կանխակալ վերաբերմունք՝ մարդկանց նկատմամբ աղքատության կամ հարստության հիման վրա*)

**Ձեզ հայտնի են այլ կարծրատիպեր: Նկարագրե՞ք և բացատրե՞ք դրանք:**

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.

### ԻՆՉ ԳԻՏԵՔ ԵՎ ԻՆՉ ԵՔ ԼՍԵԼ

*Ֆիլմ՝ Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից*  
*Տարիքային խումբը՝ 14+*

**Համապատասխան թեմա՝** «Կարծրատիպեր», «Նախապաշարմունք»:

**Նպատակը՝** մասնակիցներին ծանոթացնել տարածված կարծրատիպերի հետ:

**Ժամանակը՝** 20-30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թղթի մեծ թերթեր, կպչուն ժապավեն, նշագրիչներ, պատի կամ այլ մակերեսի վրա հատկացված տեղ, որտեղ կարելի է փակցնել թերթերը:

### Ընթացք

Վարժությունը ներկայացնելուց առաջ յուրաքանչյուր թերթի վերևում գրել տարբեր անձանց կամ խմբերի անուններ:

Որպես օրինակ կարելի է մտապահել հետևյալ տարբերակները՝ կանայք, տղամարդիկ, պատանիներ, աֆրիկացիներ, ասիացիներ, լատինաամերիկացիներ, քրիստոնյաներ, հրեաներ, արաբներ, հարուստներ, աղքատներ, անօթևան մարդիկ, սոցիալական նպաստ ստացող մարդիկ, ֆիզիկական արատ ունեցող մարդիկ, 75 տարեկանից բարձր մարդիկ, գյուղաբնակներ, քաղաքաբնակներ և այլն:

Ծալել յուրաքանչյուր թերթը և կպչուն ժապավենով ամրացնել պատին կամ մեկ այլ մակերեսի վրա այնպես, որ դրա վերևի մասում գրված խմբի անվանումը չերևա: Թերթերի միջև բավական տարածք թողնել, որպեսզի դրանցից յուրաքանչյուրի մոտ կարողանան փոքր խմբեր ձևավորվել:

Այս գործնական վարժությունից առաջ պետք է անցկացնել կարճ քննարկում մշակույթի և մեր վարքագծի վրա վերջինիս ազդեցության մասին: Անպայման նշել, որ մշակույթի կանոնները հաճախ չգրված են, սակայն մենք դրանք սովորում ենք մեզ շրջապատող մարդկանցից և այդ կանոններն ընդունում ենք առանց հարցադրման:

Մասնակիցներին ասել, որ անցկացվելու է գործնական վարժություն՝ «Ինչ գիտեք, կամ ինչ եք լսել» թեմայով: Բացել ծավալած թերթերն այնպես, որպեսզի երևան դրանց վերևի մասում գրված խմբերի անունները:

Յուրաքանչյուր մասնակցի խնդրել մոտենալ թերթին և այնտեղ մարկերով գրել այն, ինչ նրանք կան «գիտեն», կամ էլ «լսել են» նշված մարդկանց կամ խմբի մասին:

Բոլոր մասնակիցները պետք է կարողանան իրենց մտքերն ավելացնել յուրաքանչյուր ցանկում: Այնուհետև առաջարկել նրանց մի քանի րոպե ուսումնասիրել լրացված ցանկերը:

### Կշռադատում

Մասնակիցներին տալ հետևյալ հարցերը. Ինչպե՞ս կգնահատեք ցանկերում գրված մեկնաբանությունները: Արդյո՞ք բոլորը ճիշտ են: Որտեղի՞ց են դրանք առաջացել (որպես պատասխան կարող են վկայակոչվել ծնողները, ընկերները, ուսուցիչները, գրքերը, լրատվամիջոցները և այլ աղբյուրներ):

Ջարգացնել կարծրատիպերին նվիրված քննարկումը՝ անդրադառնալով այն հարցին, թե ինչպես ենք մենք հակված գրեթե ինքնաբերաբար մտածելու կարծրատիպերով, երբ տեսնում կամ լսում ենք մեկին, ով տարբերվում է մեզանից: Մենք բոլորս կարծրատիպեր ենք օգտագործում տարբեր պահերի: Կարևորն այն է, որ ավելի լավ գիտակցենք հանգամանքը, որ մենք հաճախ մտածում ենք ինքնաբերաբար: Պետք է մի պահ կանգ առնենք և ինքներս մեզ հարց տանք՝ մեր մտածածը փաստ է, թե՞ կարծրատիպ:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. ՈՒՐԻՇԻ ՄԱՐՄՆՈՒՄ

*Ֆիլմ՝ Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից*  
*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հանդուրժողականություն», «Տարբերությունների ընդունում», «Հաշմանդամություն»:

**Նպատակը՝** սովորել ապրումակցել տարբերվող անձին, ճանաչել հաշմանդամություն ունեցողի զգացումները:

**Ժամանակը՝** 30-40 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** գրելու պարագաներ, աշխատանքային թերթիկ:

### Ընթացք

Խնդրել աշակերտներին գրատախտակին գրել ցանկացած (մտավոր կամ ֆիզիկական) հաշմանդամություն, որի մասին նրանք գիտեն կամ որին առնչվել են: Այնուհետև քննարկել, թե ո՞ր *ֆիզիկական* հաշմանդամությունն է նրանց կարծիքով ամենավատը (առանձնացնել երեքը):

**Դերախաղ:** Ընտրել մի աշակերտի և ձևացնել, թե նա, օրինակ, կույր է (եթե երեխաները նշել են կուրությունը որպես ամենավատ ֆիզիկական հաշմանդամություն): Փակել նրա աչքերը աչքակապով և հանձնարարել նրան կատարելու պարզ գործողություններ, օրինակ՝ անցնել դասարանի մի անկյունից մյուսը, գրիչ վերցնել, դնել այն իր պայուսակում, գտնել իր ընկերոջը և այլն: Նա պետք է այդ առաջադրանքը կատարի ինքնուրույն կամ խնդրի որևէ մեկին՝ օգնել իրեն: Մեկ ուրիշ աշակերտի ձեռքերը կապել և հանձնարարել նրան որևէ առաջադրանք կատարել:

Վերջում անցկացնել կարճ քննարկում նրանց ապրած զգացմունքների վերաբերյալ, որից հետո կարելի է կշռադատումներ կատարել:

Աշակերտներին խմբերի բաժանելուց հետո (խմբերի քանակը կախված է դերախաղից) նրանց տալ աշխատանքային թերթիկները և խնդրել դրանք լրացնել: Այնուհետև նրանց առաջարկել մտորել այդ խնդիրների լուծումների շուրջ. ի՞նչ է հարկավոր անել հատուկ կարիքներ ունեցող անձանց կյանքը հեշտացնելու համար:

Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր արդյունքները, ապա անցկացվում է քննարկում:

*Գործնական վարժությունը պետք է ավարտվի այն եզրահանգմամբ, որ պետք է ուշադիր և հանդուրժող լինենք հաշմանդամություն ունեցողների հանդեպ, օգնենք նրանց և պաշտպանենք նրանց իրավունքները:* Նման վերաբերմունք պետք է ցուցաբերենք ոչ միայն ֆիզիկական, այլև մտավոր (օրինակ՝ դառնի համախտանիշ) արատ ունեցող անձանց նկատմամբ: Կարելի է նաև խոսել նման մարդկանց առջև կանգնած խոչընդոտների և դրանք հաղթահարելու մասին:

**Տարբերակ 2. (15 րոպե):** Եթե ժամանակը սահմանավիակ է, ապա ընտրել մեկ օրինակ և անցկացնել ամբողջ գործնական վարժությունը միասին (աշակերտներն աշխատում են ոչ թե խմբերով, այլ անցկացվում է քննարկում աշխատանքային թերթիկի մեթոդով): Այդ դեպքում հնարավոր կլինի վարժությունն ավարտել 15 րոպեում:

«Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից» Ֆիլմի ցուցադրում:

## Գործնական վարժություն՝ Ուրիշի մարմնում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

Ես... (համապատասխանում է հաշմանդամության տեսակին)

Ի՞նչ եմ ես զգում: Ինչպիսի՞ խոչընդոտների առաջ եմ ես կանգնել: Ինչպիսի՞ արգելքներ եմ ունենում առօրյա կյանքում: Ինչպե՞ս եմ ես դրանք լուծում: Արդյո՞ք ես իմ ընկերոջ օգնության կարիքն եմ ունեցել: Ի՞նչ օգնություն է դա եղել: Արդյո՞ք նա պատրաստ էր ինձ օգնելու: Արդյո՞ք կարծում եք, որ նույն բանը կպատահի անձանոթ մարդկանց հետ մեկ ուրիշ վայրում:

▼ **ԳՈՐԾԵԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7.**

**ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**

*Ֆիլմ՝ Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից  
Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հաշմանդամություն ունեցող անձինք», «Հանդուրժողականություն»:

**Նպատակը՝** իմանալ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Հասկանալ, որ հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես հասարակության լիարժեք անդամներ են:

**Ժամանակ՝** 45 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ, գրատախտակ:

**Ընթացք**

Նախքան ֆիլմի ցուցադրումը աշակերտներին հանձնարարել թուղթը բաժանել երկու մասի. Մեկի վրա գրել իրենց ուժեղ կողմերը մյուսի վրա թույլ կողմերը (անհատական աշխատանք): Նրանք կարող են չներկայացնել գրածը, քանի որ խիստ անձնական է:

Այնուհետև ցուցադրել «Դրամ հավաքողը Բեդֆորդ քաղաքից» ֆիլմը: Որից հետո աշակերտներին հանձնարարել նույն առաջադրանքը կատարել Լարիի համար (թուղթը բաժանել երկու մասի, և մի մասում գրել Լարիի թույլ, իսկ մյուս մասում ուժեղ կողմերը):

Անհատական աշխատանքից հետո, աշակերտները թվարկում են Լարիի ուժեղ կողմերը և գրի առնում դրանք գրատախտակին, այնուհետև թվարկում և գրի են առնում Լարիի թույլ կողմերը:

Աշակերտներին հարցնել, արդյոք Լարիի ուժեղ և թույլ կողմերից որոշները համապատասխանում են իրենց թույլ և ուժեղ կողմերի հետ: Ցանկացողները ներկայացնում են իրենց թույլ և ուժեղ կողմերը և համեմատականներ տանում Լարիի հետ:

Աշակերտներին բացատրել, որ Լարին էլ ունի ուժեղ և թույլ կողմեր, ինչպես մեզանից յուրաքանչյուրը:

**Կշռադատում**

Կշռադատումը տեղի է ունենում քննարկման միջոցով: Աշակերտներին հարցնել. դուք ձեր շրջապատում ճանաչում եք նման մարդու: Իսկ նրանց հանդեպ նման հոգատարություն նկատել եք մեր հասարակության մեջ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ: Ինչպե՞ս կբացատրեք, որ մարդը՝ ով դրամի կարիք ունի գումար է հավաքում ուրիշներին օգնելու նպատակով:

Ձեր համայնքում հնարավոր համարում եք համայնքի նման հոգատարություն կարիքավոր մարդկանց հանդեպ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ:

Իսկ դուք կարո՞ղ եք այդ հոգատար մարդկանցից մեկը լինել. յուրաքանչյուրդ հիշեք, թե ինչ եք արել կարիքավոր մարդկանց հոգատարություն ցուցաբերելու նպատակով (գումար հավաքել և տրամադրել, հասարակական գործունեություն ծավալել, օգնություն ցուցաբերել և այլն):

Շեշտադրել այն փաստը, որ Լարին լինելով հաշմանդամ, ցանկանում էր հասարակության լիարժեք ներկայացուցիչ զգալ իրեն և օգնել կարիքավոր մարդկանց:

## ՍԱՆՏԱՅԻ ԱՐՇԵՍԱՆՈՅԸ

Անդրեաս Ֆրանզեն / Շվեդիա / 2006 / 30 րոպե



Շվեդական վավերագրական ֆիլմը պատմում է խաղալիքների պատրաստման չինական գործարանների մասին: Դեռահաս աղջիկները, ուլքեր, տարիքից ելնելով, չունեն աշխատելու իրավունք, շաբաթը յոթ օր պատրաստում են փափուկ խաղալիքներ: Նրանց հերթափոխն սկսվում է ժամը 5:30 և ավարտվում կեսգիշերին. «Թեև դրանից հետո ևս մենք երկուսից չորս ժամ դեռ աշխատում ենք արտաժամյա»: Նման աշխատանքային ծանրաբեռնվածության անհնար է դիմանալ: Երիտասարդ չինացի աշխատողներից մեկը խոստովանում է. «Կցանկանայինք, որ մեր աշխատավարձը լիներ ավելի բարձր, իսկ աշխատանքային ժամերը՝ ավելի կարճ»: Լուսանկարները, որտեղ պատկերված են հոգնածությունից հյուծված և անավարտ աշխատանքով իրենց սեղանների վրա քնած չինացի աշխատողները, հաստատում են նրա խոսքերը: Եթե դժգոհում էին ղեկավարներին կամ փորձում ստեղծել միություններ իրենց իրավունքները պաշտպանելու համար, ապա ոչ միայն սպառնում էին նրանց աշխատանքից ազատել, այլ նույնիսկ բանտարկում էին: Ներկայումս Չինաստանում արտադրվում է աշխարհի խաղալիքների  $\frac{3}{4}$ -ը:

### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Աշխատանքային իրավունքներ», «Համաշխարհային փոխկախվածություն»

**Հարակից թեմաներ՝** «Միգրացիա», «Ոչ ժողովրդավարական վարչակարգեր»

#### 1. Ինչն է ստիպում եվրոպական ընկերություններին՝ իրենց արտադրությունը տեղափոխել Չինաստան

Արտադրությունը զարգացող երկրներ տեղափոխելու հիմնական պատճառը, անկասկած, էժան աշխատուժն է: Աշխատուժի արժեքը վճռորոշ դեր է խաղում այն ոլորտներում, որտեղ դրա գործունը մեծ է, իսկ տեխնոլոգիական պահանջները՝ ցածր: Ի թիվս այլ ոլորտների՝ այստեղ ընդգրկված են հագուստի, կոշիկեղենի, սպառողական էլեկտրատեխնիկայի և խաղալիքների արտադրությունները:

(Պատկերում բերված ամսական 400 յուան աշխատավարձը համարժեք է մոտ 40 եվրոյի (20 000 դրամ): Օրինակ, Նիդերլանդներում այդ անձը կստանար նվազագույն աշխատավարձ, որը կկազմեր 1 301 եվրո, ասել է թե, ավելի քան 650 500 դրամ):

Այս երևույթի պատճառներից մեկն էլ պատվերների փոխանցման միտումն է. այսինքն՝ որոշ գործուներության տեսակներ փոխանցվում են մեկ այլ ընկերությանը, տվյալ պարագայում՝ ենթակապալառուին: Պատվերների փոխանցումը պայմանավորված է ծախսերը կրճատելու ցանկությամբ: Իր



գործունեության մի մասը պատվերների տեսքով այլ ընկերություններին փոխանցող ընկերությունը կարող է ավելի լավ կենտրոնանալ իր հիմնական գործունեության և մասնավորապես մարքեթինգի, այդ թվում՝ արտադրատեսակների մշակման, տարածման, գովազդի և այլ ուղղությունների վրա՝ թողնելով հասարակ աշխատանքը (օրինակ՝ արտադրությունը) իր ենթակապալառուներին:

**2. Որտեղ են արտադրվում եվրոպական շուկայի համար նախատեսված ապրանքները**

Ներկայումս համաշխարհային տնտեսությունը խիստ փոխկապակցված է, և առօրյա կյանքում մեր կողմից սպառվող ապրանքը արտադրվում է մեզանից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա: Մենք կրում ենք շապիկներ՝ արտադրված Վիետնամում հնդկական բամբակից: Մենք օգտագործում ենք Մալազիայում արտադրված հեռախոսներ: Մենք կրում ենք սպորտային կոշիկներ Բրազիլիայից: Մեր ուսից կախված կաշվե պայուսակը բերված է Հնդկաստանից: Իսկ մեր օգտագործած վոլեյբոլի գնդակը բերված է Պակիստանից, շարժական համակարգիչը (նոթբուքը)՝ Թայվանից, սառեցված ձուկը՝ Ուգանդայից, իսկ ծաղիկները՝ Քենիայից: Մենք ճանապարհորդում ենք ԱՄՆ-ում արտադրված ինքնաթիռներով, իսկ Ճապոնական ռոբոտներն աշխատում են մեր գործարաններում:

Պատրաստի արտադրանքից բացի՝ ինչպիսին է հագուստը, կոշիկները, սպորտային պարագաները և էլեկտրատեխնիկան, այլ երկրներից մեզ հասնում են պարենային արտադրանք և հումք, օրինակ՝ սուրճ, թեյ, արախիս, քնջութի սերմեր, քաղցր եգիպտացորեն, սոյա, միս, արմավենու յուղ, անմշակ նավթ, բնական գազ, պղինձ, արճիճ, ալյումին, երկաթ, ոսկի, թանկարժեք փայտի տեսակներ, արևադարձային միրգ, բուրդ, բամբակ և բազում այլ ապրանքատեսակներ:

**3. Հայկական օրենսդրությամբ երաշխավորված հիմնական սոցիալական իրավունքներ**

**ա) Ո՞րն է մեր աշխատանքային օրենսդրության հիմքը:** Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, աշխատանքային օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով և կոլեկտիվ պայմանագրերով: Հայաստանը վավերացրել է նաև գործատուների իրավական հարաբերությունները կարգավորող միջազգային փաստաթղթեր, դրանք են՝ Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և անհապաղ վերացմանն ուղղված միջոցների մասին կոնվենցիան, Հարկադրված աշխատանքի, աշխատանքի և զբաղվածության ոլորտում խտրականության վերացման մասին կոնվենցիան, Տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության և արժեքների վերաբերյալ կոնվենցիան և այլն:

**բ) Որո՞նք են աշխատողների իրավունքները:** Աշխատողը ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

- Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի կամ որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք:
- Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք կարող են ընդգրկվել միայն նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում:

**Աշխատողն իրավունք ունի՝**

- նախքան աշխատանքի անցնելը ձեռք բերել մանրամասն տեղեկություններ աշխատանքի ծավալի, աշխատանքային պայմանների, իրավական հարաբերությունների, սեփական իրավական կարգավիճակի և աշխատավարձի վերաբերյալ,
- ծանոթանալ աշխատանքային կանոնակարգին (դրա առկայության դեպքում), ինչպես նաև դրա հետագա բոլոր փոփոխություններին,

- պահանջել տեղեկանք աշխատանքի վայրից, այդ թվում հետևյալ տվյալներով՝ աշխատանքի արտադրողականություն, աշխատավարձի չափ, աշխատանքային պայմանագրի տևողություն,
- պահանջել գործատուից փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը,
- պահանջել հանգստյան օրեր, բացի օրենսդրությամբ ամրագրված հանգստյան օրերից, ինչը կարգավորվում է աշխատանքային պայմանագրով,
- օգտվել վճարովի արձակուրդից՝ տարեկան առնվազն 24 աշխատանքային օր,
- օգտվել չվճարվող արձակուրդից՝ տարեկան առնվազն 30 օր,
- պահանջել գործատուից ապահովել աշխատակցի համար կյանքի և առողջության համար հնարավորինս անվտանգ աշխատանքային միջավայր, ողջամիտ ժամկետում տրամադրել աշխատակցի կյանքի և առողջությանը ներագդող բոլոր գործոնների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել բնական միջավայրի անվտանգությունը,
- պահանջել աշխատակցից լիովին փոխհատուցել աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված առողջությանը հասցված վնասը, ինչպես նաև անհրաժեշտ բուժման ծախսերը,
- սեփական նախաձեռնությամբ խզել աշխատանքային պայմանագիրը, տվյալ դեպքում աշխատակիցը պարտավոր է իր գործատուին առնվազն 30 օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնել, եթե այլ բան նախատեսված չէ աշխատանքային պայմանագրում,
- մասնակցել գործադուլներին կամ աշխատավայրի մուտքի արգելափակումներին,
- օգտվել ազգային և միջազգային օրենսդրությամբ նախատեսված այլ երաշխիքներից:

**գ) Ինչ միջոցներ պետք է նախաձեռնվեն աշխատանքային իրավունքների խախտման դեպքում:**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, կողմերի միջև տարաձայնության դեպքում, որը բխում է իրավունքների խախտումից, կողմը կարող է կիրառել հետևյալ ընթացակարգերը.

- Այլ կողմին ուղարկել անհամաձայնության գրավոր ծանուցում: Հարկ է ընդգծել, որ նման տարաձայնությունը չպետք է բերի աշխատանքային հարաբերությունների դադարեցման:
- Առանձին տարաձայնություններ կարող են լուծվել հաշտեցման ընթացակարգերով, անհատական բանակցություններով կամ դատական կարգով:

Մասնակցությունը հաշտեցման ընթացակարգերին պարտադիր չէ: Ամեն պահի ցանկացած անձ, ով համարում է, որ իր աշխատանքային իրավունքները խախտվել են, կարող է դիմել դատարան՝ իր խախտված իրավունքները վերականգնելու համար:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները և արհմիությունները կարող են աջակցել վերոհիշյալ ընթացակարգերի իրականացման գործում:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.

### ՆՇԱՆ

*Ֆիլմ՝ Սանդրայի արհեստանոցը*  
*Կշռադարման վարժություն*  
*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Աշխատանքային իրավունք», «Արտադրական շղթա», «Քաղաքացիական պատասխանատվություն»:

**Նպատակը՝** մտորել ֆիլմի վերաբերյալ, ձևավորել սեփական կարծիք, տեսակավորել ֆիլմում ներկայացված տեղեկատվությունը:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ յուրաքանչյուր աշակերտի համար, գրատախտակ:

### Ընթացք

Յուրաքանչյուր աշակերտ ստանում է իր թուղթը:

Աշակերտներին բացատրել նշանները, որոնք պետք է օգտագործել նկարագրելու «Սանտայի արհեստանոցը» ֆիլմը.

**գումարման նշան (+)** = ֆիլմում ինչն էր դրական

**հանման նշան (-)** = ֆիլմում ինչն էր բացասական

**հարցական նշան (?)** = ինչն էր անհասկանալի կամ ուներ լրացուցիչ մեկնաբանության կարիք

**բացականչական նշան (!)** = ֆիլմի հիմնական գաղափարը

*Ուշադրություն:* Լավ կլինի՝ նշաններն իրենց բացատրություններով գրել գրատախտակին:

Աշակերտները թղթի վրա գրում են իրենց տեսակետները՝ ըստ նշանների:

Աշակերտները ներկայացնում են իրենց տեսակետները: Նրանց պետք է հարցնել. «Ինչն էր ֆիլմում դրական», և գրատախտակին գրի առնել նրանց տեսակետները: Այդպես անդրադառնալ մնացած նշաններին՝ գրանցելով բոլոր տեսակետները:

Քննարկել գրատախտակին գրված բոլոր տեսակետները և բացատրել այն հարցերը, որոնք անհասկանալի էին (նշված էին հարցական նշանի տակ):

### Կշռադատում

Իրականացվում է քննարկման միջոցով այն տեսակետների շուրջ, որոնք գրված են գրատախտակին:

## ▼ ԳՈՐԾԵԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.

### ԻՆՉ Է ԹԱՔՆՎՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԻ ՀԵՏԵՎՈՒՄ

*Ֆիլմ՝ Մանտայի արհեստանոցը*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Աշխատանքային իրավունքներ», «Արտադրական շղթա», «Քաղաքացիական պատասխանատվություն»:

**Նպատակ՝** իմանալ հիմնական աշխատանքային իրավունքները, իմանալ արտադրական շղթայում քաղաքացիական պատասխանատվության մասին:

**Ժամանակ՝** 45-50 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** գրելու պարագաներ, աշխատանքային թերթիկ:

#### Ընթացք

«Մանտայի արհեստանոցը» ֆիլմի ցուցադրում:

Ֆիլմի քննարկման ընթացքում աշակերտներին տալ հետևյալ հարցերը. «Ի՞նչ կարծիք ունեք ֆիլմում ներկայացված իրավիճակի վերաբերյալ. արդյո՞ք սա ձեզ համար նորություն է», «Ֆիլմի շնորհիվ դուք տեսաք, թե ինչպիսի պայմաններում են աշխատում խաղալիքների գործարանի աշխատողները», «Ձեզ հայտնի են արդյոք, թե ի՞նչ այլ ապրանքներ են արտադրվում նման եղանակով. միգուցե սպորտային հագու՞ստը»: «Ո՞րն է ձեր նախընտրած սպորտային ապրանքանիշը և ինչու՞»:

Բաժանել աշակերտներին 3-4 հոգանոց խմբերի և նրանց տալ աշխատանքային թերթիկը, որտեղ բերված է Մերիի պատմությունը: Մերիի պատմությանը ծանոթանալուց հետո մասնակիցները պետք է պատկերացնեն, թե ինչպե՞ս կարելի է ժամում 120 տաքատ ձևել և 12 ժամ աշխատել վատ պայմաններում: Ընթերցանությունից հետո անցկացվում է քննարկում, որի ընթացքում աշակերտները միասին պատասխանում են հետևյալ հարցերին. «Արդյոք մենք կարո՞ղ ենք պատկերացնել մեզ նման իրավիճակում: Եթե այո, ապա ինչո՞ւ: Եթե ոչ, ապա ինչո՞ւ», «Ինչո՞ւ է Մերիի վաստակածը ոչ բավարար», «Ի՞նչն է ստիպում նրան աշխատել այդպիսի վատ պայմաններում», «Երեկոյան Մերին գնում է տուն իր ընտանիքի մոտ. ինչի՞ մասին են նրանք խոսում», «Ինչպե՞ս են նրանք իրենց զգում»:

#### Կշռադատում

Խնդրել աշակերտներին կարդալ աշխատանքային թերթիկում նշված տերմինների նկարագրերը: Քննարկման ընթացքում հայտնի է դառնում այն, որ խոսքը արտադրական շղթայի մասին է, որում նախագծվում, արտադրվում, փոխադրվում և վաճառվում են ապրանքները:

**Գործնական վարժություն՝ Ինչ է թաքնվում ապրանքանիշի հետևում**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**ՄԵՐԻՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Մերին ամբողջ օրը սպորտային տաբատներ է կարում: Նա մեկ ժամում պետք է 120 տաբատ կարի: Սովորական աշխատանքային օրվա ընթացքում Մերին կարում է 960 տաբատ: Մերին ամսական վաստակում է 40 եվրո: Եթե նա աշխատում է արտաժամյա, ապա վաստակում է մի փոքր ավել: Մեծ ապրանքանիշի տերերը ստանում են հսկայական եկամուտներ, սակայն Մերին չի կարող գնել իր կարած տաբատը: Մերիի աշխատանքը սկսվում է առավոտյան յոթն անց կես: Արտաժամյա աշխատանքը սկսվում է ցերեկվա ժամը չորսին և ավարտվում երեկոյան ութին, կամ ավելի ուշ: Մերին աշխատում է ամբողջ օրը՝ առանց ընդմիջման: Արտաժամյա աշխատանքն անհրաժեշտ է, քանի որ առանց դրա նրան հաճախ չի հաջողվում կատարել օրվա պլանը, և Մերին կորցնում է իր աշխատավարձի մի մասը:

Աշխատողները հաճախ աշխատում են արտաժամյա վատ պայմաններում: Վատ աշխատանքային պայմաններն են՝ առանց ընդմիջման երկար աշխատանքային ժամեր, անվտանգության վատ պայմաններ, շոգ և գարշահոտ: Չնայած դրան՝ գլխավոր կարգախոսն է՝ չկորցնել աշխատանքը և ընտանիքի համար եկամուտ ապահովել:

**ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇՂԹԱ**

**Հաճախորդներ:** Մեզանից շատերն ունեն հայտնի ապրանքանիշի սպորտային հագուստ:

**Խանութներ:** Դրանք մատչելի գներով հաճախորդներին առաջարկում են ամենավերջին մոդելները, որպեսզի մրցունակ լինեն:

**Աշխատողներ՝** Նրանք աշխատում են նվազագույն աշխատավարձի դիմաց: Պատրաստել կարճ հարցազրույց նման ընտանիքի անդամների հետ:

**Հայտնի ապրանքանիշ:** Դրանք փորձում են ստեղծել նորանոր մոդելներ և մեծ գումարներ են հատկացնում գովազդին և իրենց դեմքը դարձած աստղերին: Նրանք զարգացող երկրներում գործարաններ ունեն՝ աշխատուժի վրա միջոցներ խնայելու համար: Տեղական գործարաններն ընտրվում են՝ ըստ արտադրության առավել շահավետ գնի, բարձր որակի և արագ սպասարկման:

**Գործարաններ զարգացող երկրներում:** Այդ գործարանները արտասահմանյան ընկերություններին լավագույն պայմաններ են առաջարկում՝ որակյալ արտադրանք՝ ցածր գներով, հալառակ դեպքում՝ վերջիններս կընտրեն այլ արտադրողի:

### ▼ ԳՈՐԾԱՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. ԱՐՇՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

*Ֆիլմ՝ Սանտայի արհեստանոցը*  
*Տարիքային խումբը՝ 15+*

**Համապատասխան թեմաներ՝** «Սոցիալական իրավունքներ», «Ժողովրդավարություն», «Քաղաքացիություն»:

**Նպատակը՝** ընկալել արհմիությունների դերը, ընդհանուր համաձայնությամբ որոշումներ կայացնելու հմտություններ զարգացնել, խթանել մասնակցությունը, պատասխանատվությունը և համերաշխությունը:

**Ժամանակը՝** 30-45 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թիվ 1 և 2 աշխատանքային թերթիկների օրինակներ, գրատախտակ, նշագրիչներ:

#### Ընթացք

Այս վարժությունը գործատուի և աշխատողների հանդիպման մոդելավորում է, որտեղ արհմիության ներկայացուցիչները կբանակցեն աշխատավարձերի և աշխատանքի պայմանների շուրջ:

Ներկայացնել վարժությունը: Բացատրել, որ անցկացվելու է հանդիպման մոդելավորում, որտեղ մի կողմից հանդես են գալու գործատուները, իսկ մյուս կողմից՝ աշխատակիցները և արհմիության ներկայացուցիչները: Վարժության նպատակն է՝ կոլեկտիվ բանակցությունների միջոցով համաձայնության գալ աշխատակիցների աշխատավարձերի և աշխատանքի պայմանների վերաբերյալ:

Իրավիճակին ընտելանալու համար խնդրել խմբին որոշել այն ընկերության անվանումը և գործունեության տեսակը, որտեղ, ըստ նրանց, պետք է ընթանա նշված իրավիճակը: Կարող է լինել իրական կամ մտացածին ընկերություն, որը կարող է արտադրել իրական կամ երևակայական ապրանքներ: Խնդրել խմբին ընտրել նաև արհմիության անվանումը:

Բաժանել մասնակիցներին խմբերի՝ 2:1 համամասնությամբ: Ավելի փոքր խմբում պետք է լինեն գործատուները, իսկ մեծում՝ աշխատողներն ու արհմիությունների ներկայացուցիչները: Բաժանել առաջին՝ «Իրավիճակ» նյութի օրինակները, ինչպես նաև երկրորդ նյութը՝ «Աշխատանքային եզրույթների կարճ բառացանկը»: Հատկացնել տասը րոպե, որպեսզի մասնակիցները կարդան նյութը, և այնուհետև ստուգել, թե արդյո՞ք բոլորը հասկացել են ներկայացված տեղեկությունները:

Երբ խմբերը պատրաստ կլինեն, կարգադրել արհմիության ներկայացուցիչներին նստել ներսի շրջանում դրված հինգ աթոռներին, իսկ մնացած աշխատողներին՝ նրանց հետևում: Խնդրել նախագահողին բացել ժողովը:

#### Կշռադատում

Պարզել, թե արդյո՞ք մասնակիցներին դուր եկավ այս գործնական վարժությունը, և այնուհետև քննարկել տեղի ունեցածը և իրենց սովորածը:

- Ինչպե՞ս երկու խմբերը աշխատեցին իրենց սկզբնական առաջարկությունները միասին որոշելու համար: Արդյո՞ք դա հեշտ էր, թե՞ դժվար:
- Նախնական առաջարկությունները մշակելիս արդյո՞ք երկու խմբերը հաշվի են առել իրենց, թե՞ ընկերության շահերը:
- Արդյո՞ք խմբերը մշակել են բանակցելու ռազմավարություն:
- Ինչպիսի՞ ընթացք ստացավ հանդիպումը: Արդյո՞ք բոլոր ցանկացողներին խոսելու հնարավորություն տրվեց:

- Կարողացան կողմերը փոխընդունելի համաձայնության գալ:
- Արհմիությանն անդամակցելու իրավունքը ճանաչված է որպես մարդու իրավունք: Որքանով է կարևոր այդ իրավունքը: Ինչպիսի հետևանքներ կարող է ունենալ նման իրավունքից օգտվելու հնարավորության բացակայությունը:
- Ինչ գիտեն մարդիկ արհմիությունների մասին: Ինչ են դրանք իրենցից ներկայացնում և ինչով են զբաղվում:
- Որքանով են հզոր արհմիությունները ձեր երկրում: Իսկ ինչ կասեք գործատուների մասին. արդյո՞ք գոյություն ունեն նաև գործատուների կազմակերպություններ:
- Արդյո՞ք մասնակիցներից որևէ մեկը արհմիության անդամ է: Ինչու՞: Որո՞նք են անդամակցելու առավելություններն ու թերությունները:
- Արդյո՞ք մասնակիցները լսել են Հայաստանում նմանօրինակ իրավիճակի մասին: Եթե այո, ապա ինչպիսի՞ ավարտ է այն ունեցել:

### Գործնական վարժություն՝ Արհմիության հանդիպում

#### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻՎ 1

##### Իրավիճակ

Գործողությունը հանդիպումն է, որին մասնակցում են գործատուներ, աշխատողներ և արհմիության ներկայացուցիչներ. նրանք հայտնվել են փակուղում և փորձում են համաձայնության գալ պահանջվող աշխատավարձերի և աշխատանքի պայմանների շուրջ:

Գործարանն աշխատում է օրական 24 ժամ, տարին՝ 365 օր: Գործարանում աշխատում են երկու հարյուր հոգի՝ ներառյալ արտադրության և ղեկավարության աշխատողները: Բոլոր աշխատողներն անդամակցում են արհմիությանը:

Ընկերությունը ներկայումս ունի ֆինանսական և տնտեսական դժվարություններ, բայց և այնպես, սնանկություն նրան չի սպառնում: Եկամուտները շարունակում են բարձր մնալ, սակայն դրանք վերջին տարում նվազել են, քանի որ ողջ ոլորտն անկում է ապրում: Վերջին երեք տարում աշխատավարձերն իրական հաշվարկով նվազել են 3 տոկոսով, իսկ աշխատակիցների թիվը՝ 10 տոկոսով:

Աշխատողները պահանջում են աշխատավարձի բարձրացում՝ արդյունաբերության տարբեր ոլորտներում, և աշխատանքային պայմանների բարելավում, ասել է թե՛ համապատասխան համազգեստ, աշխատանքային անվտանգություն, առողջության ապահովագրում:

Ղեկավարությունը նշել է, որ ավելի բարձր աշխատավարձ վճարելու համար անհրաժեշտ կլինի նվազեցնել աշխատակազմի թիվը: Նրանց առաջարկը հետևյալն է՝ նվազեցնել աշխատողների թիվը 10 տոկոսով և բարձրացնել աշխատավարձերը 10 տոկոսով:

Ղեկավարության առաջարկը մերժվել է աշխատողների ընդհանուր ժողովի կողմից. արտահայտվել է այն մտահոգությունը, որ այս առաջարկների արդյունքում իրավիճակն էլ ավելի կվատթափանա: Արհմիությունը և աշխատողները ղեկավարությանը ներկայացրել են իրենց հետևյալ հակաառաջարկը՝ բարձրացնել աշխատավարձերը 10 տոկոսով՝ երկու տարվա ընթացքում չընդունելով նոր աշխատողներ: Միաժամանակ անվտանգ գործունեության համար ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ: Եթե այս պահանջները չբավարարվեն, ապա կհայտարարվի գործադուլ:

Հակաառաջարկը մերժվեց ղեկավարության կողմից այն պնդմամբ, որ արհմիության և աշխատողների առաջարկը չի լուծի այն խնդիրները, որոնց առջև հայտնվել է ընկերությունը: Բանակցություններն ընթանում են արդեն երկու ամիս:

Եթե երկու ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չի բերվում, ապա հատուկ ժողով է հրավիրվում, որին մասնակցում են շահագրգիռ բոլոր կողմերը: Հենց այս ժողովն է հիմք ծառայելու իրավիճակի մոդելավորման համար: Երկու կողմերը պարտավոր են հանդես գալ նոր առաջարկով, որը փոխշահավետ համաձայնության համար իրատեսական հիմք կծառայի:

Բանակցությունների սեղանի շուրջ պետք է հավաքվեն ընդհանուր առմամբ յոթ հոգի՝ ղեկավարության երկու ներկայացուցիչներ, հանդիպման նախագահ (որը նշանակվում է գործատուների կողմից) և արհմիության չորս ներկայացուցիչ: Քանի որ խոսքը հատուկ ընդհանուր ժողովի մասին է, բոլոր աշխատողները կարող են մասնակցել դրան:



**Գործնական վարժություն՝ Արհմիության հանդիպում**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ 2**

**Սահմանումներ**

**Կոլեկտիվ բանակցություններ:** Գործընթաց, որում գործատուները և աշխատողների ներկայացուցիչները փորձում են համաձայնության գալ և լուծել աշխատավարձին և աշխատանքի պայմաններին վերաբերող հարցեր:

**Լոքաութ:** Գործատուի կողմից ուժի գործադրման առավել ծայրահեղ միջոցներից է: Գործատուն թույլ չի տալիս աշխատողներին մուտք գործել իրենց աշխատավայր, ասել է թե՛ նա բառացիորեն փակում է դռները նրանց առջև և այս կերպ փորձում հարկադրել նրանց՝ ընդունելու ղեկավարության պահանջները:

**Կրճատում:** Աշխատողները կրճատվում են, երբ գործատուն նրանց ազատում է աշխատանքից՝ որոշելով փակել տվյալ ձեռնարկությունը: Հնարավոր է, որ աշխատակիցները փոխհատուցման կարգով արձակման նպաստ ստանալու իրավունք ունենան:

**Արձակման նպաստ:** Եթե մշտական աշխատողն ազատվում է աշխատանքից անարդարացիորեն կամ ընկերության վերակազմավորման պատճառով, ապա նա իրավունք ունի ստանալ փոխհատուցում, որն անվանվում է արձակման նպաստ: Արձակման նպաստի չափը հաճախ կախված է տվյալ աշխատողի աշխատավարձից, օրինակ՝ աշխատած յուրաքանչյուր տարվա համար մեկ շաբաթվա աշխատավարձ:

**Գործադուլ:** Գործադուլի իրավունքը հիմնական սոցիալական և մարդու իրավունքներից մեկն է, որը հաջող կոլեկտիվ բանակցությունների համար անհրաժեշտ տարր է, ինչպես նաև՝ գործատու-աշխատող հարաբերություններին բնորոշ անհավասարությունը մեղմացնելու միջոց: Գործադուլն աշխատողների կողմից աշխատանքից հրաժարվելու կամ աշխատանքը խափանելու միջոց է: Սակայն աշխատողները ցանկացած պահի իրենց ցանկությամբ գործադուլ հայտարարել չեն կարող: Հարկավոր է բավարարել որոշ պայմաններ, որոնք սովորաբար ամրագրված են օրենսդրությամբ և տարբեր են յուրաքանչյուր երկրում:

**Արհմիություն:** Արհմիությունը կազմակերպություն է, որը պաշտպանում է աշխատողների շահերը, այդ թվում՝ վարձատրության և աշխատանքի պայմանների հետ կապված հարցերը: Արհմիությունը սովորաբար ներկայացնում է աշխատողների շահերը գործատուների հետ բանակցություններում: Բազում երկրներում արհմիությունները դաշնություններ են կազմում:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.

### ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԻՆՉԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԷ

*Ֆիլմ՝ Սանտայի արհեստանոցը*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Ժողովրդավարություն», «Ոչ ժողովրդավարական վարչակարգեր»:

**Նպատակը՝** ներկայացնել մասնակիցներին ժողովրդավարության հիմնական տարրերը և նրանց հնարավորությունը ընձեռել ժողովրդավարությունը տարբերել ժողովրդավարություն չհանդիսացող իրողություններից:

**Ժամանակը՝** 25-30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկի օրինակներ, գրատախտակ, նշագրիչներ:

#### Ընթացք

Բաժանել մասնակիցներին երեք-չորս (կախված դասարանի չափից) հոգանոց խմբերի՝ խմբում ներառելով առավելագույնը 4 հոգի: Խնդրել նրանց ուշադիր կարդալ աշխատանքային թերթիկը՝ որոշելով ցանկի այն տարրերը, որոնք բնութագրում են ժողովրդավարությունը, և այն տարրերը, որոնք բնորոշ են ոչ ժողովրդավարական վարչակարգերին:

10-15 րոպե անց խնդրել մասնակիցներին ներկայացնել իրենց աշխատանքը (խմբի անունից կարող է հանդես գալ մեկ աշակերտ): Ներկայացման ընթացքում ցանկալի է փաստարկներ բերել այն մասին, թե ինչու է այս կամ այն բնութագիրը բնորոշ ժողովրդավարական կամ ոչ ժողովրդավարական համակարգերին:

#### Կշռադատում

Ներկայացումներից հետո անցկացնել խմբային քննարկումներ: Ուսուցիչը կարող է տալ հետևյալ հարցերը.

- Ձեր կարծիքով որո՞նք են ժողովրդավարության հիմնական տարրերը:
- Ի՞նչ զգացմունքներ է առաջացնում «ժողովրդավարություն» բառը:
- Կառավարման ո՞ր տեսակն է ժողովրդավարական:
- Արյդո՞ք ժողովրդավարությունը կապված է մարդու իրավունքների պաշտպանության հետ:
- Ինչպե՞ս դուք կարող եք բնութագրել ոչ ժողովրդավարական վարչակարգերը:
- Դուք կարո՞ղ եք ժողովրդավարական վարչակարգերի օրինակներ բերել: Իսկ ոչ ժողովրդավարական կառավարությունների օրինակներ կարո՞ղ եք բերել: Ո՞ր երկրներում են դրանք գործում: Ինչո՞ւ եք դուք այդպես կարծում:
- Արյդո՞ք Հայաստանը ժողովրդավարական երկիր է: Եթե այո, ապա ինչո՞ւ: Եթե ոչ՝ ինչո՞ւ:

**Գործնական վարժություն՝ Ինչ է ժողովրդավարությունը, և ինչը ժողովրդավարություն չէ**  
**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

Երեք ոլորտներ՝ իշխանությունները, ձեռնարկությունները և հասարակական կազմակերպությունները, համագործակցում են հավասար հիմունքներով՝ կիսելով երկրի հիմնական հարցերին վերաբերող իրենց մտքերը:

Կառավարությունը վերահսկում է ձեռնարկատիրական ոլորտը, թեև ձևականորեն (ըստ օրենսդրության) ձեռնարկատիրական գործունեության համար ազատ և մրցակցային դաշտ է ստեղծվել:

Մարդկանց անձնական ազատություն, անհատական ազատություններ: Խոսքը կառավարության միջամտությունից զերծ մնալու ազատության մասին է: Այսօր այս ազատության շրջանակներն ընդգրկում են զանազան գործողություններ ձեռնարկելու ազատության պահանջները, որ զերծ են կառավարության խտրական վերաբերմունքից:

Իշխանությունների տարանջատում նշանակում է լիազորությունների բաժանում կառավարության օրենսդրական, գործադիր և դատական ճյուղերի միջև: Այս իրողության շտրիիվ ստեղծվում է զսպումների և հակակշիռների համակարգը:

Երկրում գործում է միայն մեկ քաղաքական կուսակցություն, որը ներկայացված է բոլոր ճյուղերում: Քաղաքականության բոլոր ոլորտներում գերակայում է անհատների միայն մեկ խումբ, որն ամեն ինչ վերահսկում է:

Մենք ընտրում ենք պաշտոնյանների՝ որպես մեր ներկայացուցիչների՝ նախագահներ, քաղաքապետներ, թաղապետարանի խորհրդի անդամներ, խորհրդարանի պատգամավորներ, իսկ նրանք ձևավորում և կենսագործում են օրենսդրությունը: Որպես քաղաքացիներ՝ մենք ենթարկվում ենք օրենքներին և հետևում դատարանների և վարչական այլ գերատեսչությունների որոշումներին:

Երկրում չկան արհմիություններ: Կառավարությունը հայտարարում է, որ դրանք անհրաժեշտ չեն, քանի որ աշխատողների իրավունքները պաշտպանված են: Իրականում աշխատավորները հնարավորություն չունեն տարրական աշխատանքային պայմաններ պահանջելու, չկա որևէ մեկը, ով կկարողանար պաշտպանել նրանց շահերը:

Երաշխավորված չէ հավաքների ազատությունը: Մարդիկ չեն կարող հավաքվել փողոցներում, խաղաղ հայտարարություններ անել և մեծ խմբով արտահայտել իրենց բողոքը:

Ընտրությունների համակարգն ազատ է և թափանցիկ: Բոլոր քաղաքական կուսակցությունները, ինչպես նաև տեղական և միջազգային կազմակերպությունները հնարավորություն ունեն վերահսկելու ընտրությունների ընթացքը: Սովորական քաղաքացիները նույնպես կարող են հանդես գալ որպես դիտորդներ:

Թեև լրատվամիջոցների ոլորտում առկա է որոշակի բազմազանություն (երկրում գործում են մի քանի հեռուստատեսային և ռադիո ընկերություններ, ինչպես նաև՝ մի շարք թերթեր), սակայն դրանք բոլորը վերահսկվում են կառավարության կողմից և չեն օգտվում խմբագրական անկախությունից:

Իրականացվում են մի շարք ենթակառուցվածքային ծրագրեր: Կառավարությունը կառուցում է նոր շենքեր, ճանապարհներ և երկրում փորձում զարգացնել զբոսաշրջության ոլորտը:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5.

### ԲԻՆԳՈ

*Ֆիլմ՝ Սանտրայի արհեստանոցը*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Բնապահպանական հարցեր», «Շրջակա միջավայրի պաշտպանություն»:

**Նպատակը՝** նկարագրել շրջակա միջավայրի մասին հոգալու տարբեր եղանակները, զարգացնել այն համոզմունքը, որ յուրաքանչյուր անձ հնարավորություն ունի փոխելու իր վարքագիծը և պաշտպանելու շրջակա միջավայրը:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** մատիտներ, աշխատանքային թերթիկ յուրաքանչյուր աշակերտի համար (լրացուցիչ փոքր մրցանակ հաղթողի համար):

### Ընթացք

Յուրաքանչյուր աշակերտ ստանում է հարցերով աշխատանքային թերթիկի մեկ օրինակ: Ուսուցիչը հրահանգում է բոլոր աշակերտներին շրջել դասարանով և միմյանց տալ վիճակախաղի թերթի վրա առկա հարցերը: Երբ որևէ մեկը դրական պատասխան է տալիս հարցին, ապա հարց տվող աշակերտը պետք է գրի առնի պատասխանողի անունը աշխատանքային թերթիկի հարցի տակ նախատեսված տեղում՝ «Անուն՝ .... »: Վարժության նպատակն է՝ լրացնել բոլոր 12 հարցերն այն մարդկանց անուններով, ովքեր կարող են հաստատել, որ վարվում են նշված եղանակով: Կարելի է թերթիկի վրա նույն մարդու անունը նշել մի քանի անգամ:

Աշակերտներին պետք է խրախուսել՝ ասելու ճշմարտությունը: Եթե մասնակիցները չկարողանան ինքնուրույն կատարել այս գործնական վարժությունը, ապա նրանք կարող են իրենց ընտանիքի անունից պատասխանը տալ (օրինակ՝ էլեկտրաէներգիայի արդյունավետ օգտագործմամբ սարքեր գնելու փաստեր): Նա, ով առաջինը կլրացնի անունները հորիզոնական կամ ուղղահայաց աղյուսակում, շահում է մեկ «գիծ»: Նա, ով լրացնի բոլոր բացերը, կհաղթի ամբողջ խաղը:

### Կշռադատում

Գործնական վարժության ավարտից հետո ուսուցիչը կարող է հարցնել աշակերտներին, թե ո՞ր հարցն էր (բաց թողնված տողը) լրացնելու համար առավել բարդ, ասել է թե՛՝ գտնել նրան, ով դրան դրական պատասխան կտա: Միասին կարող են քննարկել դրա պատճառները: Նայել և փոխել:

**Գործնական վարժություն՝ Բինգո**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**Լրացնել տողերը**

<p>Արդյո՞ք դուք նախընտրում եք հայկական արտադրանքը ներկրված արտասահմանյան ապրանքներից:</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Արդյո՞ք ցնցուղ ընդունելիս դուք խնայում եք ջուրը:</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Դուք շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկություններ փնտրո՞ւմ եք:</p> <p>Անուն՝ _____</p>
<p>Խանութ գնալիս դուք նախընտրո՞ւմ եք օգտվել ձեր սեփական (կտորի) տոպրակից՝ հրաժարվելով պլաստիկ տոպրակներից (դրո՞նք տալիս են սուպերմարկետներում):</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Արդյո՞ք դուք բոյկոտում եք այն լոդափները, որոնք ապօրինաբար են կառուցված:</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Արդյո՞ք դուք ստուգում եք, թե որտեղ է արտադրվել կամ որտեղից է ներկրվել տվյալ ապրանքը՝ նախապատվությունը տալով ձեր բնակության վայրին ավելի մոտ գտնվող երկրներից ներկրվածին:</p> <p>Անուն՝ _____</p>
<p>Արդյո՞ք դուք վերամշակում եք աղբը:</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Արդյո՞ք դուք նախընտրում եք կրկին օգտագործվող ապրանքատեսակներ (ամանեղեն, տեքստիլային արտադրանք):</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Արդյո՞ք դուք ձեր օդորակիչը կարգավորում եք մոտավորապես 25 աստիճանի:</p> <p>Անուն՝ _____</p>
<p>Արդյո՞ք դուք դպրոց եք գնում ոտքով կամ հեծանիվով, հրաժարվելով հասարակական տրանսպորտից:</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Արդյո՞ք դուք աղբը միշտ թափում եք հանրային աղբամաններում:</p> <p>Անուն՝ _____</p>	<p>Արդյո՞ք դուք միշտ անջատում եք լոյսը, երբ դուրս եք գալիս սենյակից:</p> <p>Անուն՝ _____</p>

## ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ ԲՐԻՍՏՈԼՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ալիսթեր Օլդման / Միացյալ թագավորություններ / 2009 / 17 րոպե



«Հեծանիվների բրիստոլյան ծրագիրը» ներկայացնում է հետևյալ իրավիճակը. Լոնդոնի մի բնակիչ հավաքում է հին կամ ավելորդ հեծանիվները, որոնք նվիրատվության տեսքով ստանում է բնակիչներից: Այնուհետև քաղաքական ապաստան հայցողների և փախստականների հետ վերանորոգում է այդ հեծանիվները, որպեսզի զբաղմունք և, իհարկե, փոխադրամիջոց ապահովի հասարակության առավել մեկուսացված խմբերի համար: Հեծանիվը մի փոքր ազատություն է տալիս նրանց կյանքին, որտեղ ընտրության հնարավորությունները մեծ չեն:

### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնական թեմա՝ «Միգրացիա»

Հարակից թեմաներ՝ «Բաղաքացիական ակտիվություն», «Վերանշակում»

#### 1. Որն է տարբերությունը ներգաղթյալի, տնտեսական միգրանտի և փախստականի միջև

**Ներգաղթյալները** սովորաբար լքում են իրենց ծագման երկիրը կամավոր՝ հաճախ իրենց և իրենց ընտանիքի կենսամակարդակը բարձրացնելու նպատակով (այսպես կոչված՝ **տնտեսական միգրանտներ**): Տնտեսական դրդապատճառներից զատ՝ մարդիկ տեղափոխվում են այլ երկրներ ընտանեկան, կրթական և այլ պատճառներով:

**Փախստականները** հիմնականում իրենց երկրները լքում են ոչ թե վատ ֆինանսական դրության կամ գործազրկության պատճառով, այլ խուսափում են, օրինակ՝ **վտանգից, պատերազմից, խտրականությունից կամ քաղաքական հետապնդումներից**: Այսպես կոչված անվտանգ երկրում հայտնված փախստականներն իրավունք ունեն դիմելու **միջազգային պաշտպանություն (ապաստան) ստանալու համար**, որը տրվում է (կամ չի տրվում) նրանց՝ ելնելով նրանց շարժառիթներից: Ռազմական հակամարտությունների դեպքում, **փախստականի կարգավիճակ** կարող է շնորհվել նաև մարդկանց մի ամբողջ խմբի՝ առանց առանձին հայտերի ստուգման:

Գործնականում կարող է դժվար լինել տարբերել տնտեսական միգրանտին փախստականից: Այդ դուռնադուռը, որպես կանոն, ճիշտ է, որ ներգաղթյալը կարող է օգտվել իր ծագման երկրի իշխանությունների պաշտպանությունից, մինչդեռ փախստականը զրկված է այդ հնարավորությունից:

Փախստականն այն «անձն է, ով գտնվում է իր քաղաքացիության կամ սովորական բնակության երկրի սահմաններից դուրս, ունի հետապնդումների ենթարկվելու հիմնավոր մտավախություններ ուսայի, կրոնի, ազգության, որևէ առանձին սոցիալական խմբին անդամակցելու կամ քաղաքական հայացքներին հարելու պատճառով, ինչպես նաև ի վիճակի չէ կամ չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից... Կամ չի կարող վերադառնալ այդ երկիր՝ ելնելով հետապնդումների ենթարկվելու իր մտավախությունից»:

*Փախստականների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1951 թ.)*

**2. Որոնք են միգրացիայի հետևանքներն այն երկրների համար, ուր մարդիկ ուղևորվում են, և այն երկրների համար, որոնք մարդիկ լքում են**

Միգրացիան հետևանքներ ունի ինչպես այն երկրների համար, ուր տեղափոխվում են միգրանտները, այնպես էլ այն ազդում է ծագման երկրի վրա: Ինչ վերաբերում է միգրացիային, ապա **հնարավոր է երկու կողմից էլ առավելություններ և թերություններ գտնել:** Յուրաքանչյուրի շահերից է բխում, որ առավելություններն ավելի շատ լինեն, քան թերությունները: Բայց և այնպես, դրան հասնելու համար չկան համընդհանուր լուծումներ:

**Ներգաղթյալները կարող են բարիք դառնալ նպատակակետ երկրի համար,** եթե այնտեղ կա **աշխատուժի պակաս:** Մա սովորաբար վերաբերում է որակավորում չպահանջող աշխատատեղերին, որոնք չեն հետաքրքրում տեղացիներին, կամ էլ՝ բարձր որակավորում պահանջող մասնագիտություններին: Օրինակ, մեծ է բուժքույրերի և բժիշկների պահանջարկը: Եթե այս մարդիկ տեղափոխվեն որևէ երկիր և այնտեղ լրացնեն աշխատաշուկայի բացը, ապա դա օգուտ կբերի տվյալ հասարակությանը: Ավելին, կրթված ներգաղթյալների պարագայում ընդունող պետությունը ստանում է փորձագետներ, որոնց համար նա որևէ ռեսուրս չի ծախսել: Այդուհանդերձ, այս իրողությունը խնդիրներ է առաջացնում մյուս կողմի, այն է՝ ծագման երկրի համար, որը կորցնում է որակավորված մարդկանց: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ իրողությունը վերաբերում է աղքատ երկրներին, որտեղ կրթությունը բարձր է գնահատվում, ուստի և այս երևույթը մեծ նշանակություն ունի: Որակավորված մարդկանց առկայությունը նախապայման է երկրի ապագա զարգացման համար: Այդուհանդերձ, վերջին տարիներին մասնագիտական գիտելիքներ ունեցող միգրանտները որոշ ժամանակ անց վերադառնում են հայրենիք (այսպես կոչված՝ շրջանաձև միգրացիա)՝ իրենց հետ բերելով այլ երկրի փորձը, հաճախ ավելի բարձր որակավորում և սովորաբար որոշ խնայողություններ: Այսպիսի մարդիկ կրկին շատ օգտակար են դառնում իրենց երկրի համար:

Տնտեսապես զարգացած երկրները հաճախ բախվում են **ծերացող ազգաբնակչության խնդրին:** Ներգաղթյալները կարող են առնվազն դանդաղեցնել այս միտումը: Մյուս կողմից աղքատ երկրներում առկա է հակառակ հիմնախնդիրը: Աշխատանք գտնելու սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց մեծ թիվն առաջացնում է զգալի սոցիալական խնդիրներ և լարվածություն: Միգրացիան անվտանգության այն փակասն է, որի օգնությամբ հանգուցալուծվում է նման դժվարին իրադրությունը: Ավելին, միգրանտներն իրենց ազգականներին գումար են ուղարկում, որպեսզի բարձրացնեն վերջիններիս կենսամակարդակը, որի շնորհիվ տվյալ երկիր են մուտք գործում պակասող դրամական միջոցները: Նման միջոցներն անվանվում են **փոխանցումներ:** Դրանց **ընդհանուր տարեկան ծավալը գերազանցում է զարգացման գծով տրամադրվող պաշտոնական օգնությունը:** Առաջանում են նշված միջոցները դեպի ենթակառուցվածքի զարգացում ուղղելու, այլ ոչ թե միմիայն մասնավոր պահառուների ձեռքերում դրանք թողնելու ծրագրեր: Արտասահմանում բնակվող իրենց ազգականներից դրամական միջոցներ ստացող ընտանիքները հիմնականում օգտագործում են դրանք իրենց հիմնական կենսական կարիքները հոգալու և իրենց երեխաներին կրթելու համար: Որոշ երկրներում (օրինակ՝ Չինաստանում) մի քանի ընտանիք միավորվում է իրենց անդամներից մեկին հարուստ երկիր աշխատանքի ուղարկելու համար՝ ակնկալելով, որ հետագայում այդ անձը ֆինանսապես կաջակցի իրենց: Այնուամենայնիվ, նույնիսկ փոխանցումները չեն կարող լուծել ծագման երկրում միգրացիայի պատճառով որակավորված աշխատողների պակասի հիմնախնդիրը:

Ընդունող երկրներում ներգաղթյալների մեծ ներհույքը կարող է լուրջ սոցիալական **խնդիրների և լարվածության պատճառ դառնալ:** Հետևաբար, յուրաքանչյուր երկիր փորձում է վերահսկել միգրացիան իր տարածքում և, աջակցության ծրագրերից բացի, նաև նախատեսում է որոշ սահմանափակումներ: Միաժամանակ ապօրինի միգրացիան նույնպես ունի զգալի տնտեսական և սոցիալական հետևանքներ:

**3. Եթե Հայաստանի քաղաքացին կամ Եվրամիության երկրի քաղաքացի չհանդիսացող որևէ անձ ցանկանում է աշխատել Եվրամիության որևէ երկրում, ինչպիսի խոչընդոտներ պետք է հաղթահարի: Ինչ պետք է անի, որպեսզի կարողանա աշխատել Եվրամիությունում**

Ցանկացած անձ, ով չունի Եվրամիության երկրներից որևէ մեկի անձնագիր և ցանկանում է աշխատել 27 անդամ երկրներից մեկում, պետք է ձեռք բերի աշխատանքային մուտքի արտոնագիր և աշխատանքի թույլտվություն: Շատ հաճախ մարդիկ դիմում են աշխատանքային արտոնագիր ստանալու:



լու համար այդ երկրի՝ իրենց հայրենիքում գտնվող դեսպանատուն են դիմում: Այսպիսով, եթե հայը ցանկանում է Գերմանիա մեկնել, ապա նա պետք է այցելի Երևանում Գերմանիայի դեսպանատուն:

Եվրամիության երկրների մեծ մասում նախքան աշխատանքային մուտքի արտոնագիր ստանալու համար դիմելը հիմնականում հարկավոր է աշխատանքի առաջարկ ունենալ: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ունենալ պայմանագիր կամ նամակ այն երկրի գործատուից, ուր դուք ցանկանում եք մեկնել, կամ էլ՝ նամակ ձեր երկրում հավաքագրող կազմակերպությունից: Թեպետև որոշ դեպքերում այս ամենն անհրաժեշտ չէ: Օրինակ, Միացյալ Թագավորությունում տրվում է հատուկ մուտքի արտոնագիր երկու տարի ժամկետով բարձր որակավորում ունեցող աշխատողների համար, ովքեր պետք է ապացուցեն որևէ ցանկալի ոլորտում բարձրակարգ կրթության, աշխատանքային փորձի և հմտությունների առկայությունը: Լեհաստանում Եվրամիության անդամ չհանդիսացող երկրների քաղաքացիները, ովքեր ցանկանում են աշխատել որոշակի ոլորտներում (օրինակ՝ գյուղատնտեսությունում կամ շինարարությունում), կարող են մինչև 6 ամիս տևողությամբ մուտքի արտոնագրեր ստանալ առանց բարդ ընթացակարգերի: Հակառակ դեպքում՝ հարկավոր է դիմել կոնկրետ թափուր տեղի համար:

Գործատուի հետ կնքված պայմանագրից բացի՝ աշխատանքային մուտքի արտոնագիր ձեռք բերելու համար Ձեզ հարկավոր կլինեն մի շարք այլ փաստաթղթեր: Բայց և այնպես, ամեն երկրում պահանջները տարբեր են, սակայն ամենից հաճախ ձեզանից կպահանջվի որոշակի գումարի առկայություն՝ այլ երկրում ձեր ծախսերը հոգալու համար, ինչպես նաև ներկայացնել ապացույց, որ դուք նախատեսել եք, թե որն է լինելու տվյալ երկրում ձեր օթևանը: Հաճախ կպահանջվի նաև գնել այդ երկրում ճանաչվող ապահովագրություն, կամ ապացույց ներկայացնել, որ ձեր գործատուն կվճարի դրա համար: Մովորաբար հենց հաստատվի մուտքի արտոնագիրը, հարկավոր է վճարել դրա համար: Կարևոր է նաև հիշել, որ նույնիսկ եթե դուք ունեք բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, մինևույն է՝ երաշխավորված չէ, որ ձեզ կտան աշխատանքային մուտքի արտոնագիր: Այս հայեցակարգի համար կարող է երկար ժամանակ պահանջվել, հատկապես եթե դուք դիմում եք մի երկրում, որտեղից դեպի նպատակակետ երկիր շատ մարդ է ուղևորվում:

Աշխատանքային մուտքի արտոնագիր ստանալուց և Եվրամիության երկիր ժամանելուց հետո դուք պետք է ստանաք աշխատանքի և կացության համար թույլտվություններ, որոնց իրավունքն ունեք՝ ստացված մուտքի արտոնագրի հիման վրա: Եվրամիությունում տրվող աշխատանքի թույլտվությունների մեծ մասը վավերական են մեկից չորս տարի ժամկետով. դա պայմանավորված է տվյալ երկրի կանոններով և կախված ձեր աշխատանքային պայմանագրից:

Եվրամիությունը ներմուծել է աշխատանքային մուտքի արտոնագրերի մի շարք ծրագրեր, որոնք կենտրոնացած են աշխատողների որոշակի կատեգորիաների վրա: Ամենավերջին ծրագիրն ունի «կապույտ քարտ» (անգլ. Blue Card) անվանումը և հաջորդ տարվանից հասանելի է լինելու Եվրամիության երկրների մեծ մասի համար: Այս քարտը նախատեսված է հատուկ բարձր որակավորում, լավ կրթություն ունեցող աշխատողների համար և դյուրացնում է նրանց աշխատանքային այցելությունները:

Աշխատելու նպատակով Եվրամիություն մուտք գործելու ևս մի տարբերակ է գործարարների համար նախատեսված մուտքի արտոնագիրը, որով դուք մեկնում եք Եվրամիության որևէ երկիր այնտեղ ձեր սեփական գործը սկսելու համար: Այս տեսակի մուտքի արտոնագիր ստանալու կանոնները են Եվրամիության երկրներում շատ տարբեր են: Որոշ դեպքերում ձեզ անհրաժեշտ կլինի ապացուցել, որ դուք մտադիր եք ներդնել որոշակի գումար, և երբեմն էլ հարկավոր կլինի ցույց տալ, որ ձեր ապագա բիզնեսը զարգացնելու համար դուք ունեք մանրամասն ծրագիր: Առհասարակ այս տարբերակի համար պահանջվում է ավելի մեծ նախնական ներդրում, և այն այդքան էլ հստակ չէ, որքան աշխատանքային մուտքի արտոնագիրը, հատկապես, եթե դա ձեր առաջին երկարատև այցն է տվյալ երկիր: Մովորաբար Եվրամիության երկրի քաղաքացի չհանդիսացող անձինք դիմում են այս տեսակի մուտքի արտոնագիր ստանալու համար այն դեպքում, երբ մի քանի տարի աշխատանքային կամ ուսումնական արտոնագրով ապրում են Եվրամիության երկրում:

Բացի փաստաթղթերից և ֆինանսական միջոցների առկայության ապացույցներից, որոնք դուք պետք է ներկայացնեք ձեր ուղևորության համար ընտրած երկրի դեսպանատանը, կարևոր է նաև մտածել, թե արդյոք դուք գիտեք որևէ բան տվյալ երկրի մասին կամ ճանաչում եք այնտեղ ապրող որևէ մեկին: Նշանակետ երկրում աջակցության ցանց կամ այդ երկրի վերաբերյալ գիտելիքներ ունենալը նույնքան կարևոր է, որքան այնտեղ հասնելու համար համապատասխան փաստաթղթեր ձեռք բերելը:

**4. Արդյո՞ք դժվար է Եվրամիության երկրներում աշխատանք գտնել:  
Արդյո՞ք դա ավելի բարդ է, քան Եվրամիության բնակիչների համար**

Եվրոպական երկրների մեծ մասը կամ ավելի շուտ դրանց կառավարություններն ու քաղաքականություն ձևավորողները ներկայումս հետաքրքրված են բարձր որակավորում ունեցող արտասահմանցի աշխատողների ներգրավմամբ: Քաղաքականություն ձևավորողները և գործատուները հետաքրքրված են Եվրամիության երկրի քաղաքացի չհանդիսացող այն ներգաղթյալներով, ովքեր ունեն այսպես կոչված հատուկ հմտություններ, այսինքն՝ նրանցով, ովքեր կարող են զբաղեցնել բարձր դեկավար պաշտոններ կամ աշխատել բժշկության, տեղեկատվական տեխնոլոգիաների և որոշ այլ ոլորտներում: Իրականում բազում եվրոպական երկրներում չկան նաև բավարար թվով մարդիկ, ովքեր հետաքրքրված են ցածր հմտություններ պահանջող կամ առհասարակ հմտություններ չպահանջող որոշակի աշխատանքով, օրինակ՝ փողոցների մաքրում, խնամքի ծառայություններ, սպասարկման ոլորտ (հյուրանոցներ, ռեստորաններ և այլն), տնային խնամք, գործարանային աշխատանք և այլն: Եվրամիության ժամանած բազում ներգաղթյալներն արդեն լրացրել են նման թափուր տեղեր:

Միաժամանակ հարկ է հիշել, որ եվրոպական աշխատանքային օրենսդրությունը նախապատվությունը տալիս է Եվրոպական երկրների քաղաքացիներին, այլ ոչ թե Եվրամիության քաղաքացի չհանդիսացող անձանց: Հավանաբար, միշտ էլ այդպես է լինելու: Եթե ներգաղթյալն արդեն ստացել է Եվրամիության պետություններից մեկում մշտական կացության թույլտվություն, ապա նա միշտ պետք է դիմի աշխատանքային մուտքի արտոնագրի կամ աշխատանքի թույլտվության թարմացման համար (սովորաբար մեկ կամ երկու տարին մեկ), իսկ այդ թույլտվությունը սովորաբար կախված է կոնկրետ գործատուից և աշխատանքից: Ներկայումս բազում երկրներում նախքան Եվրամիությունից դուրս աշխատող ընդունելը և նրա աշխատանքային պայմանագիրը թարմացնելը, գործատուն պետք է ապացուցի իր երկրի համապատասխան մարմիններին, որ իր համաքաղաքացիներից ոչ ոք հետաքրքրված չէ տվյալ աշխատանքով կամ չի կարող լրացնել այդ թափուր տեղը: Գործնականում դա նշանակում է, որ գործատուն պետք է թերթերում կամ աշխատանքի տեղավորման գործակալության միջոցով հայտարարություն տա այդ թափուր տեղի մասին և սպասի սահմանված թվով օրեր նախքան այդ աշխատանքի համար Եվրամիության երկրի քաղաքացի չհանդիսացող անձին ընդունելը:

Այս և այլ միջոցառումները, որոնք միտված են նախապատվությունը տալու Եվրամիության տեղացի աշխատողներին, այլ ոչ թե այլ երկրների քաղաքացիներին, շատ երկրներում 2008-2009 թվականների տնտեսական ճգնաժամից հետո խստացվել են: Գործազրկությունը Եվրամիության քաղաքացիների շրջանում զգալիորեն աճել է, ուստի կառավարությունները ցանկանում են իրենց սեփական քաղաքացիներին աշխատանք գտնելու ավելի շատ հնարավորություններ ընձեռել: Չնայած դրան՝ Եվրամիության ողջ տարածքում կան թափուր աշխատատեղեր ինչպես բարձր, այնպես էլ ցածր որակավորում պահանջող հատվածներում:

Ըստ կանխատեսումների՝ մոտակա 20-30 տարիներին Եվրամիությունը տարեցտարի արտասահմանից եկած աշխատուժի ավելի մեծ կարիք կունենա: Եվրոպայի ազգաբնակչությունն արագ ծերանում է, ինչը նշանակում է, որ չաշխատող և խնամքի կարիք ունեցող տարեց մարդկանց թիվն աճելու է: Մինևույն ժամանակ ծնունդների ամենամյա թիվը բավարար արագությամբ չի աճում, իսկ բազում երկրներում ծնելիությունը նույնիսկ դանդաղում է: Արդյունքում աշխատուժի ծավալը, ասել է թե՛ աշխատունակ մարդկանց թիվը, 20 տարի անց ավելի ցածր կլինի, քան չաշխատողների թիվը: Բազում փորձագետներ համամիտ են, որ աշխատուժի այս պակասը կարող է և պետք է լրացվի Եվրամիությունից դուրս գտնվող պետություններից եկած աշխատողների հաշվին, սակայն ներգաղթային քաղաքականությունը մշտապես կախված է տվյալ պահի քաղաքական և տնտեսական իրավիճակից:

Ընդհանուր առմամբ թափուր տեղ գտնելն այդքան էլ դժվար բան չէ, եթե տիրապետում ես տվյալ երկրի լեզվին կամ անգլերենին: Թափուր տեղերի մասին հայտարարությունները հաճախ տրվում են ազգային կամ միջազգային կայքերում, կամ էլ՝ թերթերում: Մեծ ընկերությունները հաճախ փնտրում են աշխատողներ արտասահմանից, հատկապես եթե վերջիններս երիտասարդ են և ստացել են լավ կրթություն: Հաճախ առաջանում է նաև սեզոնային աշխատողների կարիք, ինչը նշանակում է, որ եկածները կարճատև հիմունքներով ժամանակավոր աշխատողներ են, ովքեր առավել հաճախ ներգրավված են գյուղատնտեսության, շինարարության կամ զբոսաշրջության ոլորտում: Սակայն ինչպես արդեն նշվել է՝ հաճախ տվյալ երկրում գործող կանոնների պատճառով գործատուները կարող են կանգնել խնդիրների առաջ, երբ ցանկանում են արտասահմանցի որևէ մեկին աշխատանքի ընդունել:

## ▼ ԳՈՐԾԵԼԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.

### ԱՆԱՆՈՒՆ ՄՏՔԵՐ

*Ֆիլմ՝ Հեծանիվների բրիստոլյան ծրագիր*

*Կշռադարման վարժություն*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Միգրացիա», «Փախստականներ», «Ակտիվ քաղաքացիություն»:

**Նպատակը՝** քննարկել ֆիլմում ներկայացված օրինակը, լսել յուրաքանչյուրի տեսակետը:

**Ժամանակը՝** 15 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ յուրաքանչյուր աշակերտի համար, արկղ:

### Ընթացք

Թղթերը բաժանել աշակերտներին:

Աշակերտները «Հեծանիվների բրիստոլյան ծրագիրը» ֆիլմի դիտումից անմիջապես հետո գրում են (անանուն) իրենց տպավորությունները ֆիլմի վերաբերյալ: Կիրառել ազատ արտահայտման մեթոդը. աշակերտներին տալ մեկ րոպե ժամանակ նկարագրելու իրենց զգացմունքները և մտքերը առանց ուշադրություն դարձնելու քերականական սխալներին: Նրանք կարող են դրանք ներկայացնել նախադասություններով, բառերով կամ բանալի բառերով:

Աշակերտներն այնուհետև իրենց թղթերը գցում են նախապես պատրաստված արկղի մեջ:

Յուրաքանչյուր աշակերտ մոտենում և արկղից հանում է մեկ թուղթ, բարձրաձայն ընթերցում: Իր գրածը հանելու դեպքում նորից հետ է գցում արկղի մեջ և հանում մեկ ուրիշ թերթիկ:

### Կշռադատում

Կշռադատումը տեղի է ունենում՝ քննարկելով թղթերի վրա ներկայացված տեսակետները:

▼ **ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.**

**ՏՈՒՆ**

*Ֆիլմ՝ Հեծանիվների բրիստոլյան ծրագիր*  
*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Միգրացիա», «Փախստականներ»:

**Նպատակը՝** հասկանալ և գիտակցել, որ տունը միայն բնակության վայր չէ:

**Ժամանակը՝** 15 րոպեից մինչև 1 ժամ:

**Անհրաժեշտ պարագաներ՝** գրելու և նկարելու պարագաներ, թուղթ:

**Ընթացք**

Աշակերտները մտքերի տարափի մեթոդով ստեղծում են մտքերի քարտեզ, որտեղ ընդգրկվում են բառեր, պատկերներ և այլն: Այս բառերն ու պատկերները պետք է զուգակցվեն տուն հասկացության հետ: Դրան պետք է հաջորդի ընդհանուր քննարկումը, որտեղ հարկավոր է պարզ ամփոփել այն ամենը, ինչը յուրաքանչյուրի համար **տուն** է նշանակում: Այս ամենը հարկավոր է գրի առնել գրատախտակի վրա՝ կազմելով մտքերի քարտեզ (այս գործնական վարժության համար կարելի է օգտագործել նաև կոլաժի մեթոդը): Աշակերտները պետք է կոլաժ պատրաստեն, որտեղ պետք է ներկայացված լինի այն ամենը, ինչը նրանց մեծ մասը կապում է **տուն** հասկացությանը: Դա կարող լինել այն տունը, որտեղ նրանք ապրում են իրենց ընտանիքի հետ: Սակայն առաջադրանքը պետք է պարզ լինի, որպեսզի աշակերտները կարողանան քննարկվող թեման առավել ընդգրկուն մեկնաբանել: Աշակերտներն այստեղ կարող են նաև ներառել այն երկիրը, որտեղ նրանք ապրում են, ինչպես նաև այն ամենը, ինչն անհրաժեշտ է սեփական բարեկեցության, հարմարավետության և ապահովության համար: Նրանք պետք է կոլաժը պատրաստեն մի քառակուսու վրա: Այստեղ աշակերտները պետք է փակցնեն ամսագրերից և թերթերից վերցված նկարներ: Նրանք կարող են օգտագործել նաև գրավոր տեքստեր՝ որոնք արտահայտում են ցանկալի իմաստը: Նրանք կարող են նաև նկարներ պատրաստել (սովորական կամ գունավոր մատիտով)՝ իրենց երևակայության և ստեղծագործական մոտեցման շրջանակներում:

Այնուհետև պետք է աշակերտներին առաջարկել անցկացնել իրենց աշխատանքների (կոլաժների) ցուցահանդես: Դրան պետք է հաջորդի ընդհանուր քննարկումը: Քննարկման հիման վրա ամփոփել, թե յուրաքանչյուրի համար ինչ է նշանակում **տուն** հասկացությունը (ինչ է տունը մարդու համար): Այս ամենը հարկավոր է գրի առնել գրատախտակի վրա՝ որպես մտքերի քարտեզ:

**«Հեծանիվների բրիստոլյան ծրագիր»** Ֆիլմի ցուցադրում:

**Կշռադատում**

Շարադրություն՝ «Մի պահ պատկերացնել, որ միգրանտ ու փախստական եմ դարձել»:

Աշակերտները շարադրություն են գրում անմիջապես դասի ժամին կամ պատրաստում են այն որպես տնային աշխատանք: Նրանք պետք է նկարագրեն մի երևակայական իրավիճակ կամ պատմություն, որի դեպքում իրենք ստիպված կլինեն լքել իրենց տունը:

Քննարկվող նյութին անդրադարձը (կարճ) կարող է իրականացվել աշակերտների կողմից հետևյալ հարցերին (հատկացվում է 5 րոպեից ոչ ավել) պատասխանելու միջոցով. «Նշեք հինգ առարկա, որոնք դուք կվերցնեք ձեզ հետ, եթե շտապ տունը լքելիս լինեք, և նշեք հինգ առարկա, որոնք կկարոտեք տունը լքելուց հետո»: Որպես եզրափակում՝ քննարկել աշակերտների գրածը:

### ▼ ԳՈՐԾԵԼԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3.

#### ԽԱՉՔԱՌ

*Ֆիլմ՝ Հեծանիվների բրիգադայան ծրագիր*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմա՝** «Միգրացիա»:

**Նպատակը՝** սովորել միգրացիայի թեմային առնչվող հասկացությունները:

**Ժամանակը՝** 5-10 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ, գրելու պարագաներ:

#### Ընթացք

Աշակերտներին խմբերի բաժանել և հանձնարարել հնարավորինս արագ լրացնել աշխատանքային թերթիկում բերված խաչքառը:

**ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ՝** 1. .... , 2. .... , Միգրացիա (ուղղահայաց)


#### Կշռադատում

Եվս մեկ անգամ համոզվել որ նրանք բոլորը հասկանում են հասկացությունները: Անհրաժեշտության դեպքում՝ բացատրել դրանք այլ բառերով:

**Գործնական վարժություն՝ Խաչքառ**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

1. Գործընթաց, որի արդյունքում մարդը այն երկրից, որտեղ նա ծնվել է, տեղափոխվում է այլ երկիր:
2. Օտարերկրացուն այլ երկիր մուտք գործելու թույլատվություն:
3. Անձը հաստատող փաստաթուղթ, որն անհրաժեշտ է երկրի սահմաններից դուրս գալու ժամանակ:
4. Մի երկրի քաղաքացու մուտք գործելը մեկ այլ երկիր՝ ժամանակավոր կամ մշտական բնակություն հաստատելու նպատակով:
5. Անձ, որը գտնվում է իր քաղաքացիության երկրի սահմաններից դուրս և հնարավորություն կամ ցանկություն չունի վերադառնալու այդ երկիր՝ հետապնդումների, ռասսայական, ազգային, կրոնական, կամ քաղաքական ճնշումների պատճառով:
6. Անձի իրավական կարգավիճակ տվյալ պետությունում:
7. Միգրանտի և ընդունող երկրի ժողովրդի (հասարակության) սոցիալ-հոգեբանական և մշակութային հարմարման, համակերպման գործընթաց
8. Օտարերկրացուն տրամադրվող պաշտպանության համակարգ, որն իր մեջ ներառում է օրինական բնակության իրավունք, տնտեսապես, մշակութային, սոցիալական որոշակի իրավունքներ



Պատասխաններ՝ ուսուցչի համար

1. Էմիգրացիա, 2. Վիզա, 3. Անձնագիր, 4. Իմիգրացիա,
5. Փախստական, 6. Քաղաքացի, 7. Ինտեգրում, 8. Ապաստան:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4. ՀԱՐՑԱՇԱՐԵՐԻ ԼՐԱՑՈՒՄ

*Ֆիլմ՝ Հեծանիվների բրիստոլյան ծրագիր*  
*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Միգրացիա», «Փախստականներ»:

**Նպատակը՝** ներկայացնել արտասահմանում հանդիպող դժվարությունները:

**Ժամանակը՝** 5-10 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ, գրիչ:

### Ընթացք

Յուրաքանչյուր աշակերտի տրամադրել աշխատանքային թերթիկի մեկ օրինակ: Ինդրել նրանց լրացնել այն: Բոլոր մասնակիցները պետք է աշխատեն իրարից անկախ: Նրանք չպետք է միմյանց հարցեր տան, այլ իրենց հնարավորությունների սահմաններում կատարեն առաջադրանքը: Աշխատանքային թերթիկը ֆինններն լեզվով է և նպատակ ունի աշակերտներին ստիպելու, որ մի պահ պատկերացնեն այլ երկրում հայտնված միգրանտի կարգավիճակում և փորձեն կանխատեսել, թե ինչ հարցեր կարող է ներառել հարցաթերթը: Թարգմանությունը ուսուցչի համար է, և օգտագործվում է վարժության ամփոփման ժամանակ:

### Կշռադատում

Զրուցել մասնակիցների հետ նրանց զգացումների վերաբերյալ: Ինչպիսի՞ն են դրանք: Արդյո՞ք առաջադրանքը դժվար է եղել: Ինչու՞: Արդյո՞ք միակ խնդիրը լեզվական արգելքն էր: Ինչպիսի՞ այլ դժվարություններ կարող են ի հայտ գալ արտասահմանյան երկիր ժամանելիս:



Գործնական վարժություն՝ Հարցաշարերի լրացում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**HAKEMUS**

Etunimi ja sukunimi:

Syntymäpäivä ja syntymäpaikka:

Kansalaisuus:

Vanhempien sukunimet:

Kiellet mitä voitte käyttää:

Nykyinen koulu:

Miksi haluat tulla Suomeen?

Աշխատանքային թերթիկի թարգմանությունը ուսուցչի համար

**Հարցաթերթ**

Անուն, ազգանուն

Ծննդյան վայրը և ծննդյան ամսաթիվը

Քաղաքացիությունը

Ծնողների անունները

Ինչ լեզուներ գիտեք

Դպրոցը, որը հիմա հաճախում եք

Ինչ նպատակով եք ֆինլանդիայում

## ԾԱՌԵՐ ՏՆԿՈՂ ՄԱՐԴԸ

Ֆրեդերիկ Բաք / Կանադա / 1987թ. / 30 րոպե



Այս քնարական մուլտիպլիկացիոն ֆիլմը պատմում է անիրական հերոս Էլզեար Բուֆիեի մասին, ով ֆրանսիական Ալպերում բնակվող միայնակ հովիվ է: 1910թ. մի գեղեցիկ օր նրան հանդիպում է մի երիտասարդ ճամփորդ: Հիացած ճամփորդը դիտում է Էլզեար Բուֆիեին, ով օրական հարյուր կադրին էր տնկում անբերրի հողի մեջ՝ ընդամիշտ մահացած թվացող վայրը վերակենդանացնելու նպատակով: Ճամփորդը չի կարող մոռանալ ինքնագոհ Էլզեարին և տասը տարի անց որոշում է կրկին այցելել նրան: Վերադառնում ու տեսնում է, որ այն տեղում, ուր անբերրի հողեր էին, այժմ երիտասարդ անտառ է: Հովիվն անխոնջ ու ինքնագոհաբար շարունակում էր իր աշխատանքը, որն իր կյանքի իմաստն էր դարձել: Տարիներ անց այդ տարածքը կվերականգնվի և կբնակեցվի մարդկանցով ու կենդանիներով: Այս պատմությունը ցույց է տալիս, թե որքան գորեղ կարող է լինել մեկ մարդու միջամտությունը՝ համառորեն աշխատելու դեպքում:

### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Բնության պահպանություն և կայուն զարգացում»

**Հարակից թեմաներ՝** «Անտառների պահպանություն», «Անտառը՝ որպես կենդանի օրգանիզմների բնական համակեցություն», «Ծառատունկ»

#### 1. Ինչու ծառերն այդքան մեծ նշանակություն ունեն մարդու կյանքի համար

Ծառերը սննդի աղբյուր ու արտադրության հումք են. բացի այդ՝ ծառերը/անտառները ֆոտոսինթեզի շնորհիվ բոլոր կենդանի արարածներին օգնում են ապրել Երկրագնդի վրա. մի գործընթաց, որի արդյունքում ածխաթթու գազից ստացվում է թթվածին, ինչը մենք շնչում ենք:

Անտառն իր նշանակությամբ անփոխարինելի է նաև մեկ այլ գործառնություն. այն օժտված է շրջակա միջավայրում ջուր կլանելու ու պահելու, հետևաբար նաև ջրհեղեղներ կանխարգելելու ունակությամբ: Անտառի այս նշանակությունը ակնհայտ է դառնում, երբ ծառահատումների պատճառով առաջանում են այսպես կոչված «բացատներ»: Այդ «բացատներում» անձրևները չեն մնում, չեն ներծծվում հողի մեջ և հոսում-գնում են: Սովորաբար անձրևներից առաջացած ջուրը հոսում-թափվում է առվակների ու գետերի մեջ՝ մեծացնելով ջրհեղեղների հավանականությունը (ջրհեղեղները տեղի են ունենում հիմնականում հորդառատ անձրևներից): «Բացատներում» հողը չոր է մնում և որակը գնալով վատթարանում է: Ավելին՝ չափազանց դժվար է այնտեղ նոր ծառեր տնկելը: Բարդ է նաև անտառի վերականգնման գործընթացը: Անտառահատումը լուրջ ազդեցություն ունի տեղի կլիմայի վրա:

Միլիոնավոր կենդանի օրգանիզմների, այդ թվում՝ մարդկանց համար անտառները շատ կարևոր են՝ նրանց ապրելու միջոցներ, ապաստան կամ սնունդ տրամադրելու իմաստով:

**2. Երկրի որ մասն են զբաղեցնում անտառները: Որտեղ են գտնվում առավել կարևորություն ունեցող անտառային տարածքները:**

Երկրագնդի ցամաքի 30 տոկոսից ավելին ծածկված է անտառներով: Աշխարհի մասշտաբով ամենաընդարձակ անտառները կոչվում են «տայգա», որոնք հյուսիսային փշատերև անտառներ են և կազմում են Երկրագնդի անտառածածկ տարածության գրեթե մեկ երրորդը: Տայգան ձգվում է Հյուսիսային կիսագնդի երկայնքով՝ հատելով մայրցամաքները. այն գոյություն ունի Ռուսաստանում, Իսլանդիայում, Լեհաստանում, Շվեդիայում, Նորվեգիայում, Մոնղոլիայում, ԱՄՆ-ում ու Կանադայում:

Այդուամենայնիվ, մեր մոլորակի կենսագործունեության համար կարևորագույն դեր է խաղում Ամազոնիայի «անձրևային» անտառը: Այն ունի մեծ քանակությամբ CO<sub>2</sub> պահելու ունակություն և ներգործում է համաշխարհային կլիմայի վրա. հաճախ այն անվանում են «աշխարհի լյարդ»: Ամազոնիայի «անձրևային» անտառն անցնում է մի շարք հարավամերիկյան երկրներով, որոնցից կարևորագույնը Բրազիլիան է: Ամազոնիայի «անձրևային» անտառների (նրա մակերեսը վերջին հիսուն տարիների ընթացքում փոքրացել է 17 տոկոսով) անհետացումը կնպաստի, որ երկրագնդի մթնոլորտում ածխածնի արտանետումների քանակն աճի կես միլիարդով:

**3. Ինչ կլիմի, եթե մարդկությունը զերծ մնա լանդշաֆտի վրա ներգործելուց. որքան ժամանակ կպահանջվի, որպեսզի այն վերակենդանանա**

1999թ. չեխ կենսաբան Ժիրի Սադլոն «Սպեյս» բնագիտական ամսագրում «Եթե կորչի» խորագրով մի հոդված է գրել: Նրա խորհրդածություններն այն մասին էին, թե ինչ կլիներ, եթե Պրահան բնակազուրկ լիներ: Սադլոն չափազանց դիպուկ է պատկերում այսպես կոչված «երկրորդական սուկցեսիա»-ն (էկոհամակարգի զարգացումն արդեն գոյություն ունեցող համայնքներում): Քաղաքը մարդու ձեռքերով ստեղծված համակարգ է, մարդն էլ պահպանում է այն: Ավելին՝ քաղաքը կայուն չէ. մարդու ներգործության ավարտի հետ ամեն ինչ կսկսի գերաճել: Ասել է, թե եկել է սուկցեսիայի գործընթացի ժամանակը, որ տարածությունները կվերադարձնի բնության գիրկը՝ նրանց հանգեցնելով որոշակի վերջնական փուլի, որը կոչվում է «կլիմաքս» և մեր աշխարհամասում հիմնականում նշանակում է անտառ: Գործածում է «վերադարձնել» ու «որոշակի» բառերը, քանի որ դաշտը հանգիստ թողնելով՝ հեշտությամբ կարելի է հասնել այդ վերջնական փուլին: Այնուամենայնիվ, գործընթացը բարդանում է, երբ խոսքը ամբողջական երկրների մասին է: Գործընթացը ավելի դանդաղ կընթանա, իսկ վերջնական փուլն այդպես էլ չի գա, քանի որ այդ տեղում մշտապես կլինի քարերի մի կույտ, որի շուրջը պայմանները կտարբերվեն նախկինում այդտեղ սփռված անտառի պայմաններից. մի փոքր կտարբերվեն ծառերի տեսակները, հետևաբար՝ նաև միջատները:

Վերականգնողական այս գործընթացները կարելի է դիտել անուշադրության մատնված ցանկացած տարածքում, շինարարության վայրում կամ քանդած շենքի տեղում: Այն սկսում է միամյա բույսերից: Բույսերի սերմերն այնտեղ են ընկնում կամ տեղայնքի ձևավորման ժամանակ կամ դրանից էլ առաջ՝ երկար տարիներ այնտեղ մնալով: Գրեթե միևնույն ժամանակ սկսում են հայտնվել մշտադալար բույսերն ու շինարարության համար օգտագործվող որոշ ծառատեսակներ: Մշտադալարներն ավելի ուժեղ մրցակիցներ են, սակայն ավելի դանդաղ են աճում: Այդ է պատճառը, որ առաջ է գալիս մրցակից բույսերի մի ստվար խումբ, որոնք հաջորդում են միմյանց՝ հիմնվելով «ով առաջինը» սկզբունքի վրա. ի վերջո, հաղթում է ուժեղը:

**4. Որոնք են անտառազրկման ամենատարածված պատճառները**

Անտառազրկումը հիմնականում տեղի է ունենում անտառահատման արդյունքում (առաջնային երկրներից է Բրազիլիան, որին հաջորդում է Ինդոնեզիան): Անտառազրկման այլ պատճառներն են ենթակառուցվածքների ու գյուղատնտեսական նշանակության հողի ընդլայնումը: «Անձրևային» անտառները հատելուց հետո մնացած տարածությունը հիմնականում օգտագործվում է մենակուլտուր սոյայի բույսն ու յուղային արմավենի տնկելու համար:

Անտառահատումների նպատակը հարավարևելյան Ասիայում, հիմնականում Բրունեյում ու Սումատրայի կղզիներում, արմավենու յուղն է, որն օգտագործվում է կոնֆետների բազմաթիվ տեսակներում, ինչպես նաև կոսմետիկայում (համաձայն ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի՝ UNEP-ի տվյալների): Այստեղ կենդանի օրգանիզմների 90 տոկոսն անհետացել է արմավենիների տնկադաշտերի (պլանտացիաների) պատճառով, այդ թվում՝ անհետացման եզրին է կանգնած օրանգուտանը:

Էլ ավելի ողբերգական է սոյայի մշակման ներգործությունը ամբողջ աշխարհում. այն օգտագործվում է իբրև տնային կենդանիների հիմնական կեր: 1996թ. Եվրոպական շուկայում մսի ու ոսկրայտուրի արգելումից ի վեր սոյայի տնկադաշտերը մակերեսով հավասարվում են նույն ժամանակահատվածում Բրազիլիայում անտառազրկված տարածությանը: Օրինակ, 2007թ. Չեխիայի հանրապետությունում օգտագործվող սոյայի մացորդների (թափոն, որ օգտագործվում է իբրև անասնակեր) շուրջ 40 տոկոսն ուներ արգենտինական ծագում: Հարկ է նշել նաև, որ Արգենտինան սոյայի բերքն ստանում էր գյուղատնտեսական նշանակության իր հողերի կեսից:

### 5. Ինչ ներգործություն կարող է ունենալ անտառահատումը լանդշաֆտի վրա

Անտառների հատումը ներկա ամենալուրջ խնդիրներից է: Համաշխարհային բնության հիմնադրամի (World Wildlife Fund) տվյալներով՝ տարեկան 12-15 միլիոն հեկտար անտառներ անհետանում են երկրագնդի երեսից, ինչը համարժեք է շուրջ 36 ֆուտբոլային դաշտի անհետացմանը մեկ րոպեում: Ամենից արագ անհետանում են անձրևային անտառները:

Ամենաբացասական ներգործությունը բուսական աշխարհի ու կենդանիների տեսակների արագ նվազումն է. հաշվի առնելով, որ անձրևային անտառները շուրջ 80 տոկոս գրանցված տեսակների բնակության միջավայր է, դա իրոք լուրջ խնդիր է մարդկության համար: Ջերմոցային գագերի արտանետման շուրջ 15 տոկոս աճը նույնպես կապված է «անձրևային» անտառների հատման հետ, որը, Համաշխարհային բնության հիմնադրամի՝ WWF-ի համաձայն, մարդկության գործունեության մեկ երրորդն է կազմում: Այլ լուրջ ներգործությունների շարքում են ջրային ցիկլի խախտումը, հողի էրոզիան ու, վերջապես, մարդկանց ու շրջակա միջավայրի միջև տեղային կապերի խզումը. միլիոնավոր մարդիկ, որ ապրում էին փոքր ֆերմերատիրությանը ու որսորդությանը, գրկվեցին ապրելու միջոցներից՝ ի շահ սոյայի ու այլ բույսերի (կուլտուրաների) մշակմամբ զբաղվող մեծ բազմազգ կորպորացիաների: Անտառահատված հողի վրա վիթխարի սոյայի տնկադաշտերի (պլանտացիաներում) մասին խոսելիս նույնիսկ համեմատություն է արվում ժամանակակից ստրկատիրության հետ, որտեղ մարդիկ աշխատում են ստրկությանը կամ հարկադիր աշխատանքին նմանվող բացարձակ անընդունելի պայմաններում: Բրազիլիայի իշխանությունների հաշվարկներով՝ ամեն տարի այս պայմաններում է աշխատում 8000 մարդ:

#### «Կանաչ արկղ»

Լանդշաֆտը՝ ժամանակային զարգացման մեջ:

Լանդշաֆտը փոփոխվում է թե՛ ժամանակի ընթացքում և թե՛ տարածության մեջ: Այն տարբեր է Ամազոնիայի գետի ավազանում, Հիմալայներում, Նյու-Յորքի կենտրոնական զբոսայգում կամ Հարավային Բոհեմիայի արվարձաններում: Մեր տան կողքի լանդշաֆտը տարբեր է եղել հարյուր, հինգ հարյուր կամ հինգ հազար տարի առաջ: Մարդը կարևոր ներգործություն է ունեցել լանդշաֆտի ու նրա փոփոխությունների վրա այն օրվանից ի վեր, երբ սկսել է այլ արարածներից տարբերվել մտածելու կարողությամբ ու վարքագծով, այսինքն՝ 5-8 միլիոն տարի առաջ: Աստիճանաբար այլ ձեռքբերումներ են գրանցվել, երբ մեր նախնիները սկսեցին միս ուտել, գործիքներ պատրաստել, բնակավայրեր կառուցել, անասնապահությամբ ու հողագործությամբ զբաղվել և այլն:

Առաջին քաղաքակրթությունն առաջացավ շուրջ 10,5 հազար տարի առաջ, ինչն ազդարարեց քոչվորական կյանքի ավարտ ու, ավելի ճիշտ, միջամտություն՝ շրջակա միջավայրին: Հողի էրոզիայի, շրջակա միջավայրում ջրային ցիկլի խախտման, ինչպես նաև կլիմայական փոփոխությունների հիմնական պատճառը անտառահատումներն էին: Հողագործությունն ու անասնապահությունը մարդկանց ապահովեցին պարենի կայուն պաշարով, ինչը, իր հերթին, բերեց բնակչության կտրուկ աճի:

## 6. Որոնք են անտառահատման կամ ծառատնկման հարցերով զբաղվող այլ կազմակերպությունները

Դրանք բազմաթիվ են թե՛ ազգային, և թե՛ միջազգային մակարդակներում: Պետության կտրվածքով շրջակա միջավայրի պահպանման գործում կարևոր դեր պետք է խաղա պետական վարչակարգը՝ կառույցներ, ինչպիսիք են օր՝ Հայաստանում Բնապահպանության նախարարությունը, բնապահպանական պետական տեսչությունը, կենսառեսուրսների կառավարման գործակալությունը, ջրային ռեսուրսների կառավարման գործակալությունը. սրանք այն հիմնական կառույցներն են, որոնք մշակում և իրականացնում են Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման բնագավառներում պետական քաղաքականությունը: Այդուհանդերձ պետական կառույցների կողքին հաճախ կանգնած են հասարակական կազմակերպություններ ինչպիսիք են օր՝ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը, «Բյուրակն» ՀԿ-ն, «Բնության պահպանության ընկերություն» ՀԿ-ն, «ԲՈՒՐԳ» բնապահպանական երիտասարդական կենտրոնը, «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն, Հայաստանի կանաչների միությունը և այլն: Ավելի լայն իմաստով, շրջակա միջավայրի պահպանության հարցերով (ինչը ներառում է նաև անտառների պահպանությունը) զբաղվող միջազգային կազմակերպություններից են ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը, Բնության պահպանության համաշխարհային միությունը (IUCN) և Մակ-ի շրջակա միջավայրի ծրագիրը (UNEP):

## 7. Արդյո՞ք Էլզեար Բուֆիեն իրական մարդ է: Նրա անտառը գոյություն ունի՞:

Ոչ: Ժան Ժիոնոն, ֆիլմի հիմքում ընկած վեպի հեղինակը, հորինել է այդ հերոսին: 1957թ. իր նամակում նա գրել է. «Իմ նպատակը ծառերը կամ, ավելի ճիշտ, ծառ տնկելն ավելի հրապուրիչ դարձնելն էր»: Եվ որոշ չափով դա նրան հաջողվեց: Ժիոնոյի գործույկը, որ նա գրել էր 1953թ., թարգմանվեց տարբեր լեզուներով, իսկ 1987թ. հիմք ծառայեց ֆիլմի համար, որը բազում երկրպագուներ գտավ ամբողջ աշխարհում:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.

### ՄԵԿ ԲԱՌ

*Ֆիլմ՝ Ծառեր տնկող մարդը  
Կշռադարման վարժություն  
Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Շրջակա միջավայր», «Մարդկություն և բնություն»:

**Նպատակը՝** խորհրդածել ֆիլմի բովանդակության շուրջ:

**Ժամանակը՝** 5 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** գրատախտակ:

### Ընթացք

Աշակերտներն ասում են մեկական բառ, որը նկարագրում է այն հիմնական զգացողությունը, որ ունեցան «Ծառեր տնկող մարդը» ֆիլմը դիտելու ժամանակ: Նրանց տեսակետները կարելի է գրի առնել գրատախտակին:

### Կշռադատում

Խորհրդածել աշակերտների զգացողությունների շուրջ: Եթե որոշ զգացողություններ հիշատակվել են երկու կամ ավելի անգամ, հարցնել աշակերտներին, թե ինչու՞ է դա այդպես:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. ՈՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

*Ֆիլմ՝ Ծառեր փնկող մարդը*  
*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Շրջակա միջավայր», «Մարդ և լանդշաֆտ»:

**Նպատակը՝** տարբերակել բնության մեջ լանդշաֆտի առանձին տարրերը, նկատել լանդշաֆտի փոփոխությունները, տեսնել պատճառահետևանքային կապը, սովորել հաղորդակցվել ու համագործակցել:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** մեկ աշխատանքային թերթիկ (կամ տարբեր պատմական ժամանակաշրջաններում միևնույն վայրը պատկերող լուսանկարներ կամ բացիկներ) աշակերտների յուրաքանչյուր զույգի համար:

### Ընթացք

Աշակերտներին բաժանել զույգերի և տրամադրել աշխատանքային թերթիկներ (միևնույն վայրը տարբեր պատմական ժամանակաշրջաններում պատկերող լուսանկարներ կամ բացիկներ):

Ամեն մի զույգ փորձում է գտնել տարբերությունները:

Տարբերությունները գտնելուց հետո ամեն մի զույգ մտորում է փոփոխությունների պատճառների ու հետևանքների մասին:

### Կշռադատում

Վարժության ավարտին աշակերտները պատասխանում են հետևյալ հարցերին. «Լանդշաֆտի ի՞նչ տարրերն են պատկերված լուսանկարներում», «Ինչպիսին էր լանդշաֆտը նախկինում ու ինչպիսին է այն այժմ», «Որո՞նք են տարբերությունները», «Նկարներից ի՞նչն է ավելի մոտ բնությանը», «Որո՞նք են բնության մեջ տեղի ունեցած փոփոխության պատճառները», «Որո՞նք են փոփոխությունների հնարավոր հետևանքները»:



Գործնական վարժություն՝ Ո՞րն է տարբերությունը

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

Միևնույն վայրը տարբեր ժամանակաշրջաններում

Տրդատ թագավորի տուֆակերտ արձանը (Երևան)



2005



2007

Սուրբ Տրդատ Եկեղեցի (Վայոց Ձորի մարզ)



2005



2007

Խոր Վիրապ (Արարատի Մարզ)



2001



2006

Աղբյուրը՝ <http://www.armeniatree.org/whatwedo/gallery/sites/index.htm>

### ▼ ԳՈՐԾԵՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. ԲԻՆԳՈ

*Ֆիլմ՝ Ծառեր Կնկող մարդը*  
*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմա՝** «Շրջակա միջավայր»:

**Նպատակը՝** յուրացնել լանդշաֆտային էկոլոգիայի հիմնարար եզրույթները, պատկերացում կազմել լանդշաֆտային էկոլոգիայի վերաբերյալ, սովորել հաղորդակցվել ու համագործակցել:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ յուրաքանչյուր աշակերտի համար, հավելյալ տեղեկություններ ուսուցչի համար:

#### **Ընթացք**

Ֆիլմը դիտելուց հետո ուսուցիչն աշակերտներին բաժանում է աշխատանքային թերթիկները:

Աշակերտները շրջում են դասարանով՝ միմյանց տալով աշխատանքային թերթիկում նշված հարցերը: Պատասխանի հետ համաձայնելու դեպքում աշակերտն այն գրանցում է աշխատանքային թերթիկում: Յուրաքանչյուր աշակերտ կարող է պատասխանել միայն մեկ հարցի:

Նպատակ է դրվում պատասխանել 16 հարցի:

Նա, ով լրացնում է բոլոր վանդակները, հաղթում է:

Խաղի ավարտին ուսուցիչը խնդրում է կարդալ պատասխանները: Եթե ոչ ոք ճիշտ չի պատասխանել, ուսուցիչը ինքն է տալիս ճիշտ պատասխաններ:

#### **Կշռադատում**

Վարժության ավարտին ուսուցիչը հետևյալ հարցերն է տալիս՝ «Որն է նոր բան սովորեցիք», «Ո՞ր հարցն էր ամենաբարդը», «Ո՞ր հարցն էր ամենապարզը»: Կարելի է քննարկել դրանց պատճառները:

Գործնական վարժություն՝ Բինգո

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**ԲԻՆԳՈ**

Ո՞րն է բնական ու մշակութային լանդշաֆտների տարբերությունը	Մշակութային լանդշաֆտը կազմված է՝	Բնական լանդշաֆտը կազմված է՝
Ինչ է ծառուղին	Ինչ է մենակուլտուր տնտեսությունը	Ինչ է գետագալարը
ԹՎարկե՞ք երեք մշտադալար ծառ՝	ԹՎարկե՞ք երեք լայնատերև ծառ՝	ԹՎարկե՞ք երեք թուփ՝
Ինչ տարբերություն կա լիճ (lake) ու ջրամբար (pond) բառերի միջև	Ինչպե՞ս պարզել ծառի տարիքը	Ինչպե՞ս են անվանում հաճարի ու կաղնու պտուղները

ՀՎԵԼՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ		
Ո՞րն է բնական ու մշակութային լանդշաֆտների տարբերությունը Բնական լանդշաֆտը չի ենթարկվել մարդու ներգործությանը, մշակութային լանդշաֆտն առաջացել է մարդու ներգործության արդյունքում (ճանապարհներ, դաշտեր, շենքեր):	Մշակութային լանդշաֆտը կազմված է՝ ճանապարհներից, շենքերից, այգիներից:	Բնական լանդշաֆտը կազմված է՝ անտառներից, գետերից, լճերից, լեռներից:
Ինչ է ծառուղին Ուղիղ ճանապարհ՝ մի կողմից ծառերով	Ինչ է մենակուլտուր տնտեսությունը ՄԻ քանի տարի անընդմեջ որոշակի ընդարձակ տարածքներում բույսերի մեկ տեսակ աճեցնելու գյուղատնտեսական պրակտիկա:	Ինչ է գետագալարը Մի քանի ոլորաններից բաղկացած գետի չկարգավորվող հոսք: Գետագալար առաջանում է, երբ ջուրը էրոզիայի է ենթարկում գետափերը՝ ընդարձակելով հովտի սահմանները:
ԹՎարկե՞ք երեք մշտադալար ծառ՝ եղևնի, սոճի, խեժափիճի:	ԹՎարկե՞ք երեք լայնատերև ծառ՝ բարդի, կեչի, կաղնի, հաճար:	ԹՎարկե՞ք թուփ՝ վայրի վարդ, պոճենի, շամբուկ, հաղարջ:
Ինչ տարբերություն կա լիճ (lake) ու ջրամբար (pond) բառերի միջև: Լիճ - ստեղծված է բնության կողմից Ջրամբար – ստեղծված կամ կառուցված է մարդու կողմից	Ինչպե՞ս պարզել ծառի տարիքը Բնի կտրվածքի օղակներով (ամեն տարի ավելանում է մեկ օղակ):	Ինչպե՞ս են անվանում հաճարի ու կաղնու պտուղները՝ կաղին:

**▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.  
ԱՆՑՅԱԼՈՒՄ**

*Ֆիլմ՝ Ծառեր Կնկող մարդը*  
*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Բնապահպանական հարցեր», «Քաղաքացիների վարքագիծը»:  
**Նպատակը՝** հասկանալ, թե որ բնական և ճարտասլետական տարրերն են բնորոշ հայրենի քաղաքին/ գյուղին: Հասկանալ լանդշաֆտի ձևավորման մեջ բնության առանձին տարրերի կարևորությունը: Մովորել քարտեզով աշխատել, սովորել՝ թե ինչպես տեղեկություններ գտնել և դրանցով աշխատել:  
**Ժամանակը՝** 2 × 45 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** մեկ աշխատանքային թերթիկ՝ յուրաքանչյուր խմբի համար:  
**Ընթացք**

Ուսուցիչն աշակերտներին բաժանում է 4-5 հոգանոց խմբերի:  
Յուրաքանչյուր խումբ ստանում է քաղաքի / գյուղի քարտեզ և աշխատանքային թերթիկ:  
Խումբը լրացնում է աշխատանքային թերթիկը. գրում են իրենց հայրենի քաղաքի / գյուղի և տարածաշրջանի բոլոր վայրերը և նշում դրանք քարտեզի վրա:  
Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքի արդյունքները: Ուսուցիչը հետևյալ հարցերն է տալիս. «Ինչո՞վ է ձեր քաղաքը / գյուղը տարբերվում այլ քաղաքներից / գյուղերից», «Ո՞ր բնական կամ ճարտասլետական տարրերն են բնորոշ ձեր քաղաքին / գյուղին», «Արդյո՞ք նշված տարրերը միշտ եղել են այնտեղ», «Ովքե՞ր են տնկել ձեր քաղաքի / գյուղի ծառերը»:

**«Ծառեր տնկող մարդը»** ֆիլմի ցուցադրում:  
Ֆիլմի ցուցադրումից հետո ուսուցիչը աշակերտներին բաժանում է 5-6 հոգանոց այլ խմբերի: Աշակերտների առաջադրանքն է՝ պատրաստել քաղաքի / գյուղի պատմության մասին զեկույց: Դրա համար նրանք կարող են զրուցել ականատեսների հետ, պատմական փաստաթղթեր, հին լուսանկարներ կամ բացիկներ գտնել, քաղաքի / գյուղի քրոնիկներ ու տարածաշրջանային գրականություն կարդալ կամ ինտերնետ օգտագործել:

Աշակերտներն աշխատում են խմբերով: Նրանք պատրաստում են նախագծի պլանը, ինչպես նաև հարցեր տեղանքի մասին («Ինչպե՞ս է փոխվել տեղանքը», «Ե՞րբ են ծառերը տնկվել»):

Յուրաքանչյուր խումբ գտնում է քաղաքի / գյուղի հնաբնակ և նրա հետ պայմանավորվում հանդիպման մասին: Աշակերտները հարցազրույց են վերցնում հնաբնակից: Հարցազրույցի ընթացքում գրառումներ են կատարում իբրև ընդհանուր տեղեկություններ՝ զեկույցում ներառելու համար:

Հարցազրույցից հետո աշակերտները կարող են ուսումնասիրվող տեղանքի մասին պատմական փաստաթղթերից, հին լուսանկարներից կամ բացիկներից, քրոնիկներից կամ տարածաշրջանային գրականությունից այլ տեղեկություններ գտնել:

Վերջում աշակերտները ստացված տեղեկությունների հիման վրա պատրաստում են զեկույց: Զեկույցը կարող է լինել, օրինակ, դասական գրավոր ուղերձի, կոմիքսների, պատատի և այլ տեսքով: Նախագծի վերջում աշակերտներն իրենց աշխատանքը ներկայացնում են դասարանին:

**Կշռադատում**

Քննարկումն ընթանում է «չորս անկյուններ» մեթոդով: Ուսուցիչը չորս էջի վրա գրում է հետևյալ հարցերը.

1. Ի՞նչ սովորեցինք:
2. Ի՞նչ դժվարությունների հանդիպեցինք:
3. Ի՞նչն էր ամենահետաքրքիրը:
4. Գաղափարներ՝ հետագայում նմանօրինակ վարժություններում օգտագործելու համար:

Խմբերն իրենց պատասխանները գրում են չորս էջերի վրա, որոնք ուսուցչի համար վարժության վերաբերյալ ծառայում են իբրև կարծիք: Պատասխանները կարելի է ցույց տալ դասարանին և հետագայում օգտագործել նմանատիպ աշխատանքներում:

Գործնական վարժություն՝ Անցյալում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**ԻՄ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ**

Լանդշաֆտի տարրի անվանումը	Նկարագիրը	Գտնվելու վայրը (քարտեզի վրա)	Այլ տվյալներ

**ՕՐԻՆԱԿ**

Լանդշաֆտի տարրի անվանումը	Նկարագիրը	Գտնվելու վայրը (քարտեզի վրա)	Այլ տվյալներ
Պուրակ	Հաստարուն կաղնիների պուրակը: Բնի չափից դատելով՝ կաղնիների տարիքը ութսունից ավել է:	Նշված է քարտեզի վրա:	Կաղնիները 7-ն են: Պապս պատմում էր, որ դրանք տնկել է ինքը, երբ վերադարձել է Երկրորդ համաշխարհային պատերազմից:
Եկեղեցի	Գյուղից քիչ հեռու գտնվող գողտրիկ եկեղեցի:	Նշված է քարտեզի վրա:	Եկեղեցին անուշադրության է մատնված ու նրա շուրջը խոտ է աճում: Եկեղեցին ավելի լավ տեսք կընդունի, եթե խոտը խուզենք ու շրջակայքը մաքրենք:

# ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ա) ՀԱՔԻԲՈԼԱ / Քրիստել Վոորն / Հոլանդիա / 2010թ. / 3 րոպե



Տասնհինգ տարեկան Հաբիբոլան Աֆղանստանից տասնութերորդ ամիսն է, ինչ Հոլանդիայում է՝ փախստականների ճամբարում: Նրա երազանքն է դառնալ օդաչու, բժիշկ կամ իրավաբան: Գիտի, որ դա իրականացնելը հեշտ չի լինելու, և պատրաստ է ուսանելու՝ դժվարություններ հաղթահարելով: Այդուհանդերձ, նախ հարկավոր է ապաստան ստանալ: Հաբիբոլան հավատում է, որ, հակառակ իր մտերիմ երկու ընկերների օրինակին, որոնք տարիներ շարունակ փախստականների ճամբարում ապրելուց հետո վտարվել էին իրենց երկրներ, իրեն նույն բախտը չի սպասում: Թեպետ Հաբիբոլան ծնողներին կարոտում է, տուն չի կարող վերադառնալ: Նրա հոր դեմ մահափորձ էր արվել, և իր համար էլ ապահով չէ այնտեղ:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Երեխաների իրավունքներ»

**Հարակից թեմաներ՝** «Միգրացիա», «Կյանքի պայմանների ապահովում փախստականների համար»

### 1. Ինչ է նշանակում փախստական

Փախստականները միգրանտների առանձին խումբ են, ովքեր տարբեր պատճառներով լքել են իրենց հայրենիքը: Համաձայն ՄԱԿ-ի փախստականների իրավական կարգավիճակի մասին դաշնագրի՝ փախստականները նրանք են, ովքեր ռասայական ու ազգային պատկանելիության, դավանանքի, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների պատճառով հետապնդման հիմնավորված վախից լքել են իրենց երկիրը:

Այնուամենայնիվ, փախստականը, առաջին հերթին, անձ է, որը հայտնվել է արտասովոր իրավիճակում: Մինչդեռ նույնիսկ սովորական պայմաններում յուրաքանչյուր անձ հիմնարար պահանջների կարիք ունի: Բացի սննդի, քնի կամ պաշտպանվածության զգացումի պահանջից, նրա կարիքները ներառում են նաև ընտանեկան կյանքի, ինքնաբավարարման, ակտիվ հաղորդակցման, արժանապատվության, աշխատանքի ու ողջամիտ գործունեության զգացումի պահանջ: Հարկ է նշել, որ ողջ աշխարհում (հաշվի առնելով միգրացիայի կոշտ քաղաքականության միտումները) փախստականների վերոհիշյալ կարիքները չեն բավարարվում: Անձը՝ փախստականը, լքում է իր տունը, երբեմն նաև՝ ընտանիքը, այրում հետդարձի կամուրջները, վաճառում իր բնակարանը կամ տունը, ներդնում իր բոլոր ջանքերը «դեպի լավ կյանք» ճանապարհորդության մեջ: Սակայն այն երկրում, որտեղ նա ապաստան է խնդրում, հանդիպում է դառն իրականությանը: Ապաստան հայցելու գործընթացում



ոչ միայն նրա գործողություններն են սահմանափակ, այլև, նա սկսում է հասկանալ, որ գրեթե անհնար է փախստականի կարգավիճակ ստանալն ու երկրում մնալն այլ եղանակով օրինականացնելը: Նրա անցյալը գոյություն չունի, իսկ ապագան անորոշ է: Դրան ավելացրեք պատերազմից, փախուստից, ապօրինի միգրանտի կարգավիճակից և այլնից ստացված ցնցումը, և ակնհակտ է դառնում, որ փախստականի կյանքը շատ տխուր է ու դժվարին:

## 2. Ինչ է ապաստանը

Ապաստան (նոր եզրաբառ է՝ «միջազգային պաշտպանություն») նշանակում է լուրջ պատճառներով իր հայրենիքից փախչող անձի անվտանգության ապահովում: Փախստականներին պաշտպանություն տրամադրող երկրները կոչվում են ընդունող երկրներ: Փախստականների մեծ մասը պաշտպանություն է փնտրում իր հայրենի երկրին սահմանակից երկրներում: Հաճախ փախստականներն ապրում են հատուկ ճամբարներում՝ այնտեղ սպասելով իրենց հայրենի երկրներում իրավիճակի բարելավմանը, ինչը թույլ կտա նրանց վերադառնալ հայրենիք:

## 3. Արդյոք հնարավոր է ասել, թե հատկապես որ շրջաններն են մարդիկ ամենից հաճախ լքում, և որոնք են դրա պատճառները

Հայրենիքը լքելու ամենատարածված պատճառը միջազգային հակամարտություններն են կամ քաղաքացիական պատերազմները: Փախստականների մի մասն այն երկրներից է, որտեղ քաղաքական վարչակարգի դեմ բողոք բարձրաձայնողները կամ հուսալի չհամարվող անձինք հետապնդվում են:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն, աշխարհում ավելի քան 10 միլիոն մարդ ունի փախստականի կարգավիճակ: 90-ական թվականներին զինված հակամարտությունների պատճառով փախստականների թիվը կտրուկ աճեց: Դրանից ի վեր փախստականների թիվը գնալով նվազում է: 2004 -ին մոտ մեկ միլիոն մարդ վերադարձավ իր հայրենիք՝ Աֆղանստան, մինչդեռ երկու միլիոն մարդ շարունակում էր ապրել աքսորում: Բազմաթիվ փախստականներ վերադարձան նաև Բուրունդի, Անգոլա ու Լիբերիա, որտեղ ավարտվեցին քաղաքացիական պատերազմները: Վերջ դրվեց բալկանյան ճգնաժամին: Վերջին տարիներին (2012թ.), Սուդանից ու Իրաքից եկածներից փախստականների մի սովորյալ խումբ ձևավորվեց:

## 4. Ապագայում սպասվում են համաշխահային կլիմայի փոփոխության պատճառով միգրացիայի ալիքներ

Շրջակա միջավայրն ու շրջակա միջավայրի փոփոխությունները կարող են միգրացիայի պատճառ դառնալ ու դառնում են: Վերջին տարիներին էկոլոգիական պատճառներից բխող զգալի չափերի միգրացիա չի արձանագրվել: Համաշխարհային կլիմայի փոփոխությունը որոշ տարածաշրջաններում կարող է հարատև երաշտների ու գյուղատնտեսական նշանակության հողերի դեգրադացիայի պատճառ դառնալ, ինչին տվյալ տարածաշրջաններում կհաջորդի կենդանական աշխարհի անհետացումը:

## 5. Ով է ամենից հաճախ ստանում փախստականի կարգավիճակ, և ինչ չափանիշներով է այն տրվում

Յուրաքանչյուր երկիր իր ներքին քաղաքականության միջոցով որոշում է ապաստան ստանալու հայցեր ներկայացնելու կարգը, որը ենթադրում է դիմորդի՝ փախստականի կարգավիճակ ստանալու իրավունքի առկայության ստուգում: Բացի այդ, ՄԱԿ-ի փախստականների կարգավիճակի մասին դաշնագիրը պարտադիր է այն վավերացրած երկրների համար: Դաշնագիրը ներառում է փախստական եզրույթի սահմանում և ամրագրում է հայրենիքը լքող մարդու հիմնարար իրավունքները, ինչպիսիք են՝ կրոնի ու աշխատանքի ազատություն, ազատ տեղաշարժում, կրթություն ստանալու ու ճամփորդական փաստաթղթեր ունենալու հնարավորություն:

Գործնականում, երբեմն դժվար է (հատկապես՝ տնտեսապես զարգացած երկրներում) տարբերել տնտեսական պատճառով գաղթածին փախստականից: Քանզի նա, ով գաղթել է ֆինանսական իրավիճակից դրդված, նույնպես ապաստան է խնդրում՝ վախենալով իր անվտանգության համար:

Այդ պատճառով, յուրաքանչյուր հայց դիտարկվում է առանձին վերցված, որոշումն ընդունվում է կոնկրետ դեպքի համար: Հանկարծական զանգվածային գաղթի դեպքում, ինչպես, օրինակ, էթնիկ մաքրումների ժամանակ, անհնար է որոշում կայացնել՝ դեպքերն առանձին-առանձին դիտարկելով: Ուստի պաշտպանությունը կարող է տրամադրվել միգրանտների մի ողջ խմբի:

## **6. Եթե դիմորդի՝ ապաստան տրամադրելու հայցը չի բավարարվում**

Ոչ հաջողակ դիմորդները կարող են ընդունող երկրում մնալ այնքան ժամանակ, որքան պահանջում է օտարերկրացիներից երկրում մնալն օրինականացնող փաստաթղթեր ձեռք բերելու համար: Այնուամենայնիվ, գործնականում նրանք երկրում հաճախ մնում են նույնիսկ առանց պահանջվող փաստաթղթերի ու թույլտվության՝ այսպիսով, դառնալով ապօրինի միգրանտներ, որոնց հայտնաբերման դեպքում սպասում է երկրից վտարում:

## **7. Արդյո՞ք ապօրինի միգրանտներն աշխատում են. եթե այո, ապա որ բնագավառում են նրանք ամենից շատ զբաղված: Ինչպես են օտարերկրացիներն աշխատանք փնտրում**

Այո, Չեխիայում բազմաթիվ օտարերկրացիներ չունեն երկրում մնալու կամ աշխատելու թույլտվություն: Նրանց թիվը հնարավոր չէ ճշգրիտ որոշել. այն տատանվում է 30 հազարից - 300 հազար: Հաճախ նրանք երկիր են թափանցում օրինական ճանապարհով՝ իբրև գրոսաշրջիկներ կամ ուսանողներ: Արտոնագրի ժամկետը լրանալուց հետո նրանք մնում են ու մեծ մասամբ՝ աշխատում: Այդուհանդերձ, դա դժվար ու երկար գործընթաց է, և այդ է պատճառը, որ շատերն ընտրում են ապօրինի տարբերակը: Օտարերկրացիները, նույնիսկ աշխատանքի թույլտվությամբ, Չեխիա են գալիս գործակալի օգնությամբ, որն իրենց աշխատանք ու նույնիսկ կացարան է գտնում: Գործակալի օգնության են դիմում նույնիսկ նրանք, որոնց տեղում աշխատելու թույլտվությունը Ներքին գործերի նախարարությունը չի երկարացրել, կամ ովքեր գրկվել են իրենց աշխատանքից ու չեն կարող այլ աշխատանք գտնել օրենքով սահմանված ժամանակահատվածում:

Ապօրինի միգրանտներն անում են առավելապես մասնագիտական որակավորում չպահանջող աշխատանք: Շատ են ապօրինի միգրանտներն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ շինարարությունն ու արդյունաբերությունը: Ոմանք աշխատում են իբրև հավաքարարներ: Գործատուն ապօրինի աշխատուժ է վարձում՝ իր ծախսերը կրճատելու նպատակով: Նման կերպով գործատուները խուսափում են համապարտադիր սոցիալական հարկեր վճարելուց, ինչպես նաև՝ կարող են ավելի քիչ վճարել այդ աշխատողներին:

## **8. Արդյո՞ք օտարերկրացի աշխատողները նույն իրավունքներն ունեն, ինչ տեղացի աշխատողները**

Ապօրինի աշխատող օտարերկրացիները նվազագույն հնարավորություններ ունեն իրենց իրավունքները պաշտպանելու համար, օրինակ, այն դեպքում, երբ գործատուն աշխատավարձը չի վճարում կամ չի պահպանում աշխատանքի անվտանգության կանոնները: Մեծ խնդիրներ են ծագում վստավածքների ու առողջության խաթարումների դեպքում, քանի որ ապօրինի ներգաղթյալները չունեն առողջական ապահովագրություն: Ավելին՝ նրանք շարունակ ապրում են այն լարվածության մեջ, թե իրենց կհայտնաբերեն ու կվտարեն: Շատերն իրենց չափազանց կախված են զգում գործակալից (եթե ունեն գործակալ) կամ գործատուից և հետևաբար խոցելի են: Նրանց ապրելու ու աշխատելու պայմանները բավականին վատ են: Միջազգային պայմանագրերի համաձայն՝ ապօրինի ներգաղթյալների երեխաներն ունեն տարրական կրթության իրավունք. դպրոցի տնօրենները նրանց մնալն չեն հայտնում ուստիկանությամբ:



## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.

### ԻՆՉԸ ԵՍ ՉԵՄ ՄՈՌԱՆԱ

*Ֆիլմ՝ Հարիբոլա*

*Կշռադատման վարժություն*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Մարդու (երեխայի) իրավունք, «Միգրացիա», «Աղքատություն»

**Նպատակը՝** կշռադատել ֆիլմի վերաբերյալ:

**Ժամանակը՝** 15 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ՝ յուրաքանչյուր աշակերտի համար:

#### Ընթացք

Աշակերտները թղթերի վրա գրում են ֆիլմի այն հատվածը, որն իրենց առավել հետաքրքրել է: Նկարագրությունը պետք է հակիրճ լինի՝ մեկ-երկու նախադասությամբ ներկայացնելով այն հատվածը, որն առավել հետաքրքիր էր, զարմանալի, սարսափելի կամ էլ առաջացրել է դրական կամ բացասական զգացողություն:

Աշակերտներին բաժանել զույգերի և հանձնարարել քննարկել իրենց տեսակետները զույգերով: Նրանցից յուրաքանչյուրը պետք է իր տեսակետը ներկայացնի և բացատրի, թե ինչու է ընտրել հենց այն:

Ուսուցիչը հետևում է աշակերտների քննարկումներին, չի ընդհատում, միայն փորձում է հասկանալ, թե ինչի մասին են նրանք խոսում, որպեսզի դրանց անդրադառնա կշռադատման փուլում:

#### Կշռադատում

Կատարվում է քննարկման միջոցով: Որոշ աշակերտներ ներկայացնում են իրենց տեսակետները: Ուսուցիչը հարցնում է, թե ինչ զգացողություն է ֆիլմն առաջացրել նրանց մեջ, ինչու՞ են ընտրել հենց այդ հատվածը, արդյո՞ք ֆիլմից ստացած տեղեկատվությունն իրենց համար նորություն՞ն էր:

**▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.  
ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԱՋԱՆՔՆԵՐ**

*Ֆիլմ՝ Հարիբոլա  
Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Միգրացիա», «Աղքատություն»:

**Ժամանակը՝** 30-45 րոպե:

**Նպատակը՝** քննարկել այն արժեքները, որոնք անհրաժեշտ են երեխային՝ բավարարված լինելու համար: Զարգացնել ապրումակցում, ձևավորել մոտեցումներ, որոնք կօգնեն նրան կյանքի բարդ իրավիճակներում ճիշտ լուծումներ գտնելու:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկներ՝ յուրաքանչյուր աշակերտի համար:

**Ընթացք**

Յուրաքանչյուր աշակերտ ստանում է մեկական աշխատանքային թերթիկ:

Ժամանակ պահել, որի ընթացքում աշակերտները պետք է լրացնեն աշխատանքային թերթիկները (աշխատանքն անհատական է):

Այնուհետև աշակերտները զույգերով կարդում են մեկը մյուսի աշխատանքները: Նրանք կարող են հարցեր տալ միմյանց և գալ որոշ ընդհանրության:

**Կշռադատում**

Անփոփելով հահձնարարությունը՝ հնարավոր է նաև ստեղծել խմբերի երազանքները՝ երեք ընդհանուր երազանքներ ամբողջ դասարանի համար կամ «ունիվերսալ» երազանք, որ ընդունելի է բոլորի համար: Ապա կարելի է քննարկել, թե ինչ երազանքներ են ունենում հասարակության ծայրահեղ շերտերը, կամ ինչպես կարող են փողոցում ապրող երեխաներն իրականացնել իրենց երազանքները: Կարելի է ֆիլմից պահեր հիշել, որտեղ երեխաների իրավունքները ոտնահարվել են, կամ նրանց սպառնացել են: Կարելի է համեմատել երազանքները և գնահատել, թե ինչպես են նրանք տարբերվում միմյանցից և ինչու:

Գործնական վարժություն՝ Ցանկություններ և երազանքներ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

### ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

Հարիբուլան ֆիլմի հերոսն է, որն ապրում է 400 այլ մարդկանց հետ՝ անտառում գտնվող մեծ շենքում: Նա և իր ընտանիքի անդամները ստիպված են հեռանալ Աֆղանստանից: Կան մարդիկ, որոնք ուզում են սպանել նրա հորը:

Գրեք, թե նա ինչն էր կարոտում, և որո՞նք էին նրա ցանկությունները:

Ի՞նչ կանեիք դուք, եթե նման իրավիճակում հայտնված երեխայի հանդիպեիք: Ու՞մ կդիմեիք օգնության համար:

Գրե՞ք Ձեր երազանքների և ցանկությունների ցանկը: Հետո խմբին պատմե՛ք, թե ինչ եք գրել:

Համեմատե՞ք ձեր աշխատանքը խմբի մյուս անդամների աշխատանքի հետ և փորձե՞ք գալ որոշ ընդհանրության:

բ) ԱՆՆԱ / Այֆեր Էրգյուն / Նիդերլանդներ / 2010 / 4 րոպե.



«Ինձ դուր չի գալիս այս աշխատանքը, որովհետև միշտ բոլորը ճշում են ինձ վրա և հաճախ նույնիսկ խփում են ինձ», — ասում է իննամյա Աննան Ալբանիայից: Ամեն օր դպրոց հաճախելու փոխարեն նա աշխատում է փողոցում՝ ծանրաբեռնված երթևեկության պայմաններում. լվանում է լուսակրի տակ սպասող ավտոմեքենաների դիմապակիները: Ժամանակի ընթացքում նա նկատել է՝ եթե ինքը ժպտում է, ապա վարորդները վճարում են ավելի շատ և որ տղամարդիկ վճարում են ավելին, քան կանայք: Եթե հաջողվում է օրական աշխատել երեք եվրո, նա գոհ է լինում: Նա գիտի, որ աշխատած գումարը ծնողները կօգտագործեն ընտանիքի համար սնունդ և այլ կարևոր պարագաներ գնելու համար:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Երեխաների իրավունքներ»

**Հարակից թեմաներ՝** «Երեխայի տնտեսական շահագործում», «Մանկական աշխատուժի շահագործում», «Երեխայի կրթության իրավունք»

### 1. Աշխարհի որ մասերում է մանկական աշխատուժի օգտագործումը վերածվել օրհասական խնդրի

Հիմնականում երեխաները ստիպված են աշխատել զարգացող երկրներում, հատկապես Հարավարևելյան Ասիայում և Մահարա անապատից հարավ գտնվող աֆրիկյան երկրներում: Ամբողջ աշխարհում մոտ 250 միլիոն երեխա ստիպված է աշխատել: Ասիան (61%) այս առումով զբաղեցնում է առաջին տեղը, հետո գալիս են աֆրիկական (32%) և Լատինական Ամերիկայի (7%) երկրները:

Ասիական երկրներում մանկական աշխատուժի օգտագործումը միշտ չէ, որ օրինական է, քանզի որոշ ասիական երկրներում աշխատել թույլատրվում է տասնչորս տարեկան հասակից: Երեխաներն այստեղ աշխատում են գյուղատնտեսության ոլորտում՝ բրնձի դաշտերում, թեյի պլանտացիաներում, կամ անասուններ են խնամում: Բացի այդ, նրանք աշխատում են տեքստիլի արդյունաբերությունում, քարի հանքերում, աղբի վերամշակման ձեռնարկությունում, կամ վաճառում են տարբեր ապրանքներ: Չորսից տասնչորս տարեկան մեծ թվով աշխատող երեխաների կարելի է հանդիպել Հնդկաստանում: Հնդկաստանում, Պակիստանում և Նեպալում ավելի քան մեկ միլիոն երեխա աշխատում են 12 ժամ՝ ձեռագործ գորգերի արտադրամասերում, սոսկալի վատ սանիտարական պայմաններում:

Բանգլադեշում ու Նեպալում շատ երեխաներ նվազագույն աշխատավարձով աշխատում են թեյի տնկարկներում, Թայլանդում և Չինաստանում՝ խաղալիքներ և սպորտային ապրանքներ արտադրող գործարաններում: Ինդոնեզիայում, ըստ պետական օրենսդրության, երեխաները կարող են աշխատել օրանակ 4 ժամ, և մոտ երեք հարյուր հազար երեխա այդպես էլ անում է:

Աֆրիկայում ամեն երրորդ երեխան զբաղվում է գյուղատնտեսությամբ կամ տեղական շուկայում վաճառում է ապրանքներ: Մոտ 67 միլիոն երեխա աշխատում են Սահարա անապատից հարավ գտնվող տարածաշրջանում և ևս 21 միլիոն՝ Հյուսիսային Աֆրիկայում: Օրինակ, Եգիպտոսում 1,5 միլիոն երեխա է աշխատում հիմնականում կաշվի գործարաններում, որտեղ նրանք օրական մի քանի ժամ շփվում են թունաքիմիկատների հետ:

Մանկական աշխատուժի շահագործման խնդիրն արդիական է նաև Լատինական Ամերիկայի երկրներում: Օրինակ Բրազիլիայում մոտավորապես մեկ միլիոն երեխա ներգրավված է սեռական զբոսաշրջության բիզնեսում, և մինչև 7 միլիոն երեխա զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ հիմնականում բանանի, շաքարեղեգնի, սուրճի, կակաոյի տնկարկներում: Նրանցից շատերը մահանում են ֆերմաներում օգտագործվող թունաքիմիկատների հետ շփման արդյունքում: Կոլումբիայում երեխաներն աշխատում են ադյուսի արտադրության գործարաններում և ապակու մշակման արդյունաբերությունում, որտեղ հաճախ ապակու բեկորներից վնասվածքներ են ստանում :

## 2. Ինչ ձև է հաճախ ընդունում մանկական աշխատուժի շահագործումը

Շատ երեխաներ, ընդհանուր առմամբ 70%-ը, աշխատում են գյուղատնտեսության ոլորտում: Երեխաներն աշխատում են նաև արդյունաբերությունում՝ հանքերում հաճախ վտանգի ենթարկվելով: Շատ երեխաներ աշխատում են սպասարկման ոլորտում, փոքրիկ աղջիկներ և տղաներ աշխատում են ռեստորաններում և հյուրանոցներում: Նրանցից շատերն աշխատել են որպես փողոցային վաճառողներ, կոշիկ մաքրողներ կամ հավաքարարներ: Երեխաների միայն 5%-ն է պաշտոնապես գրանցված որպես աշխատող: Հիմնականում աշխատանքային հարաբերությունները հիմնված են բանավոր համաձայնության վրա, ինչը չի ապահովում նորմալ աշխատավարձ և արժանապատիվ վերաբերմունք:

Ցավոք, բացահայտվել է, որ երեխաները դժվարին պայմաններում են աշխատում: Այդ պայմաններն այնպիսին են, որ շատ երկրներում ոչ միայն երեխաներին և երիտասարդներին, այլև չափահաս կանանց է արգելվում է աշխատել այդտեղ: Մինչև 50 միլիոն 11-ից ցածր տարիքի երեխա աշխատում է այնպիսի միջավայրում, որն ուղղակիորեն իրենց առողջությանը վտանգ է սպառնում: Նրանք հանքերում և հանքավայրերում ստիպված են տեղափոխել ծանր բեռներ, ենթարկվել ռադիոակտիվ ճառագայթման, աղբանոցներում վտանգավոր աղբ հավաքել և այլն: Այդ պայմաններում շատ հաճախ նրանք ստանում են ծանր կամ մահացու վնասվածքներ: Ամեն տարի աշխատանքի արդյունքում ստացված վնասվածքներից մահանում է 22 հազար երեխա:

## 3. Ինչպես է տարբերվում մանկական աշխատուժի շահագործումը ծնողներին տնտեսական հարցերով օգնությունից

Համատեղ կյանքի ընթացքում կենցաղային հարցերում ծնողներին օգնելը բնական երևույթ է, ինչը չի կարելի ասել «մանկական աշխատուժի» հասկացության մասին, երբ երեխաները ստիպված են աշխատել վատ կենսապայմաններից դրդված, աշխատավարձի դիմաց՝ որպես միջոց իրենց և իրենց ընտանիքների գոյության պահպանման: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը սահմանում է մանկական աշխատանքը՝ որպես երեխաների տնտեսական գործունեություն, ինչը բացասաբար է ազդում երեխաների առողջության վրա և խանգարում նրանց հոգեկան զարգացմանը, կամ էլ համակարգված և կանոնավոր կրթություն ստանալուն: Դա ներառում է 12 տարեկանից ցածր երեխաների կողմից կատարված ցանկացած աշխատանք, կամ մանկական աշխատուժի շահագործման վատթարագույն ձևերը, երբ հաշվի չի առնվում երեխայի տարիքը և նրա կյանքի սպառնացող վտանգը:

## 4. Որո՞նք են պատճառները

Հիմնական պատճառն աղքատությունն է: Առանց երեխաների վաստակի ամենաաղքատ երկրներում բնակվող բազմաթիվ ընտանիքներ իրականում չեն գոյատևի: Խնդրի լուծումը չի կարող սահմանափակվել միայն երեխաների աշխատուժի շահագործման արգելումով. պետք է քայլեր ձեռնարկել՝ ուղղված աղքատության վերացմանն այն երկրներում, որտեղ առկա է մանկական աշխատանքի շահագործումը:

**5. Որտեղից կարելի պարզել երեխաների իրավունքները**

Հիմնական փաստաթուղթը, որն անդրադառնում է երեխաների իրավունքներին, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան է: Դրա ամբողջական տեքստը կարելի է գտնել [www.unicef.org](http://www.unicef.org) կայքում: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան իրավաբանական փաստաթուղթ է, որը սկիզբ է առնում Սարդու Իրավունքների մասին Համընդհանուր Հռչակագրից, և սահմանում է աշխարհում ցանկացած երեխայի իրավունքների բնույթն ու աստիճանը:

Կոնվենցիան, ընդհանուր առմամբ, առաջին պարտավորեցնող իրավական նորմն է, որն անդրադառնում է երեխայի իրավունքներին: Այն կարևոր է ոչ միայն ներկայի, այլև ապագայի համար, քանի որ հնարավորություն է տալիս բարելավել երեխաների կարգավիճակը և նրանց կյանքն ամբողջ աշխարհում: Փաստաթուղթն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից, 1989 թվականի նոյեմբերի 20-ին: Որպես միջազգային իրավունքի մաս՝ վավերացումից հետո այն ուժի մեջ է մտել քսան երկրներում, 1990 թվականին: Դա պարտադիր նորմ է ՄԱԿ-ի անդամ երկրների համար, որոնք այն ստորագրել են, իսկ խորհրդարանները՝ վավերացրել: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան գերակա դիրք ունի ազգային օրենսդրություններում: 191 երկիր հավատարիմ կերպով հետևում է այս Կոնվենցիայի դրույթներին:

**Երեխաների իրավունքների չորս հիմնական կատեգորիաները**

**Կյանքի և գոյատևման իրավունք** – ներառում է ապրելու, բավարար կենսամակարդակի ապահովվածության, բնակարանային, սննդի և առողջապահության իրավունքը,

**Անձի զարգացման իրավունք** – ներառում է ուսման, մտքի ազատության, հավատքի, տեղեկատվության հասանելիության, ինչպես նաև՝ խաղալու, զվարճանքների և հանգստի իրավունքները,

**Պաշտպանվածության իրավունք** – ներառում է ցանկացած տեսակի դաժանությունից, շահագործումից, բռնությունից, երեխայի կամքին հակառակ ընտանիքից հեռացումից պաշտպանության իրավունքը, ինչպես նաև պաշտպանություն քրեական համակարգում չարաշահումներից,

**Մասնակցության իրավունք** – ներառում է երեխաների իրավունքն իրենց տեսակետներն ազատորեն արտահայտելու այն հարցերի վերաբերյալ, որոնք վերաբերում են իրենց կյանքին:

**6. Արդյո՞ք մանկական աշխատուժի շահագործումը թույլատրելի է**

Երեխաների աշխատանքն արգելվում է շատ երկրներում: 148 երկրներ արդեն ստորագրել է Կոնվենցիան, որն արգելում է ամենափոքր տարիքի երեխաների աշխատանքի շահագործումը՝ սահմանելով նվազագույն շեմը՝ տասնչորս տարեկան: Սակայն իրականությունն այլ է: Կոնվենցիան ստորագրել են այն երկրները, որտեղ մանկական աշխատանքը դեռևս տարածված երևույթ է (օրինակ, Պակիստանը կամ Նիգերիան): Հնդկաստանում, օրինակ, մանկական աշխատուժի շահագործման արգելքն ուժի մեջ է արդեն տասնյակ տարիներ: Սակայն, ըստ որոշ գնահատականների, մինչև հարյուր միլիոն երեխա դպրոց հաճախելու փոխարեն աշխատում են:

Հատուկ կատեգորիա են արվեստը, մշակութային, սպորտային կամ գովազդային գործունեությունը, մինչդեռ այստեղ ևս պայմանները պետք է համապատասխանեն աշխատանքային օրենսգրքում ամրագրված պայմաններին: Այս գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի տարիքին, չպետք է վտանգավոր լինի և խանգարի կրթությանը կամ դպրոց հաճախելուն և կրթական ծրագրերին մասնակցությանը: Բացի այդ, այն չպետք է վնաս հասցնի երեխաների առողջությանը, ֆիզիկական, հոգեբանական, բարոյական վիճակին և սոցիալական զարգացմանը:

**7. Որո՞նք են մանուկ ժամանակ աշխատելու հետևանքները**

Աշխատանքը խանգարում է երեխաներին ստանալ որակյալ կրթություն և բացասաբար է ազդում նրանց ֆիզիկական, մտավոր, հոգեկան, բարոյական ու սոցիալական զարգացման վրա: Եթե երեխան կրթություն չունի, ապա հետագայում նրա հնարավորությունները շատ սահմանափակ կլինեն:

Յուրաքանչյուր անձի համար մանկությունը կյանքի կարևոր փուլ է: Խաղերի և նմանակումների միջոցով երեխան սովորում է հաղորդակցվել, համագործակցել և աստիճանաբար նախապատրաստում է իրեն ընդունելու իր կյանքի դերերը: Այս փուլում անվտանգ և ապահովված միջավայր ունենալը կարևոր է, որը երեխային կընձեռի անհոգ ապրելու հնարավորություն: Եթե երեխան ստիպված է աշխատել, ապա նա դուրս է մնում այս կարևոր փուլից, ինչը կարող է բացասաբար ազդել նրա ինքնագարգացման և կյանքի նկատմամբ ընդհանուր վերաբերմունքի վրա: Բացի այդ, պետք չէ մոռանալ երեխաների աշխատանքային պայմանների մասին: Գործատուները հաճախ չեն ենթարկվում աշխատանքի անվտանգության չափանիշներին. երեխաներն ստանում են լուրջ վնասվածքներ, որոնք հետագայում կարող են հանգեցնել հաշմանդամության: Աշխատանքի դժվարությունը հաճախ այն անհամաչափությունն է, որը կապված է երեխաների ֆիզիկական ունակությունների հետ, ինչը կարող է բացասաբար ազդել նրանց աճի և օրգանիզմի ընդհանուր զարգացման վրա:

## 8. Ո՞ր կազմակերպություններն են զբաղվում երեխաների աշխատուժի շահագործման խնդիրներով

Երեխաների աշխատուժի շահագործման հարցերը կարգավորվում և հնարավորինս լուծվում են տարբեր կազմակերպությունների կողմից, օրինակ, UNESCO, UNICEF (ՄԱԿ-ի հիմնադրամը նվիրված երեխաներին), ILO (ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպությունը), միջազգային ոչ կառավարական և կրոնական կազմակերպությունները:

### Վորլդ Վիժն Հայաստան

Հասցե՝ ք. Երևան Թումանյան Մելիքյան 1, Հեռ՝ +37410 749119 էլ. կայք՝ [www.armenia.am](http://www.armenia.am)

### «Օրբան» Բարեգործական հասարակական կազմակերպություն

Հասցե՝ ք. Երևան, Առաջին Եկմայյան 6., Հեռ՝ (37410) 53-51-67/ 53-86-72

### «Ապագան քոնն է» բարեգործական սոցիալական հասարակական կազմակերպություն

Հասցե՝ ք. Երևան 0018, Տիգրան Մեծ 36գ, բն. 58, Հեռ՝ + 374 20 57 31, էլ կայք՝ [future@ftr.am](mailto:future@ftr.am); [www.ftr.am](http://www.ftr.am)

### «ՍՕՍ-Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ

Հասցե՝ Երևան, Խանջյան 50, Թեքեյան Կենտրոն, Հեռ.՝ 57-72-65/ 57-17-98, էլ.կայք՝ [www.sos-kd.am](http://www.sos-kd.am)

### «Զանգակատուն» Բարեգործական հասարակական կազմակերպություն

Հեռ՝ (010) 440510 Երևանի կենտրոն, (0237) 31306 Մեծամորի կենտրոն, (0322) 41168 Վանաձորի կենտրոն

### «Լույսի աշխարհ» մանկապատանեկան, երիտասարդական կենտրոն

Հասցե՝ Ք. Երևան, Անդրանիկի 30-45

### Սի.Օ.Էյ.Էֆ մանուկների բարեգործական հիմնադրամ

Հասցե՝ Հյուսիսային պողոտա 1, սենյակ 24, Հեռ՝ (010) 50-20-76

### «ՄԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ՖԵԴԵՐԵՅՇՆԸՆ ԻՆԿ. Հայաստանյան գրասենյակ

Հասցե՝ Ք. Երևան, Ազատության պող., 27 շենք, 3-րդ հարկ(Արաբկիր վարչ. շրջան), Հեռ. գ +374-10-201014, էլ կայք՝ [www.savethechildren.org](http://www.savethechildren.org)

### ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ (ՀՕՖ), Հայաստանի մասնաճյուղ

Հեռ՝ գ +374-10-526660

### ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հեռ՝ +374-10-567513

### Հայաստանում ԱՄԿ Ազգային համակարգող ՄԱԿ-ի գրասենյակ (ILO)

Հասցե՝ Ք. Երևան, Պետրոս Ադամյան 14, Հեռ.՝ (374 10) 54 39 72, Ֆաքս՝ (374 10) 54 39 72, կայք՝ <http://www.un.am>

### Հայկական Կարիտասը Երևանում երեխաների իրավունքների բաժին

Երևան, Չայկովսկի փող. 34, բնակարան 23, Հեռ՝ (+37410) 56 57, կայք՝ [www.caritasarm.am](http://www.caritasarm.am)

### «Հույսի կամուրջ» հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն

Հասցե՝ Ք. Երևան, Կոռյունի 19ա, 207, Հեռ՝ (374 10) 58 91 86, (374 10) 56 01 43, [www.bridgeofhope.am](http://www.bridgeofhope.am)

### Գյումրու սոց հոգածության կենտրոն

Հասցե՝ Ք. Գյումրի, Տերյան 6/գ, Հեռ՝ 0312 5 70 20

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.

### ՈՍԿԵ ՁԿՆԻԿ

*Ֆիլմ՝ Աննա*

*Կշռադարման վարժություն*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Երեխաների աշխատանք»:

**Նպատակը՝** խորհրդածել ֆիլմի վերաբերյալ, կարեկցանք զարգացնել:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ և գունավոր մատիտներ՝ յուրաքանչյուր աշակերտի համար:

#### Ընթացք

Ֆիլմի ցուցադրությունից հետո աշակերտներին պատմել ոսկե ձկնիկի հեքիաթը, որը կարող է իրականացնել երեք երազանք: Նրանք իրենց պատկերացնում են ոսկե ձկնիկի դերում և կարող են իրականացնել Աննայի երազանքը:

Աշակերտների առաջադրանքն է՝ մտածել, թե ինչի՞ պակաս ունի Աննան: Յուրաքանչյուրը ձևակերպում է մեկ ցանկություն:

Աշակերտները ներկայացնում են իրենց ցանկությունները և բացատրում, թե ինչու՞ են ընտրել հենց այդ ցանկությունը:

#### Կշռադատում

Այս փուլն անցկացվում է նկարչության միջոցով. աշակերտներին հանձնարարում ենք պատկերել Աննայի ցանկությունները:



## ▼ ԳՈՐԾԵԼԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.

### ԱՐԳԵԼՎԱԾ , ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ

*Ֆիլմ՝ Աննա*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Մանկական աշխատուժ»:

**Նպատակը՝** գիտակցել, թե երեխաները ո՞ր տեսակի աշխատանքները կարող են կատարել և ո՞ր տեսակինը՝ ոչ:

**Ժամանակը՝** 15 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթ՝ բաժանված մասերի, որտեղ ներկայացված են կյանքի իրավիճակներ:

#### Ընթացք

Աշակերտներին բաժանել խմբերի (յուրաքանչյուրում 4-5 հոգի):

Յուրաքանչյուր խումբ պետք է հինգ ընթացում աշխատանքային թերթիկի վրա նկարի իրավիճակ նկարագրող պարզ պատմություն: Աշակերտներին տեղեկացնել, որ պարտադիր չէ՝ պատմությունն ունենա երջանիկ ավարտ: Երբ ժամանակը լրանում է, յուրաքանչյուր խմբից մեկական աշակերտ ներկայացնում է իր խմբի պատրաստած պատմությունը: Երբ բոլոր խմբերն ավարտում են իրենց պատմությունները, լսարանը քվեարկում է, թե արդյո՞ք նրանք իրենց պատմության մեջ ներկայացված երեխային թույլ կտային կատարել այդ աշխատանքը, թե՛ ոչ:

#### Կշռադատում

Պարզաբանել յուրաքանչյուր տեսակետը. ուսուցիչը հետաքրքրվում է, թե ինչու՞ են աշակերտները կայացրել այս կամ այն որոշումը: Գործողության վերջում ուսուցիչն ամփոփում է՝ ասելով որ կոնկրետ տարիքի երեխաները չպետք է աշխատեն, գոյություն ունեն աշխատանքներ, որոնք անընդունելի են երեխաների համար և պետք է կատարվեն միայն մեծահասակների կողմից: Ուսուցիչը կարող է բերել օրինակներ:

**Գործնական վարժություն՝ Արգելված, թույլատրված**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՔԱՐՏԵՐ**

<p>Տասներկուամյա տղան ցանկանում է շաբաթօրյա ֆերմերային շուկայում բանջարեղեն ու մրգեր վաճառելով՝ օգնել իր ընկերոջը և նրա մորը: Տղաներից մեկի ծնողները համաձայն չեն, մյուս ծնողը կարծում է, որ դա լավ գաղափար է:</p>	<p>Միայնակ մայրն իր աշխատանքը կորցրել է, նրա 15 և 17 տարեկան որդիները հաճախում են դպրոց: Նրանք լավ գնահատականներ են ստանում, բազմաթիվ ընկերներ և հոբբիներ ունեն: Մակայն անհրաժեշտ է, որ տղաներն աշխատեն, որպեսզի կարողանան գոնե կիսով չափ ավելացնել ընտանեկան բյուջեն:</p>
<p>Խանութի տիրոջ երեխաները հանգստյան օրերին առանց վարձատրության խանութում աշխատելով՝ օգնում էին ծնողներին: Խանութում գործն ավելի ու ավելի է շատանում, և սեփականատերն աշխատանքի է հրավիրում 15 տարեկան տղայի, ում վճարում է ժամավճարով աշխատավճած: Սեփականատիրոջ երեխաները նույնպես ցանկանում են աշխատավարձ ստանալ:</p>	<p>Երեք անչափահաս ընկերներ ուրբաթ օրն ուզում են կինո գնալ: Նրանցից մեկը բավարար գումար չունի և իր ընկերներից ցանկանում է պարտքով վերցնել: Երկրորդ ընկերը հանգստյան օրերին աշխատում է կես դրույքով, իսկ երրորդն ապահովված է ամսական գումարով:</p>
<p>16 տարեկան տղան ցանկանում է ավագ դպրոցից հեռանալ և աշխատել, որպեսզի իր ծնողներից անկախ լինի: Ծնողները և ուսուցիչը փորձում են համոզել նրան, որպեսզի նա գոնե միջնակարգ կրթություն ստանա:</p>	<p>15 տարեկան աղջիկը դասերի ավարտից հետո բարում հավաքարար է աշխատում, բայց նրա ծնողները չգիտեն այդ մասին: Աշխատանքի ժամանակ նա վնասվածք է ստանում և գործատուն նրան տուն է տանում՝ ծնողներին բացատրելով, թե ինչ է տեղի ունեցել:</p>

գ) ԱԼԵՔՍԱՆԴՐԱ / Մարջոլեն Բոնստրա / Հոլանդիա / 2010թ. / 3 րոպե



Ալեքսանդրան ապրում է մի փոքրիկ քաղաքում՝ Բոսնիայի ու Խորվաթիայի սահմանին: Երբ դպրոցից տուն է վերադառնում, ժամանակի մեծ մասն անցկացնում է կենդանիների հետ: Նախկինում նա խաղում էր իր փոքր եղբոր՝ Սիմոնի հետ: Մի օր դաշտում խաղալիս Ալեքսանդրան գտավ մի տարօրինակ սև առարկա: Նա վերցրեց այն ու տվեց Սիմոնին. այդ պահին մեծ պայթյուն տեղի ունեցավ և նրա եղբայրը մահացավ. չպայթած ռումբ էր՝ նախկին Հարավսլավիայի պատերազմի ժամանակներից մնացած: Մինչ օրս Ալեքսանդրան հրաժարվում է այդ ողբերգական պատահարի մասին խոսել նույնիսկ իր ծնողների հետ:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Մարդու (երեխայի) իրավունքներ»

**Հարակից թեմաներ՝** «Ջինված հակամարտություններ», «Կյանքի ապահով պայմաններ»

### 1. Որոնք են հակամարտության հիմնական պատճառները

Կոնֆլիկտերը ծագում են մշտապես. ժամանակի ընթացքում դրանք կարող են վերաճել դաժան կամ երկարատև հակամարտությունների: Կոնֆլիկտների հիմնական պատճառը հասարակական, քաղաքական ու տնտեսական հարաբերություններում է թաքնված: Դաժան հակամարտությունների հիմքում ընկած են անհավասարությունն ու այդ իրավիճակը շտկելու փորձերը: Որոշ հակամարտությունների պատճառներ իշխանության գալու կամ իշխանափոխություն իրականացնելու փորձերը կարող են լինել:

Դաժան հակամարտությունների առաջացման ուղղակի պատճառը հիմնականում վախն է (հիմնականում՝ ապագայի հանդեպ): Նման հանգամանքներում մարդը հակված է դիմելու ավելի մեծ ռիսկի: Արդյունքում բռնություն կարող է գործադրվել, իշխող վարչակարգի ռեպրեսիաները կամ գործի ներխուժումը շրջադարձային կարող են լինել:

### 2. Արդյո՞ք հակամարտությունը ծնվում է խմբերի փոխադարձ ատելությունից

Ճիշտ հակառակը. ատելությունը հակամարտության արդյունք է: Այնուամենայնիվ, այն կարող է հանգեցնել հակամարտության լարվածության սրման կամ հակամարտության կրկնության:

### 3. Որոնք են հակամարտության հետևանքները

Հակամարտությունները նոր կոնֆլիկտների համար նպաստավոր պայմաններ են ստեղծում: Այսպես, բազմաթիվ «նոր պատերազմներ» հին հակամարտությունների արդյունք են, որ պարբերա-

բար վերսկսվում են: Որոշ պատճառներ ու հետևանքներ փոխկապակցված են. տնտեսական անկումը նպաստում է հակամարտությանը, հակամարտության առկայությունը՝ զենքի ապօրինի առքուվաճառքին: «Նոր պատերազմների» ամենատարածված հետևանքներն են կենտրոնական իշխանության թուլացումը կամ ապակենտրոնացումը, «ուղեղների արտահոսքը» (կրթված մարդկանց արտագաղթ), արդյունաբերության անկումը, գյուղատնտեսական նշանակության հողերի անուշադրության մատնումը (ինչը կարող է հանգեցնել սովի՝ երբեմն պարբերաբար կրկնվող), տնտեսության, պետական կառույցների ու քաղաքականության քրեականացումը:

«Նոր պատերազմների» ընթացքում խաղաղ բնակչությունը բազմաթիվ զոհեր է սովել, շատերը դարձել են փախստական: Խաղաղ բնակչության կորուստները նվազեցնում են պատերազմին հաջորդող հաշտեցման՝ հետևաբար նաև կայուն պետության վերականգնման հնարավորությունը: Հարկադիր միգրացիան թուլացնում է փախստականների՝ իբրև առանձին խմբի առողջությունը, նպաստում հանցավոր ցանցերի ու արմատական խմբավորումների աճին:

#### 4. Հնարավոր է կանխել զինված հակամարտությունը

Այսօր մասնագետներն ու հասարակական կազմակերպությունները պարբերաբար ի մի են բերում տարբեր երկրներում տիրող իրավիճակների վերլուծություններ՝ հակամարտությունների վաղ կանխարգելման նպատակով: Նրանք նշմարում են լարվածության վտանգավոր աճ, սակայն, ցավոք, կառավարությունների ու միջկառավարական կազմակերպությունների կողմից դա պատշաճ ուշադրության չի արժանանում:

Հակամարտությունը կարելի է կանխարգելել կամ դադարեցնել՝ դրսից վաղ միջամտություն իրականացնելով: Սովորաբար ճշմարիտ է այն պնդումը, որ հակամարտության կանխարգելումն ավելի քիչ միջոցներ է պահանջում, քան արդեն ընթացող հակամարտությանը միջամտելը: Ավելին՝ հակամարտության ավելի վաղ շրջանում ավելի քիչ ռեսուրս է պահանջվում, քան հակամարտության ավելի ուշ շրջանում: Նախքան հակամարտության սկսվելը միջամտությունը հաճախ դիվանագիտական կամ տնտեսական բնույթ է կրում. զինված միջամտությունը վերջին միջոցն է: Այնուամենայնիվ, զինված միջամտությունն ի սկզբանե բացառելը թուլացնում է դիվանագիտական ու տնտեսական միջոցները: Ցավոք, զինված միջամտություններ իրականացնող պետությունները (հիմնականում դրանք սահմանակից պետություններ են) հաճախ ուղղորդվում են սեփական տնտեսական շահով: Այդ դեպքում միջամտությունը ենթադրում է հակամարտության լարվածության աճ, ինչպես նաև՝ հակամարտության երկարաձգում:

#### 5. Որո՞նք են հակամարտությունների հնարավոր լուծումները

Հակամարտությունների հնարավոր լուծումներից մեկը զենքի առքուվաճառքի կարգավորումն է, ինչը գոնե զինված հակամարտության հավանականությունը կնվազեցնի: Դա կնշանակի ամեն տեսակ զենք ու զինամթերք լարվածության օջախ ներմուծելու պետական արգելք (Էմբարգո), ինչպես նաև զենքի ու զինամթերքի պարտադիր գրանցում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է, որպեսզի հնարավորինս մեծ թվով երկրներ օրենքներ ընդունեն, որոնք թույլ կտան վերահսկել զենքի առքուվաճառքը, ինչը կներառի նաև որևէ երկիր զենք արտահանելու վրա պետական արգելք դնելու հնարավորություն: Հետպատերազմյան վերականգնման համար անհրաժեշտ է նվազեցնել խաղաղ բնակչության մոտ եղած զենքի քանակը: Հաճախ գորացրումը տեղի է ունենում անսպասելիորեն, և անձնական զենքը մնում է նախկին զինյալների ձեռքում: Ձեռքը կամավոր հանձնողների համար համաներում հայտարարելը կամ էլ զենքի կազմակերպված հետզնումը նման իրավիճակում հնարավոր լուծում կարող են լինել:

Պետությունների ժողովրդավարացումը և ապակենտրոնացումը հակամարտության կարգավորման այլ կարևորագույն գործոններից են: Ժողովրդավարացումը երկրում հարատև խաղաղության պայմաններից է: Ժողովրդավարացումը սուսկ ընտրությունների կազմակերպում չէ: Իրական ժողովրդավարացում ասելով՝ սովորաբար հասկանում ենք գործնականում քաղաքական իշխանության արդարացի բաժանում և արդյունավետ վերահսկում: Պետության ապակենտրոնացումը կարևոր է, քանզի այն կանխարգելում է իշխանության մենաշնորհը:

**6. Ճիշտ է, որ որոշ խմբեր, ինչպես, օրինակ, մուսուլմանները, ավելի ազդեցիկ են, քան մյուսները**

Այս միտքը մակերեսային և սխալ է և բխում է մուսուլմանների՝ աշխարհում զբաղեցրած հատուկ աշխարհագրական դիրքից: Իսլամական աշխարհը (պետություններ, որտեղ բնակչության մեծամասնությունը մուսուլմաններն են կազմում) սահմանակից են գրեթե բոլոր քաղաքակրթություններին (աշխարհի կրոններին, որոնք թվով ինն են): Համեմատության կարգով ասենք, որ արևմտյան քաղաքակրթությունը սահմանակից է երեք, իսկ չինական քաղաքակրթությունը՝ հինգ կրոնների: Ավելին՝ փոքրամասնություն կազմող մուսուլմաններն ամենից ցրվածն են (հակառակ այլ քաղաքակրթությունների՝ բազմաթիվ կարևորագույն մուսուլմանական համայնքներ օտար երկրներում են):

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՐՈՒՍՏ

*Ֆիլմ՝ Ալեքսանդրա  
Կշուադարյանի վարժություն  
Տարիքային խումբը՝ 15+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ»:

**Նպատակը՝** գիտակցել, որ մահն առնչվում է բոլորիս հետ:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ յուրաքանչյուր աշակերտի համար, գրատախտակ:

### Ընթացք

Յուրաքանչյուր աշակերտ ստանում է աշխատանքային թերթիկ: Աշակերտներին բացատրել, որ շրջանակներից մեկը պատկանում է Ալեքսանդրային, իսկ մյուսը՝ նրա ընտանիքին (մայրը և հայրը): Միջանկյալ շրջանն այն ամենն է, ինչն ընդհանուր է Ալեքսանդրայի և նրա ընտանիքի համար՝ ժամանակ, գործողություններ, խնդիրներ:

Աշակերտներին հանձնարարել գրել շրջանակների մեջ, թե ինչն էր բնորոշ Ալեքսանդրային և իր ընտանիքին (զգացմունքներ, կարծիքներ, վարվելակերպ), իսկ միջանկյալ շրջանակի մեջ նշել երեք երեք բնութագիր, որոնք ընդհանուր են ն՝ Ալեքսանդրայի, ն՝ ընտանիքի համար:

Գրատախտակին պատկերել աշխատանքային թերթիկի գծագիրը: Աշակերտների տեսակետները գրի առնել գրատախտակի գծագրի մեջ:

Ուշադրություն: Հնարավոր է, որ երեխաները նկարագրեն իրենց ընտանիքին բնորոշ իրավիճակներ: Անհրաժեշտ է լավ բացատրել, որ պետք է նկարագրել միայն Ալեքսանդրային և նրա ընտանիքին:

### Կշուադատում


Տեղի է ունենում քննարկման միջոցով: Աշակերտների հետ քննարկել գրատախտակին պատկերված գծագիրը՝ շեշտադրելով նաև միջանկյալ շրջանակում նշվածները, այն, ինչն ընդհանուր էր Ալեքսանդրայի և ընտանիքի համար:

Գործնական վարժություն՝ Ընդհանուր կորուստ

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

Ալեքսանդրա

Ալեքսանդրայի ընտանիք



ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.

ՈՒՂԵՐԾ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՅԻՆ

Ֆիլմ՝ Ալեքսանդրա  
Տարիքային խումբը՝ 10+

Համապատասխան թեմա՝ «Երեխաների իրավունքները»:  
Նպատակը՝ մտորել ֆիլմի մասին, ուրիշներին ապրումակցել:  
Ժամանակը՝ 15 րոպե:  
Անհրաժեշտ պարագաներ՝ գրավոր առաջադրանք՝ բոլորի համար:

Ընթացք


Յուրաքանչյուր աշակերտ ստանում է թուղթ՝ գրավոր հանձնարարությամբ:  
Աշակերտներին տրվում է ժամանակ՝ առաջադրանքը կատարելու համար (մոտ 5 րոպե):  
Աշակերտները պետք է թուղթը լրացնեն պատասխաններով:

Կշռադատում

Հանձնարարության երկրորդ մասում բոլորը նստում են՝ շրջան կազմելով: Աշակերտները կարդում են իրենց պատասխանները: Աշակերտներին տրվում են հետևյալ հարցերը. «Ի՞նչ խորհուրդ կտայիք Ալեքսանդրային», «Ի՞նչ է զգում Ալեքսանդրան», «Ի՞նչը նրան լավագույնս կօգնի»:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուղերձ Ալեքսանդրային.





դ) ՄԵՍԲԱ / Անեթա Փափաթանասիու / Հունաստան / 2011թ. / 3 րոպե



Մեսրան Բանգլադեշից է: Հոր մահից հետո նրա մայրը վերցնում է իր յոթ երեխաներին ու գնում Պակիստան: Իր որդուն լավ կյանքով ապահովելու նպատակով նա վաճառում է տունն ու գումարի մեծ բաժինը տալիս Մեսրային՝ Հունաստան ուղևորվելու համար: Այսօր տասնվեց տարեկան Մեսրան փայլփլուն ռեստինե խաղալիքներ է վաճառում փողոցում և քնում զրոսայգիներում կամ ընկերների տանը: Նա կուզենար սովորել ու բժիշկ դառնալ. ցավոք, հունարեն չի խոսում և այդ պատճառով էլ չի կարող անհրաժեշտ փաստաթղթեր ձեռք բերել: Ամեն օր զանգահարում է մայրիկին, որին շատ է կարոտում: Հույս ունի, որ մի օր կկարողանա դալքոց հաճախել:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Երեխաների իրավունքներ»

**Հարակից թեմաներ՝** «Խնամագրուրկ երեխաներ», «Անօթևան երեխաներ», «Կրթության իրավունք»

### 1. Ովքեր են խնամագրուրկ երեխաները

«Խնամագրուրկ երեխաներ» եզրույթն օգտագործվում է այն միլիոնավոր լքված երեխաներին բնութագրելիս, որոնք ապրում են մեծ քաղաքների փողոցներում: Սակայն ոչ բոլոր երեխաներն են իրականում լքված և ոչ բոլորն են ապրում փողոցում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (UNICEF), կախված այդ երեխաների ընտանեկան դրությունից, նրանց բաժանում է երկու խմբի: Դրանց միավորողն այն է, որ այդ երկու խմբերի երեխաներն իրենց կյանքի մեծ մասն անցկացնում են փողոցում: Փողոցում ապրող երեխաներն առավել մեծ խումբն են կազմում: Այս երեխաները կապի մեջ են իրենց ընտանիքների հետ: Այնուամենայնիվ, ժամանակի մեծ մասն անց կացնում են նրանցից հեռու: Ենթադրվում է, որ նրանք անօթևան չեն: Երկրորդ խումբը կազմում են «փողոցի երեխաները»: Հիմնականում նրանք միաձուռ, անապահով ընտանիքներից կամ մանկատներից փախած երեխաներն են: Տնից փախչող երեխաների մեծամասնության ծնողները գերժանրաբեռնված են և երեխաներին հատկացնելու ժամանակ չունեն: Բացակայող մտերմությունը փնտրվում է այլուր. աստիճանաբար երեխան հայտնվում է հասակակիցների խմբում: Փողոցը համարվում է այս երեխաների տունը: Այստեղ են նրանք ուտում, խաղում, ընկերներ ձեռք բերում: Երբեմն երեխաները հաղորդակցվում են իրենց ընտանիքի որոշ անդամների հետ, սակայն երբեք չեն վերադառնում ծնողների մոտ: Որոշ դեպքերում հենց ընտանիքն է իրենց բաց թողնում, այլ դեպքերում՝ երեխաներն ինքներն են որոշում լքել տունը: Այս երեխաները իրենք են իրենց մասին հոգ տանում:

Երկու խմբի երեխաներն էլ բազմաթիվ ընդհանրություններ ունեն՝ մեծահասակների աշխարհի հետ անկայուն զգայական հարաբերություններ, ցածր ինքնագնահատում, ինքնավստահության պակաս,

աղցիալական խարան, անորոշ ապագա, ինչպես նաև այն փաստը, որ նրանք հաճախ դառնում են բռնության կամ շահագործման զոհ:

**2. Որքան անօթևան երեխա կա աշխարհում**

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) գեկույցի համաձայն՝ աշխարհում կա մոտ 100 միլիոն անօթևան երեխա: Փողոցում ապրող երեխաների առավելագույն թվով տարածաշրջաններն են Լատինական Ամերիկան (40 միլիոն), Ասիան (32 միլիոն), Աֆրիկան (10 միլիոն), Հյուսիսային Ամերիկան (5 միլիոն), Եվրոպան (3 միլիոն), Ավստրալիան և Օվկեանիան (1,5 միլիոն):

Ինչպես երևում է վերոհիշյալ թվերից, անօթևան երեխաների գրեթե կեսն ապրում է Լատինական Ամերիկայում: Թեև վերջին տարիներին այս տարածաշրջանում տնտեսական աճ է գրանցվել, երեխաների մոտ կեսն աղքատության մեջ է ապրում: Վերջին 30 տարիների ընթացքում Լատինական Ամերիկայի բնակչության գրեթե 70%-ը արագ ուրբանիզացիայի պատճառով հարկադրված էր փոխելու իր ապրելաոճը: Քաղաքներն աճում են՝ իրենց մեջ ընդգրկելով հարևան ծայրամասերը: Օրինակ, Բրազիլիայում փողոցում ապրող 10 միլիոն երեխա կա, ինչը ամենաշատն է Լատինական Ամերիկայում: Այդ երեխաների միայն փոքր տոկոսն անօթևան է կամ չունի ընտանիք: Նրանցից շատերը փողոցում ժամանակ են անցկացնում, մինչ ծնողները (մեծամասնությամբ՝ միայնակ մայրեր) աշխատանքի են: Հետևաբար երեխաներին խնամող չկա: Այլ դեպքերում երեխաները **բազմազավակ ընտանիքներից են, որտեղ ծնողները չեն կարող բոլոր երեխաներին կերակրել ու ավագ երեխաներին խնամել:** Այսպիսով, ավագ երեխաները հաց են վաստակում կոշիկ փայլեցնողի, լոտոյի տոմսավաճառի կամ թերթավաճառի փոքր աշխատանքներ կատարելով: **Փողոցում նրանց տարբեր վտանգներ են սպառնում. բռնություն, թմրանյութեր, պռոնկություն, ոստիկանության հետ խնդիրներ:** Հաճախ նրանք լավ չեն սովում ու հակված են հիվանդությունների: Բուժումը սարսափելի ծախս է ընտանիքների համար: Երեխաներից շատերը **գրկված են տարրական դպրոց հաճախելու հնարավորությունից:**

**3. Որոնք են երեխաների՝ փողոցում հայտնվելու ամենատարածված պատճառները**

Աղքատ երկրներում ծնողագուրկ երեխաները շատ հաճախ հայտնվում են փողոցում (հատկապես Աֆրիկայում այս երեխաների ծնողներն ու բարեկամները մահացել են ՄԻԱՀ/ՁԻԱՎ-ից կամ նման այլ հիվանդություններից). նրանք նաև այն երեխաներն են, ում ծնողները լքել են, չէին կարող կամ չէին ցանկանում խնամել իրենց երեխաներին (գործազուրկ միայնակ մայրեր, ակոհող չարաշահող հայրեր կամ բազմազավակ աղքատ ընտանիքներ): Անօթևան երեխաներ կան նաև տնտեսապես կայուն երկրներում: Մեծ է այն երեխաների թիվը, ում բախտը չի ժպտացել, և նրանք, ապրելով անկայուն, վատ ընտանեկան մթնոլորտում, փախել են իրենց անապահով ընտանիքներից: Հաճախ այդ երեխաների հանդեպ խոշտանգումներ և սեքսուալ բռնություն է կիրառվում: Այդ երեխաները ոչ լրիվ կազմով ընտանիքներից են, կամ էլ նրանց ծնողներն ակոհողից կախվածություն ունեն:

Երեխաների՝ փողոցում հայտնվելու հիմնական պատճառներն են. զինված հակամարտություններ, աղքատություն, բնական աղետ, ընտանիքի քայքայում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, բռնություն ընտանիքում, ծնողների մահ:

**4. Ինչպես է անցնում երեխայի օրը փողոցում**

Փողոցում ապրող երեխաները սովում են աղբարկղի կամ, լավագույն դեպքում, փողոցային վաճառողների ապրանքի մնացորդներով: Նրանց մի մասը, օգտվելով երիտասարդ լինելուց, քնում են ու սովում ծանոթների մոտ, որոնք կարող են նրանց շահագործել. երեխաները միամիտ են ու ամենօրյա կանոնավոր կյանքին անպատրաստ: Երեխաներն իրենց ժամանակն անցկացնում են առևտրի կենտրոններում, այգիներում, խաղերի կամ երկաթուղային կայանների շրջակայքում: Նրանք դառնում են տարբեր խմբավորումների կամ հանցավոր խմբերի անդամ ու զբաղվում մանր գողությամբ և պռոնկությամբ:

## 5. Հնարավոր է օգնել այդ երեխաներին

Փողոցում ապրող երեխաների իրավիճակը բարելավելու համար երբեմն բավարար է նրանց հիմնարար կարիքները հոգալ, ինչպիսիք են՝ ապաստանը, սնունդը, առողջապահական ծառայությունները, կրթությունը, օգնությունն աշխատանք գտնելու գործում: Եվ վերջապես շատ կարևոր է կենտրոնանալ մարդու պաշտպանության խնդրի վրա:

Հասարակական, այդ թվում՝ նաև կրոնական կազմակերպություններն այն բազմաթիվ կազմակերպությունների շարքում են, որոնք փորձում են օգնել այդ երեխաներին: Այնուամենայնիվ, այս կազմակերպությունների ֆինանսական ռեսուրսները սահմանափակ են, ինչը նրանց թույլ է տալիս միայն սահմանափակ աջակցություն ցուցաբերել: Բազմաթիվ երկրներում կառավարությունները խնդիրը լուծում են՝ շարունակելով ռեպրեսիաները (սրանք երեխաներին ուղարկում են հատուկ հաստատություններ), թեև որոշ պետություններում արդեն ստեղծվել են խնամազուրկ երեխաների հարցերով զբաղվող ոստիկանության հատուկ ստորաբաժանումներ: Ցավոք, նույնիսկ այս ստորաբաժանումները երբեմն երեխաներին օգնելու փոխարեն վնասում են նրանց: Խնամազուրկ երեխաների դրությունը բարելավելու համար հարկավոր է քաղաքական կամք: Ավելին՝ հարկավոր է, որ կառավարությունը ուշադրություն դարձնի երեխաների իրավունքների պաշտպանությանը երկրում: Երեխայի իրավունքների կոնվենցիան միջազգայնորեն ընդունված փաստաթուղթ է, որն աջակցում է երեխաների իրավական պաշտպանությանը:

## 6. Եթե նման երեխայի հանդիպեմ, ինչպես կարող եմ օգնել

Օգնությունը սկսվում է այն պահից, երբ երեխան (փողոցում) հանդիպում է մեկին, ով հետաքրքրություն է ցուցաբերում նրա կյանքի ու խնդիրների հանդեպ: Հաջորդ քայլն է՝ կապվել վտանգի մեջ հայտնված երեխաներին աջակցություն ցուցաբերող կազմակերպություններից մեկի հետ և փոխանցել տեղեկությունները: Անշուշտ, չափազանց կարևոր է անտարբեր չմնալ ուրիշի կարիքի հանդեպ, մինչև ժամանակ պետք չէ մոռանալ սեփական անվտանգության մասին: Հետևաբար, լավ է փողոցում որևէ մեկին օգնելիս դիմել չափահասի՝ ծնողների, ուսուցչի կամ այլ վստահելի անձի օգնության:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.  
ՁԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆԸ**

*Ֆիլմ՝ Մեսրա*

*Կշռադատման վարժություն*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Աղքատություն», «Անօթևան (փողոցում ապրող) երեխաներ»:

**Նպատակը՝** ֆիլմի վերաբերյալ կշռադատումներ կատարել:

**Ժամանակը՝** 10 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** գրատախտակ:

**Ընթացք**

Նախքան ֆիլմի ցուցադրությունը աշակերտներին հարցնել, թե նրանք երբևէ տեսնել են փողոցում ապրող երեխաների և ընդհանրապես ի՞նչ գիտեն փողոցում ապրող երեխաների մասին:

Պատասխանները գրել գրատախտակին:

Դիտել ֆիլմը:

Աշակերտներին հարցնել, արդյոք ունեն լրացումներ՝ գրատախտակին գրված նկատառումների վերաբերյալ:

**Կշռադատում**

Այն տեղի է ունենում քննարկման միջոցով: Հարցնել աշակերտներին՝ ինչո՞ւ իրենք նոր գաղափարներ ավելացրեցին: Ինչ են կարծում հնարավոր է արդյոք օգնել այդ երեխաներին, եթե այդ ապա ինչպե՞ս կարող են օգնել:

## ▼ ԳՈՐԾԵԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԱՊՐԵԼ ՓՈՂՈՑՈՒՄ

*Ֆիլմ՝ Մեսրա*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Անօթևան (փողոցում ապրող) երեխաներ»:

**Նպատակը՝** պարզել, թե աշակերտների կարծիքով ինչ վտանգներ են սպառնում փողոցում ապրող երեխաներին, և թե ինչ պիտի անեն իրենք (և մեծահասակները)՝ նման իրավիճակում գտվող երեխաների համար:

**Ժամանակը՝** 30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թղթեր, որոնցում ներկայացված են զարգացող երկրների փողոցներում ապրելու ռիսկերը (աշխատանքային թերթիկ 1, 2), 10 հիմնական վտանգները:

### Ընթացք

Երեխաներին բաժանել զույգերի:

Հանձնարարել մտքերի փոխանակման միջոցով մտածել, թե ինչ վտանգներ են սպառնում փողոցներում ապրող երեխաներին:

Զույգերին տրամադրել թղթեր, որտեղ նրանք նկարագրում են փողոցում ապրող երեխաներին սպառնացող վտանգները (աշխատանքային թերթիկ 2): Նրանք ձևակերպում են դրանք (ամենամեծ վտանգից մինչև ամենափոքրը):

Թղթերը լրացնելուց հետո յուրաքանչյուր զույգ հայտնում է երեք մեծագույն վտանգներ, որոնք գրվում են գրատախտակի վրա:

Աշակերտների միջոցով ցանկից առանձնացնել առաջնային տասը վտանգները:

Երեխաներին բաժանել զարգացող երկրների փողոցներում ապրելու ռիսկերը (աշխատանքային թերթիկ 1):

### Կշռադատում

Այն տեղի է ունենում գրատախտակին առանձնացված 10 առաջնային վտանգերը աշխատանքային թերթիկ 1-ի հետ համեմատելու ժամանակ: Դրան հետևում է զույգերով քննարկումը, որը հիմնված է աշխատանքի արդյունքների վրա: Վերջում աշակերտները փողոցում ապրող երեխաներին օգնելու վերաբերյալ փորձում են առաջարկներ տալ, որոնք գրի են առնում գրատախտակին:

Գործնական վարժություն՝ Ինչպես կարելի է ապրել փողոցում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ 1**

**ՓՈՂՈՑՈՒՄ ԱՊՐՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻՆ ՍՊԱՌԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ**

«Եթե ես լինեի անօթևան երեխա, ես կանհանգստանայի, որ...»
ՈՒՏԵԼԻՔ ՉԵՄ ՈՒՆԵՆԱ
ՈՍՏԻԿԱՆՆԵՐՆ ԻՆՁ ՎԱՏ ԿՎԵՐԱԲԵՐՎԵՆ
ՔՆԵԼՈՒ ՏԵՂ ՉԵՄ ՈՒՆԵՆԱ
ԻՆՁ ՄԻԱՅՆԱԿ ԿՁԳԱՄ
ԱՇԽԱՏԱՆՔ ՉԵՄ ՈՒՆԵՆԱ
ԻՆՁ ԱՆՀՈՒՅՍ ԱՊԱԳԱ Է ՍՊԱՍՎՈՒՄ
ՍՏԻՊՎԱԾ ԿԼԻՆԵՄ ԿԱՏԱՐԵԼ ՑԱՆԿԱՑԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ
ԿԱՐԴԱԼ, ԳՐԵԼ ՉԵՄ ԻՄԱՆԱ (ԴՊՐՈՑ ՉԵՄ ՀԱՃԱԽԻ)
ՄԱՐԴԻԿ ԻՆՁ ՀԵՏ ՎԱՏ ԿՎԵՐԱԲԵՐՎԵՆ ԵՎ ԿԹԱԼԱՆԵՆ
ԽՄԵԼՈՒ ՋՈՒՐ ՉԵՄ ՈՒՆԵՆԱ
ԻՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄԱՑ ՇԱՏ ՔԻՉ ԿՎԱՐՁԱՏՐՎԵՄ
ԿՀԻՎԱՆԴԱՆԱՄ (ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՁ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԼԻՆԻ)
ԱՄՈՒՄՆԱՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՉԵՄ ՈՒՆԵՆԱ
ՄԱՐԴԻԿ ՀՈԳԵԲԱՆՈՐԵՆ ԵՎ ՖԻՋԻԿԱՊԵՍ ՎԱՏ ԿՎԵՐԱԲԵՐՎԵՆ ԻՆՁ
ԻՆՁ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՈՒԺ ՉԵՄ ՈՒՆԵՆԱ
ՄԱՔՈՒՐ ԶԳԵՍՏ ՉԵՄ ՈՒՆԵՆԱ
ՍՏԻՊՎԱԾ ԿԼԻՆԵՄ ԱՊՐԵԼ ԾԱՆՐ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Գործնական վարժություն՝ Ինչպես կարելի է ապրել փողոցում

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ 2

ՓՈՂՈՑՈՒՄ ԱՊՐՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

1.

2.

3.

4.

5.

6.

7.

8.

9.

10.

ե) ՓԱՄԵԼԱ / Քրիստին Փոլաթա / Իտալիա / 2011թ. / 3 րոպե



Տասնչորս տարեկան աղջնակ Փամելան ապրում է Գետոյում, որտեղ ընտանիքի հետ նրան տեղափոխել էին ոստիկանության օգնությամբ: Ամեն օր նա պետք է կանուխ վեր կենա, որպեսզի չուշանա այն միակ ավտոբուսից, որ տեղի երեխաներին տանում է հեռավոր դպրոց: Այնուամենայնիվ, նա ուշացած է հասնում դպրոց: Դպրոցում ամենից շատ նրան դուր է գալիս նկարել, սակայն նկարչության ուսուցիչը նրան չի սիրում: Փամելան ուզում է դառնալ վարսավիր, երբ մեծանա: Այնուամենայնիվ, նրա իղձերն ամենայն հավանականությամբ կմասն անկատար, քանզի ավտոբուսը երեխաներին գնչուական գետոյից տեղափոխում է միայն դեպի տարրական դպրոց:

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Հիմնական թեմա՝** «Երեխաների իրավունքներ»

**Հարակից թեմաներ՝** «Կրթության իրավունք», «Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք», «Աղքատություն»

**1. Ինչ նպատակի է ծառայում կրթությունը**

Կրթությունը մեզ համար մեծ նշանակություն ունի: Այն աղքատության դեմ պայքարի լավագույն միջոցներից է: Կրթության աճող մակարդակի հետ մեկտեղ աճում են եկամուտները, նոր տեխնոլոգիաների կիրառումը, ինչն իր հերթին հանգեցնում է տնտեսական աճի: Կրթությունը նաև առողջապահական կառույցների ամենաարդյունավետ միջոցներից է: Դպրոցը զգալի ներգործություն ունի երեխաների սնուցման և հիվանդությունների (ինչպիսիք են, օրինակ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը) կանխարգելման գործում: Ավելին՝ կրթությունը կարևոր դեր է խաղում ծնելիության պլանավորման գործում և կրճատում է երեխաների ու մայրերի մահացությունը: Եվ վերջապես, կրթությունը նաև արդյունավետ քաղաքական միջոց է. այն ազատագրում է, ուժեղացնում քաղաքական մասնակցությունը և որոշումների ընդունման ժողովրդավարական գործընթացները:

**2. Արդյոք գրագիտության մակարդակն աշխարհում իջել է**

Թեև 1970-2000թթ. ընկած ժամանակահատվածում անգրագիտության մակարդակն իջել է 37 տոկոսից 20 տոկոս, այնուամենայնիվ, նույն ժամանակահատվածում 15 միլիոնով աճել է նրանց թիվը, ովքեր գրաճանաչ չեն: Այս անհամաչափության պատճառը զարգացող երկրների արագ դեմոգրաֆիկ աճն է: Այդուհանդերձ, լավատեսության հիմք կա: Հույս են ներշնչում փոքր տարիքի երեխաները. 2000–2007թթ. ընկած ժամանակահատվածում տարրական դպրոցն ավարտող երեխաների թիվը 84 տոկոսից աճել է մինչև 88 տոկոս:



### 3. Որոնք են կրթության անմատչելիության հիմնական պատճառները

Զարգացող երկրներում գոյություն ունի կրթական երկու խնդիր. կրթության՝ սահմանափակ թվով մարդկանց հասանելիությունը և կրթության ցածր որակը: Պատճառներն ամուր արմատավորված աղքատության հետ են կապված: Օրինակ՝ դպրոցների, ինչպես նաև սարքավորումների բացակայությունը, բարձր վճարը (ոչ միայն ուսման, այլև դասագրքերի, համազգեստի, ճանապարհորդության ծախսերը) ու հին, չափազանց բարդ, երեխաների տարիքին չհամապատասխանող ուսումնական ծրագրեր կամ որակյալ ուսուցիչների անբավարար քանակը:

Հաշվարկների համաձայն՝ դպրոց չհաճախող երեխաների 80 տոկոսն ապրում է այն երկրներում, որոնք եղել են կամ այժմ զինված հակամարտությունների թատերաբեմ են: Պատերազմի ժամանակ դպրոցները փակվում են, ավերվում կամ պաշարվում, երեխաներն ստիպված են աշխատել, նրանց հավաքագրում են իբրև զինվոր, իսկ ուսուցիչները հարկադրված արտագաղթում են: Հակամարտությունների՝ երեխաների, ծնողների և ուսուցիչների հոգեբանական վիճակի վրա ներգործությունն աննկարագրելի է: Դա մշտական սթրեսների մեջ ապրելու, վատ սնվելու և սեքսուալ բռնության ենթարկվելու արդյունք է, ինչը բնորոշ է հակամարտությունների մեծ մասին: Ավելին՝ դա կարող է տեղի ունենալ ոչ միայն բաց պատերազմների ժամանակ: Կրթության վրա բազմիցս ամենաալուրջ ներգործություն են ունեցել կրկնվող ճգնաժամերը, ինչպես, օրինակ, ներկա իրավիճակը Պաղեստինում:

### 4. Ինչ առաջընթաց է բերել կրթությունը զարգացող երկրներում

Վերջին երեսուն տարիների ընթացքում, առավելապես՝ վերջին տասնամյակում, կրթությունը զարգացող երկրներում զգալի առաջընթաց է ապրել. 2000թ. ի վեր դպրոց չհաճախող երեխաների թիվը նվազել է 25 տոկոսով: Մյուս կողմից, 72-113 միլիոն դպրոցական տարիքի երեխաներ դպրոց չեն հաճախում: Առաջին դասարան գնացողներից միայն 74 տոկոսն է հինգ տարվա ուսուցումն ավարտում: Շուրջ 850 միլիոն մեծահասակ (յուրաքանչյուր չորրորդը) գրաճանաչ չէ: Ավելին՝ ներկայում չհաճախող երեխաներին չափազանց դժվար կլինի ինտեգրել դպրոցական համակարգի մեջ, քանի որ նրանք ամենաաղքատ շերտերից, հիվանդ կամ ավանդական ընտանիքներում կամ էլ պատերազմական գոտում, աշխարհի ծայրամասերում ապրող երեխաներն են:

### 5. Կրթության որակի բարելավման հնարավոր լուծումները զարգացող երկրներում

Ակնհայտ է, որ նոր դպրոցների կառուցումը կամ պարտադիր ու անվճար կրթության մասին քաղաքականության որդեգրումն ինքնին խնդիրը չի լուծի: Պատճառները մի քանիսն են, հետևաբար դժվար է որոշել, թե ինչից սկսել, կամ որ բարեփոխումները ընդունել, որպեսզի դրանք խոսեն ոչ միայն կրթության նախարարության, այլև՝ կառավարության մասին: Բարեփոխումները պետք է կենտրոնանան ոչ միայն կրթական չափորոշիչների, այլև պետական բյուջեի կառավարման, դպրոցական համակարգի արդյունավետության, ապակենտրոնացման և կոռուպցիայի դեմ պայքարի վրա:

Երեխաներին դպրոց բերելու մի քանի արդյունավետ ու հարաբերականորեն էժան մեթոդներ կան: Առաջին հերթին, դա կրթության գնի իջեցումն է՝ ուսման, տրանսպորտի, դասագրքերի, կամ դպրոցական համազգեստի համար սուբսիդիաներ տրամադրելով կամ երեխաներին ու ծնողներին ֆինանսապես մոտիվացնելով: Մոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների համար այդ սուբսիդիաները կարող են լինել ուղղակի՝ ֆինանսական նվիրատվության տեսքով, կամ անուղղակի՝ կերակուր կամ առաջին անհրաժեշտության սննդամթերք (ինչպիսիք են, օրինակ, ձեթը կամ բրինձը) բաժանելով: Աֆղանստանում, օրինակ, Պարենի համաշխարհային ծրագիրը (WFP) ամեն օր 1,54 միլիոն սննդարար բատոններ է բաժանում. ամիսը մեկ անգամ 450.000 աղջիկ 4,5 լիտր ձեթ են բերում տուն: Սա բավականին հեշտ, սակայն արդյունավետ լուծում է, որը, ինչպես ցույց է տվել փորձը, արդյունավետ է նույնիսկ Եվրոպայում: Որոշ երկրներում փորձ է արվել դպրոցը շաղկապել առողջապահական ծրագրերի հետ: Օրինակ, լուծի դեմ էժանագին միջոցի պարբերական օգտագործումը կարևոր ներգործություն ունեցավ երեխաների առողջության, նրանց հաճախելիության և առաջադիմության վրա: Գոյություն ունեն նաև դպրոցների որակը բարելավելու ավելի թանկ, անուղղակի միջոցներ: Երեխաների առաջադիմության վրա մեծագույն անմիջական ներգործություն ունի դա-

սարանում երեխաների թվի կրճատումը, ինչը ենթադրում է նոր դասարանների և ուսուցիչների թվի ավելացում: Զարգացող երկրներում, որտեղ ուսուցիչների աշխատավարձերը կազմում են կրթության նախարարության բյուջեի շուրջ 75 տոկոսը, ուսուցիչների թվի ավելացումը խիզախ քաղաքական որոշում է: Այլ կարևոր խնդիրներից է ուսուցիչների որակավորման ու մոտիվացիայի բարձրացման հարցը (օրինակ, երեխաների առաջադիմության բարձացման համար ֆինանսական խրախուսանքների միջոցով), ինչպես նաև ուսումնական ծրագրերի ու դասագրքերի համապատասխանեցումը՝ լեզվի իմացության մակարդակը և առարկայի կարևորությունը հաշվի առնելով, որպեսզի այն բավարարի տվյալ երկրի սովորական աշակերտի կարիքները: Լուծումը չի կարող կենտրոնանալ միայն առաջարկի վրա, այլ պետք է հաշվի առնի նաև պահանջարկը: Կրթություն ունենալը միշտ չէ, որ զբաղվածություն է ենթադրում: Հետևաբար կրթությունը պետք է տվյալ երկրի տնտեսական ռազմավարության ու տարածաշրջանի աշխատանքի շուկայի զարգացման հետ զուգահեռ գնա: Այն երկրներում, որտեղ կառավարությունը կրթությունը դիտում է իբրև առանձին սեկտոր, գործազրկության ցուցանիշները սովորաբար բարձր են:

**6. Ճիշտ է, որ երեխաները դպրոց չեն կարող հաճախել, քանի որ ստիպված են աշխատել՝ ընտանիքը պահելու համար**

Այս փաստարկը ճշմարիտ է միայն կարճատև կտրվածքով: Լայն տարածում գտած (նույնիսկ զարգացած երկրներում) այն կարծիքը, թե զարգացող երկրներում երեխաների աշխատանքը նրանց կյանքի մասն է կազմում, և որ դրանում ոչ մի վատ բան չկա, միայն խորացնում է աղքատությունը: Կրթությունը, հեռահար պլանով, մեծացնում է եկամուտները, հետևաբար նաև՝ ողջ հասարակության հարստությունը: Եթե երեխաները դադարեն աշխատել, նոր հնարավորություններ առաջ կգան չափահասների համար (հատկապես՝ կանանց համար), և այդ ոլորտում աշխատավարձերը կաճեն (երեխաների աշխատանքը ցածր է պահում աշխատավարձերը): Հարց է, թե ինչպես անել, որպեսզի ընտանիքները ընտանեկան բյուջեն համալրելու համար երեխաների կողմից վաստակվող չնչին գումարի կարիք չունենան: Խնդրի ամենաարդյունավետ լուծումը չափահասներին աշխատանք տրամադրելն է, իսկ այնտեղ, որտեղ այդ անելն անհնար է, լավագույն միջոցը կրկին դպրոցներն են. երեխաներին դպրոց հաճախելու համար սուբսիդիաներ տրամադրել գումարի կամ այլ օգնության տեսքով:

**7. Ճիշտ է, որ իսլամական երկրներում աղջիկները դպրոց չեն հաճախում**

Թեև իսլամ դավանելը որոշ երկրներում հանգեցնում է աղջիկների դպրոց հաճախելու ավելի ցածր մակարդակի, նման ընդհանրացված պնդումը ճիշտ չէ: Արաբական երկրներում գենդերային հավասարության վերաբերյալ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) կողմից արված հետազոտությունը ցույց է տվել, որ Պաղեստինի ինքնավար մարզում, Բահրեյնում, Հորդանանում, Օմանում, Քաթարում, Լիբանանում, Թունիսում, Միացյալ արաբական էմիրություններում ու Քուվեյթում դպրոց հաճախող տղաների ու աղջիկների թիվը հավասար է: Սաուդյան Արաբիայում, որը համարվում է իսլամի խորհդանիշ, համալսարան են հաճախում 1,4 անգամ ավելի շատ կանայք, քան տղամարդիկ: Մյուս կողմից, Յեմենը, Սուդանը կամ Ջիբութին՝ առավել ցածր ՀՆԱ ունեցող երկրները, դպրոցում սովորելու հավասար հնարավորությունների առումով աշխարհի վատթարագույն ցուցանիշներով երկրներն են: Առհասարակ կարելի է պնդել, որ աղջիկների՝ դպրոց հաճախելու վրա ավելի մեծ ազդեցություն ունեն աղքատությունն ու անվտանգության առումով վատ իրավիճակը, քան կրոնական ավանդույթները:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1.

### ՆԱՄԱԿԸ

*Ֆիլմ՝ Փամելա*

*Կշռադատման վարժություն*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Աղքատություն»:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Նպատակը՝** մտորել ֆիլմի վերաբերյալ: Սեփական տեսակետները ձևակերպել գրավոր խոսքով (կիրառելով ազատ արտահայտման մեթոդը): Լսել ուրիշներին և հայտնել սեփական տեսակետը:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ՝ յուրաքանչյուր երեխայի համար:

### Ընթացք

Յուրաքանչյուր աշակերտ թուղթ է ստանում:

Հանձնարարությունը հետևյալն է. Ֆիլմից ընտրել որևէ կերպար և նրան նամակ գրել: Պարտադիր չէ ամբողջական նամակ գրել: Կարևորն այն է, որ ստեղծագործեն և գրեն գոնե նամակի մի փոքր հատված՝ ուղերձ:

Այնուհետև աշակերտները զույգերով կամ փոքր խմբերով ընթերցում են իրենց գրած նամակները: Որոշ նամակներ կարող են ըստ ցանկության ընթերցվել նաև բարձրաձայն: Կշռադատման ընթացքում ֆիլմում ներկայացված մնացած նյութի վերաբերյալ կարելի է նաև անցկացնել փոքրիկ քննարկում:

### Կշռադատում

Իրականացվում է վարժության վերջին հատվածում, երբ ընթերցվում են նամակները:

Աշակերտներին հարցնում ենք, թե ինչու՞ որոշեցին հենց տվյալ կերպարին նամակ ուղղել: Ինչո՞վ հետաքրքրեց այդ կերպարը նրանց և ի՞նչ ուղերձ են ուզում հղել այդ կերպարին:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. ԱՐԺԵՔՆԵՐԻ ՍԱՆԴՂԱԿ

*Ֆիլմ՝ Փամելա*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Աղքատություն»:

**Նպատակը՝** գիտակցել, թե ինչ է արժեքը, կարողանալ սահմանել այն, հասկանալ կրթության նշանակությունը:

**Ժամանակը՝** 30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ բոլորի համար, գրատախտակ:

### Ընթացք

Մինչ «Փամելա» ֆիլմի ցուցադրումը աշակերտները պատրաստում են իրենց համար կարևորագույն 5 կամ 7 արժեքների սանդղակ՝ բացատրությամբ, թե ինչու՞ են ընտրել հատկապես դրանք, և հատկապես այդ հերթականությամբ (օրինակ, 1. առողջություն, քանի որ դա ամեն ինչի հիմքն է):

Արժեքների սանդղակ կազմելուց հետո աշակերտներին առաջադրվում են հետևյալ հարցերը.

«Արդյո՞ք կրթությունը ձեր կարևորագույն արժեքներից է», «Հերթականությամբ ո՞րն է», «Ինչու՞»: «Ի՞նչ ներգործություն ունի կրթությունը ձեր կյանքի ու ապագայի վրա», «Ի՞նչ ազդեցություն կունենա ձեր կյանքի ու ապագայի վրա կրթության անհասանելիությունը»:

Բոլոր պատասխանները գրել գրատախտակին:

Վարժությունից հետո ցուցադրել ֆիլմը:

Ֆիլմը դիտելուց հետո կրկնել վարժությունը:

### Կշռադատում

Եզրափակիչ քննարկման ընթացքում ուսուցիչը աշակերտների հետ համեմատում է, թե կրթության նշանակության մասին իրենց պատկերացումը ինչպես է տարբերվում է Փամելայի պատկերացումից:

գ) ՌՈՄԻ / Վիլբերի Յակոբս / Հոլանդիա / 2009 / 4 րոպե



Տասներկուամյա աղջիկ Ռոմին ավել քաշ ունի: Տարիներ շարունակ նա ենթարկվել է իր համադասարանցիների ահաբեկմանը/հալածանքին, ովքեր սիրում են բղավել իր վրա ու տարբեր վիրավորական անուններ տալ: Ռոմին դժգոհ է, հաճախ լալիս է և նախանձում մյուս երեխաներին, ովքեր միասին խաղում են խաղահրապարակում: Եթե նա կարողանար, կփախչեր իր խնդիրներից և երեխաների վիրավորանքներից, բայց հիմնականում նա ուտում է քաղցրավենիք, որն օգնում է մոռանալ իր տխրությունը, սակայն հետո իրեն ավելի վատ է զգում: Տասնյակ հազարավոր երեխաների նման, ովքեր ամեն օր հալածվում են դպրոցում, նա նույնպես իր ծնողների մոտ ձևացնում է, ասես ոչինչ էլ տեղի չի ունեցել:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Երեխաների իրավունքներ»

**Հարակից թեմաներ՝** «Բռնություն», «Խտրականություն», «Հոգեբանական հալածանք»

### 1. Որն է հոգեբանական հալածանքի սահմանումը. ինչն է համարվում և ինչը չի համարվում հալածանք/ահաբեկում

**Հոգեբանական հալածանքն այն է, երբ աշակերտը (կամ մի քանի աշակերտ) դիտավորյալ և պարբերաբար ցավ է պատճառում մեկ ուրիշին:** Դա նշանակում է, որ նրանք ցավեցնում են իրենց դպրոցական ընկերներից նրանց, ովքեր ի վիճակի չեն պաշտպանելու իրենց: Նրանք անում են այնպիսի բաներ, որոնք տհաճ են կամ ցավեցնում են «զոհերին»: Օրինակ՝ հրում են, ապտակում, թաքցնում իրերը, ծեծում նրանց և այլն: Ի դեպ, նրանք կարող են այդ երեխաների կյանքը թշվառ դարձնել նաև այլ եղանակներով՝ անվանազրկել նրանց, հայհոյել, դավեր նյութել նրանց դեմ, այլ դասընկերների պարտադրել չխոսել նրանց հետ և արհամարել: Երբ նույն տարիքի երկու աշակերտ կռվում են միմյանց հետ, որովհետև երկուսն էլ նույն աղջկան են համակրում, դա ահաբեկում չի համարվում, քանի որ ուժ չի գործադրվում տղաներից մեկի կողմից և աղջիկը չի համարվում զոհ՝ ով չի կարող պաշտպանել իրեն:

**Դպրոցական ահաբեկումը/հալածանքը ժողովրդավարական խմբի արատն է և ունի իր ներքին անխուսափելի զարգացումը:** Հալածանքի առաջին փուլն արտաքսվածության/մեկուսացվածության աճն է, որը կարող է պատահել ցանկացած խմբում (միշտ կա մեկը, ով չսիրված անձ է, առանց ազդեցության, որի հաշվին կարելի է «զվարճանալ»): Սա հիմնականում մեղմ, հոգեբանական տեսակի բռնություն է: Մակայն սա արդեն հալածանքի սաղմնային ձև է, որը հետագայում հանգեցնում է բացասական զարգացման:

**Երկրորդ փուլը ներկայացնում է ֆիզիկական ագրեսիա և խոչորացած մանիպուլյացիա:** Աշակերտներն ազատ են արձակում իրենց բացասական զգացմունքները մեկուսացված համադասարանցիների նկատմամբ միայն այն պատճառով, որ առաջիկայում ունեն բարդ ստուգողական աշխատանք, իրենց և ուսուցչի հակամարտությունից դղված կամ պարզապես չեն սիրում դպրոցի առօրյան ու փորձում են խաթարել այն: Մանիպուլյացիան աճում է, և սկզբում մենք կարող ենք տեսնել հիմնականում մեղմ ֆիզիկական ագրեսիա:

Երրորդ փուլը՝ այսպես կոչված, **հիմնական խմբի ձևավորումը**, առանցքային պահն է: Ահաբեկողների խումբն առանձնանում է դասարանի մյուս անդամներից և համակարգված մեթոդով սկսում ահաբեկել առավել խոցելի զոհերին: Մինչ այս պահը իրավիճակը կարող է լուծվել պարզ ճանապարհով:

Այնուհետև մեծամասնությունն ընդունում է ագրեսորների վարվեցողության նորմերը, և դրանք դառնում են սովորական նաև այլ երեխաների համար: Վերջիններս նույնպես սկսում են դաժան վարք ցուցաբերել և ակտիվորեն ներգրավվում են համադասարանցիների դաժան արարքների մեջ ու բավականություն ստանում դրանցից:

Հինգերորդ՝ **ամբողջականության** փուլում ահաբեկումը դառնում է խմբի ծրագիրը: Աշակերտները բաժանվում են երկու խմբի՝ մի խումբն ունի բոլոր իրավունքները, մյուսը՝ ոչ մի:

**2. Ինչ է քիբերահաբեկումը**

**Քիբերահաբեկումը հոգեբանական հալածանքի ձև է:** Այն միտումնավոր բռնի վարք է՝ արտահայտված կապի ժամանակակից միջոցներով, հիմնականում ինտերնետի և բջջային հեռախոսի միջոցով: Այլ հարակից երևույթները քիբերահաբեկումից պետք է տարբերակված լինեն (cyberstalking, cybergrooming, happy slapping):

*Հեղինակի մեկնաբանությունը.*

Այլ հարակից երևույթները քիբերահաբեկումից պետք է տարբերակված լինեն (cyberstalking, cybergrooming, happy slapping):

**cyberstalking** (վիրտուալ հետապնդում), վախի ու սպառնալիքի զգացողության տարածում ինտերնետի որոշ օգտատերերի վրա:

**Cybergrooming** - այնպիսի վարքագիծ, երբ ինտերնետ որոշ օգտագործողներ հավակնում են լինել մեկ այլ անձ, որի նպատակն է՝ գտնել ինտերնետի անչափահաս օգտագործողներին և սեռական բնույթի անհանգստություն պատճառել նրանց կամ շահագործել նրանց սեռական առումով:

**Happy slapping** - անսպասելի ֆիզիկական հարձակում անչափահասի կամ չափահասի վրա այն ժամանակ, երբ մեղսակիցը նկարում է բռնարարքը բջջային հեռախոսով կամ տեսալուսանկարչական սալարատով, և հետագայում այդ նյութը զետեղվում է ինտերնետում:

**3. Որո՞նք են կոնկրետ տարբերությունները քիբերահաբեկման և անմիջական (հոգեբանական) ահաբեկման/հալածանքի միջև**

Քիբերհետապնդումն ունի նույն հատկանիշները, ինչ սովորական հոգեբանական ահաբեկումը (ավանդական անուղղակի ահաբեկում). այն միտումնավոր է, տեղի է ունենում շարունակաբար, հոգեբանական ագրեսիայի հետ մեկտեղ ներառում է խորհրդանշական ագրեսիա, չի հանգեցնում վնասվածքների և կապտուկների, չկա արյուն, սակայն առաջացնում է հոգեբանական տրավմա, որն անտեսանելի է: Հոգեբանական տրավման սովորաբար խորն է և կարող է դժվարությամբ բուժվել: Ահաբեկողները վնասում են զոհի ինքնությունը. վերջինս իրեն նվաստացած և անկարևոր է զգում՝ իրեն համարելով դպրոցական համայնքից հեռացված:

Իմաստը նույնն է: Տարբերությունը հետևյալն է.

1. **Ավանդական ահաբեկումը/հալածանքը լինում է հիմնականում դեմառդեմ**, անձնական շփումների արդյունքում կամ առնվազն դպրոցի շրջակա միջավայրում: Մինչդեռ քիբերահաբեկումը տեղի է ունենում առանց անհատական կապի քիբերտարածության մեջ:

2. **Քիբերահաբեկումը**, ի տարբերություն շարունակական անուղղակի ահաբեկման, օգտագործում է ավելի արդյունավետ գեներ. ոչ թե ավանդական նամակներ և հեռախոս, այլ «գանգվածային ոչնչացման» գեներ՝ ինտերնետը և բջջային հեռախոսը:

Քիբերահաբեկման «առավելությունները». ունենում են ջախջախիչ ազդեցություն:

Նրանք թույլ են տալիս հետապնդել գոհին ամենուրեք և ցանկացած պահի (24/7). գոհն ի վիճակի չէ փախչելու կամ թաքնվելու (քիբերահաբեկումից հնարավոր չէ ազատվել տուն գնալով կամ փախչելու):

Այն ապահովում է մեծ քանակությամբ հանդիսատեսներ (նույնիսկ համաշխարհային մակարդակով), որոնց դուր է գալիս դիտել տուժողի տառապանքներն ու նվաստացումը (հիշենք առաջին համաշխարհային հայտնի միջադեպը՝ լուրջ հետևանքներով. «Տղան Աստղային պատերազմներից», որը դիտվել էր միլիոնավոր մարդկանց կողմից, թեև գոհին ջախջախելու համար բավական էր՝ ողջ դասարանը կամ դպրոցը տեսներ դա):

Ժամանակակից գեներն ապահովում է հարձակման անանունությունը և կեղծ ինքնությունը, որն ավելացնում է ահաբեկման հզորությունը և մեծացնում գոհի անպաշտպանության զգացողությունը, քանի որ նա չգիտի, թե ումից է պաշտպանվելու:

Նույնիսկ մեկանգամյա հարձակումը կարող է արձագանքել մի քանի անգամ. գոհերը ձգտում են դիտել կամ կարդալ նվաստացուցիչ հաղորդագրությունը կրկին ու կրկին: Բացի այդ, երբ ինչ-որ մեկը խայտառակող լուսանկար կամ տեքստ է զետեղում ինտերնետում, այդ «կտավը» շարունակում է ապրել իր սեփական կյանքը, և ամեն ոք կարող է անել դրա հետ ինչ ցանկանա:

#### 4. Քանի երեխա է տառապում ահաբեկումներից/հալածանքներից դպրոցներում

Հայաստանում աշակերտների ահաբեկումների/հալածանքի վերաբերյալ պաշտոնական տվյալներ չկան, ուստի որոշակի տեղեկություններ վերցված են եվրոպական և ամերիկյան ուսումնասիրությունների արդյունքներից: Ահաբեկումն իր որոշակի դրսևորումներով կիրառվում է գրեթե բոլոր, նույնիսկ ամենահեղինակավոր դպրոցներում: Բանավոր ահաբեկումը ամենատարածված միջոցներից է և կիրառվում է աշակերտների ավելի քան 77% -ի վրա (ԱՄՆ տվյալներ): Այն ներառում է հոգեբանական ճնշումների գործադրում և բանավոր վիրավորանք կամ ահաբեկում: Այս տիպի ահաբեկման մեջ է մտնում նաև խոսակցությունների տարածում, ծաղր կամ նսեմացում՝ ռասայի, սեռի, սեռական հակվածության, կրոնի և այլ պատճառների հիման վրա: Ըստ ԱՄՆ-ում կատարված հետազոտությունների տվյալների՝ ահաբեկումն աշակերտների 14%-ի վրա ծանր հետևանքներ է ունենում: Նրանք հիմնականում այն աշակերտներն են, ովքեր սոցիալական վատ պայմաններում են ապրում, դեպրեսիաների մեջ են: Նրանց համար դպրոց գնալը լուրջ անհանգստություն է դառնում: Ըստ հարցման արդյունքների՝ յուրաքանչյուր հինգ աշակերտից մեկը խոստովանում է, որ իրենք ահաբեկում են իրենց հասակակիցներն: 12-17 տարեկանները հաստատում են, որ իրենց դպրոցներում ավելանում են բռնությունների դեպքերը: Ըստ փաստերի՝ բռնությունների և ահաբեկությունների հիմնական մասը տեղի է ունենում հենց դպրոցներում, այլ ոչ թե դպրոցի ճանապարհին:

Աղբյուր: <http://www.bullyingstatistics.org/content/school-bullying-statistics.html>, [http://ec.europa.eu/justice\\_home/daphnetoolkit/files/others/booklets/08\\_daphne\\_booklet\\_8\\_en.pdf](http://ec.europa.eu/justice_home/daphnetoolkit/files/others/booklets/08_daphne_booklet_8_en.pdf)

[http://www.cndp.fr/tenue-de-classe/fileadmin/user\\_upload/PDF/international/ijvs/ijvs9\\_en.pdf](http://www.cndp.fr/tenue-de-classe/fileadmin/user_upload/PDF/international/ijvs/ijvs9_en.pdf)

Պոտենցիալ հարցաքննությունների արդյունքները ողբերգական են: Կարևոր չէ, որ երեխաների 10%-ից ավել կամ պակաս մասն է տուժում այս երևույթից: Ներկա պահին կարևոր չէ, նույնիսկ թե իրավիճակը վատթարանում է, թե՛ ոչ: Պարզ է, որ այս խնդիրը կա, և այն անդրադառնում է մեծ թվով երեխաների վրա, քանի որ ահաբեկումը վնասում է ոչ միայն գոհերին, այլև ազդեցություններին և նույնիսկ այս դաժան անարդարության վկաներին: Մինչև ժամանակ ակնհայտ է, որ մենք չենք լուծում խնդիրը, և ուսուցիչները կամ այլ մասնագետներ բոլորովին պատրաստ չեն լուծելու այն: Հիմնականում դրա պատճառն այն է, որ մինչև վերջերս որևէ համալսարանում չի եղել որևէ ֆակուլտետ, որը կառաջարկեր համակարգային կրթական ծրագիր՝ դպրոցում բռնության ու ահաբեկման կառավարման ոլորտում:



## 5. Ինչպե՞ս կարելի է կանխել ահաբեկումները/հալածանքները

Մենք պետք է գիտակցենք, որ ահաբեկումը/հալածանքը լուրջ վտանգ է: Հետևաբար, ահաբեկման/հալածանքի լավագույն կանխումը մանկավարժական մոտեցումն է, որը դպրոցի բոլոր անդամների համար կառուցում է բաց, բարեկամական և ապահով հարաբերություններ: Այնուամենայնիվ, հետազոտությունները և աշխատանքները ցույց են տվել, որ նույնիսկ ամենալավ և ժողովրդավարական հանրությունը դժվարանում է կանխել ահաբեկման դրսևորումը: Յուրաքանչյուր դպրոց պետք է ունենա հատուկ ծրագիր, որն ի վիճակի է բացահայտելու և բուժելու ահաբեկման երևույթը վաղ շրջանում: Աշակերտների միջև «բռնության համաճարակի» դադարեցման ուղիներ են դրական սոցիալական կլիմայի ստեղծումը և ահաբեկման դեմ հատուկ ծրագրի կառուցումը:

Օրինակ՝ ԱՄՆ-ի բազմաթիվ նահանգներ ահաբեկությունը/հալածանքը կանխելու նպատակով մշակել և ընդունել են մի շարք օրենքներ:

Ահաբեկության ընկալումը ժամանակի ընթացքում փոփոխվել է. եթե ահաբեկությունը կանխող ընթացակարգեր կարելի է կիրառել կազմակերպություններում, ինչպես օրինակ դպրոցներում, ապա բավականին դժվար է հարցը կարգավորել ընտանեկան մակարդակում:

Այն աշակերտները, որոնց ընտանիքում առօրյա կյանքում ահաբեկություններ և բռնություններ են կիրառվում, ունենում են այնպիսի պահվածք, որն ընդունելի չէ: Նման մարդիկ (ուսուցիչներ և աշակերտներ) կարիք ունեն սովորելու, թե ինչպե՞ս է պետք վարվել, որպեսզի չահաբեկեն կամ չբռնանան մյուսների հանդեպ: Մի մասն էլ աջակցության և օգնության կարիք ունի՝ նոր վարվելակերպ ձևավորելու համար: Նրանց պետք է խորհուրդ տալ, աջակցել, այլ ոչ թե պարզապես պատժել:

## 6. Ինչ տեսակի պատասխանատվության կարելի է ենթարկել ահաբեկողներին

Հեշտ չէ տալ հակիրճ պատասխան: Հիմնականում մենք ականատես ենք լինում ահաբեկման սկզբնական փուլերին: Նախաձեռնողներն ու ակտիվ մասնակիցները չեն գործել քրեական արարք և, հետևաբար, նրանք պատասխանատվության են ենթարկվում միայն դպրոցի սահմաններում: Դպրոցներում առկա են հերթական, ինչպես նաև կրթության առանձնահատուկ միջոցառումներ՝ ազդեցություններին պատժելու համար. **արտաքսում դպրոցից՝ դպրոցի վարքային խորհրդի որոշումից հետո, կարճաժամկետ կամ երկարաժամկետ կամավոր տեղափոխում մանկական ախտորոշիչ հաստատություն, ախտորոշիչ օբյեկտներ երիտասարդների համար կամ տեղաբաշխում ախտորոշման հաստատությունում՝** որպես առաջնահերթ միջոց ինստիտուցիոնալ կրթության հրամանի հիման վրա:

## 7. Արդյո՞ք խնդիրը լուծվում է, երբ հալածանքի ենթարկվածները փոխում են դպրոցը

Ահաբեկության խնդիրը չի լուծվում, երբ հալածվողը տեղափոխվում է մեկ այլ դպրոց: Ահաբեկելը միայն չարչարողին և տուժողին վերաբերող հարց չէ. այն տեղի է ունենում բոլոր աշակերտների հարաբերությունների և դիրքորոշումների համատեքստում: Ինչպես նշվել է, ահաբեկումը պետք է գնահատել և հասկանալ որպես խմբում հարաբերությունների լուրջ ձախողում, ուստի եթե նույնիսկ զոհը հեռանա, ահաբեկությունը շարունակվում է անընդհատ, և այս դեպքում առաջ են գալիս նոր զոհեր:

Որոշ դեպքերում, երբ ահաբեկումը զարգացել է, այլ բան չի կարելի անել, քան անմիջապես հեռացնել զոհին այդ պաթոլոգիական միջավայրից: Սակայն զոհի գնալուց հետո անհրաժեշտ է անհապաղ սկսել ողջ խմբի ինտենսիվ ու համակարգված բուժումը: Բացի այդ, նոր դասարանում հարմարվելու հետ կապված տուժողին անհրաժեշտ է տրամադրել համապատասխան աջակցություն, քանի որ ահաբեկման պատճառով ավելացել է երեխայի խոցելիությունը, իսկ դա մեծացնում է կրկնակի ահաբեկման վտանգը:



## 8. Արդյո՞ք գոյություն ունեն այնպիսի կազմակերպություններ, որոնց աշակերտները կարող են դիմել իրենց խնդիրներով

Երեխաները և պատանիները, նրանց ծնողները և մանկավարժները կարող են դիմել դպրոցի վարչական բաժիններին, մանկավարժահոգեբանական խորհրդատվության կենտրոններին, վարքագծային օգնության կամ հատուկ կրթության կենտրոններ: Կարելի է դիմել նաև սոցիալական ու իրավաբանական ծառայություններին՝ երեխայի պաշտպանության համար, և մասնագետներին՝ հոգեբույժների, կլինիկական հոգեբանների, ինչպես նաև զանգահարել վստահության հեռախոսահամարներով, որոնք հասանելի են, կամ համայնքային այն կազմակերպություններին, որոնք զբաղվում դպրոցական ահաբեկման խնդիրներով:

Ահաբեկման թաքնվածության և անհասանելիության պատճառով այս բարոյական արատը բուժելու համար շատ քիչ մասնագետներ ունեն ավելի համակարգված եղանակով աշխատելու հնարավորություն: Հետևաբար, առաջարկվում է որոնել այս հարցում մեծ փորձ ունեցող մասնագետներ:

## 9. Ինչ պետք է անի հալածանքի ենթարկված երեխան

Ահաբեկման հիմնական դիմագիծը նենգությունը և ուժերի անհավասար բաժանումն է: Հետևաբար գոհը չի կարողանում պաշտպանել իրեն: Նա չունի այդքան ուժ: Նույնիսկ եթե ունենար, այն չէր կարող դերակատարում ունենալ արատավոր խմբի նման վնասակար դինամիկայում: Ընդհակառակը, մեծամասնությանը կիրահրեր դաժան հաշվեհարդարի:

Ահաբեկման ենթարկված աշակերտին ուղղված հարցին, թե ինչու՞ ինքը ծնողներին չի պատմել իր վշտի մասին, նա պատասխանել է. «Ես չգիտեմ, երբ ես գալիս եմ տուն, փորձում եմ չմտածել այդ մասին: Ես հուսով եմ, որ ամեն ինչ ավելի լավ կլինի»:

Միայն է կարծել, որ ամեն ինչ կլավանա: Անկախ այն հանգամանքից՝ աշակերտը գոհ է, թե վկա, նա անհապաղ պետք է անի հետևյալ գործողությունները.

- Դիմել դասարանի ուսուցչին կամ դասղեկին. պայմանն այն է, որ մարդը պետք է իմանա, թե ինչպես գործել ահաբեկման դեպքում:
- Կիսվել ծնողների հետ:
- Այն դեպքում, երբ երեխան չի գտնում քաջություն դպրոցից որևէ մեկի հետ կիսվելու, նա կարող է կիսվել այլ մասնագետների հետ, ովքեր ցանկանում են օգնել և կհավատան իրեն, քանի որ նմանօրինակ իրավիճակները բացառիկ չեն:

## ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՉԳԱՑՄՈՒՆՔՆԵՐ, ՀԱՐՑԵՐ

*Ֆիլմ՝ Ռոմի*

*Կշռադարման վարժություն*

*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Ահաբեկում և հալածանք»:

**Նպատակը՝** խորհրդածել ֆիլմի իրադարձությունների շուրջ, զարգացնել ապրումակցում:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ, թուղթ ու գրիչ յուրաքանչյուր աշակերտի համար, գրատախտակ:

### **Ընթացք**

Աշխատանքային թերթիկները բաժանել աշակերտներին (նախքան «Ռոմի» ֆիլմի դիտումը) և հանձնարարել լրացնել դրանք:

### **Կշռադատում**

Տեղի է ունենում քննարկման միջոցով: Պատասխանները կարող են ներկայացվել գրատախտակին: Կշռադատումը կիրառվում է ոչ միայն ֆիլմն ամփոփելու, այլև ֆիլմում արտահայտված զգացմունքները վերապրելու նպատակով:

*Գործնական վարժություն՝ Պայմաններ, զգացմունքներ, հարցեր*

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

Նկարագրել այն զգացմունքները, որն ապրեցիր ֆիլմի դիտումից հետո:

Գրել այն փաստերը, որոնք իմացար ֆիլմից:

Գրել այն փաստերը, որոնք ամենազարմանալիս էին քեզ համար:

Գրել այն հարցերը, որոնք ծնվեցին քո մտքում ֆիլմը նայելու ընթացքում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2.  
ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՏԸ**

*Ֆիլմ՝ Ռոմի*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Երեխաների իրավունքներ», «Ահաբեկում / Հալածանք»:

**Նպատակը՝** պարզաբանել հալածանքի նկատմամբ վերաբերմունքը, կարծիք ձևավորել, խորհրդածել քննադատաբար ու բանավիճել:

**Ժամանակը՝** 45 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** Ա1 չափսի թուղթ, գունավոր թղթեր, նշագրիչներ, սոսինձ:

**Ընթացք**

Ուսուցիչն աշակերտներին բաժանում է թղթեր և հանձնարարում գրել երեք նախադասություն՝ «Հալածանքը ... է» կառուցվածքով: Յուրաքանչյուր նախադասություն արտահայտում է առանձին միտք ու գրվում առանձին թղթի վրա:

Աշակերտներին բաժանել խմբերի (ամեն խմբում՝ 5-6 աշակերտ):

Յուրաքանչյուր խումբ կարդում է իր նախադասությունները: Աշակերտները ջնջում կամ միավորում են այն նախադասությունները, որոնք նույն միտքն են արտահայտում: Նախադասությունները նրանք դասակարգում են ավելի մեծ խմբերի:

Աշակերտները գունավոր թղթերի վրա գրում են խմբային աշխատանքի արդյունք հանդիսացող նախադասությունները: Յուրաքանչյուր խումբ այդ գունավոր թղթերը սոսնձում է պատ ներկայացնող մեծ թղթի վրա: Այսպես ստեղծում ենք «Մակագրություններով պատը»:

**Կշռադատում**

Վարժության վերջում կարդում ենք «Մակագրություններով պատին» գրված նախադասություններն ու քննարկում դրանք:

## «SOS» ՍԵՎԱՆ

Նորատուսի «Արևորդի» էկոլոգիական ակումբի սաներ / Հայաստան / 2012թ / 25 րոպե



Ֆիլմը պատմում է Նորատուսի «Արևորդի» էկոակումբի երեք պատանի բնապահպանների մասին. նրանք ապրում են Սևանա լճի կողքին և բազմաթիվ անգամներ լսել են այն մասին, թե ինչպիսին է եղել լիճը տարիներ առաջ: 2011-ին պատանիները կատարել են հետաքրքիր ճանապարհորդություն՝ Սևանա լճի բնապահպանական խնդիրներն ավելի լավ հասկանալու համար: Նրանք ուսումնասիրել են, թե ինչու՞ լճում ձկները վերացան, որո՞նք են լճի մակարդակի բարձրացման հետևանքները, ո՞ր արդյունաբերական ձեռնարկություններն են աղտոտել լճի ջուրը, ինչպիսի՞նք են լճի մակարդակի բարձրացման հետևանքները և նկարահանած նյութերի վրա՝ Նորատուսի «Արևորդի» էկոլոգիական ակումբի սաները նամակ են հղում ՀՀ նախագահին՝ Սևանա լճի խնդիրների լուծման հարցում աջակցության ակնկալիքով:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հիմնական թեմա՝** «Բնության պահպանություն և էկոլոգիա»

**Հարակից թեմաներ՝** «Ջրոլորտ», «Էկոլոգիական համակարգեր», «Ջրային ռեսուրսների պահպանություն»

### 1. Որն է Սևանա լճի ռազմավարական նշանակությունը

Սևանա լիճը համարվում է Հայաստանի Հանրապետության և ողջ Կովկասի 35 միլիարդ խմ քաղցրահամ ջրի շտեմարանը:

### 2. Այսօր Սևանա լճի ջուրը մաքուր չէ: Դրան նպաստում են մի շարք հանգամանքներ: Որոնք են այդ հանգամանքները

- Սևանի ավազանում հանքարդյունաբերական գործունեության ծավալումը:
- Լճի մակարդակի անընդհատ տատանումները:
- Ձկան արդյունաբերական պաշարների ոչնչացումը:
- Ափամերձ անտառների՝ ջրի տակ մնալը:
- Լճի հարևանությամբ գտնվող քաղաքների, ինչպես նաև լճափերին կառուցված օբյեկտների կոյուղաջրերի՝ լճի մեջ թափվելը:

Այս ամենն ուղեկցվում է լճի ճահճացմամբ:

### 3. Ինչպես է ազդում հանքարդյունաբերությունը Սևանա լճի վրա

Գեղարքունիքի մարզում գործում են 29 հանքեր: Սոթքի ոսկու հանքավայրը Հայաստանի ամենախոշոր ոսկու հանքավայրն է, որը գտնվում է Սևանա լճի ավազանում: Սոթք հանքից են դուրս գալիս Սոթք և Մասրիկ գետերը, որոնք թունավոր նյութերի և ծանր մետաղների խառնուրդով թափվում են Սևանա լճի մեջ: Ձկներն ու խեցգետինները ծանր մետաղների կուտակիչներ են և կարող են վնասել մարդու առողջությունը: Թունավոր քիմիական նյութերը կարող են պատճառ դառնալ նաև ջրային կենդանիների զանգվածային ոչնչացման:

### 4. Սևանա լճի մակարդակի անկումն ինչպես է նպաստում ճահճացմանը

Լճի ջրի մակարդակը 1933- 2000թթ. արդյունաբերական շահագործման հետևանքով (Էներգիայի արտադրություն և ոռոգում) իջավ 19,6 մետրով:

Լճի ճահճացման դանդաղեցման գործընթացում պաշտպանիչ դեր ունի լճի հատակի մոտ գտնվող 4C հաստատուն ջերմաստիճան ունեցող ջրային շերտը: Այն թույլ չի տալիս, որ հատակի տիղմը խառնվի լճին: Եթե լճի ծավալը քչանում է, կրճատվում է պաշտպանիչ շերտը, ինչի հետևանքով լիճը սկսում է ճահճանալ: Ջրի մակարդակի բարձրացման միջոցով հնարավոր է վերականգնել այդ շերտը:

### 5. Ինչ է ջերմային աղտոտումը

Արդյունաբերության մեջ, ջերմաէլեկտրակայաններում հաճախ հսկայական քանակությամբ ջուր է օգտագործվում՝ որպես սառեցնող միջոց կամ ջերմակիր: Այս դեպքում ջրավազան նետվող տաք ջուրը կարող է ավազանում ջերմաստիճանի բարձրացման և էկոհամակարգի քայքայման պատճառ դառնալ:

Ջրի մեծ ջերմունակության շնորհիվ նրա ջերմաստիճանը դանդաղ է փոփոխվում: Ջրային էկոհամակարգերը ջերմաստիճանի կայունության նկատմամբ խիստ պահանջկոտ են: Բավական է ջրի ջերմաստիճանի մի քանի աստիճանի փոփոխություն, որպեսզի էկոհամակարգը քայքայվի:

### 6. Երբ է տեղի ունենում միջավայրի աղտոտումը

Ընդհանուր առմամբ աղտոտումը տեղի է ունենում այն դեպքում, երբ մարդու կողմից արտադրվող թափոնները բնության մեջ ավելի դանդաղ են քայքայվում, քան գոյանում են նորերը, ինչի հետևանքով դրանք կուտակվում են և աղտոտում միջավայրը:

Որոշակի նյութերով աղտոտման վնասը խիստ ակնհայտ է. այդպիսիք են՝ քլոր պարունակող ածխաջրածինները, թունավոր մետաղները (սնդիկ) և այլն: Դրանք ունեն մնացորդային հատկություն, չեն քայքայվում, կուտակվում են հյուսվածքներում և սննդային շղթայի մի օղակից փոխանցվում են մյուսին: Մրանք հատկապես վտանգավոր են սննդային շղթայի վերին օղակներում գտնվող այն օրգանիզմների համար, որոնք սնվում են ձկներով (մարդ, ջրային թռչուններ, արծիվներ և այլն):

## ▼ ԳՈՐԾԵԼԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ

*Ֆիլմ՝ SOS Սևան*

*Կշռադասարանն վարժությունն*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Ակտիվ քաղաքացի», «Շրջակա միջավայր»:

**Նպատակը՝** մտորել ֆիլմի բովանդակության վերաբերյալ, վերանայել և տեսակավորել ֆիլմի թեմային վերաբերող լրացուցիչ տեղեկությունները:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ յուրաքանչյուր աշակերտի համար, գրատախտակ:

### **Ընթացք**

Աշակերտներին բաժանել խմբերի (յուրաքանչյուր խմբում 5-6 հոգի):

Նրանց հանձնարարել քննարկել ֆիլմը և դրա վերաբերյալ պատրաստել նվազագույնը երեք հարց:

Ներկայացման ժամանակ խմբերը քննարկում են իրենց հարցերը և բացատրում, թե ինչու՞ են ընտրել այդ հարցերը:

Հարցերը գրի առնել գրատախտակին: Այս եղանակով ընդհանրացվում են այն թեմաները, որոնք առավել հետաքրքրում են աշակերտներին, և որոնց վրա հետագա դասերին պետք է կենտրոնանալ: Հնարավոր է, որ հարցերը կրկնվեն. դրանք անհրաժեշտ է խմբավորել:

### **Կշռադասում**

Վարժության ավարտին ամփոփել հարցերի խմբավորման գործընթացը և կարճ քննարկում անցկացնել, թե ինչու են աշակերտներն ընտրել հենց այդ հարցերը: Խոստանալ, որ հաջորդ դասերին անդրադարձ կարվի նրանց հետաքրքրող հարցերին:

## ▼ ԳՈՐԾԵՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2. ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

*Ֆիլմ՝ SOS Սևան*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Բնապահպանություն և ջրային ռեսուրսների պահպանություն», «Բնակիչների վարքագիծ»:

**Նպատակը՝** աշակերտները կկարևորեն ջրի դերը մեր կյանքում, բնական ռեսուրսների պահպանությունը և խնայողությունը: Կկարողանան սեփական փորձով ցույց տալ ջրային ռեսուրսների հնարավոր խնայողությունը:

**Ժամանակը՝** 15 րոպե (և տնային հանձնարարություն):

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ՝ յուրաքանչյուր աշակերտի համար:

### Ընթացք

Հանձնարարել աշակերտներին, որ յուրաքանչյուրը տանը հաշվի մեկ օրվա ընթացքում իր տան անդամների կողմից ծախսված ջրի ծավալը և կազմի երկու աղյուսակ (մինչև տնտեսելը և տնտեսելուց հետո): Հաշվարկը կատարել ջրաչափ սարքի օգնությամբ, եթե ջրաչափ չկա՝ հաշվարկել օգտագործված ջրի ծավալը, օրինակ՝ դույլի միջոցով: Օգտագործել կից աշխատանքային թերթիկը:

### Հաջորդ դասին՝

Տնային առաջադրանքների ներկայացում, դիտարկումների արդյունքների քննարկում (3-4 աղյուսակներ)

Աշակերտների կողմից ջուրը տնտեսելու նոր առաջարկների առաջադրում և «Ջրի խնայողություն» վերնագրով պաստառի ստեղծում և ներկայացում:

### Կշռադատում

Այն անցկացվում է քննարկման, հարց ու պատասխանի միջոցով: Ամփոփվում է, թե ինչ են սովորել երեխաները: Շեշտադրվում են դասի հիմնական գաղափարները. ջուրը՝ որպես կյանքի միջավայր, ջրի պահպանման կարևորությունը (խնայողություն, կենցաղային աղբով չաղտոտել), շրջակա միջավայրի հիմնախնդիրներին անտարբեր չլինելու, ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ցուցաբերելու կարևորությունն ու անհրաժեշտությունը:



Գործնական վարժություն՝ Ջրային պաշարների կառավարում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

Աղյուսակ 1 Ջրի ծախսը մինչև տնտեսելը				
Ջրի օգտագործումը	1-օր	2-օր	3-օր	Ընդ.
Լոգարան				
Զուգարան				
Լվացք				
Սպասքի լվացում				
Լվացվել				

Աղյուսակ 2. Ջրի ծախսը տնտեսելուց հետո				
Ջրի օգտագործումը	1-օր	2-օր	3-օր	Ընդ.

Տստեսված ջրի քանակը հաշվել հետևյալ կերպ. մինչ տնտեսումը ջրի քանակից հանել այն քանակը, որն ստացվել է տնտեսելուց հետո:

Աղյուսակ 3. Տստեսած ջրի քանակը	
Ջրի օգտագործում	Տստեսած ջրի քանակ
Լոգարան, ցնցուղ	
Զուգարան	
Լվացք	
Սպասքի լվացում	
Լվացվել	

**▼ ԳՈՐԾԵՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3. ԶՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Ֆիլմ՝ SOS Սևան**  
**Տարիքային խումբը՝ 10+**

**Համապատասխան թեմաներ՝** «Բնապահպանություն և ջրային ռեսուրսների պահպանություն», «Բնակիչների վարքագիծ»:

**Նպատակը՝** աշակերտները հստակ պատկերացում կունենան ՀՀ շրջակա միջավայրի և, մասնավորապես, ջրի (Սևանա լճի) դերի և կարևորության մասին:

**Ժամանակը՝** 45 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** մեկ աշխատանքային թերթիկ՝ յուրաքանչյուր խմբի համար:

**Ընթացքը**

Մտքերի տարափի եղանակով հարցադրում երեխաներին. «Ինչպե՞ս կարող ենք պահպանել ջուրը (որակը և քանակը)»:

*Հնարավոր պատասխաններ.*

- Ինչպե՞լ ջուրը ատամները լվանալիս...
- Անսարք ծորակները վերանորոգել:
- Խմելու ջրով այգին չջրել...
- Անձնական օգտագործման մեքենաները բակում (կանաչ տարածքի մոտ) խմելու ջրով չլվանալ, որպեսզի օճառաջուրը չվնասի ծառերը...
- Ձմերուկը կամ գարեջուրը սառեցնելու նպատակով չդնել հոսող ջրի տակ և այլն:

**Գևորգ Էմինի ստեղծագործությունից մի փոքրիկ հատվածի ընթերցում.**

*Երկնամերձ այդ լիճը, որտեղ հաճախ  
դժվար է որոշել՝ անկյն է սահում լճի մեջ,  
թե՞ կապույտ ջրերն են ծփում երկնքում,  
բնության անկրկնելի մի հրաշալիք է,  
որով ուզում ես միայն հիանալ...*

**Հարցադրում երեխաներին.** «Ինչի՞ մասին է խոսքը»:

**Համառոտ տեղեկատվության տրամադրում Սևանա լճի մասին:**

- Աշխարհագրական դիրքը, բնակավայրը:
- Բուսական և կենդանական աշխարհը:
- Սևանա լճի ջրահավաք ավազանը (28 գետերի հոսք...):
- Սևանի ազգային պարկը:
- Սևանը որպես էկոհամակարգ:

**Ֆիլմի դիտում:**

**Խմբերի ձևավորում, ֆիլմի քննարկում՝** «Բառաբաժան» մեթոդի օգնությամբ (աշխատանքային թերթիկ):

**Խմբային աշխատանքների ներկայացում:**

**Կշռադատում**

Անցկացվում է քննարկման միջոցով. երեխաներին հարցնել՝ ինչ իմացան և ինչ սովորեցին: Այնուհետև ուսուցչի կողմից ընդհանրացվում են աշակերտների տեսակետները, որի արդյունքում պարզ է դառնում, որ այսօր, ցավոք, Սևանա լճի ջուրը մաքուր չի: Բոլորը հասկացան ջրի պահպանման կարևորությունը (խնայողություն, կենցաղային աղբով չաղտոտելը), սովորեցին անտարբեր չլինել շրջակա միջավայրի հիմնախնդիրներին, լինել ակտիվ քաղաքացի:

Գործնական վարժություն՝ Ջրային պաշարների պահպանություն

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻՎ**

Ինչ զգացիր	Ինչ տեսար
-	-
-	-
-	-
-	-
-	-
<b>Ֆիլմում երեխաներն ինչ հիմնական դիրքներ առաջ քաշեցին</b>	<b>Դու ինչ ելք կառաջարկես</b>
-	-
-	-
-	-
-	-
-	-

**ՕՐԻՆԱԿ**

Ինչ զգացիր	Ինչ տեսար
<ul style="list-style-type: none"> <li>- Վախ</li> <li>- Ափսոսանք</li> <li>- Տխրություն</li> <li>- Ցավ</li> <li>- Սարսափ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Աղտոտվածություն</li> <li>- Ջրի մակարդակի բարձրացման հետ օրգանական մնացորդների քանակի ավելացում ջրում՝ ճահճացում</li> <li>- Ընտանիքներին հասցրած նյութական վնաս, կոյուղաջրերի մաքրման բացակայություն</li> <li>- Արգիճի գետի հունի փոխում</li> </ul>
<b>Ֆիլմում երեխաներն ինչ հիմնական դիրքներ առաջ քաշեցին</b>	<b>Դու ինչ ելք կառաջարկես</b>
<ul style="list-style-type: none"> <li>- Ինչու՞ լճում ձկները վերացան</li> <li>- Որո՞նք են լճի մակարդակի բարձրացման հետևանքները</li> <li>- Ո՞ր արդյունաբերական ձեռնարկություններն են աղտոտել լճի ջուրը</li> <li>- Ինչպիսիք ազդեցություն ունի Սևանի բնապահպանական ճգնաժամը շրջակայքում ապրող մարդկանց վրա</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Հետևել մեր շրջապատի ջրային ռեսուրսների պահպանությանը (աղբը չթափել գետերի ու առուների մեջ)</li> <li>- Չաղտոտել շրջակա միջավայրը (կեղտաջրերը չլցնել գետերն ու առուները)</li> <li>- Խնայել ջրային ռեսուրսները (կարգավորել անսարք ծորակները, կրճատել անիմաստ հոսող ջրերի քանակը կենցաղում)</li> </ul>

▼ **ԳՈՐԾԵՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4.**

**ԱՂԲԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

*Ֆիլմ՝ SOS Սևան*  
*Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Շրջակա միջավայրի պահպանություն», «Աղբահանություն»:

**Նպատակը՝** աշակերտները կհմանան՝ մարդու պատճառով շրջապատող միջավայրի աղտոտման մասին:

Կկարողանան ներկայացնել սեփական կարծիքն ու վերաբերմունքը շրջակա միջավայրի ու նրա աղտոտման խնդիրների վերաբերյալ, կհետևեն շրջապատի մաքրությանը:

Կկարևորեն շրջապատող միջավայրի մաքրությունը, բնական ռեսուրսների պահպանությունը և խնայողությունը, թափոնների տեսակավորումը, քաղաքացիական ակտիվությունը:

**Ժամանակը՝** 45 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** մեկ աշխատանքային թերթիկ՝ յուրաքանչյուր խմբի համար, կպչուն գունավոր թերթիկներ, գունավոր մարկերներ, ցուցապաստառ:

**Ընթացքը**

Աշակերտներին ցուցադրել նկարներ՝ աղբամանի մոտ աղբի կույտ, կանաչ գազոններում թափված պլաստիկ շշեր, ծխախոտի տուփեր, պաղպաղակի թղթեր, պոլիէթիլենային տոպրակներ, գարեջրի դատարկ տարաներ և այլն:

Աշակերտներին հանձնարարել մեկ րոպեի ընթացքում հիշել, թե ինչ աղբ են տեսել դպրոց գնալու ճանապարհին:

Գրատախտակին փակցնել ցուցապաստառ, որի կենտրոնում մեծ աղբաման է նկարված:

Աշակերտներին տարբեր գույների (յուրաքանչյուր գույնից երկուական) կպչուն թղթեր տալ և հանձնարարել նույն գույնի թղթերի վրա գրել նույն աղբի անունը: Մեկ թուղթը պետք է պահեն իրենց մոտ, մյուս թուղթը ամրացնեն նկարված աղբամանին:

Գրատախտակին փակցնել պաստառներ, որոնցից յուրաքանչյուրի վրա նկարված լինի տարբեր գույնի աղբաման: Աղբամաններից յուրաքանչյուրի վրա գրված է՝ **թուղթ, սննդի մնացորդ, մետաղի ջարդոն, ապակե տարա, պլաստիկ շիշ, աղբ:**

Հանձնարարել աշակերտներին՝ իրենց մոտ պահած մյուս թղթերի երկրորդ օրինակը փակցնել համապատասխան պաստառին:

Աշակերտների ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ տեսակավորելիս աղբը քանում է: Տարանջատված թափոնը կարելի է ուղարկել վերամշակման, օրինակ՝ մեկ տոննա թղթի վերամշակումից խնայվում է 17- ծառ, 30000 լիտր ջուր, 4000 կվտ/ժամ էներգիա: Իսկ աղբի վերամշակման դեպքում մի քանի խնդիրներ կլուծվեն՝ շրջապատող միջավայրը մաքուր կլինի, աղբը կքչանա, կխնայվեն բնական ռեսուրսները:

Խմբերի ձևավորում՝ շրջակա միջավայրի վրա մարդու ներգործության իրավիճակային քարտերի տրամադրում (լուծման տարբերակներով). աշխատանքային թերթիկ:

Խմբերի ներկայացրած տարբերակների քննարկում:

**Կշռադատում**

Կազմակերպվում է ստեղծագործական միտքը խթանելու և ճիշտ որոշումներ կայացնելու կարողությունների զարգացման նպատակով:

### Հարցադրում աշակերտներին

Ինչպիսի՞ն կլինի ձեր դերը շրջապատող միջավայրը մաքուր պահելու խնդրի լուծման գործընթացում:  
Քննարկումներ խմբերում և հարցի լուծման տարբերակների ներկայացում:

Ուսուցչի օգնությամբ ուղերձի և նամակի մշակում. ուղերձ յուրաքանչյուր քաղաքացու, որը կարելի է տեղադրել մարդաշատ՝ հայտարարությունների համար առանձնացված վայրերում:

### Ուղերձ

Միրելի՛ բարեկամ, դու երևի մտածում ես, որ մեր շրջակա միջավայրի հետ կապված անհրաժեշտ որոշումներ կարող է կայացնել միայն կառավարությունը:

Մեր տան մաքրությունը կախված է նաև մեզանից: Շատ միջոցառումներ կարող ենք անել մենք ինքներս. անպետք իրը չնետել փողոցի ցանկացած մասում, կանաչ տարածքներում, գետում, մի խոսքով՝ որտեղ պատահի:

Խնդրում ենք, համբերատար եղեք և մոտեցե՛ք աղբամանին:

### Նամակ ( իրավասու մարմիններին)

Հարգելի պարոն \_\_\_\_\_

Ձեզ են դիմում N \_\_\_ դպրոցի մի խումբ աշակերտներ:

Մենք շատ ենք սիրում մեր քաղաքը (գյուղը, համայնքը), ուզում ենք այն գեղեցիկ ու մաքուր պահենք: Խնդրում ենք Ձեզ՝ ավելացրե՛ք աղբամանների քանակը կանգառներում, մարդաշատ վայրերում, հանգստյան գոտիներում, մեր դպրոցի մոտակայքում:

Գործնական վարժություն՝ Աղբի կառավարում

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

**Իրավիճակային քարտի նմուշօրինակներ**

1. Մի օր ընկերներով զբոսնում եք զբոսայգում, հյուի գնեցիք: Ձեր ընկերը հյուիը խմելուց հետո տուփը նետեց գետնին: Դուք խնդրում եք նրան՝ տուփը վերցնել գետնից, բայց նա հրաժարվում է՝ պատասխանելով, որ դա հասարակական վայր է, և ինքը ոչ մեկին հաշվետու չէ:

Նման իրավիճակում ինչպե՞ս կվարվեք.

- Նորից կխնդրեք նրան՝ վերցնել տուփը և աղբամանի մեջ նետել:
- Ինքներդ կվերցնեք տուփը:
- Ոչինչ չեք անի:
- Ձեր տարբերակը՝ ինչպե՞ս կվարվեք \_\_\_\_\_

2. Սևանի ափին հանգստանալու ժամանակ հանկարծ դուք նկատում եք, որ քիչ հեռվում մի խումբ տղաներ աղմկելով, ոգևորված պլաստիկ շշեր և գարեջրի թիթեղյա բանկաներ են նետում ջրի մեջ. կարծես մրցում են, թե ո՞վ ավելի հեռուն կնետի:

Նման իրավիճակում ինչպե՞ս կվարվեք.

- Կխնդրեք նրանց՝ այդ բանը չանել:
- Ոչինչ չեք անի:
- \_\_\_\_\_ (ձեր տարբերակը)

## ՀԱՐԵՎԱՆՆԵՐ



Հարևանները՝ Նորման Մըքլարենի ամենահայտնի գործերից մեկն է, որը նրան Ամերիկյան կինոակադեմիայի «Օսկար» մրցանակ բերեց 1953 թվականին: Այն նկարահանվել է 1952 թ. Սառը Պատերազմի ժամանակ: Անմիջական խթանը հանդիսացավ կորեական պատերազմի սկիզբը, և Մըքլարենը որոշեց ուժեղ հակապատերազմական ֆիլմ նկարահանել՝ Հարևաններ վերնագրով: Բացառապես անհիմացիոն սկզբունքով նկարահանված ֆիլմը, որտեղ իրական կերպարները հանդես են գալիս շարժապատկերների տեսքով: Պատմությունը մի առակ է, որը ցուցադրված է առանց խոսքերի. հիմնական լարվածությունը երկու տղամարդկանց միջև բռնությունն է, որոնցից յուրաքանչյուրը ցանկանում է տիրանալ ծաղկին:

### 1. Ինչ է կոնֆլիկտը:

Կոնֆլիկտը (լատիներեն conflictus-բախում) հակադիր նպատակների, հայացքների, ճգտումների, միտումների բախում է, որի հետևանքով խաթարվում են հարաբերությունները, գործընթացները, առաջանում են ցնցումներ, լարվածություն, բռնություն: Ամեն մի կոնֆլիկտ իր պատճառն ունի և ծագում է մարդկանց հոգևոր, սոցիալական և նյութական պահանջմունքները բավարարելու համար:

Կոնֆլիկտների առաջացման պատճառներն են՝

1. սահմանափակ ռեսուրսները (ռեսուրսները գրեթե միշտ սահմանափակ են և դրանց բաշխման խնդիրը կարող է կոնֆլիկտի պատճառ դառնալ),
2. խնդիրների փոխկախվածությունը (երբ մեկի խնդրի լուծումը կախված է մեկ ուրիշից, կամ վերջինիս խնդրի լուծումից),
3. նպատակների տարբերությունները (երբ մարդկանց նպատակների տարբեր լինելը բերում է շահերի բախման),
4. հայացքների, արժեքների տարբերությունները (կոնֆլիկտ կարող է առաջանալ, երբ անտեսվում են դիմացինի համոզմունքները և արժեքները),
5. հաղորդակցության անբավարար մակարդակը (անբավարար հաղորդակցության հետևանքով մարդիկ հաճախ սխալ են հասկանում միմյանց, ինչն էլ կարող է կոնֆլիկտի պատճառ դառնալ),
6. զգայական անընդունելիությունը (երբ կողմերի միջև կա հուզական անընդունելիություն՝ հակակրանք (երբեմն առանց գիտակցված պատճառի), որն արտահայտվում է դիմացինի նկատմամբ անհարգալից վերաբերմունքով, վիճելու հակվածությամբ):

**2. Որոնք են կոնֆլիկտի տեսակները:**

Կոնֆլիկտի կողմերով պայմանավորված՝ վերջիններս լինում են ներանձնային, միջանձնային, անհատի և խմբի միջև, միջխմբային:

Երկու մարդու միջև բախման (միջանձնային կոնֆլիկտի) պատճառ կարող է լինել վերևում թվարկված վաճառներից յուրաքանչյուրը: Դրա առաջացումը, ընթացքը, արդյունքը հաճախ պայմանավորված է հակամարտող կողմերի սոցիալական (կրթություն, հասարակության այս կամ այն շերտին պատկանելը, հեղինակություն, սոցիալական դեր, տարիք և այլն) և հոգեբանական (անհատական հատկանիշներ) բնութագրերով: Կողմերից յուրաքանչյուրը ստեղծված իրավիճակը հաճախ գնահատում է որպես հակառակորդի կողմից իրեն ուղղված թշնամանքի, անօրինաչափ մտածողության, անարդարության դրսևորում և կարծում է, որ եթե դիմացինը զիջի՝ իրավիճակը հեշտությամբ կհարթվի: Մինչդեռ, ինչպես սովորեցնում է իմաստությունը. «Մարդկանց միջև վեճերը երկար չէին շարունակվի, եթե կողմերից միայն մեկը սխալ լիներ»:

Անձի և խմբի միջև կոնֆլիկտը հաճախ առաջանում է այն ժամանակ, երբ անձի շահերն ու դիրքորոշումը հակադրվում են խմբի շահերին և դիրքորոշմանը:

Միջպետական կոնֆլիկտները առաջանում են երկու և ավելի պետությունների մրցակցային հարաբերությունների արդյունքում, որոնք միմյանց միջև վիճարկում են իշխանական լիազորությունների, տարածքների կամ ռեսուրսների բաշխումը: Միջպետական կոնֆլիկտի տնտեսական և քաղաքական հետևանքները կարող են ազդել նաև կոնֆլիկտի հետ կապ չունեցող երկրների վրա: Այդ առումով միջպետական կոնֆլիկտների խաղաղ կարգավորումը բխում է աշխարհի բոլոր պետությունների, ժողովուրդների շահերից: Միջպետական կոնֆլիկտների լուծման համար հաճախ ներգրավվում են միջնորդներ, որոնց անկողմնակալ մոտեցումը երաշխավորված է, իսկ առաջարկությունները հիմնված են միջազգային իրավական նորմերի վրա: Եթե միջպետական կոնֆլիկտը տեղայնացված է տվյալ տարածքի սահմաններում, ապա այն բնորոշվում է իբրև տարածքային կոնֆլիկտ: Նման կոնֆլիկտում չի բացառվում այնպիսի երկրների մասնակցությունը, որոնք չեն պատկանում տվյալ տարածքին: Մեր տարածաշրջանում այդպիսի կոնֆլիկտներ են դարաբաղյան, վրաց-օսական, վրաց-աբխազական հակամարտությունները:

**3. Ինչ եղանակներով կարելի է լուծել կոնֆլիկտները:**

Կոնֆլիկտները կարելի է լուծել **հարկադրական** և **խաղաղ** եղանակներով:

Կոնֆլիկտի լուծման **հարկադրական եղանակը** հաճախ նախընտրում է կոնֆլիկտի այն կողմը, ով ավելի ուժեղ է: Ավելի ուժեղ կողմը հարկադրաբար, բռնի, ուժային մեթոդներով ավելի թույլ կողմին պարտադրում է կոնֆլիկտի լուծման իր համար նախընտրելի, շահավետ տարբերակը: Այս եղանակը անարդյունավետ է, քանի որ բռնության ենթարկված կողմը դժգոհ է մնում հանգուցալուծումից, ինչն էլ թաքնված լարվածության, երբեմն բացահայտ ըմբոստության պատճառ է դառնում, որը ճնշելու համար կրկին բռնության դիմելու անհրաժեշտություն է ծագում:

Կոնֆլիկտի **խաղաղ** լուծման **ամենաարդյունավետ** եղանակը բանակցությունն է՝ անհրաժեշտության դեպքում միջնորդների ներգրավմամբ:

Կոնֆլիկտի լուծման հնարավոր ելքերն են՝ *պարտություն-պարտություն, պարտություն-հաղթանակ, հաղթանակ-հաղթանակ* տարբերակները: Կոնֆլիկտները բանակցելով կամ միջնորդությամբ լուծելու եղանակը լավագույն հնարավորություն է կոնֆլիկտը «հաղթանակ-հաղթանակ» ելքով հանգուցալուծելու համար:

**4. Ինչ պետք է անեն կառավարությունները և հասարակությունը միջպետական (տարածքային) կոնֆլիկտները հանգուցալուծելու համար:**

Տարածաշրջանային կոնֆլիկտները լուծելու համար հակամարտող երկրները պետք է կարողանան բարենպաստ պայմաններ ապահովել կոնֆլիկտը հանգուցալուծելու համար: Այդ երկրները, դառնալով միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵԽ, ԵՄ) անդամներ և ստանձնելով բազմաթիվ պարտականություններ, այդ թվում՝ ժողովրդավարական հասարակություն կառուցելու և հարևանների հետ կոնֆլիկտները խաղաղ միջոցներով լուծելու պարտավորություն, պարտավոր են իրական մասնակցություն ունենալու եվրոպական, միջազգային ինտեգրման գործընթացներում,



ակտիվ համագործակցելու համատեղ տնտեսական ծրագրերում, խթանելու հասարակության ժողովրդավարացումը: Հակամարտող կողմերը պետք է տրամադրված լինեն բացառապես խաղաղ ճանապարհով, թեկուզև երկարատև բանակցությունների արդյունքում, պայմանավորվել կոնֆլիկտի հանգուցալուծման հարցերի շուրջ:

Կոնֆլիկտի խաղաղ լուծման գործում շատ կարևոր է նաև հակամարտող երկրների քաղաքացիական հասարակության դերի ակտիվացումը: Հակամարտության խաղաղ լուծմամբ շահագրգռված երկրները և միջազգային կազմակերպությունները պետք է հենվեն տարածաշրջանի երկրների այնպիսի քաղաքական և հասարակական ուժերի վրա, որոնք կոնֆլիկտների խաղաղ լուծման, փոխզիջումների, ժողովրդավարական վերափոխումների կողմնակիցներ են:

### 5. Ինչպես խուսափել կոնֆլիկտից: Կոնֆլիկտի դրական կողմերը:

Որքան էլ բախումներն անցանկալի լինեն, մարդն իր ողջ կյանքի ընթացքում չի կարող զերծ մնալ դրանցից: Երբեմն նույնիսկ ընդունելի է կոնֆլիկտը և ինչպես ասում են «չկա չարիք առանց բարիքի», պարզապես անհրաժեշտ է իմանալ՝ ինչպես խուսափել կոնֆլիկտից, եթե այն սպառնում է խաղաղությանը, ինչ վարքագիծ դրսևորել կոնֆլիկտի ընթացքում և ինչպես լուծել կոնֆլիկտը խաղաղ միջոցներով:

Կոնֆլիկտից խուսափելու համար պետք է՝

1. զերծ մնալ կոնֆլիկտահարույց պահվածք դրսևորելուց (հրամայական տոնը, վիրավորական, մերժող, մեղադրական բառերն ու արտահայտությունները, սպառնալիքները, էթիկայի կանոնների խախտումը, անտեղի և կեղծ վիճարկումները կոնֆլիկտածին պահվածքի դրսևորումներ են),
2. բացառել «ակն ընդ ական» կարգախոսը,
3. զգուշանալ կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծող մարդկանցից (չենթարկվել սադրանքների):

Եթե նույնիսկ ձեզ հաջողվի խուսափել կոնֆլիկտից, բայց չվերացվի դրա առաջացման պատճառը, հնարավոր է ապագայում այն նորից կրկնվի և ավելի սուր ընթացք ունենա: Սովորաբար մարդկանց միջև առաջացած հակասությունը սրվում է այն ժամանակ, երբ նրանց արտահայտվելու հնարավորություն չի տրվում: Եթե մարդիկ կարողանան հակառակորդի «հարձակումներին» հակազդելիս զսպել սեփական զգացումները, վերլուծության ենթարկել վեճի պատճառները և առաջարկել երկուստեք ընդունելի լուծում, արդյունքում առանց լուրջ կորուստների (բարոյական, ֆիզիկական, նյութական) կհաղթահարեն այն: Կոնֆլիկտը լուծելու և խաղաղությունը վերականգնելու ամենաարդյունավետ միջոցը կառուցողական զրույց վարելն է: Արդյունավետ հաղորդակցվելու համար կարևոր է հասկանալու և հասկացված լինելու ցանկությունը, ազնվությունը և վստահությունը դիմացինի նկատմամբ, խոսելու ոճը, ձայնի բարձրությունը, դիմախաղը, կեցվածքը, դիմացինին ավելի հարգանքով վերաբերվելու և հասկանալու պատրաստակամությունը: Անհրաժեշտության դեպքում պետք է դիմել փաստերին, մինչև վերջ լսել հակառակորդ կողմին և պարզաբանել սեփական տեսակետը:

Կոնֆլիկտների խաղաղ հանգուցալուծումը հնարավորություն է տալիս նվազեցնելու վերջինիս բացասական հետևանքները և օգնում է ավելի լավ ճանաչելու միմյանց, միավորում է համախոհներին, խթանում է ակտիվությունը, նպաստում է ինքնագնահատմանը, թաքնված հատկությունների, արժանիքների ի հայտ գալուն, զարգացնում է պատասխանատվություն, ստիպում է հարգել այլակարծությունը, վերանում է կեղծ հնազանդության ախտանիշը: Կյանքում հաճախ է պատահում, երբ կոնֆլիկտի արդյունքում մարդիկ մտերմանում են, նոր ձեռնարկումներ են սկսում, ավելի իրատեսորեն են գնահատում իրավիճակը, դեպքերը և հետագա անելիքները:

### Լրացուցիչ նյութ ուսուցչի համար Խորհուրդներ ուսուցչին

Վիճահարույց / կոնֆլիկտային թեմաների ժամանակ ուսուցիչը պետք է գտնի ճիշտ մոտեցումներ, որոնք կպահպանեն հավասարակշռությունը, կխրախուսեն բազմակարծությունը, կնպաստեն առավել օբյեկտիվ վերաբերմունքի արտահայտմանը:

Կարևոր է աշակերտների շրջանում կանխել կարծրատիպերի ամրապնդումը, լարվածությունը և շփոթությունները:

**Ինչպես.**

**Պատրաստվել նախապես:** Նախքան թեմայի քննարկումը ծանոթանալ բոլոր հնարավոր տեսակետների և հիմնավորումների հետ, ներառյալ այն տեսակետները, որոնց հետ դուք անձնապես համաձայն չեք: Դուք պետք է բոլոր տեսակետներն առանց որևէ կողմնապահության ներկայացնեք աշակերտներին, որպեսզի օգնեք նրանց քննադատական մտածողության զարգացմանը և սեփական դիրքորոշման դրսևորմանը: Քննարկումների ընթացքում աշակերտների արձագանքը հնարավոր է լինի անկանախատեսելի՝ կախված նրանց ունեցած փորձից (ագրեսիվ դիրքորոշում, ռասիստական կամ օտարաոյաց մոտեցում և այլն) և դուք պետք է պատրաստ լինեք նաև նման իրավիճակի ճիշտ կառավարմանը:

Խուսափեք քարացած մոտեցումներից և մի քարոզեք. վիճահարույց թեմաները վերաբերում են արմատավորված մտահոգություններին և դիրքորոշումներին. մարդկանց ուղղորդել, թե ինչպես մտածել կամ կարդալ այդ մասին, թե ինչպես ինքնադրսևորվել՝ լավագույն դեպքում ոչ մի արդյունքի չի բերի, իսկ վատագույն դեպքում՝ կարգելափակի աշակերտներին և նրանք կդադարեն հարցին այլ տեսանկյունից մոտենալ:

Կախված թեմայի զգայունությունից կարող եք աշակերտներին փոքր խմբերի բաժանել, որտեղ աշակերտներն իրենց տեսակետներն ավելի ազատ կարտահայտեն:

Եթե դասարանն ամբողջությամբ հարցը մի տեսանկյունից է դիտարկում և դրան է կողմնակից, ապա ուսուցիչը պետք է անպայման ներկայացնի հարցի մյուս կողմը (որպես «անկողմնակալ նախագահ») պետք է ներկայացնի բոլոր հնարավոր տեսակետները և դրանց հիմնավորումները, և որպես «ընդդիմախոս փաստաբան» խթանի մնացած բոլոր տեսակետների քննարկումը:)

Վիճահարույց թեմաների քննարկման ժամանակ ուսուցիչը խաղում է հիմնական դերը և շատ կարևոր է, որ նա իմանա, թե երբ և ինչպես պետք է եզրակացություն անի, կամ ներկայացնի սեփական տեսակետն ու դիրքորոշումը: Սեփական դիրքորոշման ներկայացման ժամանակ պետք է շատ զգույշ լինել, քանի որ այն կարող է մղել կողմնակալ քննարկման: Պետք է ճկուն լինել մոտեցման ընտրության հարցում, ինչպես նաև՝ հստակ պատկերացնել, թե ինչու եք ցուցաբերում նման մոտեցում տվյալ դեպքում:

«Կոնֆլիկտ» թեման («Հարևաններ» ֆիլմը) նախատեսվում է ավագ դպրոցի սովորողների համար: Թեմային կից վարժությունները մշակված են 16+ տարիքային խմբի համար:

«Հարևաններ» ֆիլմը ցուցադրելուց առաջ հորդորում ենք նախապես դիտել և որոշել՝ այն դասարանում հատվածաբար է ցուցադրվելու, թե՞ ամբողջությամբ: Եթե ֆիլմը ցուցադրելու եք ամբողջությամբ, խնդրում ենք պատրաստվել դասարանական քննարկմանը և կշռադատում փուլն անցկացնել խորությամբ՝ վերլուծելով բոլոր երկակի ըմբռնում հարուցող հարցերը:

Եթե որոշեք, որ դասարանը պատրաստ չէ ֆիլմը խորությամբ քննարկելու և ճիշտ եզրահանգումներ անելու՝ ցուցադրությունը ընդհատեք մինչև կոնֆլիկտի թեժացման պահը և անցկացրեք վարժության **1-ին տարբերակը:**

**Օգտագործված գրականություն**

Teaching Controversial Issues, © Oxfam GB 2006  
 RFE/RL's Armenian Service, interview with Thomas de Waal, 6 July 2013  
 Joint Statement by Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries and the Foreign Ministers of Azerbaijan and Armenia, Kyiv 5 December 2013, available at: <http://www.osce.org/mg/109210>

## ▼ ԳՈՐԾԵՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1 ԱՆԱՆՈՒՆ ՄՏՔԵՐ

*Ֆիլմ՝ Հարևաններ*

*Տարիքային խումբը՝ 16+*

**Համապատասխան թեմաներ՝** «Ապրումակցում», «Մարդու իրավունքներ», «Բոնություն», «Անհավասարություն», «Հանդուրժողականություն»:

**Նպատակը՝** դատողություններ անել ֆիլմի վերաբերյալ, ծանոթանալ մյուսների զգացմունքներին, մերժել բռնությունը:

**Ժամանակը՝** 35 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ՝ յուրաքանչյուրի համար, արկղ:

**Ընթացքը**

### Տարբերակ 1

Ցուցադրել «Հարևաններ» ֆիլմը: 5 րոպե 15 վայրկյանից ընդհատել ֆիլմի ցուցադրությունը և առաջարկել հորինել ավարտ (5 րոպե).

- Ձեր կարծիքով ինչպե՞ս է ավարտվում հարևանների կոնֆլիկտը:

Աշակերտների կարծիքները լսելուց հետո անցկացնել կշռադատում.

Կոնֆլիկտի լուծման ճիշտ տարբերակն է ավելի ընդունելի: Ինչո՞ւ:

Մարդու ճիշտ իրավունքին է առնչվում տվյալ կոնֆլիկտը:

Ինչպե՞ս կարելի է հարևանների կոնֆլիկտը կարգավորել իրավական հարթության մեջ:

Ինչ մասաներ կրեցին հակամարտող կողմերը:

Ինչ բացասական հետևանքների կարող է հանգեցնել կոնֆլիկտի թեժացումը:

Կոնֆլիկտի լուծման ի՞նչ այլընտրանքային եղանակներ գիտեք:

### Տարբերակ 2

Ցուցադրել «Հարևաններ» ֆիլմը: 5 րոպե 15 վայրկյանից դադարեցնել ցուցադրությունը և առաջարկել հորինել ավարտ (5 րոպե).

- Ձեր կարծիքով ինչպե՞ս է ավարտվում հարևանների կոնֆլիկտը:

Աշակերտների կարծիքները լսելուց հետո՝ առաջարկել դիտել շարունակությունը և դուրս բերել **բոլոր անթույլատրելի գործողությունները, բացասական երևույթները**:

Աշակերտները (յուրաքանչյուրը ստանում է թուղթ ու գրիչ) թղթերի վրա երեք րոպեում ազատ շարադրում են (անանուն) իրենց տպավորությունները ֆիլմի մասին՝ համաձայն վերևում նշված հրահանգի: Կարող են գրել բանալի բառեր կամ նախադասություններ: Այնուհետև բոլոր թերթիկները գցում են արկղի մեջ, որից հետո յուրաքանչյուրը արկղից հանում է մեկ թերթիկ, ընթերցում է գրառված միտքը և մեկնաբանում է: Եթե աշակերտը հանում է իր թերթիկը, հետ է գցում և վերցնում է մեկ ուրիշը:

Վարժությունն ավարտել բոլոր բացասական երևույթները քննարկելով: Կշռադատման փուլի համար նախատեսված հարցերի մի մասը կարող են քննարկվել հենց մեկնաբանության փուլում: Այն հարցերը, որոնց չեն անդրադարձել աշակերտները, անպայման քննարկել կշռադատման փուլում:

### Կշռադատում

- Ինչ տպավորություն ստացաք ֆիլմից:

- Հատկապես ինչն ձեզ ցնցեց:
- Ի՞նչ զգացիք, երբ տեսաք, որ բռնության են ենթարկվում կանայք և երեխաները:
- Կանանց և երեխաների ո՞ր իրավունքը ոտնահարվեց: Անհավասարության ի՞նչ տեսակներ դրսևորվեցին ֆիլմում:
- Ի՞նչպես կարելի է պայքարել նման երևույթների դեմ:
- Ի՞նչո՞ւ չի կարելի բռնություն կիրառել դիմացինի նկատմամբ:
- Ի՞նչ վնասներ կրեցին հակամարտող կողմերը:
- Արդյո՞ք կոնֆլիկտի ժամանակ միայն հակամարտող կողմերն են տուժում: Կարո՞ղ եք բերել օրինակներ, երբ անմեղ մարդիկ են դարձել կոնֆլիկտի զոհեր:
- Ֆիլմում արծարծված ո՞ր երևույթներն են խիստ մերժելի և պատժելի:
- Ի՞նչ անհեթեթ դաժան, բացասական հետևանքների կարող է հանգեցնել կոնֆլիկտի թեժացումը:
- Արդյո՞ք կոնֆլիկտի լուծումը համարժեք էր կոնֆլիկտի պատճառին:
- Իրավական հարթության մեջ կոնֆլիկտի թեժացումը կանխելու և լուծելու ի՞նչ տարբերակ կատաճարկեք:
- Է՞լ ինչ լուծումներ եք տեսնում կոնֆլիկտի ծայրահեղ անընդունելի հետևանքներից խուսափելու համար:

## ▼ ԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2 ԿՈՎԱՆՆՁՈՐ<sup>1</sup>

*Ֆիլմ՝ Հարևաններ*

*Տարիքային խումբը՝ 16+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հաղորդակցություն», «Համագործակցություն», «Որոշումների կայացում», «Հանդուրժողականություն»:

**Նպատակը՝** գիտակցել բանակցելու և համագործակցելու անհրաժեշտությունը կոնֆլիկտը լուծելու համար, քննարկել կոնֆլիկտը լուծելու մոտեցումներ:

**Ժամանակը՝** 30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** միրգ (կիտրոն կամ նարինջ):

### Ընթացքը

Մասնակիցներին բաժանել 2՝ Ա և Բ խմբերի և հայտնել, որ խաղալու են «Կովախնձոր» խաղը: Խնդրել Ա խմբի մասնակիցներին դուրս գալ սենյակից և բացատրել, որ իրենց խնդիրն է ձեռք բերել կիտրոնը՝ կիտրոնի կեղևով թխվածք պատրաստելու համար: Բ խմբի մասնակիցներին, ովքեր մնացին սենյակում, բացատրել, որ իրենց խնդիրն է ձեռք բերել կիտրոնը՝ հյուսիս ստանալու համար:

Հետո ներս հրավիրել Ա խմբի մասնակիցներին և առաջարկել երկու խմբերին նստել դեմ դիմաց: Խմբերին երեք րոպե ժամանակ տալ, որպեսզի ստանան այն, ինչ իրենց պետք է: Հիշեցնել, որ **իրավունք չունեն ուժ գործադրելու: Ֆիզիկական ուժ չգործադրելու կանոնը** որպես պարտադիր պահանջ գրել գրատախտակին: Կիտրոնը դնել մեջտեղում և ազդարարել խաղի սկիզբը:

Երեք րոպեի ընթացքում գործընթացին արգելվում է խառնվել:

Երեք րոպե հետո «վերջ» ազդանշանով ազդարարել խաղի ավարտը և քննարկել.

- Ստացավ ձեր խումբն այն, ինչ ցանկանում էր:
- Ո՞րն էր ձեր խմբի նպատակը:
- Ինչպե՞ս ավարտվեց «կիտրոնային» կոնֆլիկտը:
- Դուք ի՞նչ արեցիք ցանկալի արդյունքի հասնելու համար:
- Լուծումը արդյո՞ք բոլորին գոհացրեց: Ինչո՞ւ այո: Ինչո՞ւ ոչ:
- Ի՞նչ էր անհրաժեշտ կոնֆլիկտը լուծելու համար:

Եթե խմբերը չկարողանան կոնֆլիկտը լուծել «հաղթանակ-հաղթանակ» տարբերակով, ուսուցիչը հանդես է գալիս որպես միջնորդ. Առաջարկում է բանակցել և գտնել խնդրի լուծման այնպիսի տարբերակ, որը երկու խմբերին էլ կգոհացնի: Բացատրել Ա խմբի անդամներին, որ թխվածքի համար իրենց անհրաժեշտ է կիտրոնի կեղևը, Բ խմբի անդամներին՝ անհրաժեշտ է միայն պտղամիսը, իսկ կեղևը՝ ոչ: Նշանակում է նրանք կարող են փոխհամաձայնության գալ: Կամ էլ՝ կարող են պարզապես կիտրոնը կիսել երկու հավասար մասերի:

### Քննարկել

- Կոնֆլիկտը լուծելու համար ինչո՞ւ է կարևոր բանակցելը:
- Մի՞շտ են կոնֆլիկտող կողմերը հաղորդակցվում և բանակցում միմյանց հետ:

Կոնֆլիկտի «հաղթանակ-հաղթանակ» տարբերակով լուծումը կարող են նշել թխվածքը և հյուսիսը համատեղ ճաշակելու հրավերով:

1 Под редакцией Ненси Флауерс, Компасито. Пособие по обучению детей правам человека, Совет Европы, сентябрь 2008г., ст. 65, լրամշակել է՝ Լ.Սարգսյանը

**Կշռադատում**

- Կոնֆլիկտի լուծման «հաղթանակ-հաղթանակ» տարբերակը ինչպե՞ս ընդունվեց խմբերի կողմից:
- Երբևէ հայտնվե՞լ եք կոնֆլիկտային իրավիճակում: Ինչպե՞ս է այն ավարտվել:
- Մեր տարածաշրջանում ի՞նչ միջպետական կոնֆլիկտներ գիտեք:
- Ի՞նչ լուծում եք տեսնում միջպետական կոնֆլիկտների հաղթահարման համար:
- Ի՞նչ պետք է անեն կառավարություններն այդ ուղղությամբ:
- Ի՞նչ կարող է անել հասարակությունը:
- Մարդու ո՞ր իրավունքներն են ոտնահարվում միջպետական կոնֆլիկտների ժամանակ:

### ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3 ԽԱՂԱՂԱՍԵՐՆԵՐ ՏԵՆՆԻԿՆԵՐԸ<sup>2</sup>

*Ֆիլմ՝ Հարևաններ*

*Տարիքային խումբը՝ 16+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հանդուրժողականություն», «Համագործակցություն», «Որոշումների կայացում», «Ժողովրդավարություն»:

**Նպատակը՝** գիտակցել բանակցելու և համագործակցելու անհրաժեշտությունը կոնֆլիկտը լուծելու համար: Զարգացնել կոնֆլիկտը լուծելու հմտություններ, պատասխանատվություն:

**Ժամանակը՝** 45 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** երկար բրդե թել կամ սենյակի երկարությամբ լար, մկրատ, Ա4 չափսի թղթեր, նշագրիչներ:

**Ընթացքը՝**

Նախապես խնդրել աշակերտներին լրատվությունից, կյանքից, շրջապատից, գեղարվեստական գրականությունից առանձնացնել միջանձնային, միջխմբային (միջպետական, ներպետական) հակամարտությունների օրինակներ և գրել Ա4 թղթերին: Սենյակի մի ծայրից մյուս ծայրը՝ ազատ տարածության մեջ կապել բրդե թելը կամ լարը: Այն պետք է կապված լինի գետնից մեկ մետր բարձրության վրա և փոքր ինչ թույլ, որ ամեն կտրվելուց հետո հեշտ լինի կապել: Գրառված թղթերը (օրինակները խմբավորեք՝ կրկնվող մտքերը միավորելով) ծալել և ամրացնել լարին:

Մասնակիցներին բաժանել երկու խմբի: Բացատրել, որ երկու խմբերը ներկայացնում են հակամարտության երկու կողմերը, իսկ լարը կյանքի, խաղաղության ուղին է: Քանի որ այն բեռնված է կոնֆլիկտային իրավիճակներով (բացասական էներգիայով), ամեն րոպե կարող է կտրվել: Իրենց խնդիրն է նորոգել կտրված լարը. պարզել և համագործակցելով հանգուցալուծել նշված կոնֆլիկտները:

Առաջադրանքը բացատրելուց հետո մկրատով որևէ տեղից կտրել լարը, խնդրել յուրաքանչյուր խմբից մեկական մասնակցի՝ որպես խաղաղասեր տեխնիկների մոտենալ այն նորոգելու. մասնակիցները վերցնում են լարի երկու ծայրերը, կարդում են այդ ծայրերից մեկին ամենամոտ կախված թղթի գրառումը, երեք րոպեում նշված հիմնախնդիրը քննարկում են իրենց խմբերի հետ, մշակում են առաջարկներ դրա լուծման ուղղությամբ և ներկայացնում են հակառակորդ թիմին: Երբ բոլորը համաձայնության են գալիս մեկ խնդրի լուծմանն ուղղված առաջարկի շուրջ, գրառում են այդ առաջարկը թղթին և փոխանցում են խաղաղասեր տեխնիկներին: Տեխնիկները լարի կտրված մասերը հանգուցում են և այդ դրական առաջարկով թուղթը կախում են հանգուցի վրա՝ վերանորոգումը հիմնական դարձնելու համար:

Վարժությունն ավարտվում է, երբ «կոնֆլիկտի դրսևորումների», բոլոր թղթերը փոխարինվում են «լուծումների» թղթերով:

**Կշռադատում**

- Ինչպե՞ս էին իրենց զգում մասնակիցները վարժության ժամանակ:
- Վարժությունը դուր եկավ: Ինչո՞ւ:
- Կոնֆլիկտի դրսևորումների ինչ պատճառներ բացահայտվեցին:
- Ինչն էր կարևոր կոնֆլիկտի լուծումներ գտնելիս:
- Իրատեսական էին առաջարկվող լուծումները:
- Ո՞ր դեպքում կոնֆլիկտը միայն իրավական հարթության մեջ կարող է լուծվել:

<sup>2</sup> Կողմնացույց՝ Մարդու իրավունքների երիտասարդական ձեռնարկ-Եվրոպայի խորհուրդ, էջ 144, լրամշակել է՝ Լ. Մարգայանը

## ԷԼԵՆԻ ԱԿԱՆՋՆԵՐՈՎ



Տասնմեկամյա Էլենն իր ծնողների և ընտանիքի անդամներից շատերի նման խուլ է և հաղորդակցվում է միայն ժեստերի լեզվով: Նա ավարտում է հիմնական դպրոցը և պետք է ընտրի թե, որ ավագ դպրոցը պետք է հաճախի: Այդ ընտրությունը կարևոր է այնքանով, որ Էլենը ոչ միայն անցում է կատարում չափահաս աշխարհ, այլ նաև լսելու աշխարհ: Նա չի ուզում հաճախել խուլ երեխաների համար հատուկ գիշերօթիկ դպրոց: Ավելի շատ ցանկանում է իր ընկերոջ Մարթայի հետ հաճախել դժվար լսելու կարողություններ ունեցող երեխաների դպրոց: Այս երկու աղջիկները միմյանցից անբաժանելի են, նրանք նույնիսկ նմանատիպ են հագնվում: Հայրը որոշակի վերապահումներ ունի Էլենի ընտրության հետ կապված, սակայն երբ խոսքը հասնում է Էլենին՝ նա գիտի թե ինչ է ուզում. «Ես գիտեմ խուլերի աշխարհը» հստակ ասում է նա: «Ես ուզում եմ խոսել սովորել ապագայի համար»: Այդուհանդերձ կա տարբերություն երկու աշխարհների միջև, ինչպես Էլենն է դա բացահայտում, երբ ուզում է պատվեր տալ արագ սննդի սպասարկման ռեստորանում, և ինչպես նրա պապն է այդ մասին նշում Skype-ով գրուցելիս: Լսելու կարողությամբ մարդիկ էլ են դա զգում, քանի որ ֆիլմը նրանց տեղափոխում է խուլերի աշխարհ, որտեղ հաղորդակցությունը կատարվում է այլ կերպ, և որտեղ զգայարաններն օգտագործվում են անսովոր կերպով:

### 1. Ինչ է հաշմանդամությունը: Հաշմանդամության տեսակները:

Հաշմանդամությունը օրգանիզմի գործառնությունների կայուն խաթարումն է, ինչը պայմանավորված է հիվանդություններով, վնասվածքների հետևանքներով կամ զարգացման շեղումներով, որոնք հանգեցնում են կենսագործունեության սահմանափակմանը և սոցիալական պաշտպանության անհրաժեշտությանը:

Հաշմանդամությունը դասակարգում են մի քանի հիմքերով.

- Ըստ հաշմանդամության առաջացման պատճառների՝ **բնածին** և **ձեռքբերովի** (պատերազմի, աշխատանքի, հիվանդության հետևանքով առաջացած հաշմանդամություն և այլն):
- Ըստ աշխատունակության և խնամքի անհրաժեշտության՝ **աշխատունակ** և **անաշխատունակ**. Առանձնացվում են հաշմանդամության **I, II, III խմբեր**:
- Ըստ ֆունկցիոնալ կարողությունների վնասման.
  - Մտավոր
  - Հենաշարժողական
  - Լսողական
  - Տեսողական
  - Զգայական



### Մանկական հաշմանդամություն.

Պաշտոնական տվյալների համաձայն՝ Հայաստանում վկայագրված հաշմանդամություն ունեցող երեխաները կազմում են երեխաների ընդհանուր թվի շուրջ մեկ տոկոսը (8.000 երեխա): Հիմնական մասը զարգացման խանգարումներով (սյարդային, հոգեկան-հոգեբանական և այլն) երեխաներն են: Հաճախ հանդիպողներից են.

**Մանկական ուղեղային կաթվածը (ՄՈՒԿ)**- շարժումների և դիրքային տոնուսի խանգարումներով արտահայտվող համախտանիշների մի ընդգրկուն խումբ է, որը պայմանավորված է նախաձննդյան և հետձննդյան վաղ շրջանում գլխուղեղի առաջադիմող ախտահարումներով:

**Աուտիզմ** - հաղորդակցական, սոցիալականացման, հարմարվողական վարքագծի և խոսքի ծանր խանգարում է, որն արտահայտվում է մինչև 3 տարեկան հասակը: Աուտիզմով հիվանդ երեխաները հազվադեպ մինչ 1-2 տարեկան հասակը կարող են ունենալ նորմալ զարգացում: Հետագայում տեղի է ունենում զարգացման կանգ և ձեռք բերված ունակությունների աստիճանական կորուստ: Արտահայտվում է ողջ կյանքի ընթացքում անձի զարգացման խանգարմամբ:

**Մտավոր հետամնացություն** - մտավոր կարողությունների ձևավորման կանգ առած կամ ոչ լրիվ զարգացած վիճակն է: Հանդիպում է ազգաբնակչության 1%-ի մոտ: Աղջիկների համեմատությամբ տղաների մոտ մտավոր հետամնացությունն ավելի հաճախ է հանդիպում (1.5:1): Հայտնի է մտավոր հետամնացության մոտ 1000 պատճառ որոնցից  $\frac{3}{4}$ -ը նախաձննդյան պատճառ ունի:

**Դաունի համախտանիշով** երեխան սահմանափակ մտավոր կարողություններով անձ է: Մկանային ցածր տոնուսի պատճառով երեխան թվում է «փխրուն»: Իմացական զարգացումը ընթանում է դանդաղ՝ փոքր առաջխաղացումներով: Մտավոր հետամնացությունը հայտնաբերվում է համարյա բոլորի մոտ: Որոշ հիվանդներ կարողանում են կարդալ սովորել: Հաճախակի են հուզական և վարքագծային խանգարումները:

### 2. Ինչպե՞ս բարելավել հաշմանդամություն ունեցող մարդկանց կյանքը:

Այսօր աշխարհում կա մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող մոտ կես միլիարդ մարդ: Այդ անձինք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են հասարակությունից և հնարավորություն չեն տալիս ակտիվորեն մասնակցելու հասարակական կյանքին: Այս ներուժը ուղղորդելու և իրացնելու բանալին մարդկանց մտածելակերպում է. վիճակը փոխելու համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը և սերմանել հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ:

Շատ կարևոր է նաև հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հնարավորությունների, աշխատանքային ունակությունների վերաբերյալ կրթական միջոցառումների անցկացնել թե՛ հանրության, թե՛ հատկապես գործատուների շրջանում:

### 3. Ի՞նչ է ներառական կրթությունը

Ներառական կրթության ակունքներից մեկը «Կրթություն ոլորտի համար» շարժումն էր, որը սկիզբ առավ 1990թ. Ջոնսիենում (Թաիլանդ) կայացած համաշխարհային համաժողովում, որտեղ նշվեց, որ շատ երկրներում որոշակի խոցելի խմբեր (հաշմանդամներ, էթնիկ և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ) զրկված են կրթություն ստանալու հնարավորությունից: Ջոնսիերի հոշակագրում արձանագրվեց, որ կրթությունը պետք է մատչելի լինի ոչ միայն նրանց համար, ովքեր սովորելու հնարավորություն ունեն, այլև նրանց համար, ովքեր ունեն սովորելու խոչընդոտներ:

Այս խնդրին անդրադարձան նաև 1994թ. Իսպանիայի Սալամանկա քաղաքում անցկացված կրթության հատուկ կարիքներին նվիրված համաժողովում: Այնտեղ արձանագրվեց, որ ուսուցման դժվարություններ ունեցող երեխաների խնդիրը չի կարող լուծվել միայն հատուկ առանձնացված կրթական համակարգերի և դպրոցների զարգացմամբ, դպրոցը պարտավոր

է ընդունել բոլոր երեխաներին՝անկախ նրանց ֆիզիկական, մտավոր ունակություններից, սոցիալական, լեզվական առանձնահատկություններից: Դպրոցը պետք է ընդունի հաշմանդամներին և օժտվածներին, փողոցի երեխաներին, ազգային, էթնիկ և մշակութային փոքրամասնությունների պատկանող երեխաներին: Այսպիսով, կրթությունը դիտվեց որպես մարդու հիմնարար իրավունք, ինչից բխում է կրթության մատչելիության ապահովման հրամայականը: Հիմնվելով Սալամանկայի հռչակագրի վրա բազմաթիվ երկրներ ներդրեցին ներառական կրթությունը:

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր երեխաների՝ այդ թվում նաև կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող, կրթություն ստանալու իրավունքի վրա: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է մասնակցությունը ուսումնական, մշակութային ու համայնքային կյանքին: Այն ենթադրում է փոփոխություններ և բարեփոխումներ կրթության բովանդակության մեջ, մոտեցումներում, կառույցներում և մեթոդներում:

Ներառական կրթության քաղաքականության հիմքում երեխայակենտրոն մանկավարժությունն է, որի էությունը յուրաքանչյուր երեխայի անհատական կարիքների գնահատումն է և կրթության գործընթացին երեխայի ակտիվ մասնակցության խրախուսումը: Մեթոդի կարևոր բաղկացուցիչ մասը բազմամասնագիտական թիմի ստեղծումն է, որն ընդգրկում է երեխայի կրթության համար շահագրգիռ տարբեր մասնագետների՝ հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական մանկավարժ, սոցիալական աշխատող և այլն: Գնահատվում են յուրաքանչյուր երեխայի կրթական կարիքները, հայտնաբերում նրա առողջապահական և սոցիալական այն կարիքները, որոնք ուղղակի ազդեցություն ունեն երեխայի կրթության վրա: Մշակվում է երեխայի ուսուցման անհատական պլանը՝ ուղղված կարիքի բավարարմանը: Այսպիսով, տվյալ եղանակը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի կրթությունը կազմակերպել հասակակիցների հետ համատեղ հանրակրթական դասաբանում, բայց անհատական պլանով, իսկ անհրաժեշտության դեպքում հատուկ ծրագրով:

**Ներառական կրթությունն**

- ընդունում է, որ բոլոր երեխաները կարող են սովորել,
- ընդունում և հարգում է բոլոր երեխաներին տարբերությունները՝ տարիքը, սեռը, ծագումը, լեզուն, գրագացման խնդիրները, անհատական առանձնահատկությունները, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն,
- նպաստում է բոլոր երեխաների կարիքներին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը,
- դինամիկ և զարգացող գործընթաց է:

**4. Ներառական կրթությունը ՀՀ-ում:**

2001թ-ին «Հույսի կամուրջ» ՀԿ-ն ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ առաջինը սկսեց Հայաստանում ներառական կրթության ծրագիրը: «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպությունից 5 տարի պահանջվեց Երևանի 5 դպրոցներում ներառական կրթության ծրագիրը իրականացնելու և որպես հաջողված փորձ ՀՀ կառավարությանը ներկայացնելու համար:

Եվ արդեն 2005թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց ներառական կրթությունը Հայաստանում: Այսօր Հայաստանը միակ երկիրն է տարածաշրջանում, որն արդեն ունի ներառական կրթության փորձ և այն դարձել է պետական քաղաքականության մասը: ԱՊՀ երկրներում բազմիցս ներկայացվել են մեր երկրի ձեռքբերումներն այս ոլորտում, որտեղ Հայաստանը շարունակում է մնալ առաջատարը:

2012 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հանդես եկավ մի նախաձեռնությամբ, համաձայն որի ներառական և ոչ ներառական դպրոցների տարբերակումից անցում է կատարվում համընդհանուր ներառականության, ուստի անհարաժեշտություն կա փոփոխություններ և լրացումներ

կատարել «Հանրակրթության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքներում:

Համաձայն այդ փոփոխությունների մինչև 2022 թվականը ՀՀ բոլոր հանրակրթական դպրոցները պետք է դառնան ներառական և կրթական ծառայություններ մատուցեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաներին:

Հայաստանում ներառական կրթության զարգացման և կայացման համար ՀՀ ԿԳՆ-ին և ներառական դպրոցներին մշտական աջակցություն են ցուցաբերում «Հույսի կամուրջ» և «Առաքելություն Արևելք» կազմակերպությունները՝ Դանիայի և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությունների ֆինանսավորմամբ:

### **Լրացուցիչ նյութ ուսուցչի համար Խորհուրդներ ուսուցչին**

Հաշմանադամություն թեման ներկայացնելիս խորհուրդ ենք տալիս հաշվի առնել «բառերի ուժը»:

Հաշմանադամություն ունեցող մարդկանց մասին խոսելիս խուսափել խղճահարություն առաջացնող ողբերգական երանգներից, ինչպես նաև անհարկի պաթոսից:

Դրամատիկ երանգներ են ստեղծում «դառը ճակատագրի զոհ» կամ «ողբերգական պատահարի հետևանքով հաշմանդամ դարձած» արտահայտությունները: «Զոհ» բառը ակամա հիշեցնում է անօգնական, խեղճուկրակ, անգոր մարդ և ստեղծում ողբերգական պատկեր: Մյուս կողմից շատ է տարծված նաև հաշմանդամ մարդուն որպես «հերոսի» ներկայացնելը, «ի հեճուկս ամեն ինչի» կարողացել է արգելքներ հաղթահարել և այժմ «նորմալ» կյանք է վարում:

Հարկ ենք համարում նշել որ պետք է զգուշանալ ընդհանրացումներից և ենթադրություններից: Օրինակ՝ կույր մարդկանց 10%-ն է, որ ընդհանրապես չի տեսնում: Մյուս 90%-ը ունի մնացորդային տեսողություն, տարբերում է լույսն ու սովերը: Լսողության պրոբլեմներով որոշ մարդիկ կարող են խոսել, հասկանում են շրթնախոսությունը, իսկ նրանց մեծ մասը հաղորդակցվում է ժեստերի լեզվով:

Առաջարկում ենք օգտագործել բնորոշումներ ու հասկացություններ, որոնք չեն հարուցում խղճահարություն կամ այլ բացասական գուգորդումներ (ասոցիացիաներ): Խուսափել այնպիսի բառերից ու արտահայտություններից, ինչպիսիք են.

- Հիվանդ, անկարող, խեղված, անդամալույծ, ոչ նորմալ, խեղճ, թուլամիտ, տկարամիտ:
- «Անվասայլակին գամված մարդ», փոխարենը՝ «Անվասայլակ օգտագործող մարդ», որովհետև անվասայլակը ընդամենը տեսաշարժման միջոց է այն օգտագործողի համար: Վերջիններս կարող են նստել աթոռին, մեքենա վարել, երբեմն հենակներով քայլել և այլն:
- «Հաշմանդամ» բառի հականիշը «ոչ հաշմանդամն է» ( ոչ թե՛ հաշմանդամ-նորմալ, հաշմանդամ-առողջ):
- Հաշմանդամ մարդիկ (ոչ թե ֆիզիկական, մտավոր արատներով):

Հաշմանդամ մարդկանց համար ՊԱՅՄԱՆՆԵՐԸ կարող են լինել ՀԱՏՈՒԿ, իսկ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԲԸ՝ ՀԱՎԱՍԱՐ:

▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1

**ԷԼԵՆԸ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐԸ**

*Ֆիլմ՝ Էլենի ականջներով*

*Տարիքային խումբը՝ 12+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հանդուրժողականություն», «Տարբերությունների ընդունում», «Հաշմանդամների իրավունքներ», «Երեխաների իրավունքներ (կրթության իրավունք)»:

**Նպատակը՝** քննարկել ֆիլմում արծարծվող խնդիրը՝ տարբեր տեսանկյուններից, վերլուծել նույն խնդրի վերաբերյալ ֆիլմի տարբեր «հերոսների» մոտեցումները:

**Ժամանակը՝** 15 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** խմբերին ուղղված հարցերը՝ առանձին թերթիկների վրա գրված:

**Ընթացքը**

Դասարանը բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբին տալ մեկ դեր՝ Էլենի, Էլենի ծնողների, Էլենի տատիկի ու պապիկի, Էլենի ընկերների: Յուրաքանչյուր խմբին տալ ստորև ներկայացվող համապատասխան հարցերը՝ քննարկման համար:

**Խումբ 1. Էլեն.**

1. Ի՞նչ էր զգում Էլենը:
2. Ի՞նչ մտահոգություններ ուներ:
3. Ի՞նչ ցանկություններ ուներ:
4. Ի՞նչ խորհուրդ կտայիք նրան:

**Խումբ 2. Էլենի ընկերները**

1. Ի՞նչ էին զգում Էլենի համադասարացիները:
2. Ի՞նչ դժվարություններ, վախեր ունեին:
3. Ի՞նչ խորհուրդ կտայիք նրանց:

**Խումբ 3. Էլենի ծնողները**

1. Ի՞նչ էին մտածում Էլենի ծնողները:
2. Ի՞նչն էր մտահոգում նրանց:
3. Ի՞նչպե՞ս կգնահատեիք Էլենի հոր վերաբերմունքը:
4. Ի՞նչ խորհուրդ կտաք նրան:

**Խումբ 4. Էլենի տատիկն ու պապիկը**

1. Ի՞նչ էին զգում Էլենի տատիկն ու պապիկը:
2. Ի՞նչ ցանկություններ ունեին:
3. Ի՞նչպե՞ս կգնահատեիք նրանց վերաբերմունքը:

## ▼ ԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2 ՄԵՐ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ֆիլմ՝ Էլենի ականջներով*  
*Տարիքային խումբը՝ 12+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հանդուրժողականություն», «Տարբերությունների ընդունում», «Հաշմանդամների իրավունքներ»:

**Նպատակը՝** Օգնել հասկանալ, որ բոլոր մարդիկ ունեն տարբեր կարողություններ, կան բաներ որ նրանք կարող են անել լավ, ոչ այդքան լավ և չեն կարող անել ընհանրապես:

**Ժամանակը՝** 15 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** Ա1 չափսի թղթեր, նշագրիչներ:

### Ընթացքը

#### Տարբերակ 1.

Բաժանել երեխաներին 3 -ական դատարկ թերթիկներ և խնդրել նրանց

1. Թերթիկներից մեկի վրա գրել իրենց անունը, այնքան անգամ ինչքան կհասցնեն 30 վայրկյանի ընթացքում
2. Մյուս թերթիկի վրա կատարել նույն առաջադրանքը, բայց այս անգամ գրելով ոչ դոմինանտ ձեռքով՝ եթե աջիկ են ձախով, եթե ձախիկ են՝ աջով:
3. 3-րդ թերթիկի վրա գրեն իրենց դպրոցի ամբողջական անվանումը՝ ( օրինակ Կապան քաղաքի N\_\_ հիմնական, միջնակարգ կամ ավագ դպրոց) բառերը գրելով հակառակ դասավորությամբ (օրինակ դպրոցի փոխարեն ցորպդ), 30 վայրկյանի ընթացքում:

#### Հարցեր կշռադատման համար

1. Ինչ դժվարություններ ունեցաք, երբ գրում էիք ոչ դոմինանտ ձեռքով կամ բառերը հակառակ ձևով:
2. Կյանքում էլի կան բաներ, որ դուք դժվարանում եք անել:
3. Ինչ եք հասկանում «հատուկ կարիքներ» ասելով:

#### Տարբերակ 2.

Դասարանը բաժանել 4 խմբի, յուրքանջյուր խմբին տալ մեկական թերթիկ, որտեղ գրված է երեխայի որևէ իրավունք և խնդրել, որ նրանք այդ իրավունքը ներկայացնեն.

- ա) միայն շուրթերը շարժելու միջոցով՝ առանց ձայնի և խոսքի
- բ) մնջախաղի միջոցով:

Մնացած խմբերը պետք է գուշակեն, թե խոսքը որ իրավունքի մասին է:

Խումբ 1. Երեխան ունի կրթության իրավունք

Խումբ 2. Երեխան ունի կարծիքն ազատ արտահայտելու իրավունք

Խումբ 3. Երեխան ունի բռնություններից պաշտպանված լինելու իրավունք

Խումբ 4. Երեխան ունի հանգստի և ժամանցի իրավունք:

#### Հարցեր կշռադատման համար

1. Ինչն էր դժվար. հասկացնել ինչ-որ բան առանց խոսքի, թե՛ հասկանալ դիմացինին, երբ նա չի խոսում:
2. Ինչ զգացողություններ ապրեցիք առաջադրանքը կատարելիս:
3. Ինչ եք հասկանում «հատուկ կարիքներ» ասելով:
4. Եթե հայտնվեք Ճապոնիայում և չիմանաք ճապոներեն, ո՞րը կլինի ձեր «հատուկ կարիքը»:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3  
ՆԵՐԱՌՈՒՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ**

*Ֆիլմ՝ Էլենի ականջներով  
Տարիքային խումբը՝ 15+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հանդուրժողականություն», «Տարբերությունների ընդունում», «Հաշմանդամների իրավունքներ», «Երեխայի իրավունքներ»:

**Նպատակը՝** օգնել հասկանալ ներառական կրթության գաղափարը, նպատակները, գիտակցել անհրաժեշտությունը:

**Ժամանակը՝** 30-40 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** Ա1 չափսի թղթեր:

**Ընթացքը.**

Կարճ դասախոսությամբ ներկայացնել աշակերտներին «Ինչ է ներառական կրթությունը», ինչպես է այն իրականացվում Հայաստանի Հանրապետությունում (օգտվել «Հարց ու պատասխան» բաժնում ներկայացված նյութից):

Այնուհետև դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի, հանձնարարել խմբերին գրել 3-5 փաստարկ՝ հոգուտ ներառական կրթության, այսինքն թե ինչու է անհրաժեշտ ներառական կրթությունը, ինչ է տալիս այն հատուկ կարիքներով երեխաներին և ինչ է տալիս մեզ բոլորիս, ինչ փոփոխություններ կարող է բերել հասարակության մեջ: Հուշել աշակերտներին, որ նրանք հասարակագիտություն առարկայից անցել են «Մարդու իրավունքներ», «Երեխայի իրավունքներ», «Հաշմանդամների իրավունքներ», «Հանդուրժողականություն» թեմաները, որոնք կօգնեն նրանց համակողմանի նայել հարցին՝ իրավունքների տեսակետից, սոցիալական և բարոյական տեսակետներից:

Խմբային աշխատանքից հետո յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է փաստարկները՝ կարճ մեկնաբանություններով, մնացած խմբերը կարող են հարցեր տալ:

Վերջում միավորել բոլոր խմբերի աշխատանքերը՝ կազմելով ներառական կրթության անհրաժեշտությունը հաստատող թեզիսների «ցանկը»: Ուսուցիչը ևս կարող է համալրել այդ ցանկը՝ ավելացնելով իր փաստարկները.

- Ներառական կրթությունը օգնում է հաղթահարելու խտրականությունը
- Ներառական կրթությունը նպաստում է հաշմանդամության պատճառով առաջացող օտարման երևույթի վերացմանը:
- Ներառական կրթությունը նպաստում է ավելի լայն ներառմանը:
- Ներառական կրթությունը նպաստում է հատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսման արդյունավետության և որակի բարձրացմանը:
- Ներառական կրթությունը հնարավորություն է տալիս հատուկ կարիքներով երեխաներին ստանալ կրթություն իրենց համայնքներում և չհեռանալ ընտանիքներից:

**Հարցեր կշռադատման համար**

1. Ձեր կարծիքով, ի՞նչը կարող է նպաստել ներառական կրթության հաջող զրագացման համար:
2. Ի՞նչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել:
3. Ինչպե՞ս կարելի է գնահատել ներառական կրթության արդյունավետությունը և արդյունքները:

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿՆԵՐ

## ՓՈՔՐԻԿ ԾԽՈՂՆԵՐԸ



Ամեն տարի հազարավոր երեխաներ հոսպիտալացվում են, քանի որ նրանք շնչում են ծխախոտի ծուխ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երբ ծխում ենք երեխաների մոտ, դա նույնն է, թե իրենք են ծխում:

### ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԻՆՉՊԵՍ ԱՍԵԼ՝ «ՈՉ»

*Հոլովակ՝ Փոքրիկ ծխողները*  
*Տարիքային խումբը՝ 13 +*

**Համապատասխան թեմաներ՝** «Մարդու իրավունքներ», «Հակումներ»:

**Նպատակը՝** սովորել ինչպես շրջապատում արգելել ծխելը, և ինչպես ինքնավստահ պահվածք ցուցաբերել:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ՝ յուրաքանչյուր աշակերտի համար:

#### Ընթացք

Ստեղծում ենք երեք իրավիճակներ.

**Իրավիճակ 1.** Ռեստորանում հաց եք ուտում և ինչ-որ մեկը կողքի սեղանին սկսում է ծխել:

**Իրավիճակ 2.** Կանգնած սպասում եք ավտոբուսի կանգառում, և ինչ-որ ծեր, հուզված մարդ սկսում է ծխել անմիջապես ձեր կողքին:

**Իրավիճակ 3.** Ընտանեկան միջոցառման ժամանակ ծնողների ընկերներն սկսում են ծխել:

Աշակերտներին բաժանում ենք զույգերի և առաջադրանք տալիս՝ դերային խաղով ներկայացնել իրենց մոտեցումը՝ նշված իրավիճակներին:

**Ազդեցիկ.** բարկացած և կոպտորեն ցույց եք տալիս, որ ուզում եք վիճել, կռվել, հարձակվել ինչ-որ մեկի վրա:

**Ինքնավստահ.** վստահ պահվածք եք դրսևորում, ինքնավստահ արտահայտում ձեր կարծիքն ու զգացմունքները:

**Չեզոք.** ընկալում եք այն, ինչ կատարվում է, սակայն չեք փորձում վերահսկել կամ փոփոխել իրավիճակը:

Աշակերտների հետ քննարկել նման իրավիճակներում պահվածքի լավագույն եղանակը: Ներկայացնել այդ իրավիճակների համար մի օրինակ.

Քաղաքավարի մոտենում եք այն մարդուն, ով ծխում է, և խնդրում եք նրան, եթե հնարավոր է, թողնի ծխելը: Բացատրում եք նաև, թե ինչ պատճառով չեք սիրում ծխել:

#### Կշռադատում

Այն տեղի է ունենում վարժության վերջում՝ քննարկման ձևով:



ԱՂԲԸ ԹԱՓԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է



Հողովակում ցույց է տրված, թե ինչպես մի մարդ որոշում է աղբը թափել սարից իջնող մաքուր գետը: Իսկ երբ աշխատանքից հետո նա լողանք է ընդունում, թափված աղբի կտորները ծորակով ընկնում են իր վրա: Նույնիսկ բնությունը գիտի, թե ինչպես է պետք դիմակայել:

▼ **ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**  
**ԷԿՈ ՊԱՍՏԱՌՆԵՐ**

*Հողովակ՝ Աղբը թափելն արգելվում է*  
*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Բնապահպանական խնդիրներ», «Լրատվամիջոց», «Քաղաքացիական դիրքորոշում»:

**Նպատակը՝** շրջապատող բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրազեկել սովորողներին, ծավալել քննարկումներ, քննադատաբար վերլուծել լրատվամիջոցի հաղորդագրությունը:

**Ժամանակը՝** 30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** փաթեթավորման թուղթ, թերթեր և ամսագրեր, կաշուն թղթիկներ, մկրատ և մատիտներ՝ խմբերի համար:

**Ընթացք**

Դասի սկզբում մտքերի տարափի մեթոդով աշակերտները ներկայացնում են բնապահպանական խնդիրներ, որոնք իրենց կարծիքով առաջնային են:

Ձևավորել 3-4 հոգանոց խմբեր. նրանց հանձնարարել՝ օգտագործելով կոլաժի մեթոդը, բնապահպանական խնդիրների ցանկից որևէ մեկի վերաբերյալ պատահա ստեղծել (նաև օգտագործելով ամսագրերի և թերթերի նկարները): Նրանք կարող են պատկերել բնության հիասքանչ անմշակ տարածք կամ արժեքավոր մշակութային վայր՝ ցույց տալով բնության ոչնչացումը: Ուսուցիչը թեմայի ընտրությունը կթողնի աշակերտների հայեցողությանը: Հետագայում ուսուցիչը կարող է երեխաների աշխատանքները ներկայացնել դպրոցական ցուցահանդեսի ժամանակ:

**Կշռադատում**

Այս փուլը տեղի է ունենում աշակերտների պատասխանների քննարկման միջոցով: Նրանք յուրացնում են գաղափարներ, սովորում, թե ինչպես պետք է աշխատել տվյալ թեմայի շրջանակում, և ինչպես գտնել հետևյալ հարցերի պատասխանները. «Ամսագրերում և թերթերում ձեր կողմից գտնված անմշակ և ոչնչացված տարածքներն ինչպե՞ս են պատկերված, և ինչպիսի՞ն են դրանք իրականում», «Արդյո՞ք պատկերը տպագիր տարբերակում խեղաթուրվում է: Եթե այո, ապա ինչպե՞ս», «Ձեր կարծիքով՝ որո՞նք են ամենաառաջնային և ամենալուրջ բնապահպանական խնդիրները»:



## ԶՈՐՈ



Զորո վրիժառուն պետք է փրկեր կապանքներում հայտնված կնոջը: Նա հեշտությամբ հաղթեց դոնապահներին և նրանցից մեկի կրծքավանդակին՝ իր բնույթին համաձայն, թրով «տառ» գրեց: Մակայն «Z» տառի փոխարեն գրեց «M»: Կապանքներով կնոջ և այլ բանտարկյալների արձագանքը ցույց տվեց, որ անգրագիտությունը կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ նաև Զորոյի նման հերոսի համար:

### ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆԳՐԱԳԵՏԸ

*Հոյովակ՝ Զորո*

*Տարիքային խումբը՝ 10+*

**Համապատասխան թեմաներ՝** «Հանդուրժողականություն», «Մարդու իրավունքներ»:

**Նպատակը՝** գիտակցել գրելու և կարդալու հմտությունների կարևորությունը, ապրումակցման հմտություններ զարգացնել:

**Ժամանակը՝** 10-15 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** օտար լեզվով աշխատանքային թերթիկ՝ յուրաքանչյուր աշակերտի համար, և թարգմանված աշխատանքային թերթիկ՝ աշակերտների կեսի համար:

#### Ընթացք

Սկզբում աշակերտներին բացատրվում է վարժությունը. յուրաքանչյուր աշակերտ ստանում է աշխատանքային թերթիկ՝ համապատասխան առաջադրանքով, որը պետք է կատարի հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Աշխատանքային թերթիկների բաժանման ընթացքում ոչ ոք չպետք է խոսի:

Աշակերտներին բաժանում ենք օտար լեզվով գրված տեքստով աշխատանքային թերթիկներ: Աշակերտները մեկ րոպե ժամանակ ունեն դրանք լրացնելու համար: Առաջադրանքի կատարման ընթացքում մենք հետհաշվարկ ենք կատարում՝ հիշեցնելով, որ մնաց 20 վայրկյան, մնաց 10 վայրկյան, մնաց 5, 4 ... և վերջ:

Հարցնում ենք աշակերտներին, թե իրենց ինչպես զգացին: Ինչու՞ ոչինչ չարեցին: Խոսում ենք այն պատճառի մասին, թե ինչու՞ նրանք չկարողացան կատարել առաջադրանքը:

Նորից բաժանել աշխատանքային թերթիկները: Աշակերտների կեսը ստանում է թարգմանված տեքստով աշխատանքային թերթիկներ, իսկ մյուս կեսը՝ նույնը, ինչ առաջին անգամ: Նորից հանձնարարում ենք լրացնել աշխատանքային թերթիկը՝ առանց միմյանց հետ խոսելու: Աշակերտների այն խումբը, ովքեր ստացել են թարգմանված աշխատանքային թերթիկ, կարողանում են կատարել առաջադրանքը, իսկ մյուսները՝ կրկին ոչ:

#### Կշռադատում

Մտորումը տեղի է ունենում վարժության ավարտին՝ քննարկման միջոցով:

Հարցնում ենք, թե ինչպե՞ս են իրենց զգացել այն աշակերտները, ովքեր «գրագետ» էին (հասկանում էին աշխատանքային թերթիկը), և ովքեր չէին հասկանում աշխատանքային թերթիկը: Երբ է ավելի լավ. երբ գիտես կարդալ և գրել: Գիտե՞ք ինչ-որ մեկին, ով անգրագետ է:

Գործնական վարժություն՝ Անգրագետը

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ

去到黑板前面，把你的名字写在黑板上。

*Թարգմանություն*

Գնա՛ գրատախտակի մոտ և գրի՛ր քո անունը:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ



Հոլովակում ցույց է տրվում անվասայլակավոր մարդու հետաքրքիր ճանփորդությունը դեպի երկաթգծի կայարան: Նա հաջողությամբ հաղթահարում է ճանապարհին հայտնված բոլոր խոչընդոտները և վերջին բուպեին հասնում պայմանավորված տեղը: Հանկարծ ինչ-որ մեկը նրան օգնում է, բարձրացնում գնացք, ինչը, սակայն, նա ընդհանրապես չէր ցանկանում:

Եկեք հարցնեք հաշմանդամություն ունեցող անձանց՝ արդյո՞ք իրենք իրականում օգնության կարիք ունեն:

▼ **ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

*Հոլովակ՝ Օգնություն  
Տարիքային խումբը՝ 15+*

**Համապատասխան թեմաներ՝** «Անձնական պատասխանատվություն», «Քաղաքացիական դիրքորոշում»:

**Նպատակը՝** գիտակցել անձնական պատասխանատվության դերը կյանքի հանդեպ, զարգացնել բանակցելու հմտություններ:

**Ժամանակը՝** 15 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ՝ յուրաքանչյուր աշակերտի համար, Ֆլիպ-չարտի թուղթ և նշագրիչներ:

**Ընթացք**

Աշակերտներին բաժանել աշխատանքային թերթիկներ (կամ էլ ուսուցիչը գրատախտակին գրում է այդ կանոնները, իսկ աշակերտներն արտագրում են դրանք իրենց թերթիկներում): Աշակերտներն ուշադիր կարդում են անձնական պատասխանատվության տասը կանոնները և խորհրդածում դրանց շուրջ:

Աշակերտներին բաժանել 3-4 հոգանոց խմբերի և քննարկել կանոնները: Քննարկումից հետո նրանք փորձում են ըստ առաջնահերթության և կարևորության դասակարգել այդ կանոնները: Խմբի բոլոր անդամները պետք է համաձայն լինեն կատարված դասակարգման հետ:

Խմբերն իրենց աշխատանքը փակցնում են տեսանելի տեղում և բացատրում /հիմնավորում, թե ինչի՞ համար են ընտրել առաջին երեք կանոնները:

**Կշռադատում**

Տեղի է ունենում խմբերով քննարկման ընթացքում: Ուսուցիչը կարող է տալ հետևյալ հարցերը. «Ինչպե՞ս եկաք այդ եզրահանգման, ինչու՞ այդպես որոշեցիք», «Դժվար էր, արդյոք, միմյանց հետ վերջնական որոշում ընդունելը», «Ո՞ր կանոնն էք ավելի շատ օգտագործում»: Յուրաքանչյուր կանոնի համար կարող էք բերել ձեր կյանքի օրինակը:

**Գործնական վարժություն՝ Անձնական պատասխանատվության կանոններ**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ**

Անձնական պատասխանատվության տասը ոսկե կանոններ

**Իմ հիմնական դիրքորոշումն է. «Ես լավ եմ՝ դու լավ ես»:**

(Եթե ես ինձ լավ եմ զգում, ապա դա իր ազդեցությունն է ունենում շրջապատի վրա:)

**Մարդիկ, ովքեր իրենց հույսին են մնում, կարող են կատարել ավելին:**

(Եթե վարսահ ենք ենք մեզ վրա, ապա կարող ենք այն ավելի լավ անել:)

**Կյանքն ինձ հետ է վերադարձնում այն ամենը, ինչ ես տվել եմ:**

(Եթե ուրիշներին վար եմ վերաբերվել, նրանք էլ վար են վերաբերվում ինձ:)

**Իմ արած ամեն ինչի համար պատասխանատվությունը սկսվում է ինձնով և վերջանում ինձնով:**

(Ես պատասխանատու եմ իմ պահվածքի համար: Միայն ես եմ պատասխանատու:)

**Ազատությունն ամենակարևոր բանն է: Չպետք է որևէ մեկին ստիպել անելու այն, ինչ նա չի ուզում:**

(Չպետք է մարդուն ստիպել անելու այն, ինչ նա չի ուզում:)

**Ես աշխարհ չեմ եկել ուրիշների ակնկալիքներն իրագործելու համար:**

(Ես պատասխանատու եմ իմ պահվածքի համար, ուստի անում եմ այն, ինչը կարծում եմ, որ լավ է:)

**Ճշմարտության առկայությունը համազոր է ազատության:**

(Ճշմարտությունն այնքան կարևոր է, որքան ազատությունը: Ճշմարտություն չունենալը նորմալ է, սակայն պետք է խոստովանել, որ չունենք:)

**Հնարավոր չէ պատասխանատվությունը զցել ուրիշի վրա:**

(Այսինքն՝ մենք պատասխանատու ենք մեր արածի համար: Եվ չենք կարող ասել, որ ինչ-որ մեկը նույնպես պատասխանատու է դրա համար:)

**Հեշտ է գործել այն դեպքում, երբ ունենք բավարար տեղեկատվություն:**

(Հեշտ է որոշել, թե ինչ անել այն դեպքում, երբ ունենք բավարար տեղեկատվություն: Ուստի պետք է փորձել ձեռք բերել հնարավորինս շատ տեղեկատվություն:)

**Հարգանք սեփական անձի նկատմամբ՝ նշանակում է հարգանք ուրիշների նկատմամբ:**

(Եթե հարգում ես ինքդ քեզ, ապա ավելի հեշտ կլինի հարգել նաև ուրիշներին: Խոսքն ինքնավարահոյության մասին է:)

## ԳՈՒՆԱՎՈՐ ՄԱՐԴԸ



Երբ նա ծնվում է՝ վարդագույն է, երբ մեծանում է՝ սպիտակ է, երբ մրսում է՝ կապույտ է, երբ արևի տակ է՝ կարմիր է, երբ հիվանդանում է՝ կանաչ է: Ո՞ւմ մասին է խոսքը: Սպիտակ մարդու (սպիտակամորթի), ով սակայն սիրում է գունավոր մարդ անվանել նրանց, ովքեր ունեն այլ մաշկի գույն:

### ▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

*Հոյովակ՝ Գունավոր մարդը*  
*Տարիքային խումբը՝ 15+*

**Համապատասխան թեմաներ՝** «Փոքրամասնություններ», «Մարդու իրավունքներ», «Ռասիզմ», «Խտրականություն»:

**Նպատակը՝** հասկանալ կարծատիպերի հետ կապված դժվարությունները, զարգացնել ապրումակցման հմտություններ:

**Ժամանակը՝** 20 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** թուղթ ու գրիչ՝ յուրաքանչյուր աշակերտի համար:

#### Ընթացք

Աշակերտներին բաժանում ենք երեք հոգանոց խմբերի: Ամեն մի խումբ ստանում է փոքրամասնությունների կամ մարդկանց խմբերի անուններով քարտեր (օրինակ՝ իմիգրանտներ, ուսուցիչներ, համասեռամուլներ և այլն): Խումբը պետք է ներկայացնի այդ փոքրամասնությանը: Ամեն խմբի առաջադրվում է պատասխանել հետևյալ հարցերին.

- Ովքեր են այդ մարդիկ:
- Ինչպե՞ս են նրանք ընկալվում մեծամասնության կողմից:
- Ի՞նչ առարկություններ ունեք նրանց հանդեպ: Դրանցից որո՞նք են կարծրատիպեր:
- Ի՞նչ կանեն ես, եթե լինեմ այս խմբի ներկայացուցիչ:

Խմբերը ներկայացնում են աշխատանքի արդյունքները: Դասարանը կարող է հարցեր տալ և քննարկել պատասխանները:

#### Կշռադատում

Տեղի է ունենում քննարկման միջոցով: Ուշադրություն ենք դարձնում, թե ո՞ր խումբն է փոքրամասնությունն է առավել քիչ քննադատվում աշակերտների կողմից: Փորձում ենք ամփոփել և եզրահանգում, որ այն խումբը (խմբերը), որոնց մենք լավ ենք ճանաչում, նրանց հետ կապված քիչ կարծրատիպեր ունենք:

**ԱՄԵՆ ՉՈՐՐՈՐԴԸ**



Տղամարդը քայլում է փողոցով և հարձակվում ամեն չորրորդ հանդիպած կնոջ վրա: Կարծում էր որ սա անհեթեթությունն է: Մեծ Բրիտանիայում և շատ այլ երկրներում դա կատարվում է փակ դռների հետևում: Ամեն չորրորդ կին ընտանեկան բռնության զոհ է:

**▼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱԳՐԵՍԻԱ**

*Հոլովակ՝ Ամեն չորրորդը  
Տարիքային խումբը՝ 13+*

**Համապատասխան թեմաներ՝** «Մարդու իրավունքներ», «Ընտանեկան բռնություններ»:

**Նպատակը՝** աշակերտներին իրազեկել ընտանեկան բռնությունների մասին, զարգացնել ապրումակցում:

**Ժամանակ՝** 30 րոպե:

**Անհրաժեշտ պարագաներ՝** աշխատանքային թերթիկ, գրատախտակ:

**Ընթացք**

Նախքան սոց հոլովակի ցուցադրումը աշակերտներին հարցնել, թե ինչ տերմիններ կամ մեկնաբանություններ գիտեն, որոնք բնութագրում են ընտանեկան բռնությունները (ֆիզիկական և հոգեբանական) և ինքնապաշտպանությունը: Նրանց պատասխանները գրել գրատախտակին:

Հոլովակի ցուցադրությունից հետո հարցնել, թե արդյո՞ք ունեն լրացումներ: Նրանց ներկայացրած լրացումները ևս գրել գրատախտակին:

Աշակերտներին բաժանել զույգերի և նրանց տրամադրել աշխատանքային թերթիկը (կիսել և զույգերից յուրաքանչյուրին տալ աշխատանքային թերթիկի մի մասը): Հանձնարարել, որ ընդգծեն ագրեսորի և զոհի բնութագրիչները՝ յուրաքանչյուրը իրեն տրամադրված թերթիկի համապատասխան:

Այնուհետև 2-3 աշակերտներ (ովքեր ցանկանում են) ներկայացնում են իրենց աշխատանքի արդյունքները, իսկ մյուսները լրացումներ են կատարում:

Աշակերտների ներկայացումից հետո նրանց բացատրել ագրեսորի և զոհի բնութագրիչները՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ մեկնաբանություններ և պարզաբանումներ տալով:

**Կշռադատում**

Կշռադատումը տեղի է ունենում քննարկման միջոցով: Նախ ընդհանրացնել ագրեսորի և զոհի բնութագրիչները, այնուհետև աշակերտներին հարցնել. Արդյո՞ք բնութագրիչները զարմանալի էին: Ինչո՞ւ նրանք ընդգծեցին ագրեսորի հատկապես այդ բնութագրիչները: Ինչո՞ւ շեշտեցին զոհի հատկապես այդ բնութագրիչները:

## Գործնական վարժություն՝ Ագրեսիա

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԹԵՐԹԻԿ****Ագրեսորի և զոհի անհատականությունները****Ագրեսորի հատկանիշները**

Ցածր ինքնագնահատական

Ոչ կոմպետենտության և արժեզրկվածության զգացում

Հավատ կանանց կամ տղամարդկանց դերի կարծրատիպերի հանդեպ

Սեփական արարքների համար ուրիշներին մեղադրելու միտում

Խանդ

Մթերասային իրավիճակներից դուրս գալու անկարողություն

Բռնի գործողությունների հետևանքների հանդեպ անպատասխանատվության զգացում

**Զոհի հատկանիշները**

Մոցալական մեկուսացվածության և լքվածության զգացում

Մեղքի զգացում. մեղադրել ինքն իրեն՝ բռնության հրահրման համար, իր մեջ փնտրել բռնության ենթարկվելու պատճառը

Անօգնականության զգացում, տվյալ իրավիճակում սեփական վարքագծի վերահսկողության կորուստ

Բռնի հարաբերությունների մասին խոսելու վախի զգացում

Ցածր ինքնագնահատական, ինքն իրեն օգնելու անկարողություն

Հավատ ընտանեկան բռնությունների վերաբերյալ առասպելների (միֆ), կարծրատիպերի հանդեպ

Բռնության պատճառով զայրույթի կանխում, բայց միևնույն ժամանակ վրդովմունք ամենափոքր բաներից

Դեպրեսիա, վախի զգացում

Առաջնահերթությունը տալ ընտանիքի այլ անդամների կարիքներին իր սեփականի փոխարեն

Հոգնածություն, մեջքի ցավ, գլխացավ, անքնություն